




ՍԱԼԻՀԱ ՀԱՆԸՄ

Կ Ա Մ

ԲԱՆԱԿԸ ԲՌՆԱԻՈՐԻՆ ԴԷՄ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ



ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ռ. ՍԱԳԱԵԱՆ

ՂԱԼԱԹԻՍ

ԳՈՐԾՈՆՆԵՐ ԽԱՆ, 7

Կ. ՊՈԼԻՍ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Ռ. ՍԱԳՍԵԱՆ

ՍԱԼԻՀԱ ՀԱՆՐԱՍ

Կ Ա Մ

ԲԱՆԱԿԸ ԲՈՆԱԿՈՐԻՆ ԴԷՄ

ՎԷՊ ՕՍՄ. ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ



Գ Ր Ն Ց

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ



Ա. ՀԱՏՈՐ



Կ. ՊՕԼԻՍ

Տպագրութիւն Ռ. ՍԱԳՍԵԱՆ


1912

UNIVERSITY OF CHICAGO



UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO



ՍԱՆԻԶԱ ՀԱՆՐԱՊԵՏ

Կ Ս Մ

ԲԱՆԱԿԸ ԲՈՒՆԱԻՈՐԻՆ ԴԷՄ

ՎԷՊ ՕՍՄ. ՅԵՂԱՓՈՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

Գ Լ Ո Ւ Խ Ա .

ԻԶՉԻԹ ՓԱՇՅՈՒՆ ԱՊՈՐԱՆՔԻՆ ՀՐԴԵՂ

1908, Յունուար 5ին, ժամը գիշերուան երեքուկէսին, յանկարծ հրդեհ կը ծագէր, Պէշիքթաշ, Եէնի Մահալլէ, կայսերական պալատան երկրորդ քարտուղար և սենեկապետ Իզզէթ փաշայի քարուկիր ապարանքին վերի յարկէն: Թէև սգնութիւններ կը հասնին՝ բայց հրդեհը ծագած պահուն անմիջապէս տան մէջ ոչ ոք իմացած ըլլալուն՝ կրակը տարածուած էր: Ասոր գլխաւոր պատճառ կգած էր նաև ապարանքին ամէն կողմը գտնուած երեկարական լամբարներն և վաւարանները:

Թերթերը, որոնք կիրակի և երկուշաբթի մանրամասնօրէն կը նկագրէին հրդեհը, կ'ըսէին թէ Իզզէթ փաշայի ա-

պարանքին կիցն և փողոցին անկիւնը դռնուած էօմէր պէյի տունն ալ այրած էր : Ապարանքին դիմացը կը գտնուէր Սպարապետ Ռիզա փաշայի բնակարանը , որուն ճակատն ալ բռնկած էր , սակայն երդիքնեքէն վար կախուած կապերաներու և ջրհանկիրներու աշխատութեանց շնորհիւ կարելի եղած էր Սպարապետին տունը փրկել :

Այս տեղեկութիւններէն կտքը , թերթերը կ'աւելցնեն թէ՛ Վեհ. Սուլթանը իմանալով հրդեհը , բարեհաճած էր թիկնապահներ զրկել , որպէս զի հրդեհը մարելու և ճարակումը արգիլելու մասին հարկ եղած միջոցները ձեռք առնուին .

Իզգէթ փաշայի ապարանքին կիցը գտնուող սեղանաւոր Յակոբ և Ստեփան Սյճեանի տուներն ալ այրած էին և վերջապէս ժամը ճին կարելի եղած էր աղէտքին առաջքը տունել :

Ապո—իւլ—Համիա Իրաատէսլ մը հրամայած էր սենեկապետ Պէքիր պէյի և պալատական ուրիշ պաշտօնատարներու որ իր բարեւները հաղորդեն Սպարապետ Ռիզա փաշայի ու քարտուղար Իզգէթ փաշայի , որոնք Նըլարզ կրթալով իրենց երախտագիտութիւնը մատուցած էին ցոյց արուած այս հոգածութեան համար :

Թերթերը կ'ըսէին նաև որ Իզգէթ փաշայի ապարանքէն բան մը չէր ազատած թէ անեցիկները հողիւ մամոնսակ ունեցած էին ինքզինքնին ազատելու : Ապո—իւլ—Համիա խսկոյն հրամայած էր չուտով ապարանք մը կահաւորել Նշան Թաշիի կողմը՝ Իզգէթ փաշայի բնակութեանը համար :

Ահաւաստիկ ինչ որ թերթերը կը գրէին :

Եւ սակայն այդ հրդեհի պահուն և մահաւաճող հրդեհը մարելէն կտքը կարգ մը տարօրինակ անցքեր անդի ունեցած էին , որոնց մասին թերթերը խոհեմ և զգուշաւոր լուծիւն մը պահած էին : Արդարեւ բռնակալութեան այդ շրջանին սւր գրաքննութիւնը իր ծայրայեղ խստութեան հասած էր , Կ. Պոլսոյ մամուլը պալատականի մը տունէն ծագած հրդեհի մը

մասին ուրիշ բան չէր կրնար գրել, այլ ինչ որ իրեն հաղորդուէր «պաշտօնապէս»: Բայց մինք որ այդ ճնշումներուն ենթարկուած չենք և անկաշկանդ ու անկողմնակալ պատմիչի դերը կ'ուզենք կատարել, մեր ընթերցողներուն պիտի պարզենք իրողութիւնը, այնպէս ինչպէս որ տեղի ունեցած է:

Յունուար 5, Շաբաթ իրիկունը Իզգէթ փաշա սովորականէն կանուխ վերադարձաւ իր ապարանքն և ընթրիքը հոն ըրաւ, իեչ որ բացառիկ բան մըն էր: Հազիւ սեղանէն ելած էր, երբ սպասաւորն եկաւ ծանուցանելու թէ երեք պալատականներ եկած էին և զինքը տեսնել կը փափաքէին:

— Լա՛ւ, հոս հրամցուցէք, հրամայեց Ապտիւլ Համիտի սիրական քարտուղարը փութկոտ ձեւով մը:

Յայտնի կ'երեւար որ արդէն կը սպասէր այդ հիւրերուն: Քանի մը վայրկեան ետքը, երեք պալատականները կը մտնէին պերճաշուք կերպով կահաւորուած հիւրասրահ մը, ուր Իզգէթ փաշա իրենց կը սպասէր ժպտուն դէմքով:

— Թէյ բերէք հիւրերուն, հրամայեց Իզգէթ փաշա երեք պալատականներուն ընկերացող ծառային:

Ժամը նոյն միջոցին երկուքն էր: Մէկուկէս ժամ ետքը հրդեհը կը ծագէր վերնայարկէն որ անընակ կը կարծուէր: Այդ վերնայարկին ներքեւ կը գտնուէր Իզգէթ փաշայի մասնաւոր յարկարաժինն որ կը բաղկանար աշխատութեան սենեակէ մը, հիւրասրահէ մը և սպասման սրահէ մը: Այս երեք սրահներն ալ մէջէ մէջ դուռներ ունէին և միանգամայն մասնաւոր դուռներով կը հաղորդակցէին սանդուխն առաջնորդող ընդարձակ սրահի մը հետ: Բայց ընդհանրապէս հիւրասրահի և աշխատութեան սենեակի այդ մասնաւոր դուռները ներսէն կղպուած կը մնային, այնպէս որ հարկ էր սպասման սրահի դռներէն կատարել անցուդարձը: Աշխատութեան սենեակին մէջ կար նաև թանկագին գորգով մը ծածկուած փոքրիկ դուռ մը որ նեղ նրբանցքի մը վրայ կը բացուէր: Այս նրբանցքը, հազիւ երեք մէդր երկայնութեամբ, կը վերջանար

դռնով մը որ կը բացուէր նեղ և ոլորապտոյտ սանդուխի մը վրայ : Այս սանդուխը կ'առաջնորդէր այն վերնայարկն ուր ծագում առած էր հրդեհը : Սանդուխին գլուխը կը դռնուէր ուրիշ դռն մը :

Այս վերնայարկը որ այսպէս երեք դռներով ամրափակուած էր, երկու բաւական ընդարձակ սենեակներէ կը բաղկանար : Ոչ ոք կը մտնէր հոն, բացի Իզզէթ փաշայէ : Կը կարծուէր թէ Սուլթանին հաւատարիմ քարտուղարը այդ տեղ կը պահէր իր թանկագին առարկաները և կարեւոր թուղթերը, խոշոր երկաթեայ արկղի մը մէջ :

Ինչպէս բսինք, երեք պալատականները սպասման սրահէն անցնելով մտած էին հիւրասնեակ, ուր քարտուղար փաշան իրենց կը սպասէր : Ծառան, իր տիրոջ պատուէրին համեմատ, քիչ կարք թէյի տխէն ու սամավարը բերաւ ու կրկին դուրս ելաւ :

Ժամը երեքին մօտ թիկնապահ մը ներկայացաւ Իզզէթ փաշայի սպարանքը և ըսաւ թէ Նորին Վեհափառութիւնը կ'ուզէր անմիջապէս փաշա էֆէնտին տեսնել :

Ապախը Համիտի քարտուղարը իսկոյն վար իջաւ պալատական թիկնապահին հետ մեկնելու համար : Վարը գաւիթին մէջ, իր սենեկապանը նշմարելով, որ բարեւ բռնած՝ ակնածանքով կը սպասէր, ըսաւ .

— Ահմէտ աղա, չըլլայ որ վերի հիւրերը անհանգիստ ընէք և մինչև որ ձեզի չը կանչեն չըլլայ որ քովերնին երթաք . . . իսկ եթէ ուրիշ հիւր մը դայ և զիս տեսնելու համար սպասել ուղէ, գետնայարկի հիւրասնեակը տարէք :

— Շատ աղէկ, փաշա էֆէնտի, պատասխանեց սենեկապանը բարեւելով :

Այս պատուէրը տալէ ետքը Իզզէթ փաշա պալատէն եկող թիկնապահին հետ կառք մտաւ և մեկնեցաւ :

Ժամը երկուքուկէան էր երբ սպարանքին մէջ իրարանցումը սկսաւ : Կողմնակի յարկարածնի մը պատուհաններէն

սպասուհի մը նշմարած էր որ թանճը մուխ մը և բոցեր կ'ելլէին փաշային յարկարածին վրայէն: Ակնթարթի մը մէջ տունը տակնուվրայ եղաւ. ամէն մարդ ասդին անդին կը վազէր «կրակ կայ, տունը կ'այրի կոր» ազազակելով: Կիները մանաւանդ ահաբեկ ճիչեր արձակելով՝ կը փութային փողոց նեառելի: Երբ որոշապէս հասկցուեցաւ թէ ո՛ր կողմէն ծուխն ու բոցերը կ'ելլէին, սենեկապանը երկու ուրիշ սպասաւորներու հետ, խոյսցաւ փաշային յարկարածինը, վազելով անցաւ սպասման սրահէն և, հակառակ ընդունած պատուէրին, ուղեց հիւրասրահին դուռը բանալ:

Դուռը ներսէն կզպուած էր:

— Ո՛վ է, ի՞նչ կայ. հարցուց ձայն մը ներսէն:

— Ես փաշային սենեկապանը, Ահմէտ, պատասխանեց միւսը չփոթած ձայնով մը: Բացէ՛ք դուռը, տունը կ'այրի կոր:

— Տանը ո՛ր կողմը կ'այրի կոր, հարցուց ամենայն հանդարտութեամբ:

— Բո՛ւն այս տեղը, վերնայարկը... դուռը բացէ՛ք կ'ազան:

Ներսի ձայնը չպատասխանեց.

— Աստուծոյ սիրոյն բացէ՛ք դուռը, ազազակեց խեղճ սենեկապանը խելայեղ:

Նոյն լուսթիւնը: Այդ միջոցին բնակարանին միւս մարդիկը դուրսելով ջուր բերած էին կրակը մարելու համար և սակայն դուռը չէր բացուեր և ուրիշ ձամբայ չկար վերնայարկը երթալու համար:

— Աստուծոյ սիրոյն, դուռը բացէ՛ք, կը գոչէր յուսահատօրէն սենեկապան: Ահմէտ, թէ՛ տունը պիտի այրի և թէ՛ դուք ալ մէջը պիտի այրիք:

Ո՛չ մէկ պատասխան լսուեցաւ ներսէն:

Ահմէտ ազա այդ անբացատրելի լուսթիւնէն կատաղած պուսաց:

— Եթէ դուռը անմիջապէս չբանաք՝ պիտի ստիպուինք խորտակելու :

— Եթէ փորձէք դուռը խորտակելու, ձեզ կ'սպաննեմ, պատասխանեց ձայնը, հաստատ շեշտով մը :

Այս սպառնալիքը պահ մը կասեցուց Ահմէտ աղան ու իր ընկերները, որոնք կը պատրաստուէին իրաւցնէ դուռը խորտակելու :

— Աստուած իմ, Աստուած իմ, ի՛նչ ընելու է կը գոչէր խեղճ սենեկապանը ձեռքերը գլխին դարնելով :

Քանի մը վայրկեան այսպէս անձկութեան մէջ սնցաւ : Հիմա բոցերը ա՛լ աւելի՛ սաստկացած էին, դրացի տուներէն ալ վայնաստունի ձայներ կը լսուէին, ամբողջ թաղը ոտքի վըրայ էր : Հրդեհին մուխը դռներու ծակերէն անցնելով տարածուած էր ամբողջ ապարանքին մէջ և սակայն հիւրասրահին դուռը կը շարունակէր յամառօրէն փակ մնալ :

Վերջապէս կղզանքին մէջ բանալիին ձայնը լսուեցաւ և յանկարծ հիւրասրահին դուռը բացուեցաւ : Սննեակը ամբողջ մուխով լեցուած էր . . . : Հազիւ թէ դուռը բացուած՝ դուրսը սպասողները ներս խուժեցին, անցան հիւրասրահէն, մտան աշխատութեան սննեակն ուր մուխն ա՛լ աւելի թանձր էր և գորգոպատ դուռն որ նեղ նրբանցքին վրայ կը բացուէր, բանալ ուղեցին :

Այդ դուռն ալ նրբանցքին կողմէ կղզուած էր . . . :

— Բայց ըսել է ներսը մարդ կայ, գոչեց Ահմէտ աղա պալատականին որ իրենց հետեւած էր :

— Այո՛, երկու հոգի կան, անոնց դալուն կ'սպասելի որպէս զի դուռը բանամ, բայց մէջանդ չկան : Խելքս չի հասնիր այս եղածին, պէտք է այս դուռը խորտակել . . . :

Ոտքի և ուսերու մէկ քանի զօրաւոր հարուածներ վերջապէս դուռը խորտակեցին : Նրբանցքին մէջ այնքան թանձր մուխ մը կար որ անկտրելի էր յառաջանալ և ամէնքն ալ ստիպուեցան ընկնկել :

— Պատուհանները բացէ՛ք, օգտուէ՛ք, գոչեց Ահմէտ :
Այս հրամանը վայրկենապէս կատարուեցաւ և կարելի ե-
ղաւ նրբանցքին մէջ յառաջանալ և հասնիլ վերնայարկը տա-
նող սանդուխին սոքքը գանուող դրան առջև :

Այդ դուռն ալ ներսէն կը պուլամ էր :

Փոքրիկ, բայց հաստատուն և հաստ տախտակներով շին-
ուած դուռ մըն էր որ դիմագրեց սոքքի և ուսի հարուած-
ներուն : Բայց արդէն ծառաներէն մէկը խնկը ըրած և տա-
պար մը գտած բերած էր :

Քանի մը հարուածով դուռը վերջապէս բացուեցաւ :

Բոցի հոսանք մը օձապտոյտ՝ սողոսկեցաւ սանդուխէն
վար և նրբանցքին մէջ սարածուեցաւ :

Ամենքը տհաքեկ ևս ընկրկեցան, զրեթէ զիրար կոխկըր-
տելով ու խնկթի պէս սկսան փոխչիլ : Սանդուխը կ'այրէջր
արդէն :

Պարտաւհանը յուսահատ աղաղակ մը արձակեց .

— Փաշտ էֆէնտին, միրալայ պէյը վերն են . . . ազատե-
ցէք զիրենք :

Բայց ո՞վ կը համարձակէր այդ դժողքին մէջ յառա-
նալու :

Գուռներու և պատուհաններու բացումէն առաջ եկած օ-
դի հոսանքէն օգտուելով բոցերը վայրկենապէս պատեցին ա-
մէն կողմ . . .

ժամը չորսին մօտ, կրք առաջին ջրհանկիրները հասան,
արդէն ամբողջ ապարանքը բոցերու մէջ էր և ոչ ոք մնացած
էր ներսը :

Յանկարծ որարչաւ կառքի մը ձայնը լսուեցաւ որ բազ-
մութիւնը ճեղքելով կը յառաջանայ դէպի հրդեհին վայրը :
Կառքը կեցաւ այրող շէնքէն քիչ մը հեռուն և Իզդէթ փա-
շա դուրս ցատկեց մէջէն .

Չափազանց խուլած և յուզուած կրեւոյթ մը ունէր :

Ամէնքը յարգանքով մէկ կողմ քաշուեցան ձամբայ տա-

լու համար իրեն: Փաշան հեռուէն նշմարեց քիչ մը առաջ իրեն հիւր նկող պալատականներէն մին և իսկոյն անոր մօտ վազեց:

— Ո՛ւր են փաշան և Ա.քիֆ պէյը, հարցուց:

— Կարծեմ թէ բոցերուն մէջ այրեցան, կ'մկմաց միւսը ահարեկ երևոյթով մը:

— Այրեցա՞ն . . . :

— Այո՛, հրդեհը ճիշդ իրենց զանուած վերնայարկէն ծագում առաւ և հոն տանող բոյսը դուռները ներսէն կըզպուած ըլլալով՝ չկրցանք ժամանակին օգնութեան հասնիլ իրենց . . . Երբոր դուռները խորտակեցինք բոցերը արդէն պատած էին սանդուխը:

— Այրեցա՞ն, այրեցա՞ն, կոկնեց Իզզէթ փաշա սարսափահար:

Նոյն միջոցին պալատական թիկնապահ մը որ ուղղակի երբաբղէն կուգար, մօտեցաւ Իզզէթ փաշային ու զայն մէկ կողմ տանելով ակամջն ի վար խօսեցաւ: Յայտնի է որ Ապուլու Համիտի կողմէն հրաման մը կը բերէր:

Ոստքը լմնցնելուն պէս՝ Իզզէթ փաշա ջրհանկիրներու հրամանատարին քով փութաց և անոր հետ խօսակցութեան մը բռնուեցաւ: Այն խօսակցութեան արդիւնքը այն եղաւ որ իսկոյն փաշային ապարանքը չլթայի սակ առնուեցաւ. ջրհանկիրները որոնք այրելու վրայ եղող շէնքին մօտերք կամ նոյնիսկ ներքնայարկը կը զանուէին, հրաման ստացան հեռանալու և միայն հեռուէն ջուր ընելու կրակին վրայ: Նոյնպէս հեռացուեցան այն ջրհանկիրները որոնք չըջակայ տուններու տանիքներուն վրայ ելած՝ կը փորձէին հրդեհին առաջքը առնել: Այս զարմանալի ու անբացատրելի կարգադրութիւններուն արդիւնքը այն եղաւ որ կրակը փոխանակ սահմանափակուելու աւելի տարածուեցաւ և երեք տուն ևս բռնկեցան:

վերջապէս ժամը վեցին մօտ կարելի կըլաւ հրդեհնը մարել :

Հիմա Բզզէթ փաշայի փառաւոր ապարանքէն ուրիշ բան չէր մնացած , այլ եթէ սուցած պատեր և մոխրակոյտ մը :

Փաշան այդ աւերմանքին դիմաց կանգնած էր անշարժ , կարծես արձանացած :

Երբ բոցերուն վերջին նշոյլը մտրեցաւ և բազմութիւնն սկսաւ ջրտիլ , Ահմէտ աղա իր տիրոջ մօտեցաւ .

Փաշա էֆէնտի , ըսաւ , ա՛լ հոս կենալու պէտք չունիք , հաճեցէք երթալ հանդատանալու , ժամանակն ուշ է և օդն այլ շատ ցուրտ , ձեր թանկագին առողջութիւնը կրնայ վտանգուիլ և անիկայ շատ արժէք ունի ամենուս համար քան թէ այս այրած շէնքը որուն տեղ անշուշտ աւելի փառաւոր մը կրնաք ունենալ :

Փաշան անտարբեր դէմքով մը լսեց իր հաւատարիմ ծառային խօսքերը , յետոյ , առանց ուղղակի այդ խօսքերուն պատասխանելու , ըսաւ ,

— Ոստիկանապետ Օսման պէյը հո՞ս է :

— Այո՛ , քիչ մը անդին , ջրհանկիրներուն քով կեցած՝ հրամաններ կուտայ :

— Շուտով հոս կանչէ :

Ահմէտ հեռացաւ և քանի մը վայրկեանէն վերադարձաւ ստիկանապետին հետ :

— Ձեր վստմութիւնը կը փախաքի զի՞ն տեսնել , ըսաւ ստիկանապետն ակնածական խոնարհութիւն մը ընելով :

— Այո՛ , Օսման պէյ , քանի մը պատուէրներ ունիմ տալիք և կ'ուզեմ որ անոնք կէտ առ կէտ դործադրուին , այդ պարտականութիւնը ուշադրութեամբ կատարելով՝ ինէ՛ աւելի մեր վեհափառ Սուլթանին ծառայած պիտի ըլլաք :

Սուլթանին անունը լսելով՝ Օսման պէյ ա՛լ աւելի ակնածական դիրք մը առաւ .

— Հրամայեցէ՛ք , փաշա էֆէնտի , ըսաւ :

— Անմիջապէս այրած բնակարանին շուրջը ոստիկանական շղթայ մը պիտի հաստատէք և ո՛չ ոքի թոյլ չպիտի տաք մօտենալու շէնքին, կը հասկնա՞ք... որչափ ոստիկան պէտք է գործածէ՞ք ասոր համար :

— Գլխուս վրայ փաշա էֆէնտի :

— Ոստիկաններն ալ պէտք է որ սաք չկոխեն շէնքէն ներս, այլ դուրսէն կատարեն իրենց հսկողութիւնը և ո՛չ իսկ դուք սաքերնիդ ներս պիտի դնէք :

— Շատ աղէկ փաշա էֆէնտի :

Պալատական քարտուղարը կալին դարձաւ, ուր բարև բռնած կը սպասէր իր հաւատարիմ սպասաւորը՝ Ահմէտ աղա :

— Ահմէտ, ըսաւ, լսեցի՞ր ասուած պատուէրներս :

— Այո՛, փաշա էֆէնտի, լսեցի :

— Դուն ալ հոս պիտի մնաս և մինչև ասուած պիտի հրակես, որպէսզի այս պատուէրներս անթերի կերպով՝ գործադրուին :

— Գլխուս վրայ :

— Ուրիշ հրաման մը ունի՞ք, հարցուց ոստիկանապետը :

— Ո՛չ. գացէ՞ք և իսկոյն հարկ եղած միջոցները ձեռք առէք :

Օսման պէյ բարեւելով հեռացաւ .

Ցրտաշունչ հովը որ մէկ քանի ժամէ ի վեր կը փչէր, գաղբած էր ու հիմակ ձիւնի խոշոր խոշոր հատիկներ առատօրէն կը թափէյին երկինքէն, ձերմակ սաւան մը տարածելով չորս կողմը :

Փաշան՝ ձիւնին տակ կեցած՝ անչարժ կը սպասէր իր ասուած հրամաններուն գործադրութիւնը տեսնելու համար :

Քառորդ մը ետքը ոստիկանները, հինգական քայլ իրարմէ հեռաւորութեամբ բոլորուած էին ապարանքին աւերակներուն շուրջը, ձիւնին տակ, սպիտակ արձաններու պէս :

— Ահմէտ, ըսաւ փաշան իր սպասաւորին դատնալով,

նայէ՛ որ մարդ ոտքը շէնքէն ներս չդնէ . . . ես արշալոյսին կուգամ, չըլլայ որ վայրկեան մը հեռանաս :

— Ապահով եղէք, փաշա էֆէնտի, պատասխանեց Ահմէտ, ակնածական բարեւ մը տալով :

Իզգէթ փաշա վերջին ակնարկ մը նետելէն ետքը միացող շէնքին վրայ, հեռացաւ :

Փաշային տուած պատուէրը տարօրինակ չթուեցաւ ո՛չ ոստիկանապետին, ո՛չ Ահմէտ աղայի : Բնական էր որ շատ մը արծաթեղէն ու սակեղէն սպասներ, թանկագին առարկաներ ու գոհարեղէններ և նոյն իսկ դրամարկղի մէջ պահուած հընչոն դրամ դանուէր ապարանքին մէջ և փաշան այդ խիստ հակողոտթիւնները ձեռք առնելով՝ նպատակ ունէր անշուշտ զանոնք գողցնել չապ :

Եւ սակայն այդ հրահանգները տուած ատեն ինչո՞ւ աւելցուցած էր թէ զանոնք գործադրելով Սուլթանին ծառայած պիտի ըլլային : Ոստիկանապետ Օսման պէյ ասոր մեկնութիւն մը չկրցաւ տալ, բայց ի վերջոյ խորհեցաւ .

— Գուցէ դիտմամբ այսպէս ըսաւ, որպէս զի ա՛լ աւելի ուշադրութեամբ հակողութիւն բնենք :

Արշալոյսին Իզգէթ փաշա պալատական երկու թիկնապահներու ընկերակցութեամբ եկաւ :

Օսման պէյ փութաց իսկոյն զայն դիմաւորելու :

— Փաշա էֆէնտի, ըսաւ, ձեր հրամանները կէտ առ կէտ գործադրեցինք, ձեր ազան այս մասին կրնայ վկայել :

Ահմէտ աղա որ ինքն ալ մօտեցած էր իր տիրոջ, ոստիկանապետին խօսքերը հաստատոց :

— Լաւ, լաւ, պատասխանեց Իզգէթ փաշա գոհունակ դէմքով մը, վստահ էի այդպէս ըլլալուն . . . բայց այս խեղճ մարդիկն մինչեւ առտու սարսափելի կերպով մասձ ու յոգնած ըլլալու են, իսկոյն իրենց տեղերը ղրկեցէք թող հանգստանան, դուք ալ դացէ՛ք հանգչելու :

Յետոյ յանկարծ, միաքը բան մը ինկածի պէս, ըսաւ .

— Հա՛, բայց հարկ է այս խեղճերուն նուէր մը տալ, որպէս զի գոնէ բազմիք մը կրթան... քանի՛ հողի են :

Երեսուն երկու հողի, պատասխանեց Օսման պէյ :

Պալատական քարտուղարը թղթապանակը հանեց գրպանէն ու անոր մէջէն չորս հատ հինգ ոսկինոց պանքնօթ հանելով՝ երկարեց ոտտիկանապետին :

— Ահաւասիկ քսան ոսկի, ըսաւ, կը խնդրեմ իմ կողմէս ամէն մէկ ոտտիկանի կէս կէս ոսկի նուէր տուէք և մնացածն ալ ձեզի պահեցէք :

— Շնորհակալ եմ փաշա էֆէնտի, պատասխանեց Օսման պէյ, որուն դէմքը ճառագայթեցաւ պանքնօթներուն տեսքէն :

Յետոյ փութկոտութեամբ աւելցուց .

— Եթէ հարկ է, կրնանք տակաւին մեր հակողութիւնը շարունակել :

— Ձէ՛, չէ՛, պատասխանեց Իզզէթ փաշա, ընդհակառակն անմիջապէս հեռացէ՛ք, ա՛լ պէտք չունինք ձեզի, քանի որ մենք հոս ենք :

— Ինչպէս որ Ձեր Վսեմութիւնը կը հրամայէ այնպէս կ'ընենք, ըսաւ ոտտիկանապետը և բարեւելով հեռացաւ ու զնաց բարի լուրն հաղորդելու իր ստորադասեալներուն :

Ոտտիկաններն արդարեւ ուժաթափ եղած էին և իրենց պաշտօնին վերջանալն ուրախութեամբ լսեցին : Իսկ երբ Օսման պէյ յայտնեց թէ փաշա էֆէնտին ամէն մէկուն կէս կէս ոսկի պարգև տուած էր, յոգնութիւններն բոլորովին մոռցան :

Ոտտիկաններուն հեռանալէն ետքը, Իզզէթ փաշա իր երկու ընկերակիցներով ուղղուեցաւ դէպ ի այրած շէնքը, մինչ Ահմէտ աղա քանի մը քայլ հեռուէն կը հետեւէր իրենց :

Գիշերն ամբողջ երեք ժամ առատօրէն ձիւնած էր և չորհիւ այդ ձիւնին գրէթէ կրակի հետք չէր մնացած :

Փլատակներու խառնակոյտին մէջ բաւական յառաջանալէ ետքը, Իզզէթ փաշա կեցաւ և ըսաւ իր ընկերակիցներուն :

— Եթէ չեմ սխալիր, այս տեղուանքը պէտք է ըլլան մարմինները . . . այս կողմն եղած բեկորներն իմ յարկարածինս մնացորդներն ըլլալ կը թուին . . . :

Ուրեմն մեր փնտառութիւնները այս տեղէն կ'սկսինք, պատասխանեց թիկնապահներէն մին, բայց ո՞ւր մնացին մեր մարդիկը . . . :

Կարծես այս հարցումին պատասխանելու համար փողոցին ծայրը չորս մարդիկ երեւցան, որոնք արագ քայլերով մօտեցան այրած շէնքին, սակայն չհամարձակեցան ներս մտնել :

Իզգէթ փաշա որ տեսած էր զանոնք նշան ըրաւ որ մօտենան :

— Ո՞ւր են կառքն ու անտուկը, հարցուց երբ որ այդ մարդիկը մօտեցան :

— Ճամբան են, հիմա կը հասնին, փաշա էֆէնաի, պատասխանեց իրենցմէ մէկը :

— Օ՛հ, ժամանակ մի՛ կորսնցնէք ու անմիջապէս սկսեցէք մաքրել սա տեղուանքը, հրամայեց Իզգէթ փաշա :

Չորս մարդիկը որոնք բահերով ու բրիչներով զինուած էին, գործի սկսան :

Ամէտ աղա որ այդ գործողութիւններուն ականատես կ'ըլլար, ինքնիրեն խորհրդածեց .

— Անշուշտ դրամարկղը և արժէքաւոր առարկաները փնտուել կ'ուզէ մեր փաշան :

Քիչ մը վերջը շէնքին տօջեւ հասաւ նաև սալակ մը, որուն վրայ խոշոր անտուկ մը դրուած էր :

Սալականը և անոր ընկերացող երկու ուրիշ անձեր եկան օգնելու պեղումի գործին աշխատողներուն :

Ժամ մը անընդհատ փլատակները մէկ կողմ առնուեցան, սակայն ոչինչ երեւան ելաւ :

— Արդեօք սխալ տեղ սկսանք փնտուել, փափաց թիկնապահներէն մին պալատական քարտուղարի ականջին :

Իզգէթ փաշա վստահ չեղտով մը պատասխանեց .

— Չէ՛, բուն տեղն է այս... երեւան կլած բեկորներուն մէկ քանիները իմ աշխատութեան սենեակիս և հիւրասրահիս կը պահպանին, այս մասին աստիճակով կամ :

Հետախուզութիւնը եռանդով կը շարունակուէր : Յանկարծ մարդերէն մին գոչեց .

— Այրած դիակ մը... :

Ամէնքը ծոկեցան ցոյց արուած տեղը : Արդարեւ կունծած, բորբոքվին ամխացած կոյտ մը կ'երեւար, որուն վրայ կը նըշմարուէր ոտքեր ու թեւեր և անձանաչելի դարձած գլուխ մը :

Իզգէթ փաշա յաղթական ակնարկ մը ուղղեց իր ընկերակիցներուն :

— Տեսա՞ք որ չէի սխալած, ըսաւ գոհունակութեամբ :

Յետոյ հրամայեց մարդոց որ սայլակին մէջ եղած սընտուկը բերեն ու ամխացած դիակը անոր մէջ փոխադրել արւաւ :

— Հիմա, ըսաւ, երբ այդ գործողութիւնը լմնցաւ, շարունակեցէ՛ք ձեր գործը :

Յօթը մարդիկը՝ անմրմունջ՝ սկսան այրած բեկորները մէկ կողմ տունել :

Քիչ մը հտքը նոյն ամխացած վիճակին մէջ երկրորդ դիակ մըն ալ գանուեցաւ, զոր նոյնպէս սնտուկին մէջ փոխադրեցին :

— Երէկ զիշեր փաշային հիւր եկող և բոցերուն մէջ մընացող երկու անձերուն դիակներն են, մտածեց ինքնին Ահմէտ աղա, բայց ինչո՞ւ այդ անձերը չկրցան ինքզինքնին փրկել կրակէն, մինչ իրենց ընկերացող երրորդ անձը կրցաւ ազատիլ... այս բանը, շիտակը, շատ տարօրինակ կ'երեւայ ինձի :

Իզգէթ փաշայի հաւատարիմ աղան այս մտածումներուն մէջ ընկղմած էր երբոր փնտռտուք կատարող անձերը երրորդ ամխացած դիակ մըն ալ երեւան հանեցին փլատակներուն մէջէն :

Ապաիւլ Համիտի սիրական քարտուղարը և երկու թիկնապահները մօտեցան այդ նոր դիակին, ուշի ուշով քննեցին զայն, յետոյ մէկ կեղմ քաշուեցան .

— Այս ալ սնտուկը դրէ՛ք, սնտուկը գոցեցէ՛ք և սայսայլակը փոխադրեցէ՛ք, հրամայեց Իզզէթ փաշա :

Ահմէտ սղա ափ ի բերան մնացած էր այդ երրորդ դիակին երեւան համուկէն . . . ինչպէ՛ս կարելի էր այդ, քանի որ բոցերուն մէջ մնացողները երկու հողի էին միայն : Եւ սակկայն իր տէրը ո և է զարմանք չէր յայանած, ընդհակառակն կարծես այդ երրորդ դիակին մէջտեղ կլկերուն կ'ըսպատէր . . :

Ահմէտ սղայի համար այս դէպքը այնքա՛ն անակնկալ բան մըն էր որ համարձակեցաւ մօտենալ իր սիրոջ և չփոթած երեւոյթով մը ըսաւ անոր .

— Փաշա էֆէնտի, կը կարծէի որ երկու հողի միայն այրած էր տանը մէջ, մինչդեռ հիմա երեք դիակ զանուեցաւ . . . :

— Լռէ՛ . սաստեց Իզզէթ փաշա խոժոռ կերպարանքով մը :

Յետոյ, պահ մը ետքը, խիստ ձեւով մը ըսաւ .

— Յնդեր ևս դուն, երեք դիակները ո՛ւր տեսար :

— Բայց, կմկմաց Ահմէտ, սնտուկին մէջ երեք դիակ դրին ու տարին . . . :

— Կո՞յր ես թէ սպուշ, պօսոյ կրկին Իզզէթ փաշա բարկութեամբ, կ'երեւայ որ գիշերը անքուն մնալով՝ աչքերդ խողոր կը տեսնան կոր . . . եր՛չաւ դիակ միայն գաանք, հասկցա՞ր, միայն երկու դիակ . . . :

Ահմէտ՝ սարսափահար՝ չպատասխանեց, թէև վստահ էր իր աչքերուն վրայ : Փաշան իր խօսքը շարունակեց բարկաճայթ շեշտովը .

— Ուրիշներուն ալ այդ տեսակ խենդ ու խելառ խօսքեր չընես . . . երեք դիակ չկայ, աչքիդ երեւցեր է . . . միայն երկու այրած մարմին գտանք, երէկ դիշեր մեղի հիւր եկող

երեք անձերէն երկուքին մարմինները զորս իրենց ընտանիքին պիտի յանձնենք, հասկցա՛ր . . . :

— Այո՛, փաշա էֆէնտի, պատասխանեց խեղճ Ահմէտ աղան որ հազար անգամ զղջացած էր իր ըրած գիտազութեանը համար :

— Բայց նոյն իսկ այս երկու գիականներուն խօսքն ալ ընելու պէտք չունիս, շարունակեց պալատական քարտուղարը դաժան նայուածք մը ուղղելով իր սպասաւորին . . . չեմ ուզեր որ կարգ մը անհիմն լուրեր մէջ տեղ ելլեն :

— Բայց, փաշա էֆէնտի, տանը բոլոր մարդիկն ալ գիտեն որ ձեր հիւրերէն երկուքը բոցերու մէջ այրեցան, կըմկըմաց Ահմէտ աղա :

— Լա՛ւ, դժբախտութիւն մըն է որ պատահեցաւ . հարկ չկայ այս եղածը ամենուն պատմելու . . . եթէ լսեմ որ այդ մասին խօսեր էք, ամենքդ ալ չարաչար կը պատժեմ :

Իզզէթ փաշա այս սպառնալիքը արաասանելէ ետքը իր աղային քովէն հեռացաւ :

Գ Լ Ո Ի Կ Բ .

Կ Ե Ղ Մ Զ Օ Ճ Ա Ն

Եւ սակայն Ահմէտ աղա իրաւունք ունէր . այրած փլատակներուն մէջէն երեք գիականեր գտնուած էին :

Երկուքը նախորդ գիշեր եկող պալատական հիւրերն էին, իսկ երրորդը . . . :

Ի զո՛ւր Ահմէտ աղա իր միտքը կը չարչարէր այս առեղծուածք լուծելու համար :

Եւ գուցէ մինչեւ այսօր խեղճ մարդը, եթէ տակաւին կ'ապրի, չէ կրցած բացատրել ինքն իրեն՝ այդ մութ կէտը :

Ճշմարտութիւնն այն է որ հրդեհը ծագած պահուն , քրտան ժամէ ի վեր մարդ մը կը գտնուէր վերնայարկին մէջ , կամ աւելի ճիշտը խօսելու համար բանասարկեալ մը :

Ո՞վ էր այդ բանասարկեալն որուն բանտապահ ըլլալ յանձն կ'առնէր պարտական բարձրաստիճան անձնաւորութիւն մը , և ի՞նչ պարագաներու մէջ այդ մարդը բերուած էր ծածկաբար , Իզզէթ փաշայի ապարանքը :

Ինչպէս , ըսինք հրդեհը ծագում առած էր Յվր . 5 շաբաթ գիշեր : Արդ , նախորդ օրը , այսինքն ուրբաթ , կարևոր ու ծանրակշիռ դէպք մը տեղի ունեցած էր Պոլսոյ կողմը , Սիւլէյմանիէի մզկիթը , յերեկուան աղօթքէն ետքը :

Երկու շաբաթէ ի վեր սպիտակ մօրուքով երկայնահասակ հօճա մը , որ Պրուսայէն եկած էր , ամէն օր կը տեսնուէր այդ աղօթատեղին : Համակրելի , պերճախօս , զիւրահագորդ և զարդացած մարդ մըն էր հօճան , որ կրցած էր առջի օրէն ամէնուն սիրտը զրաւել իր խոնարհ ու միանգամայն պատկառելի երեւոյթովը և մանաւանդ իր լեզուին հմայքովը :

Կրօնական խնդիրներու քաջ տեղեակ և միանգամայն հմուտ օսմանեան պատմութեան՝ այդ նորեկ հօճան ժամերով իր շուրջը կը հաւաքէր հետաքրքիրներու խումբ մը և անոնց տեսակ մը բացօթեայ դասախօսութիւն կ'ընէր պատմական մզկիթին ընդարձակ գաւիթին մէջ :

Ո՞չ ոք հետաքրքիր չէր եղած իմանալու իր անունը և կը գոհանային միայն «Պրուսացի Հօճա էֆէնտին» անուանելով զինքը : Ինքն ալ զգուշացած էր իր անձին վրայ խօսելէ :

Իր խօսակցութիւնները նախ կը դառնային գուտ կրօնական հարցերու շուրջը , բայց քանի մը օրէն ետքը , երբ Հօճան իրեն համար ունկնդիրներու յատուկ շրջանակ մը կազմեց , սկստու խօսիլ պատմական նիւթերու վրայ . յետոյ կամաջ կամայ , իր տեսութիւնները սկստն քաղաքական գոյն մը առնել , օրուան խնդիրները շօշափել : Բայց այս անցումը այնքան ընտելան ու աննշմարելի կերպով կատարուեցաւ որ

իր ունկնդիրները գրեթէ չզգացին : Հօճան յաճախ կը նկարագրէր Օսմանեան Պետութեան փայլուն շրջանները երբ յաղթական փառիչասէներ իրենց անպարտելի բանակներուն գլուխ անցած կ'արշաւէին Ասիայէն դէպի Եւրոպա և ամբողջ Պետութիւններ իրենց իշխանութեան առկ կ'առնէին : Օսմաններ, Ֆաթիհներ, Սիւլէյմաններ, Մուրաաներ որոնք հետզհետէ կը ընդարձակէին իրենց ժառանգութիւնը, երկիրը կը բարգաւաճէին և ժողովրդին բարօրութիւնը կ'ապահովէին : Եւ Հօճան այդ պանծալի անցեալը կը բաղդատէր ներկային հետ . . . ի՛նչ մնացած էր այդ փառաւորութիւններէն, այդ յաղթանակներէն . . . ոչինչ : Երեսուն տարիէ ի վեր այնքա՛ն դուհողութիւններով, այնքա՛ն արիւթիւններով, այնքա՛ն ջանքերով կազմուած ու ամրացած հայրենիքը դէպ ի կորստեան անդունդը կ'երթար : Օսմանցիի անունը, որ դարերով երկիւղ ու պատկառանք ազգած էր բովանդակ Եւրոպայի, այժմ կը նախատուէր, սոսակոյն կ'ըլլար, երկիրը մաս մաս կը բաժնուէր, բանակը կը տկարանար, բարքերը կ'աղակաւնէին . . . ո՛վ էր սո՞ք աղէտներուն պատասխանատուն : Հօճան չէր վարաներ յայանելու թէ միակ պատասխանատուն ներկայ կառավարութիւնն էր որ կը մտրմանար Սուլթան Համիտի անձին վրայ :

Ուրբաթ, կէս օրէն ետքը, Հօճան կրկին իր գլուխը ժողոված էր ամէն օրուան ունկնդիրները, զորոնք գրեթէ ա՛լ իր աշակերտները կը համարէր : Գաւիթին մէջ առանձին էին և կրօնաւորը աւելի համարձակութիւն առնելով, բուռն լեզուով մը կը քննադատէր Ապախը Համիտը և իր շուրջը զանուոյ հարստահարիչներն ու լրտեսները :

Խօսքը լմնցնելէ ետքը, իր շուրջիները խորին սպաւորութեան մը առկ մէկիկ մէկիկ մեկնեցան . իսկ Հօճան սիկաւէթ մը պլորելէ ետքը, ինքն ալ առանձին դուրս ելաւ մըզկիթին բակէն, դէպի Պահչէ Գարու երթալու համար :

Հօճան ա՛յնքան մտազբաղ էր այդ օրը որ չնչմարեց թէ

բակին մէջ, պատի մը տակ կծկուած կոյր մուրացիան մը, որ իրենցմէ քիչ մը անդին կը դանուէր և որուն բնաւ երբեք ուշադրութիւն չէին դարձուցած, յանկարծ ոտքի ելած էր և սկսած էր զինքը հետապնդել :

Չմոռնանք ըսելու որ կոյրին աչքերը հրաշքով բացուած էին նոյն վայրկեանին և մզկիթին բակէն դուրս ելած միջոցին, հոն թողած էր իր պատառատուն վերարկուն ու գլխի փաթթոցը և արագ շարժումով մը ֆէյ մը անցուցած էր զըլուխը :

Հազիւ թէ փողոցը ելած՝ այդ կեղծ մուրացիկը հոն սպասող երկու անձերու գաղտնի նշան ըրած էր և երեքը միասնօրէն սկսած էին հետեւիլ Հօճային :

Հօճան Պահչէ Գարու համնելով դէպ ի կամուրջ ուղղուեցաւ, ըայց երբ կամուրջի պահականոցին առջեւէն կ'անցնէր, ոտտիկան մը յանկարծ կեցուց զինքը :

— Հօճա էֆէնտի, քիչ մը ներս հրամանցէք, ըսաւ, քաղաքավար ձեւով մը :

— Ի՞նչ կայ որ, հարցուց կրօնաւորը առանց շփոթելու և զրեթէ անտարբեր կերպով :

— Քօմիսէր էֆէնտին կ'ուզէ ձեզ տեսնել :

— Ես ոտտիկանութեան հետ գործ չունիմ :

— Կ'աղաչեմ որ ներս հրամանէք վայրկեան մը, պատասխանեց ոտտիկանը այս անգամ ձայնը քիչ մը խտտացնելով :

Հօճան տեսաւ որ ընդդիմութիւնը անօգուտ էր և համակերպեցաւ :

Պահականոցը զինքը պզտիկ խուց մը առաջնորդեցին և պատուիրեցին որ քիչ մը սպասէ, մինչև որ քօմիսէրը զինքը իր քով կանչէ :

Այս սպասումը երկար չտեսց և տասը վայրկեան հաքք Հօճան քօմիսէրին քով կը տարուէր :

Այս վերջինը անոր պատկառելի կերպարանքէն ու սպիտակափառ մօրուքէն ակնածելով, յանգանքով ոտքի ելաւ և հրաւիրեց որ աթոռի մը վրայ նստի :

— Ինձ տեսնել ուզիր էք, ըսաւ Հօճան նախ ինք խօսիլ սկսելով, արդեօք ի՞նչ բանի համար է :

— Հօճա էֆէնտի նախ հաճեցէ՛ք ձեր անուշը յայտնել :
Հօճա Մուսթաֆա :

— Ո՛ւր տեղացի էք :

Էսկի Շէհիրէն :

— Ուրեմն ինչո՞ւ Պրուսացի Հօճա կը կոչեն ձեզ :

— Որովհետեւ վերջին անգամ Պրուսա կը գանուէի եւ անկէ եկայ ուղղակի Պոլիս :

— Ինչո՞վ կ'զբաղիք հոս .

— Ո՛չ մէկ բանով, մայրաքաղաքը պտտելու եկած եմ եւ զբաղում մը չունիմ :

— Ուրեմն բաւական դրամ ունիք ապրուելու համար :

— Փա՞նք Աստուծոյ, մարդու կարօտ չեմ :

— Հոս ո՞ւր կը նստիք :

— Սկիւտար կը նստիմ եւ ճիշտ Սկիւտարի շոգենաւը երթալու համար էր որ կամուրջէն պիտի անցնէի երբ զիս ներս կանչեցին :

— Յերեկները միշտ Սիւլէյմանիէի մզկիթը կը զբառնուիք :

— Այո՛, յաճախ կ'երթամ հոն :

— Ինչո՞ւ համար :

— Հայրենակիցներ տեսնելու :

— Շատ աղէկ :

Հոս լինցաւ հարցաքննութիւնը : Քօմիսէրը թերթ մը թուղթ առնելով սկսաւ գրել : Յետոյ, երբ աւարտեց իր գրութիւնը, սեղանին վրայ գանուած փոքրիկ զանգակը հնչեցուց եւ ստիկան մը ներս մտաւ :

— Այս թուղթը ա՛ւս, հրամայեց իր ստորադասեալին, եւ Հօճա էֆէնտիին հետ Զապթիէն գացէ՛ք :

— Ի՞նչ, գոչեց Հօճան ոտքի կլլելով, ես ի՞նչ գործ ունիմ Զապթիէն, թողէ՛ք որ տեղս վերադառնամ :

— Դեռ շատ շողենաւներ կան Սկիւտարի համար, պատասխանեց քօմիսէրը ժպտուն դէմքով մը, և ժամանակը տակաւին կանուխ է. կրնաք մինչեւ Զապթիէ երթալ և վերադառնալ, չեմ կարծեր որ ձեզ երկար տանն վար դնեն հոն:

— Բայց ինչո՞ւ տնպատճառ կ'ուզէք զիս հոն զրկել:

— Նաղբը փաշան կը փափաքի ձեզ տեսնել... անձնական գործի մը համար:

— Լաւ ուրեմն, երթա՛նք, ըսաւ Հօճան հառաչանք մը արձակելով:

— Հօճա էֆէնտին կառքով տա՛ր մինչեւ Զապթիէ, հըրայեց քօմիսէրը ոստիկանին:

Իր պատուէրը իսկոյն կատարուեցաւ և քսան վայրկեան հտքը հօճան Զապթիէի դուռը կը հասնէր իրեն ընկերացող ոստիկանին հետ:

Ի զուր կառքին մէջ ծերունի քարոզիչը փորձած էր խօսեցնել իր պահապանը և իմանալ իր ձերբակալման պատճառը: Ոստիկանը «բան մը չեմ գիտեր» պատասխանած էր իր բոլոր հարցումներուն և շատ հաւատակամ էր որ ճշմարիտ կ'ըսէր:

Ոստիկանատան մէջ համեմատարար հանդարտութիւն կը տիրէ: Ուրբաթ ըլլալով՝ շատ պաշտօնեաններ բացակայ էին ու գործի համար եկող գացողներ չկային: Բայց նախարարը Շէֆիզ փաշա, իր պաշտօնին գլուխն էր և Հօճային գալուստը իրեն իժաց արուելուն պէս հրամայեց որ իսկոյս իր քովը մտցնեն:

— Դո՞ւն ես Պրուսացի Հօճան, ըսաւ խիստ ձեւով մը, զայն տեսնելուն պէս:

— Այո՛, պատասխանեց միւսը, հաստատուն ձայնով մը:

— Քեզի դէմ ծանր ամբաստանութիւններ կան, շարունակեց նախարարը:

— Ի՞նչ ամբաստանութիւն կրնայ ըլլալ խեղճ ծերունի Հօճայի մը դէմ որ իր ժամանակն աղօթելով կ'անցնէ:

— Մզկիթին մէջ գլուխդ մարդիկ կը ժողովես ու անոնց

Պատակար ճառեր կը խօսիս եղեր և նոյն իսկ համարձակեր
ես մեր վեհափառ Սուլթանին նուիրական անձը քննադատե-
լու և շուրջիններուդ միաքերը գրգռելու :

— Քա՛ւ լիցի, փաշա էֆէնտի, երբևք այդպիսի յանցանք
մը չեմ գործած, պատասխանեց Հօճան անայլոյ ձայնով :

— Նոյն իսկ այսօր ցերեկէն ետքը, Սիւլէյմանիէի մէկի-
թին բակը, քու ամէն օրուան մարդիկդ զլուխդ ժողվելով,
սովորականին պէս, դանոնք ապտտամբութեան գրգռեր ես :

— Սխալ է, փաշա էֆէնտի :

— Վկաներ կան :

— Սուտ խօսած են . . .

Նախարարը պահ մը խօսքը դադրեցնելով, սկսաւ սեղա-
նին վրայ, իր առջև գրուած թուղթ մը աչքէ անցընել . յե-
տոյ զանգակը հնչեցուց և երբ օտաճին ներս մտաւ, ըսաւ
անոր .

— Հասան էֆէնտին հոս կանչէ :

Յետոյ, Հօճային դտունալով շարունակեց :

— Ուրանալը անօգուտ է, ամէն բան գիտենք, կը հաս-
կնան . . . քու ամէն օրուան խօսածներդ մէկիկ մէկիկ տեղ
զեկագրուած է մեզի : Նախ իրաւ է որ անվրաս բաներ էին
ըսածներդ, բայց ետքը, կամաց կամաց, չափը անցուցիր,
իսկ այս օրուան խօսածներդ բոլորովին աններկի են :

— Փաշա էֆէնտի ես միշտ կրօնական նիւթերու, մեր
սուրբ կրօնքին պատուիրանքներուն, նուիրական Գիրքին
մեկնութեան վրայ միայն խօսած եմ :

— Սո՛ւտ կը խօսիս, գոչեց փաշան, ձայնը բարձրացնե-
լով :

Նոյն միջոցին դուռը բացուեցաւ և մարդ մը ներս
մտաւ :

— Հասան էֆէնտի, ըսաւ նախարարը նորեկին, կը
ճանչնաս այս Հօճան :

— Այո՛, պատասխանեց Հասան, վերջերս ամէն օր կը

տեանայի Սիւլէյմանիէ մզկիթը, ուր գլուխը կարգ մը մարդիկ ծողված անոնց քարոզ կուտար :

— Ո՞վ էին այդ մարդիկը :

— Ընդհանրապէս նոյն կողմերը բնակող խանութպաններ ... միշտ միևեւոյն մարդիկն էին, տասը տասներկու հոգիի չափ :

— Եւ ի՞նչ կը խօսէր Հօճան այդ մարդոց :

— Քաղաքակրթութեան վրայ կը խօսէր, կառավարութիւնը կը քննադատէր և նոյնիսկ կը համարձակէր մեր վեհափառ Սուլթանին գէժ խօսելու ...

— Կը լսե՞ս, Հօճա, գոչեց նախարարը :

Հօճան դարձաւ և ուշադրութեամբ զինքը ամբաստանողին եհեւր նայեցաւ, ջանալով անոր գէժքը յիշել : Եւ սակայն երբեք իր ունկնդիրներուն մէջ չէր տեսած զայն : Իր զննութիւնը աւարակէ ետքը, ըսաւ ,

— Փաշա էֆէնաի, այս մարդը չեմ ճանչնար բնաւ և երբեք հանդիպած չեմ մզկիթի մէջ և հետեւաբար իմ խօսքերս լսած չի կրնար ըլլալ :

— Կը լսե՞ս Հօճան ի՞նչ կ'ըսէ, Հասան էֆէնաի, ըսաւ ուտիկանոթեան նախարարը նուրբ ժպիտով մը :

— Հօճային աչքերը կ'երևայ որ շատ զօրաւոր չեն, պատասխանեց Հասան. ևթէ ո՛չ զիս շա՛տ աղեկ պիտի կրնար ճանչնալ, մահաւանդ որ այս օր մզկիթին մէջ ինծի խօսք ալ ուղղեց :

— Ե՞ս, քեզի հետ խօսեցայ՛, գոչեց ծերունին զարմացկոտ գէժքով մը :

— Ո՛չ թէ միայն խօսեցար, այլ նոյն լակ ողորմութիւն մ'ալ սուիր :

— Իրա՛ւ որ, գոչեց Հօճան, այս խօսքերէն բնաւ բան մը չեմ կրնար է՛որ հասկնալ :

— Այո՛, շարունակեց միւսը հեգնական գէժքով մը, կուրութիւնս չնորհաւորեցիր, ըսելով որ բարեբախտութիւն մ'է

այս ժամանակիս մէջ կոյր բլլալն ու մեր շուրջը անցածներէն բան մը չտեսնենք և յետոյ մէկ զրուշ ողորմութիւն ալ առեր որպէս զի աղպին փրկութեանը համար աղօթեմ . . .

— Վա՛յ, մզկիթին կոյր մուրացիին ևս դուն, դո՛ւնց Հօճան դառնացած շէշտով մը :

Ոստիկանութեան նախարարը քահ քահ խնդալ սկսաւ :

— Վերջապէս իրար ճանչցաք, ըսաւ Հօճային .

Ծերունին շանթահարիչ նայուածք մը ուղղեց Հասանի, բայց մէկէն ինքզինքը ժողվեց և իր հանդարտութիւնը վերստին գտնելով՝ պատասխանեց .

— Իրաւցնէ ձեզի շտրհաւորեցի կոյր բլլալնուդ համար, հիմա կ'ափսոսամ որ կոյր և միանգամայն խուլ չէք եղեր :

Ասիկա պարզապէս խոստովանութիւն մըն էր :

— Հիմա ուրիշ ըսելիք մ'ունի՞ս, հարցուց նախարարը :

— Ո՛չ, պատասխանեց Հօճան կտրուկ կերպով :

— Քու պարագադ այնքան ծանրակշիռ է որ հարկ է մանրամասն քննութիւն մը բանամ քու մասիդ շարունակեց փաշան, առ այժմ մեզի հիւր պիտի մնաս ու վաղը քեզի հետ կը տեսնուինք ինչպէս որ պէտք է :

Այս խօսքերը արտասանելէ ետքը՝ նախարարը կրկին զանգակը հնչեցուց և իր օտաճիին հրամայեց բանտապետը կանչել : Երբ այս վերջինն երևցաւ, Հօճան անոր ցոյց տալով ըսաւ .

— Այս մարդը խցիկի մը մէջ բանտարկէ և դուրսի հետ ամէն յարաբերութենէ զրկէ, չըլլայ որ մէկու մը հետ խօսք փոխանակէ . . .

— Գլխուս վրայ, փաշա էֆէնտի, պատասխանեց բանտապետը ակնածանքով :

Յետոյ ծերունիին դառնալով ըսաւ .

— Եկուր հետս տեսնեմ :

Երբ նախարարին քովէն դուրս ելան՝ բանտապետը Հօճային թիւէն ուժով մը բռնեց և երկուքը միասին ուղղուե-

յան այն սանդղակը որ դէպի Զապթիէի ընդարձակ բակը կ'առաջնորդէր: Այդ բակին աջ կողմը կը գտնուէր բանտը:

Ինչպէս բսինք, ուրբաթ ըլլալուն պատճառաւ ոստիկանտունը հանդարտութիւն կը տիրէր և դրեթէ ամայի էր:

Երբ բակ իջան, Հօճան նոյուածք մը նետեց իր շուրջը, տեսաւ որ բակին մէջ հազիւ մէկ քանի ոստիկաններ կային և ելքի դրան քովն ալ միակ պահակ մը կեցած էր: Այն միջոցին ուր բակին մէջտեղը հասած էին և բանտապետը դէպի աջ դատնայու վրայ էր, որպէս զի Հօճան բանտ մտցնէ, այս վերջինը ուժով մը ցնցեց բանտապետը և իր թիւը ազատեց անոր թեւէն ու յետոյ ծռենկովը զօրաւոր հարուած մը տալով մէջքին՝ զայն գետին տապալեց:

Այս գործողութիւնը հազիւ բոլո՛ք մը տեսած էր:

Հօճան, ինքզինք ազատ զգալուն պէս, խելայեղ վազքով մը սկսաւ դէպի ելքի դուռը արշաւել, ուրկէ հազիւ և րեսուն քայլ հեռու կը գտնուէր:

Բայց բանտապետը շուտով ինքզինքը գտաւ և սկսաւ փախտականը հալածել, բարձրադո՛չ աղաղակ մը արձակելով: Ինչպէս ըսինք՝ Զապթիէի բակին մէջ մէկ քանի ոստիկաններ կը գտնուէին, որոնք լսելով անոր ձայնը, իրենք ալ օգնութեան փութացին:

Իրան առջեւ պահակ զինուոր մը կեցած էր որ ուզեց Հօճային ճամբան կտրել, բայց այս վերջինը յուսահատ ճիգով մը զայն մէկուի հրեց և ինքզինք փողոց նետեց:

Նոյն միջոցին փողոցին ծայրը կառք մը երեւցաւ որ սրարշաւ դէպի Զապթիէ կուգար:

Դրան քով պահակ կեցող զինուորը որ սկսած էր ինքն ալ Հօճան հալածել, գոչեց կառապանին:

— Հօճային ճամբան կտրէ բանտէն փախաւ...

Խեղճ փախտականը ճիշտ այդ բոլո՛քին կառքին քովէն կանցնէր: Կառապանը խսկոյն մտրակը բարձրացուց և ուժգին հարուած մը իջեցուց Հօճային երեսին, որ պահ մը իր կրած

ցաւին սաստկութենէն սահմակած մնաց : Կառապանը անոր շփոթութենէն օգուտ քաղելով՝ խակոյն գահաւորակէն վար ցատկեց և յաջողեցաւ փաթթոցաւորին վերարկուէն բռնել : Կասաղի կուլ մը սկսաւ այս երկուքին միջեւ և գուցէ Հօճան յաջողեր իր օձիքը կրկին ազատել , բայց ախտո՞ւ որ բանտապետը և պահակ զինուորը արդէն հասած էին կառապանին օգնութեան և ուրիշ ոտախկաններ ալ վաղելով կուգային : Անոնցմէ զսա կառքին դռնակը բացուած ու անկէ դեզին պիկիւրով երկայնահասակ զինուորական մը վար իջած էր :

Այս զինուորականը պալատակոն թիկնապահ մըն էր :

Հօճան . հակառակ իր յուսահատ կոտորածեան՝ չէր ուզեր անձնատուր ըլլալ և կասաղութեամբ կը կուտէր իր հալածիչներուն դէմ : Առանց իր պաշարիւնութիւնը կորսնցնելու առանց բերնէն խօսք մը հանելու , կուռիի սոսկալի հարուածներ կ'իջեցնէր աջ ու ձախ , մինչ պահակ զինուորը անոր մէջքին փաթթուած՝ կը ջանար զայն անչարժութեան դատապարտել :

— Այս կրօնաւորը կարծես կուխամարտութեան ժառանգորդ զսա առած է , մտածեց ինքնին թիկնապահը որ այս անհաւատար պայքարը կը դիտէր հետաքրքրութեամբ :

Եւ սակայն յայտնի էր որ հօճան ի վերջոյ պիտի ընկրծուէր : Ոտախկանները , բանտապետն ու կառապանը իրենց ընդունած հարուածներուն սաստկութենէն կատաղած , սոսկալի հայոյանքներով սկսան իրենք ալ կուռիներ սեղալ Հօճային գլխուն սրուն փաթթոցն արդէն գետին ինկած էր :

Կուռի տաք միջոցին՝ բանտապետը Հօճային երկար մօրուքէն բռնեց և ուժով մը քաշեց . . .

Հօճան սոսկալի աղաղակ մը արձակեց , ոչ թէ ցաւի այլ յուսահատութեան աղաղակ մը : Բանտապետն ինքն ալ զարմացական ճիշով մը ձեռքն ետ քաշեց . . . Հօճային մօրուքն իր ձեռքը մնացած էր . . . :

— Վա՛յ, իր մօրուքը կեղծ է եղիր, գոչեց շուարած կերպարանքով մը :

Այս յայտնութիւնը կարծես Ղլատած էր Հօճային կորովը . իր կատաղութիւնը յանկարծ տեղի սուաւ հանդարտ համա- կերպութեան մը :

— Ա՛լ օգուա չունի, մրմուաց, ազատում չկայ, բանտ վերադառնանք :

Երկու սասիկաններն ուժով մը Հօճային թեւերէն բըռ- նած, զինքն առաջնորդեցին դէպի Զսպթիէ, մինչ պալատա- կանն անտնց կը հետևէր, քիթին տակէն սա բառերն արտա- սանելով, ինքն իրեն խօսելու պէս :

— Բնաւ տարակոյս չկայ. բուն խոյ անիկա է . . . :

Քանի մը վայրկեան ետքը բանտին երկաթեայ դուռը կը գոցուէր Հօճային վրայէն :

Թիկնապահը անոր արգելափակման աչքովը հանդիսատես ըլլալէ ետքը, ուղղուեցաւ վերնայարկը և իսկոյն ոտիկանու- թեան նախարարին քով գնաց :

— Վեհափառ Սուլթանը կը փափաքի ձեզ տեսնել, ըսաւ Շէֆիք փաշային, և կ'ուզէ որ միասին բերէք այն զինուո- րականներուն ցուցակը որոնց մասին հետապնդումներ պիտի կատարուին :

— Սնմիջապէս պատրաստ եմ պալատ երթալու, պա- տասխանեց փաշան, ոտքի ելլելու շարժում մը ընելով :

— Ո՛չ, կրնաք ձեր գործերն աւարտել և այնպէս գալ :

— Հոս գործ մը չունիմ :

— Գիտէ՞ք որ այս միջոցիս բանտարկեալ մը փախչելու փորձ ըրաւ, բայց բարեբախտաբար իմ կառապանիս շնորհիւ չկրցաւ յաջողիլ :

— Ի՞նչ բանտարկեալ, գոչեց նախարարը որ անցած դարձածէն տեղեկութիւն չունէր :

— Հօճա մըն էր կարծեմ :

— Այո՛, հասկցայ, պատասխանեց Շէֆիք փաշա, Սիւ-

լէյմանիէի մզկիթին մէջ խռովարարական քարոզներ խօսող Պրուսացի Հօճան :

— Վստահ էք որ այդ մարդն իրաւցնէ հօճա է :

— Այնպէս կը կարծեմ, կամ գոնէ այդպէս ցոյց կուտան իր մասին եղած ճուռնալիները :

— Հիմա եթէ զինքը տեսնաք կրկին, վստահ եմ որ ձեր կարծիքը բոլորովին պիտի փոխէք :

— Ինչո՞ւ համար, հարցուց փաշան զարմացական դէմքով մը :

— Բացատրեմ և տեսէք: Ինչպէս ըսի այդ Հօճան յաջողած էր իր բանտապետին ձեռքէն փախչիլ և ինքզինք փողոց նետել և գուցէ հոնկէց ալ յաջողէր փախչելու, եթէ մենք վրայ չհասնէինք: Ինչ որ է, այդ Հօճան կ'երեւայ որ շատ զօրաւոր ջիղեր ունի, որովհետեւ կրցաւ չորս հինգ հոգիի դիմադրել և ամէնուն ալ պատուական ծեծ մը քաշել :

— Ի՞նչ կ'ըսէք :

— Տեսածս կը պատմեմ, փաշա էֆէնտի: Այդ կատաղի կռիւին միջոցին էր որ ձեր բանտապետը Հօճային մօրուքէն բռնեց և զիտէ՞ք ինչ պատահեցաւ :

— Ի՞նչ . . . :

— Մօրուքը բանտապետին ձեռքը մնաց :

— Զարմանալի բան :

— Ընդհակառակն եղածը շատ բնական էր, քանի որ Հօճային մօրուքը կեղծ էր :

— Կեղծ մօրուքով Հօճա՛ մը, գոչեց փաշան, ուրեմն ինչիբը կը ծանրանայ և պէտք է որ խիստ քննութեան մը ձեռնարկենք և այդ խորհրդաւոր Հօճային ինքնութիւնը հասկընանք :

— Կարծեմ պէտք չկայ այդպիսի քննութեան մը, որովհետեւ հագիւ թէ մօրուքը դէմքէն վար առնուեցաւ, իսկոյն կրցայ զինքը ճանչնալ :

— Ծանցցա՞ք զինքը, ուրեմն ըսէ՛ք տեսնեմ իր անունը :

— Այդ կեղծ Հօճան պարզապէս Հագգը պէ՛ն է, ըսաւ պալատական թիկնապահը վճռարար:

Ոստիկանութեան նախարարը զսպանակէ մը մզուածի պէս մէկէն վեր ցատկեց նստած տեղէն:

— Ի՛նչ, Հագգը պէ՞յը, գոչեց, յեղափոխական ծածուկ քօմիթէին պե՞տը . . . :

— Այո՛, բուն իսկ ինքը:

— Բայց, պէյ էֆէնտի, սխալած չըլլաք:

— Վստահ եմ ըսածիս վրայ, շարունակեց թիկնապահը բայց եթէ կ'ուզէք դուք ալ կրնաք անձամբ ստուգել, զինքը կրկին ձեր ներկայութեան բերելով:

— Բնականաբար այդպէս պիտի ընեմ, պատասխանեց Շէֆիք փաշա սեղանին վրայ դրուած զանգակը հնչեցնելով:

Եւ երբ օտաճին ներս եկաւ իր տիրոջ հրամանը ընդունելու, իսկոյն պատուիրեց որ Պրուսացի Հօճան կրկին իր քովը բերեն:

Հագգը պէյ թանկագին որս մըն էր որ ձեռք կ'իյնար և ուրուն ձերբակալումը մեծ ուրախութիւն պիտի պատճառէր Ապտիւլ Համիտին: Ինչպէս նախարարը կ'ըսէր, իրաւամբ այս կեղծ Հօճան մէկ քանի տարիէ ի վեր մութին մէջ գործող գաղտնի քօմիթէին ամենէն կարեւոր պետերէն մին էր և անոր հիմնադիրը միանգամայն: Նախկին բարձրաստիճան զինուորական մըն էր որ իր ծառայութիւնը թողլով՝ իր կեանքը նուիրած էր բռնաւորին դէմ պայքարելու համար: Զինքն այդ վտանգաւոր ճամբուն մէջ մզող գերագոյն ազդակն եղած էր վրէժխնդրութեան զգացումը: Տարիներ առաջ, Ապտիւլ Համիտ, ուրիշ շատ մը զինուորական վարժարանի աշակերտներուն հետ, Մարմարայի մէջ ծովամոյն ընել տուած էր Հագգը պէյի միակ զաւակն որ այդ վարժարանը կը յաճախէր և իբրեւ կասկածելի ամբաստանուած էր: Այս անուր և վայրագ արարքն ահուելիօրէն արիւնած էր զինուորականին հայրական սիրտն և անհաշտ ատելութեամբ մը լեցուցած՝ իր

հոգին : Այդ օրէն ուխտած էր արիւնարբու բռնաւորին կո-
րուսան և մութին մէջ , հաւատարիմ ընկերներով , յամառ
ու յանդուգն պայքար մը սկսած էր Ապտիւլ Համիտի դէմ :
Անգամ մը , մեր այս պատմած դէպքերէն երեք տարի առաջ ,
թէեւ ձերբակալուած ու բանտարկուած էր Պէյքօզ , կայսե-
րական ծովեզերեայ քէօշկին մէջ , բայց չնորհիւ իր ընկերնե-
րուն օժանդակութեան , յաջողած էր փախչիլ և ազատիլ բըռ-
նաւորին ճիրաններէն ու շարունակել այն գործն որուն երդ-
մընցած էր նուիրուիլ հոգեւին :

Երբ ոստիկանութեան նախարարն ու պալատական թիկ-
նապահը առանձին մնացին , այս վերջինը Հագգը պէյի առա-
ջին փախուստին ակնարկելով անշուշտ , ըսաւ .

— Յուսանք որ այս անգամ զինքը դարձեալ Պէյքօզի
պէս հեռաւոր տեղ մը չենք բանտարկեր , որպէս զի իր ըն-
կերները գան զինքը փախցնելու :

— Այս անգամ գիտեմ թէ ի՞նչ կերպով պիտի վարուիմ
իրեն հետ , պատասխանեց նախարարը շարաշուք դէմքով մը :

Քիչ ետքը դուռը բացուեցաւ և կեղծ Հօճան ներս մտաւ
բանտապետին և երկու ոստիկաններու ընկերակցութեամբ :
Իր փախուստի փորձէն ի վեր սկսած էին լաւ զգուշութիւն
ընել :

Երբ Շէֆիք փաշա տեսաւ զայն կրկին գլուխը բաց և
առանց մօրուքի , պէտք չունեցաւ երկար քննութեան և իս-
կոյն հասկցաւ որ թիկնապահը բնաւ չէր սխալած :

— Այս ի՞նչ կը նշանակէ , գոչեց կեղծ բարկութեան շեշ-
տով մը խօսքը բանտարկեալին ուղղելով , միթէ մեր քթին
կը խնդաս կոր . . .

— Ի՞նչ է եղածը , հարցաւ Հօճան հանդարտութեամբ :

— Ի՞նչպէս կը համարձակիս արդարութիւնը խաբել այդ-
պէս ծպտուելով . . .

Բանտարկեալը չպատասխանեց և արհամարհոտ դէմքով
մը երեսը անդին դարձուց :

— Միթէ նախկին զինուորականի մը կը վայլէ՞ այս տեսակ խաբերայութիւններու զիմիկ և դաւաճանիկ իր վեհապետին դէմ որուն հաւատարմութիւն ուխտած է, շարունակեց Շէֆիք վաչա :

Այս բառերուն վրայ կեղծ Հօճան իր լուսթիւնը խզեց և ձայնը բարձրացնելով գոչեց .

— Կ'արգիլեմ քեզի արժանապատուութեան խօսք ընել և իմ արարքներուս դատուոր կանգնիլ :

— Հա՛գգը պէյ այդքան մի բարձրացնիր՝ ձայնդ, պատասխանեց նախարարը ինքն ալ բարկացած՝ զիսես որ մօտէն ծանօթ եմ քու գործերուդ և տուճին անգամ չէ որ իմ դէմս կը գտնուիս :

— Եթէ մօտէն ծանօթ ես իմ գործերուս՝ ատիկա պատճառ մըն է որ տեղի յարգանքով վարուիս հետս, ըսաւ բանտարկեալը : Այո՛, Հագգը պէյն եմ, այն զինուորականը՝ որ ուխտած է մինչեւ կեանքին վերջը Համիտի դէմ կռուելու և իր մէկ հատիկ զաւակին վրէժը լուծելու : Միթէ կը կարծես որ պիտի ջանամ ինքզինքս ծածկել և անունս ուրանալ . . . :

— Արդէն անօգուտ պիտի ըլլար այդպիսի փորձ մը, պատասխանեց ատիկանութեան նախարարը :

Յետոյ պահ մը լուռ մնալէ ետքը շարունակեց :

— Նոյնքան անկեղծութեամբ պիտի խոստովանիս նաև իբրև Հօճա ծպտուելուդ և մղկիթներու մէջ քարոզելուդ պատճառը :

— Ծպտուեցայ որպէս զի բռնաւորին ճանկը չանցնիմ, իսկ քարոզեցի որպէս զի ժողովուրդը բռնաւորին ճանկէն ազատեմ, պատասխանեց նախկին զինուորականը պաղարիւնով :

Թիկնապահը նշմարեց որ տեսակցութիւնն անհաճոյ ձև մը կ'առնէր և թէ լաւագոյն էր առ այժմ զայն կարճ կապիլ, ուստի նախարարին դառնալով ըսաւ :

— Փաչա էֆէնտի կարծեմ թէ ժամանակ է մեկնելու,

որովհետեւ ինչպէս ըսի մեր Վեհափառ Տէրը ձեզի կ'սպասէ :
Զեր հարցաքննութիւնը , եթէ կարելի է վաղուան ձգեցէք :

Սուլթանին անուան յիշատակութիւնը լսելուն պէս Շէ-
ֆիք փաշա ոտքի ելաւ և ըսաւ .

— Այո՛ , իրաւունք ունիք , անմիջապէս կը մեկնինք . . .
Յետոյ բանտապետին դառնալով շարունակեց .

— Հազգը պէ՛ն իր տեղը տարէք :

Հազիւ թէ բանտարկեալն և իր պահապանները դուրս
կլած էին սենեակէն , նախարարն իր օտաճին կանչելով՝ հրա-
մայեց որ բանտի անօրէնն իր քով կանչէ և անոր ըսաւ .

— Ծնորհիւ մեր Վեհափառ Սուլթանին և նախախնամու-
թեան՝ մեր Պետութեան մեծագոյն թշնամիներէն մէկը այսօր
ձերբակալուեցաւ և հոս կը գտնուի : Այդ մարդը նոյնինքն
Հազգը պէ՛ն է , ծածուկ Քօմիթէին պետը զոր անգամ մը ար-
դէն յաջողած էինք ձեռք ձգել և որ սակայն խոյս տուաւ :
Ամենախիստ հսկողութիւններ պէտք է որ ձեռք առնես , որ-
պէս զի կրկին չփորձէ փախչիլ և գիտցած եղիր որ եթէ այդ-
պիսի փորձանք մը պատահի գլուխդ վրայ կուտաս :

— Անմիջապէս պէտք եղած միջոցները ձեռք պիտի առ-
նեմ :

— Զինքն ամէն յարաբերութենէ պէտք է բացարձակա-
պէս զրկել , կը հասկնա՞ս , պէտք չէ որ նոյն իսկ խօսք փո-
խանակէ բանտապանին հետ :

— Ծառ ազէկ , փաշա էֆէնտի :

Տնօրէնը խոնարհութիւն մը ընկելով հեռացաւ :

Երբ Շէֆիք փաշա թիկնապանին ընկերակցութեամբ Եըլ-
տըղի պալատը հասաւ և իր տիրոջ հազորդեց անյուսալի ձեր-
բակալութիւնը , Ապրիւլ Համիտ չափազանց դո՛ս մնաց : Հազ-
գը պէ՛ն , ինչպէս ըսինք , թրքական յեղափոխութիւնը շարժող
թաքուն զօրութիւններէն մէկն էր և իր դերը , իրրեւ նախ-
կին գինուորական բարձրաստիճան՝ սպայ մը , շատ մեծ էր և

ղած բանակին վրայ որ վերջապէս ընդվզումի նշաններ ցոյց կուտար :

Ապտիււլ Համիտ խսկոյն կարճ խորհրդակցութիւն մը ունեցաւ ոստիկանութեան նախարարին և իր հաւատարիմ քարտուղար Իզդէթ փաշայի հետ և այս խորհրդակցութեան արդիւնքն այն եղաւ որ նախարարը փութով ոստիկանատուն վերադարձաւ կրկու թիկնապահներու ընկերակցութեամբ, և հոն համնելուն պէս Հագգը պէյն իր սենեակը բերել տուաւ և իր աչքին տակ պահեց ժամերով :

Վերջապէս, երբ մութը կոխեց բոլորովին, Շէֆիք փաշա և երկու թիկնապահները ծայրայեղ զգուշութիւններով ձերբակալեալը կառք դրին և ձամբայ հանեցին դէպ ի Պէշիքթաշ : Այս ամէն գործողութիւնները կատարուեցան առանց բաւ մը ուղղելու կեղծ Հօճային, որ ինքն ալ իր կողմէ բնաւ բիրանը չբացաւ : Իր ինքնութիւնը երեւան կլիկէն ի վեր կարծես բոլորովին ընկճուած էր և հանդարտ համակերպութիւն մը ցոյց կուտար :

Երլաղլի մէջ, ուր փոխադրեցին զինքը իր բարձրաստիճան պահապանները, կրկին սենեակի մը մէջ պահուած մնաց, առանց ո և է հարցաքննութեան ենթարկուելու :

Կէս գիշերէն ետքը միայն եկան սենեակին դուռը բանահայտ, երբ արդէն Հագգը պէյ թիկնաթոռի մը մէջ ընկողմանած կը ննջէր :

Սենեակին դրան բացուելը լսելուն պէս աչքերը բացաւ և ստքի կանգնեցաւ : Ներս մտնողներէն մին յառաջացաւ դէպի իրեն, մինչ միւսները դրան մօտ կ'սպասէին :

Սուլթանին անձնական քարտուղար Իզդէթ փաշան էր :

— Մեր վեհափառ Տէրը, ըսաւ խօսքն Հագգը պէյի ուղղելով, հրամայեց որ այս գիշեր իմ բնակարանս հիւր ըլլաք : Ձերբակալեալը զարմացած դէմքով մը փաշային երեսը նայեցաւ, կարծես չհասկնալով անոր ըսածները :

— Ինչպէս, կակազեց, ձեր տունն հիւր ըլլամ . . . : Բանա-
տարկուիմ ըսել կ'ուզէք անշուշտ :

— Իմ տունս բանտ չէ և ոչ ալ ես բանտապահ մը, պա-
տասխանեց Իզզէթ հպարտօրէն . իբրև հիւր պիտի ընդունիմ
ձեզ և Վեհափառ Սուլթանն ալ այսպէս կը փափաքի :

— Ուրեմն չնորձակալ եմ ձեր հիւրասիրութենէն :

Այս խօսքերուն վրայ, նախկին զինուորականը, որ տա-
կաւին Հօճայի վերարկուն կը կրէր, քայլ մը առաւ դէպ ի
դուռը :

— Պիտի խնդրէի որ ձեր հագուստը փոխէիք, եթէ կա-
րելի է, ըսաւ Իզզէթ փաշա, որպէսզի պարտալ տեղը ուշադ-
րութիւն չհրաւիրէք ձեր վրայ :

— Ինչպէ՞ս կարելի է ատիկա, պատասխանեց Հագզը պէյ
թեթև ժպտով մը :

— Եստ դիւրաւ, քանի որ պէտք եղածը ձիտախն բե-
րած ենք :

Եւ ետին դառնալով իրեն ընկերացող անձերէն մէկուն
ըսաւ .

— Ձեր ծրարը հոս բերեք :

Սրդարեւ ամբողջ ձեռք մը հագուստ և նոր ֆէս մը,
չապիկ և վզնոց միտախն բերած էին :

Վայրկեանի մը մէջ կեզծ Հօճան հագուստները նետեց
վրայէն և ծրարին մէջինները հագաւ :

Հագուստներու այս փոփոխութեան միջոցին կեզծ Հօճան
ձեռքի արագաշարժութեամբ մը, յաջողեցաւ թուղթի կտոր
մը որ իր վերարկուին մէկ ծածուկ գրպանը դրած էր, հանել
և նոր հագած վիզէին գրպանը անդաւորել : Այս գործողու-
թիւնը այնքան ճարտարութեամբ մը կատարեց որ հոն գրա-
նուողներէն ո՛չ ոք կրցաւ նշմարել, ի բաց առեալ Իզզէթ փա-
շա, որ կարծես այդպիսի գործողութեան մը կ'սպասէր և մու-
թին մէջ ծածկուած իր նայուածքը յառած էր, մինչև ետքը,
Հագզը պէյի վրայ :

— Այդ թուղթը պէտք է ձեռք անցընել վարպետութեամբ, մտածեց ինքնիրեն :

— Պատրաստ եմ կրնանք մեկնել, ըստ նախկին զինուորականը դէպի դուռը յառաջանալով :

— Ձեր միւս լաթերը կ'ուզէ՞ք որ միասին առնենք, հարցուց պալատական քարտուղարը հեգնական ձևով մը :

— Ո՛չ, անոնք իբրև յիշատակ Ապտիւլ Համիտին կը թողում, պատասխանեց նախկին զինուորականը անենայն լըրջութեամբ :

Իզզէթ փաշա չպատասխանեց այս անպատկառ խօսքերուն սակայն զզջաց իր ըրած դիտողութեան :

Իզզէթ փաշա ուրիշ չորս պալատականներու ընկերակցութեամբ իր «Հիւր»ը առաջնորդեց մինչև Երլարզի պարտէզին մեծ դրան առջև, ուր երկու կառքեր կ'սպասէին, թէև իրենց երթալիք տեղը շատ մօտ էր պալատան :

Երբ ապարանքը հասան, ամենքը կը ննջէին, միայն դրան պահապանը կը հսկէր ու կ'սպասէր իր տիրոջ վերադարձին :

Հաղիւ թէ դուռը բացուած՝ իզզէթ փաշա իր մարդոց և Հազզը պէյի հետ ներս խուժեց և արագ քայլերով ամենքը մէկէն դէպի մեծ սանդուխն ուղղուեցան որ կանթեղի մը ազօտ լոյսովը միայն լուսաւորուած էր :

— Մի քնանար, որպէսզի պէյերուն դուռը բանաս, երբոր վար իջնան հրամայեց Իզզէթ փաշա իր դռնապանին, սանդուխին գլխին :

Գ Լ Ա Ի Ե Գ .

ՇԱԲԱԹ ԳԻՇԵՐՈՒՄ և ՏՈՒՄԸ

Ընթերցողները չեն մոռցած անշուշտ որ մեր նախորդ գլխուն մէջ պատմած դէպքերը տեղի կ'ունենային Իզդէթ փաշայի ապարանքին այրելուն նախորդ օրը : Այսպէս ուրեմն, Ապտիւլ Համիտի սիրական քարտուղարը, իր պալատական չորս ընկերակիցները և Հագգը պէյ Ուրբաթ, կէս գիշերէն քիչ ետքը մտան այն շէնքին մէջ որ քսանըչորս ժամ ետքը դո՛հ պիտի երթար հրդեհին, տարօրինակ արկածի մը հետեւաքով :

Ըսինք որ ապարանքին դուռը բացուելէ ետքը, դուրսը սպասողներն աճապարանքով ներս մտած և արագ քայլերով սանդուխէն վեր ելած էին : Դանապանը, որ քունին մէջէն արթնցած ու դուռը բացած էր, իր կէս քուն կէս արթուն վիճակի մէջ չէր կրցած ճանչնալ ու որոշել ներս մտնողները, բայց իր տիրոջ ներկայութիւնը բաւ համարած էր ու պէտք չէր տեսած մասնաւոր ուշադրութիւն մը ընծայելու ներս մտնողներուն : Նոյն իսկ այնքան արագօրէն անցեր էին իր առջեւէն, որ չէր կրցած նշմարել անոնց թիւը : Յաճախ կը պատահէր որ Իզդէթ փաշա, այսպէս ուշ ատեն, հիւրեր բերէր իր հետ կամ հիւրեր ընդունէր, ուստի եղելութիւնը բնաւ անսովոր չթուեցաւ դանապանին որ հանդարտիկ իր խցիկը մտաւ և երկնցաւ անկողնին վրայ, սպասելով որ հիւրերը վար իջնեն և զանոնք ճամբու դնէ :

Գարով Իզդէթ փաշայի՝ իր հիւրերուն հետ ուղղուեցաւ իր յատուկ յարկարաժինը զոր արդէն նկարագրեցինք մեր պատմութեան առաջին գլուխներուն մէջ և շիտակ գնած իր գրասենեակը :

Երբ սենեակը լուսաւորուեցաւ և ամենքը բազմեցան թաւշապատ թիկնաթոռներու վրայ և վառարանն ալ, որ նախապէս պատրաստուած էր, լուցկիով մը ճարճատիկ սկսաւ, Իզզէթ փաշա, իր հիւրերուն դառնալով, ամենայն քաղաքավարութեամբ ըսաւ .

— Կը ցաւիմ որ ձեզի այնպիսի ժամու մը կ'ընդունիմ որ անկարելի է պէտք եղածին պէս պատուասիրել. սպասաւորներս ամենքն ալ քնացած են այս ժամուս և անգթութիւն պիտի ըլլայ զիրենք արթընցնել ո եւ է բան մը պատրաստել տալու համար, ուստի ձեր ներողամտութեան կ'ապաւինիմ :

— Շնորհակալ ենք Ձեր Վսեմութենէն, բայց արդէն շատ չպիտի մնանք հոս, ուստի կը խնդրենք որ ո՛ր եւ է ձանձրութիւն չկրէք, պատասխանեց պալատականներէն մին :

— Միակ բանն որ կրնամ ձեզ հրամայնել, եզրպտական սիկառէթներ են, ըսաւ Իզզէթ փաշա, գրասեղանին աչքէն խոշոր տուփ մը հանելով ու հիւրերուն ներկայացնելով :

— Ասկէց լաւագոյն կերպով չէիք կրնար մեզ հիւրասիրել պատասխանեց թիկնապահ մը, սիկառէթը վառելով .

Իզզէթ փաշա փափկանատութիւնը ունեցած էր առաջին անգամ Հագզը պէյլի ներկայացնելու տուփը որ պարզ շնորհակալութիւն մը յայտնելով սիկառէթ մը առած էր մէջէն :

Քաղաքավարական այս արարողութիւնը կատարուելէ ետքը, Իզզէթ փաշա ինքն ալ սիկառէթ մը վարուեց և թիկնաթոռ մը մէջ տեղաւորելով, ըսաւ .

— Հագզը պէյը բաւական զարմացած ըլլալու է այսօրուան իր գլուխը եկածներէն : Առտուն իբրև Պրուսացի Հօճա մը կ'երթայ Սիւլէյմանիյէ մզկիթը իր սովորական յորդորները խօսելու զինքը մտիկ ընող հաւատացեալներուն . կէս օրէն վերջը կամուրջին գլուխը կը ձերբակալուի ու Չապթիյէ կը փոխադրուի . հո՛ն, բանտ առաջնորդուած միջոցին կը փորձէ փախչիլ, բայց դժբախտաբար չի յաջողիր . կրկին կը ձերբակալուի կատաղի կռիւ մը մղելէ ետքը . յետոյ ամենախիստ

հակողութեան մը տակ կրկին կը բանտարկուի, Ոստիկանութեան նախարար Շէֆիք փաշայի կողմէ խտուածիւններու կ'ենթարկուի. յետոյ Նըլտըզի պալատը կը փոխադրուի և ի վերջոյ իմ բնակարանս կուգայ հիւր ըլլալու... արդարեւ, ես իր տեղն ըլլայի, չպիտի կրնայի բացատրել ու մեկեկ բոլոր այս եղածները :

— Ընդհակառակը, կարծեմ եղածը շատ պարզ է, պատասխանեց Հազըը պէյ չոր կերպով, միայն սա կայ որ մէկ օրուան մէջ երեք բանտապահ փոխեցի, նախ Շէֆիքը, յետոյ Ապտիւլ Համիտը և այժմ ալ դուք... Ինձի պէս բանտարկեալի մը համար ասիկա շատ տարօրինակ բան չէ :

— Կը խնդրեմ որ այդ խօսքը չկրկնէք, ըսաւ պալատական քարտուղարը մեծ քաղաքավարութեամբ մը. զիս խորարագէս կը վիրաւորէք, երբեք չեմ կրնար հանդուրժել բանտապահի դերին, ինչպէս Նըլտըզի պալատին մէջ, պարզապէս իմ հիւրս կը նկատեմ ձեզ և այս պայմանաւ հաւանեցայ միայն ձեզ իմ բնակարանիս մէջ ընդունելու :

— Բռնի հիւր մը որ հինգ հոգիի հակողութեան ներքեւ կը գտնուի, պատասխանեց նախկին գլխուորականը հեգնական ժպիտով մը :

— Երբ զիս մտիք ընէք, վստահ եմ որ ձեր կարծիքը բոլորովին պիտի փոխէք և պիտի համոզուիք որ ո՛չ թէ բանտարկեալ մը՝ այլ ճշմարիտ հիւր մըն էք թէ՛ մեր վեհապառ Սուլթանին և թէ ինձի համար, ըսաւ Իզզէթ փաշա :

— Խօսեցէ՛ք ուրեմն, ձեզ մտիկ կ'ընեմ :

— Մեր ոստիկանութեան նախարարը, Շէֆիք փաշա, գուցէ տեղեակ չըլլալով մեր տիրոջ բուն տրամադրութիւններուն, պարտք համարած է հասարակ ու վասնգաւոր չարագործի մը պէս վարուիլ ձեզի հետ, մանաւանդ երբ երեւան ելած է թէ Պրուսացի ենթադրեալ Հօճային տակ գաղանի քօմիթէին պետերէն մին ծածկուած է, պետ մը որ կրնանք ըսել թէ քօմիթէին ներչնչող ոգին է :

— Եթէ ձեր Սուլթանին արամաղբութիւններուն մասին բացատրութիւններ պիտի տաք, կարծեմ աւելորդ են, քանի որ զանոնք աւելի ունեցած եմ մօտէն ճանչնալու ասիէ երեք տարի առաջ, երբ մասնութեան մը շնորհիւ ձերբակալուելու դժբախտութիւնն ունեցայ:

— Բայց երեք տարիէ ի վեր շատ բան փոխուած է, գոչեց Իզզէթ փաշա:

— Միշտ միեւնոյն Ապտիւլ Համիտն է որ կ'իշխէ, օրէ օր աւելի բռնութեամբ:

— Եթէ ինծի պէս դուք ալ աւելի ունեցած ըլլայիք ամէն ժամ մեր Վեհափառ Սուլթանին մօտ ապրելու, այդպէս չպիտի խօսէիք...: Սուլթան Համիտ երեք տարիէ ի վեր բոլորովին փոխած է իր գաղափարները, և ասիկա չեմ վարանիր ըսելու, մեծ մասամբ ձեր և ձեր ընկերներուն գործունէութեան շնորհիւն է:

— Եւ ի՞նչ է ձեր Սուլթանին գաղափարներուն նոր ուղղութիւնը:

— Ահա՛ ինչ որ կ'ուզեմ ձեզի բացատրել: Նախ՝ ինքն ալ ձեզի չափ համոզուած է որ այլևս Օսմանեան Պետութիւնը ներկայ ուէժիմով կարելի չէ կառավարել, թէ արմատական փոփոխութիւն մը անհրաժեշտ է և թէ հարկ է Սահմանադրութիւնը վերահաստատել:

Իզզէթ փաշա այս ոճով սկսաւ երկար սեսութիւն մը ընել, իբր թէ Սուլթանին նոր գաղափարներուն վրայ, այնպէս մը ցոյց տալով որ Ապտիւլ Համիտ յեղափոխականներուն չափ և նոյն իսկ անոնցմէ աւելի, ազատական ոգիով մը տոգորուած էր, թէ պալատականներն ալ նոյն համոզումն ունէին, թէ ինք մասնաւորապէս բոլորովին համակարծիք էր իր վեհապետին և թէ տարիներէ ի վեր իր ջանքն եղած էր զայն այս ուղղութեան մէջ մայնել:

Միւս պալատականներն ալ, մերթ ընդ մերթ, խօսքէ խառնուելով, կը հաստատէին Ապտիւլ Համիտի հաւատարիմ

քարտուղարին ըսածները, պնդելով թէ իրենց Վեհափառ Տէրը շատ սխալ ճանչցուած էր, թէ իր մասին կազմուած կարծիքը ճշմարտութեան չէր համապատասխաներ և արդիւնք էր թշնամական յերկրանքներու :

Հազըը պէյ կասկածոտ դէմքով մը լսեց բոլոր այս բացատրութիւնները, չկրնալով հասկնալ թէ ի՞նչ պիտի ըլլար անոնց եզրակացութիւնը :

Իզզէթ փաշա շուտով հասաւ այդ եզրակացութեան :

— Այս բացատրութիւնները տալով ձեզի, ըսաւ, նպատակս է ցոյց տալ թէ յանձին մեր Վեհափառ Սուլթանին ձեր գիմացը թշնամի մը չունիք, այլ գաղափարակից մը, գրեթէ դաշնակից մը :

— Ինչո՞ւ ուրեմն Շէֆիք փաշա զայն ալ ինծի հետ չի ձերբակոխեր, պատասխանեց Հազըը պէյ հեղնարար :

Պարտական քարտուղար այս գիտողութիւնը չստիպուեց արկաւ և խօսքը շարունակեց .

— Սուլթանին այս բարի տրամադրութիւնները պարզելէ ետքը, որոնց անկեղծ ըլլալուն կ'երաշխաւորեմ, ըսեմ նաև որ մեր Վեհափառ Տէրը չափազանց ուրախ եղաւ երբ իրեն հաղորդեցինք ձեր անակնկալ ձերբակալումը :

— Այս մասին ապահով եմ, ըսաւ նախկին զինուորականը, և առոր հաւատարու համար երաշխաւորութեան պէտք չկայ :

— Կը տեսնեմ որ իմ խօսքերս միշտ ծուռ կերպով մեկնելու յամառութիւն մը ունիք, առաջ տարաւ Իզզէթ փաշա, ինչ որ պարագ սեղը կը դժուարացնէ մեր յարաբերութիւնները : Այո՛, կը կրկնեմ ըսածս, մեր Վեհափառ Տէրը չափազանց ուրախ եղաւ ձեր ձերբակալումը լսելով, ո՛չ թէ անոր համար որ վտանգաւոր թշնամի մը ձեռք կը ձգէր, ո՛չ թէ վրէժինդրութեան ոգիով լեցուած, այլ որովհետև ասիկա բարեպատեհ առիթ մը պիտի ըլլար բանակցութեան մէջ մտնելու ձեր քօմիթէին հետ, զիրար հասկնալու, զիրար ճանչ-

շարու և զնահաակու և գուցէ մօտ ապագայի մը մէջ իրա-
բու հետ գործակցելու Պետութեան փրկութեանը համար :

Այս խօսքերը Իզդէթ փայտ այնքան բնական, այնքան
անկեղծ շեշտով մը արտասանեց որ Հագգը պէյլի դէմքին վը-
րայէն հեղնական ժպիտը խոյս տուաւ և անոր յաջորդեց լուրջ
արտայայտութիւն մը :

Խորամանկ Սուրիայցի իսկոյն Հագգը պէյլի դէմքին վը-
րայ կարդաց իր խօսքերուն յառաջ բերած ապաւորութիւնը
և շարունակեց .

— Այս ըսածներուս բացարձակ ճշմարտութեան մեծա-
գոյն ապացոյցը այն ընթացքն է զոր մեր վեհափառ Սուլ-
թանը ցոյց տուաւ ձեր ձերբակալութիւնը իմանալուն պէս :
Նախ՝ փոխանակ ձեզ զնստանի մը մէջ փակել տալու ու յետոյ
խիստ հարցաքննութեան մը ենթարկելու, իսկոյն հրամայեց
որ Եըլտըզ փոխադրուիք, ապա մտածելով որ նոյնիակ Եըլ-
տըզի սլափտը ձեզի կասկածելի էր թուի, ուզեց որ իմ տունս
հիւր ըլլաք, այո՛, կը շեշտեմ («հիւր») բառին վրայ, որովհե-
տեւ բոլորովին անհեթեթ են ձեր ենթադրութիւնները . . . և
եթէ տակաւին կասկածներ ունիք այս մասին կրնաք ազա-
տօրէն մեկնիլ և ուզած անդերնիդ երթալ : Բայց գիշերուան
այս ժամուս և այս ցուրտ օդին ձեզի խորհուրդ չեմ տար
այսպիսի բան մը ընելու : Լուսնայէն ետքը, վաղը առտու,
եթէ յարմար դատէք մերժել մեր առաջարկութիւնը և թո-
ղուլ երթալ, ազատ էք ուզածնուդ պէս վարուելու . . . : Կ'ու-
զէք հիմայ անմիջապէս մեկնիլ առանձին, կամ եթէ հարկ է,
իմ մարդերէս մէկուն ընկերակցութեամբ . . . գուցէ Պէշիք-
թաշի մէջ բարեկամ մը ունիք որուն տունը աւելի հանգիստ
և ապահով ըլլալ կը կարծէք :

— Չէ՛, ոչ ոք կը ճանչնամ Պէշիկթաշի մէջ, փութաց
պատասխանելու Հագգը պէյ որ տակաւին չէր ուզեր հաւա-
սալ իր ականջներուն :

— Եթէ անպատճառ Սկիւտար դառնալ կը փափաքիք,

այդ ալ կարելի է... ձեզի համար մասնաւոր նաւակ մը պատ-
րաստել կուտամ:

Այլ կարելի չէր կասկածիլ պալատական քարտուղարին
խօսքերուն անկեղծութեանը վրայ: Նախկին զինուորական,
սեղի տուաւ և ըստ:

— Շնորհակալ եմ ձեր հիւրընկալութենէն. այս գիշեր
հոս կը մնամ... կ'ուզէի գիտնալ միայն թէ ի՞նչ առաջար-
կութեան մասին կ'ակնարկէիք քիչ մը առաջ:

— Մեր Վեհափառ Տէրը օգտուելով ձեր ներկայութենէն,
կը փափաքի ուղղակի յարաբերութեան մասնէլ յեղափոխական
գաղանի կազմակերպութեան հետ և միասին համաձայնու-
թիւն մը գոյացնել և կարգ մը առաջարկներ ընել... բայց
ատոնք ինք անձամբ կը փափաքի հաղորդել ձեզի, երբ բո-
լորովին համոզուիք թէ իր բանտարկեալը չէք, այլ իր հիւրը,
որովհետեւ բանտարկեալ մը բնականաբար ազատօրէն չի կըր-
նար բանակցիլ իր բանտապանին հետ և Վեհափառ Սուլթանը
կը փափաքի որ կատարուելիք բանակցութիւնները բոլորովին
ազատ ու համարձակ կերպով սեղի ունենան:

Միւս չորս պալատականներն իրենք ալ կրկին խօսքի
բռնուեցան և ոյժ տուին Իզզէթ փաշայի ըսածներուն, ըսելով
թէ Հագգը պէյի վիճակուած էր նախախնամական դեր մը
կատարելու և գուցէ հայրենիքի փրկիչը հանդիսանալու:

Առտուն ժամը երեքը հասած էր երբ խօսակցութիւնը
վերջ դտաւ և չորս հիւրերը հրածեշտ ատենով մեկնեցան,
առանձին թողով Իզզէթ փաշան և Հագգը պէյը:

Ապտիւլ Համիտի սիրական քարտուղարը երբ մինակ
մնաց, իր «հիւր»ը առաջնորդեց վերնայարկը, ուր ինչպէս
ըսինք, երկու սենեակ կը գտնուէր, և որոց մին իբրեւ ննջա-
րան կահաւորուած էր խիստ պարզ բայց հանգստաւէտ կեր-
պով:

— Կը ներէք որ ըսաւ Իզզէթ փաշա իր հիւրին, լաւա-
գոյն սենեակ մը չեմ կրնար տրամադրել ձեզի գիշերուան այս

ժամուս, մանաւանդ որ չեմ ուզեր իմ մարդիկս արթնցնել և կարծեմ նախընտրելի է որ նոյն իսկ անոնք չիմանան ձեր ներկայութիւնը այս տան մէջ, որովհետեւ կրնան կարգ մը անհին մեկնութիւններ ընել և գուցէ վտանգել մեր գլուխ հանել ուզած գործը:

— Շատ իրաուունք ունիք, պատասխանեց Հազգը պէյ:

— Ասոր համար պիտի խնդրեմ նաև որ, եթէ կարելի է, ձեր յարկարածինը չթողուք մինչև իմ վերադարձս. հոս ձեր հանգստութեան համար ամբողջ պէտք եղածները պիտի գրանէք... վաղը կը մտածենք թէ ի՞նչ կերպով ասկէ կրնաք մեկնիլ առանց նշմարուելու տանը մարդիկներէն:

Եւ Իզզէթ փաշա զիչեր բարի մաղթելով մեկնեցաւ:

Հետեւեալ օրը, մինչև իրիկուն, Հազգը պէյ իր վերնա-յարկին մէջ փակուած մնաց: Իզզէթ փաշա մէկ քանի անգամ եկաւ իր քով մեծարանքներ ընելու, որպիսութիւնը հարցնելու, Սուլթանէն բարեւներ հաղորդելու համար: Նոյն իսկ կերակուրը ինք իր ձեռքով բերաւ:

Շարաթ իրիկուն, երբ մութը կոխեց Հազգը պէյի համբերութիւնը սկսաւ սպառիլ, և երբ ուշ ատեն, օրուան մէջ չորրորդ անգամ ըլլալով, Իզզէթ փաշա իր քով եկաւ, բաւական խիստ ոճով մը հարցուց թէ՛ արդեօք ժամանակը հասած չէ՛ր այս հիւրընկալութեան վերջ տալու և կամ զայն բացէ ի բաց բանտարկութեան վերածելու:

— Կը տեսնեմ որ ձեր կասկածները տակաւին բոլորովին չեն փարատած, պատասխանեց պալատականը ժպտուն դէմքով, բայց քիչ մը վերջը պիտի համոզուինք թէ ինչ որ ձեզի խօսեցայ երէկուրնէ ի վեր ամէնքն ալ բացարձակ ճշմարտութիւն են:

— Ե՛րբ պիտի ներկայանամ Սուլթանին:

— Գուցէ ժամէ մը:

— Չեղի՞ հետ:

— Ո՛չ, հիմա երկու պալատականներ պիտի դան և ձեզ

առնելով պիտի տանին Երլարզի պալատը, ուր՝ հաւանօրէն՝
անմիջապէս պիտի ընդունուիք մեր Վեհափառ Տիրոջ կողմէ:
Իցի՛ւ թէ ձեր տեսակցութիւնը փրկարար ազդեցութիւն մը
ունենար այս երկրին ճակատագրին վրայ: Երբեք Սուլթանը,
իր երկարամեայ իշխանութեան միջոցին, այս աստիճան բարի
տրամադրութիւններով լեցուած չէր և ձեզի կը մնայ անոնցմէ
օգտուիլ, կը յուսամ որ կարող պիտի ըլլաք այդ գործը կա-
տարել . . . :

— Բայց ինչո՛ւ ամբողջ օր մը զիս այստեղ սպասցու-
ցիք, հարցուց նախկին զինուորականը որ կարծես շատ հա-
ւատք չէր ընծայեր իր խօսակցին ըսածներուն:

— Բայց շատ պարզ է ատոր պատճառը, սիրելի պէյս,
պատասխանեց պալատականը, ինչպէս բացատրեցի, Վեհափառ
Սուլթանին փափաքն է որ ամէն ինչ ծածուկ կերպով կա-
տարուի առ այժմ, գործին յաջողութեանը համար, նոյն իսկ
պէտք չէ որ գիտցուի թէ դուք իմ բնակարանիս մէջ մէկ
երկու օր անցուցիք . . . ասոր համար կ'սպասենք որ գիշերը
վրայ հասնի, որպէս զի կարենանք ձեզ աննշմարելի կերպով
փոխադրել պալատ . . . կարծեմ այս մասին դուք ալ համամիտ
գտնուեցաք երէկ գիշեր:

Հագգը պէյ չպատասխանեց թէև, փաշային տուած բա-
ցարութիւնները գոհացուցիչ չթուեցան իրեն: Յետոյ հար-
ցուց.

— Եւ եթէ այդ պալատականները չգան զիս փնտրուե-
լու:

— Սնպատճառ պիտի գան:

— Եթէ մինչև ժամ մը երեւան չելլան թոյլ պիտի տա՞ք
որ ազատօրէն մեկնիմ այս տեղէն:

— Մեկնելու մասին միշտ ազատ էք. նոյն իսկ անոնց
գալուն կամ չգալուն պէտք չունիք . . . Եթէ հոս փակուած
էք երէկ գիշերուընէ ի վեր, մի՛ մոռնաք որ ձեր կամքովն
է . . . այս վայրկեանիս իսկ կրնաք թողուլ բնակարանս և եր-

թալ ո՛ւր որ կ'ուզէք . . . միայն թէ այն ատեն պէտք է հրա-
ժարիլ մեր բոլոր զեղեցիկ խորհուրդներէն : Քանի որ խնդիրը
հայրենիքի փրկութեան վրայ է պէտք է որ քիչ մը զօնողու-
թիւն յանձն առնէք և նոյնիսկ եթէ կը կասկածիք որ այստեղ
վտանգ մը կ'սպառնայ ձեզի, դարձեալ պէտք է որ վախնաք
քանի որ ձեր կեանքը հայրենիքին նուիրելու յառաջ էք :

Իր հայրենասիրութեանն ու քաջութեանը եղած այս կոչը
իր ազդեցութիւնը ըրաւ : Հազգը պէյ հանդարտ ձայնով մը
պատասխանեց .

— Լա՛ւ, պիտի սպասեմ :

— Եւ կը կարծեմ թէ չպիտի ստիպուիք երկար սպասելու
պատասխանեց Իզզէթ փաշա :

Պալատականը սուտ չէր խօսեր : Արդարեւ կէս ժամ ետքը
կրկին վերադարձաւ Հազգը պէյի քով, ընկերակցութեամբ
երկու անձերու զորս ներկայացուց սա բառերով .

— Պատիւ ունիմ ձեզ ներկայացնելու կայսերական պա-
լատի բարձր պաշտօնեաներէն Վսեմափայլ Էմին փաշա և Մի-
րալայ Օսման պէյը, որոնք յատկապէս մեր տիրոջ կողմէն
կկած են ձեզի հետ տեսակցելու համար :

Հազգը պէյ չոր խոնարհութիւն մը ըրաւ :

— Ես ձեզ առանձին կը թողում, որովհետեւ ստիպողա-
կան գործ ունիմ, շարունակեց պալատական քարտուղարը :

Երկու նորեկները նստեցան . Հազգը պէյ պահ մը ուշա-
դրութեամբ դիտեց երկուքն ալ որոնք բոլորովին անծանօթ
էին իրեն : Փաշան մարմնեղ, խոշոր մօրուքով և ալեխառն
մարդ մըն էր որ յիսուն տարեկան կը թուէր, վիզը այնքան
կարճ ու հաստ էր որ դժուարաւ կը չնչէր և կարծես վայր-
կեանէ վայրեան խեղդուելու ենթարկուած էր : Միրալայը ըն-
հակառակը զոր և երկախնահասակ զինուորական մըն էր, դա-
ժան ու չար նայուածքով մը : Երկուքն ալ հակակրելի տպա-
ւորութիւն մը գործեցին յեղափոխականին վրայ, որ առաջին
վայրկեանէն ուզեց յարձակողական դիրք մը բռնել :

— Ի՞նչ բանի պարտական եմ ձեր այս անակնկալ այցելութիւնը, հարցուց :

— Մեր այցելութիւնը անակնկալ մը չէ՝ ձեզի համար, պատասխանեց խոշոր փորով պալատակահանը, անշուշտ Իզզէթ փաշան նախապէս լուր տուաւ այս մասին :

— Հա՞, ուրեմն դ՞ուք էք Սուլթանին կողմէ բանակցութեան եկողները :

— Մենք ենք որ մեր վեհափառ տիրոջ կողմէ եկանք իր հրամանները հաղորդելու, միջամտեց Միրալայ Օսման պէյ :


— Կրնայ ըլլալ որ Սուլթանը ձեզի հրամաններ տուած ըլլայ, բայց ես որ իբրեւ Սուլթանին գէմ գործող ազատամբ մը ձերբակալուած եմ չեմ կրնար իրմէ հրամաններ ընդունիլ, պատասխանեց Հազգը պէյ խրոխտ կերպով մը :

Փոքր մեծ փաշան տևանկով խօսակցութեան առած անհաճոյ ընթացքը ուղեց միջամտել :

— Իրար սխալ չհասկնանք, ըսաւ հաշտարար ձեւով մը, Սուլթանը իբրեւ մեր տէրն ու վեհապետը, երբ փափաք մը յայտնէ՝ ատկեա բնականաբար մեզի համար հրաման մընէ՝ այսպէս ուրեմն Սուլթանը փափաք յայտնեց որ ձեզի հետ տեսակցութիւն մ'ունենանք և հասկնանք թէ ի՞նչ են ձեր և ձեր ընկերներուն գոյնը թիւններն ու պահանջումները :

— Եթէ Սուլթանը այդքան հետաքրքիր է, կրնայ զիս իր ներկայութեան ընդունիլ և ես պատրաստ եմ այն ատեն բոլոր իր ուղած բացատրութիւնները տալու... արդէն այս մտքով խօսեցաւ ինծի Իզզէթ փաշա և ես կը կարծէի որ դուք հոս պիտի գայիք միմիայն զիս Սուլթանին քով առաջնորդելու պաշտօնով :

— Իրաւ է որ այդ պաշտօնն ալ ունինք, սակայն նախ և առաջ պէտք է որ մանրամասնօրէն ձեր տրամադրութիւններն իմանաք, զանոնք մեր վեհափառ տիրոջ հաղորդենք և եթէ ինք յարմար դատէ՝ այն ատեն ձեզ ալ գուցէ իր ներ-



կայութեանը ընդունելու պատիւը կ'ընէ, ըսաւ էմին փաշա ֆշալով:

— Ես ու եւ քսայատրութիւն չունիմ տալիք ձեզի, պատասխանեց յեղափոխականը վճռարար:

Այս խօսքին վրայ՝ երկու պալատականները արագ ակհարկ մը փոխանակեցին իրարու հետ և յետոյ Միրալայը սաքի ելելով՝ խիստ ու կարուկ շեշտով մը ըսաւ:

— Մեր ժամերը սուղ են և մեր Վեհափառ տէրը մեզի կ'սպասէ, չենք կրնար ժամավաճառ ըլլալ այստեղ:

— Ազատ էք մեկնելու:

— Մեկնելէ առաջ կ'ուզենք որ մէզի յանձնէք ձեր քովը գտնուած թուղթը:

— Ի՞նչ թուղթ, դոչեց Հազգը պէյ դարմացած երեւոյթով մը:

— Այն թուղթը զոր երէկ իրիկուն Երլազի պալատին մէջ ձեր հազուտաները փոխած միջոցնուղ վերաբրկուին զրպանէն առիք ու ձեր ժլկէին զրպանը գրիք:

— Կը սխալիք իմ քովս ո՛ր և է թուղթ չկայ, պատասխանեց Հազգը պէյ հաստատ ձայնով մը, և եթէ նոյն իսկ այդպիսի թուղթ մը գտնուէր քովս, ի՞նչ իրաւունքով զայն ինէ պիտի պահանջէիք և ինչպէ՞ս կը համարձակիք կարծել որ ես այդ թուղթը ձեզի պիտի ապյի:

— Կարելի է թուղթը շատ անկարեւոր բան մըն է, մէջ մտաւ դիրուկ փաշան, բայց որովհետեւ մեր Վեհափառ տէրը իմացեր է որ այդպիսի բան մը կայ ձեր քով հետաքրքիր և դաւ հատկնալու թէ ի՞նչ է, ուստի կարծեմ լաւագոյն է որ առանց դժուարութեան թուղթը յանձնէք: Ասով ձեր հաւատարմութիւնը ցոյց տուած պիտի ըլլաք մեր Սուլթանին և անոր բարձր շնորհներուն արժանի պիտի ըլլաք:

Փաշան այս երկարաշունչ խօսքերն արտասանելէ ետքը յոգնած՝ սկաւ հեւ ի հեւ շունչ առնել:

— Բան մը չունիմ ձեզի յանձնելիք, ըսաւ նախկին զին-

ուորականը, խիստ ակնարկ մը նկատելով իր խօսակիրոյնը
վրայ :

Էմին փաշա յուսահատօրէն գլուխը կքեց փորին վրայ,
խակ միրալայը առանց պատասխանելու դուրս ելաւ սենեակէն,
քանի մը բոպէ ետքը վերադարձաւ, սենեակին դուռը կղպեց
բանալին գրպանը դրաւ, ձեռքը իր ապփասին կտուր տարաւ
և ըսաւ .

— Փաշա էֆէնտիին աշխատութեան սենեակէն այս սենեակը
գալու համար չորս դուռնէ պէտք է անցնիլ, այդ չորս
դուռներն ալ ներսի կողմէն կղպեցի և բանալիները գրպանս
դրի, մեզի ընկերացող Ալի պէյին ալ պատուիրեցի որ վարը,
փաշային սենեակը սպասէ և չթողու որ մէկը ներս մանէ,
մինչև որ մենք վար իջնանք . . . :

Հագգը պէյ անտարբերութեամբ մտիկ ըրաւ այս տարօրինակ
խօսքերուն, արհամարական թեթև ժպիտ մը չրթունքին
վրայ . միրալայը շարունակեց :

— Ս.մերիկեան վերջին կատարելութեամբ վեցհարուած-
եան մը ունիմ գրպանս . կամ քովիդ թուղթը յօժար կամ-
քովդ կը յանձնես ու կեանքդ կը փրկես և կամ գլուխդ կը
ջախջախեմ ու յետոյ կ'առնեմ թուղթը . . . ,

Յեղափոխականին աչքերէն փայլակ մը անցաւ . կատար-
ելութեան և ատելութեան փայլակ մը : Ձեռքը բնազդաբար
գրպանը տարաւ, գիտնալով հանդերձ թէ ո և է զինք չունէր
քովը . յետոյ յուսահատ ակնարկ մը պտտացուց սենեակին շունջը
զէնքի նմանող բան մը կամ գոնէ փախուստի ելք մը փնտ-
ռելով :

— Դիմադրութեան կամ փախուստի ո և է փորձ անօգուտ է,
ըսաւ միրալայը, գիմացիներն մտքէն անցածը կուտ-
նելով . ես զինուած եմ իսկ դուն անզէն . մենք երեք հոգի
ենք՝ դուն առանձին, չորս դուռներն ալ կղպուած և բանալի-
ներն ալ գրպանս են . . . թուղթը յանձնէ՝ ուրիշ ճար չկայ :

— Հիմա համոզուեցայ որ իրաւցնէ Ապտիւլ Համիտի կողմէ կուգաք եղեր, ըսաւ Հազգը պէյ դառն ծիծաղով մը:

— Այո՛, անոր կողմէ կուգանք և ինչ որ կ'ըսենք անոր հրամանովն է, ժամավաճառ չըլլանք. թուղթն անմիջապէս պիտի տա՞ս, գոչեց միւսը դողահար ձայնով մը:

— Ո՛չ, պատասխանեց Հազգը պէյ քայլ մը առաջ գալով դէպի պայտատակներ:

Եւ յանկարծական թափով մը և յովազի մը ճարպիկութեամբ յարձակեցաւ միրալային վրայ ձիչդ այն միջոցին որ այս վերջինը իր տափաստին հետևի դրպանէն բէլովէրը կը հանէր:

Յարձակումն այնքո՞ն անակնկալ ու արագ եղած է որ Ապտիւլ Համիտի գործակատարը չկրցաւ իր զէնքը պարպել:

Հազգը պէյ, հակառակ իր յառաջացած տարիքին. ինչպէս տեսանք արդէն նախորդ գլխին մէջ՝ երբ Զապթիէի դռնէն իր փախուստի անյաջող փորձը պատահեցինք, շատ ուժեղ և միանգամայն ճարպիկ մարանչող մ'էր, շատ դիւրաւ յաջողեցաւ իր հակառակորդն անկարողութեան մատնել զայն թեւերուն տակէն ոյժով մը իր կուրծքին վրայ սեղմելով և անոր բազուկները վեր բարձրացնելով, այնպէս որ հրագէնը թէև միրալային ձեռքն էր միշտ, սակայն չէր կրնար զայն գործածել իր հակառակորդին դէմ:

Էմին փաշա որ իր թիկնաթուռն մէջ թաղուած՝ ահաբեկ կը դիտէր այս պայքարը, տեսաւ թէ կացութիւնը կը ծանրանար և փորձեց օգնութեան հասնիլ էր լնկերոջ ու ոտքի կլկելով մօտեցաւ երկու կռուողներուն, որոնք սենեակին մէջ կը տարուբերէին, խուլ մռնչիւններ արձակելով:

Հազգը պէյ տեսաւ այդ դանդաղաշարժ դանդուածին դէպի իրեն յառաջանալն և երբ բաւական մօտեցաւ, ոտքի ուժգին հարուած մը իջեցուց այն մտակոյտին որ իբրև փար կը ծառայէր պալատական փաշային: Խեղճն ազաղակ մը արձակելով՝ կռնակի վրայ դետին փռուեցաւ:

Միրալայը տեսնելով որ ռէվոլվէրին պատճառաւ իր ձեռ-

քրն անգործութեան դատապարտուած է, զէնքը սննեակին մէկ անկիւնը նետեց և երկու ձեռքերովը փորձեց իր հակառակորդին վիզը սեղմել :

Կուրծ կուրծքի այս սլայքարը հեազհետէ կատաղի հանգամանք մը կ'առնէր . երկուքն ալ կ'զգային որ իրենց համար պարտութիւնը մահ պիտի ըլլար և ասոր համար գերադոյն ճիգով մը կը կուռէին :

— Ռէվոլվէրը գտի՛ր և զարկ սա թշուառականը , գոչեց միրալայը՝ խօսքը փաշային ուղղելով , որ հազիւ յաջողած էր գետնէն վեր ելլել :

— Լաւագոյն է որ երթամ Ալի պէյը կանչեմ , կակազեց միւսն աւելի իր մորթն աղատելու՝ քան թէ իր ընկերոջ՝ օգնելու մտադրութեամբ :

— Չըլլայ որ դռները բանալ փորձես , գոչեց միւսը խեղդուկ ձայնով մը :

Արդարեւ Հագգը պէյ այնքա՛ն զօրաւոր կերպով կը սեղմէր իր հակառակորդն որ դժուարաւ շունչ կ'առնէր :

Վերջապէս ոտքի ձարտար հարուած մը գետինն սասալացեց միրալայն և յեղափոխականը սկսաւ կուռվներ տեղալ անոր քթին բերնին : Նոյն միջոցին փաշան սննեակին անկիւնը գացած՝ ուէվոլվէրը կը փնտռէր : Հագգը պէյ իր գո՛նը թողուց և անոր վրայ խոյսցաւ ձեռքին տակ իյնող առաջին աթոռն աւնելով և հեազհետէ երեք չորս հարուած իջեցուց անով փաշային գլխին : Աթուր կտոր կտոր եղաւ , իսկ փաշան զգայազիրկ՝ մնաց իր եղած տեղը :

Միրալային ընդունած հարուածներն այնքա՛ն սաստիկ էին որ քթէն բերնէն արիւն գալ սկսած էր : Այսու հանդերձ ինքզինք չէր կորսնցուցած , իր եղած տեղէն դիտած էր փաշային վիճակն և տեսած էր որ Հագգը պէյ անոր գործը լմնցնելէ ետքը՝ ծռած էր անկիւնը , ուէվոլվէրը գանկու համար . . . :

Անգամ մը որ զէնքն անոր ձեռքն անցնէր , ամէն բան

լինցած էր . ապահովարար զինքն այնտեղ պիտի սպաննէր ,
դռներուն բանալիները զրպանէն առնէր ու փախչէր . . . :

Միրալայը յուսահատական որոշում մը տուաւ : Իսկոյն
իր մօտը գտնուած փոքրիկ պատուհանը դիմեց . զայն ջգա-
ձգական շարժումով մը բացաւ և զրպանի բանալիները դուրս
նետեց .

— Հիմա կրնայ զիս սպաննել , բայց ինքն ալ բանտար-
կուած կը մնայ , մտածեց շորաշուք հրճուանքով մը :

Այս ամենքը հազիւ երկու վայրկեան տևած էին :

Յեղափոխականը տեսած էր իր ոստիկն բոլոր շարժում-
ներն և անոր զիտաւորութիւնն հասկցած : Այսու հանդերձ
պաղարիւնութեամբ շարունակեց հրազէնը վնասուել , միշտ իր
ախարհը սեւեռած պահելով միրալային վրայ և երբ ուշվո-
վէրը զետնէն առաւ , ամենայն հանգարտութեամբ մօտեցաւ
անոր :

— Հիմա դերերը փոխուած են , ըսաւ , քիչ մը առաջ
դուք ինձի կ'սպառնայիք ուշվորվէրով , հիմա կարգը ինձի
եկաւ :

— Կը խոստովանիմ որ ձեզի դէմ պէտք եղած միջոց-
ները չլրցայ ձեռք առնել և իմ ուժիս վրայ չափազանց վրս-
տահութիւն գրի , պատասխանեց Ապտիւլ Համբաի գործակա-
տարը , բայց սա եւս ըսեմ որ եթէ այս վայրկեանիս իմ կեան-
քըս ձեր ձեռքն է , ձեր կեանքն ալ ձեզի չի պատկանիր . . .

— Իմ կեանքս ես արդէն շատոնց իմ հայրենիքիս նուի-
րած եմ :

Երկու ոստիկները փայլակնալից ակնարկ մը փոխանակեցին
իրարու : Յայտնի էր որ վճռական բան մը տեղի պիտի ունե-
նար այդ երկու մարդոց միջև , որոնք իրենց կեանքէն յու-
սահատած կը թուէին :

Միրալայը , որուն դէմքը արիւնկուայ վիճակի մէջ էր ,
խոյացաւ յանկարծ իր հակառակորդին վրայ , առանց ժամու-
նակ տալու անոր որ իր հրազէնը գործածէ : Գիրկընդխառն

կոիւր վերսկսաւ, այս անգամ աւելի ծայրայեղ սաստկու-
թեամբ մը :

Հագգը պէյ, ապահովարար, չէր սպասեր այսպիսի յար-
ձակողական շարժումի մը և յանկարծակիի եկաւ : Ձէնքը
չկրցաւ դորձածել և այդ զէնքին շուրջն էր որ դարձաւ ամ-
բողջ պայքարը : Անիկա պիտի վճռէր յաղթութիւնը :

Կատաղի, անլուր, մոլեգին պայքար մը վերսկսաւ եր-
կուքին միջեւ : Հագգը պէյ դարձեալ յաջողեցաւ իր հակա-
ռակորդն հաղթահարել, զայն զգետնել և շնչասպառ թողուլ
տախտակամածին վրայ . յետոյ տեսնելով որ գիրուկ փաշան իր
նուազեալ վիճակէն կլկելով՝ կենդանութեան նշաններ ցոյց
կուտար, դէպի անոր վրայ խուժեց : Միրալայը իր ոտխին
վայրկենական հեռացումէն օգտուելով՝ գերագոյն ճիգ մը ը-
րաւ, կրցաւ ոտքի կլկել, սեղանին մօտենալ և անոր վրայ
դրուած կազի լամբարը առնել ու զայն գետին նետել : Սեն-
եակը մթութեան մէջ թողուեցաւ : Լամբարը ջախջախուած ու
մէջի կազը գորգին վրայ թափած էր : Պալատական միրալայը
գրպանէն լուցկիի տուփ մը հանեց, հատ մը վառեց և գոր-
գին մօտեցնելով՝ գետին թափած կազը բռնկեցուց . . . :

Սենեակը չարաշուք լոյսով մը լուսաւորուեցաւ : Բոցերն
արդէն կը տարածուէին ամէն կողմ և վարագոյրներէն մին
բռնկած էր : Հագգը պէյ ոստում մը ըրաւ դէպի սենեակին
դուռն և ուսովը զօրաւոր հարուած մը տուաւ զայն խորտա-
կելու համար, սակայն դուռը դիմադրեց :

Դիւային ժպիտ մը գծագրուեցաւ միրալային արիւնտա
գէմքին վրայ :

— Ամէնքս միասին պիտի այրինք, մրմուաց :

Հագգը պէյ որ միշտ բէվովէրը ձեռքը բռնած էր, մօ-
տեցաւ իր ոտխին և փողը անոր քունքին մօտեցնելով՝ հրա-
զէնը պարպեց, առանց խօսք մը արտասանելու : Սպախու Հա-
միտի գործակատարը գետին տապալեցաւ : Յեղափոխականը,
յետոյ, զէնքը դարձուց դէպի իր ճաշտին և երկրորդ անգամ
պարպեց ու ինքն ալ ինկաւ միրալային քովը . . . :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

ՊԱՌԱՒԻՆ ՏԵՂ ՄԱՆԿՈՒՀԻ ՄԸ

Ի՛նչ էր այն խորհրդաւոր թուղթն որ այսպէս երեք ան-
ձերու մահուան և սպարանքի մը այրուելուն պատճառ կ'ըլ-
լար: Ահա կնճռուս ու տազնապայոյզ հարցում մը որ կը տան-
ջէր կասկածոս Սուլթանին միաքը, օրերէ ի վեր:

Ժամանակէ մը ի վեր Ապտիւլ Համիտ համեմատաբար իր
անդորրութիւնը գտած էր: Երջարզի պոմպային դէպքն ար-
դէն մոռցուած էր, մանաւանդ անոր ամբողջ գաղտնիքը
յայտնուած էր պիլժիացի Պ. Ժօսիսի ձերբակալումով և Ը-
րած խոստովանութիւններով: Անկէ ետքն ալ Հայ յեղափո-
խականները կենդանութեան նշան ցոյց տուած չէին Պոլսոյ
մէջ: Թրքական ծածուկ քօմիթէն ալ, որ քանի մը տարի
առաջ այնքան սարսափներու մատնած էր բռնաւորը, յու-
սահատած սւ անդործութեան դատապարտուած կը թուէր
մայրաքաղաքին մէջ:

Իրա՛ւ է որ Ապտիւլ Համիտ գիտէր թէ այժմ քօմիթէն
ծածկարար կ'աշխատէր բանակը իրեն դէմ հանելու և ասոր
համար իր գործունէութեան ասպարէզը ուրիշ տեղ փոխա-
դրած էր, բայց այդ բանը իրեն համար մեծ կարեւորութիւն
չունէր: Անմիջապէս վտանգը հեռացած էր իր գլխէն, իր
անձին դէմ նորանոր դաւադրութիւններ չէին սարքուեր,
պոմպայի ու տինամիթի մղձաւանջը անհետացած էր գրէթէ:

Գալով Բումելիի բանակին ըմբոստական շարժումներուն,
անոնք տակաւին շատ աննշան ու կղզիացած դէպքեր էին և
չէին կրնար բնաւ իր անձնական սպահովութիւնը վրդովել:
Ապտիւլ Համիտ եթէ կը կասկածէր իր բանակին սպաներէն
ումանց հաւատարմութենէն, միւս կողմէ կատարելապէս վըս-

տահ էր իր զինուորներուն վրայ : Այսու հանդերձ , ամիսէ մը ի վեր այնքան շատ տեղեկագիրներ կը հասնէին կասկածելի սպաներու մասին , որ Բռնաւորը , իր ըմբռնած կերպովը , ընդհանուր մաքրագործումի մը պէտքը կ'զգար և ասոր համար յատուկ յանձնախումբ մը կազմած էր Երլաըզի մէջ , որուն գործունէութիւնը խիստ ծածուկ կը պահուէր : Ապտիւլ Համիտի նպատակն էր մանրակրկիտ քննութենէ մը ետքը , Բումելիի զօրաբանակներուն ամբողջ կասկածելի սպաներուն ցանկը պատրաստել , և միեւնոյն օրը զանոնք ամենքը ձերբակալելով Պոլիս բերել տալ և յետոյ անոնց արժանի պատիժը սնօրինել :

Այս զբաղումներուն մէջն էր անա երբ կեղծ Հօճային ձերբակալու մը տեղի ունեցաւ :

Հագգը պէյի վերերեւումը կ' Պոլսոյ մէջ զինքն իր հին սարսափներուն մատնեց : Ուրեմն գաղսնի քօմիթէն վերստին կ'սկսէր մայրաքաղաքին մէջ գործել , նորանոր դաւաղբու թիւններ պատրաստել , զուցէ իր կեանքին գէմ սպառնալ :

Ու ճիշտ այն միջոցին ուր կը կարծէր իր ձեռքին մէջ ունենալ տարիներէ ի վեր իր քունն ու հանգիստը խռովող քօմիթէին ամէնէն յանդուգն ու ազդեցիկ պետերէն մին , անաւասիկ մահը զայն իրմէ կը խլէր :

Երբ Իզզէթ փաշայի ապարանքին հրդեհումին հետ նաև Հագգը պեյի և երկու պալատականներուն այրուիլը , Ապտիւլ Համիտ սոսկալի ցաւ զգաց :

— Դարձեալ իրենց հետքը կորսնցուցի , մտածեց յուսահատութեամբ :

Այսուհանդերձ խիստ պատուէրներ տուաւ որպէս զի ձերբակալուին ու հարցաքննութեան ենթարկուին բոլոր այն անձերը որոնք հետուէն կամ մօտէն յարաբերութիւն ունեցած կամ խօսած էին կեղծ Հօճային հետ , բայց բոլոր այդ ջանքերը չկրցան հետք մը երեւան հանել : Նոյն իսկ կարելի չէր

եղած տակաւին գաննել Սկիւտարի մէջ կեղծ Հօճային բնական տեղը :

Ոստիկանութեան նախարար Շէֆիք փաշա այս անյաջողութիւններէն սրանեղած՝ ամէն օր ձերբակալման նորանոր հրահանգներ կ'արձակէր, երբ առտու մը կարեւոր ժուռնալ մը ստացաւ : Ժուռնալին հեղինակը կը յայտնէր թէ ինք պատրաստ է Պրուսացի Հօճային բնական տունը ցոյց տալ և միեւնոյն ատեն շահեկան տեղեկութււններ հաղորդել այդ վճարանգաւոր մարդուն մասին :

Շէֆիք փաշա ուղեց իսկոյն տեաննել ժուռնալին որ դուրսի սրահը փաշային հրամանին կը սպասէր :

Քառասուն տարեկանի մօտ, դեղին պիտերով, երկայնահասակ ու նիհար մարդ մը ներկայացաւ, որ ակնածանքով խոնհարելէ ետքը, փաշային դէմը բարեւ բռնած կեցաւ :

— Դո՞ւն ես այս թուղթը գրողը, հարցուց նախարարը :

— Այո՛ . փաշա, ծառանիդ է :

— Ի՞նչ տեղեկութիւն ունիս նայինք այս Հօճային մասին :

— Փաշա էֆէնտի ես Համտի կը կոչուիմ և Սկիւտար նաւամատոյցին ժօտերը սրճարան մը կը բանեցնեմ, պատասխանեց մարդը նախ ինքզինքը ծանօթացնելու անմեղ փառասիրութեամբ :

— Էս՛ի, լաւ, ըսաւ փաշան, սա Հօճային մասին ի՞նչ գիտես :

— Պրուսացի Հօճային սրճարանիս առջեւէն անցնիլ դառնալը կ'տեսնէի ամէն օր և որովհետեւ նոր դէմք մըն էր մեզի համար, իրմով հետաքրքրուեցանք, սակայն չկրցանք որոշ բան մը իմանալ . Հօճան Սկիւտարի մէջ գրեթէ մարդու հետ չէր տեսնուեր, այլ ամէն օր, կանոնաւորապէս Պոլիս կ'ընէր . . . : Մէկ քանի անգամ ալ իմ սրճարանս եկաւ թերթ կարդալու : Քանի մը օր առաջ գաղանի ոստիկանութեան մէջ գտնուող ազնիւ բարեկամէ մը իմացայ որ Հօճան ձերբակալու է, իրրեւ խիստ վտանգաւոր անձ մը և թէ իր բնական

տունը կը փնտռեն եղեր : Իսկոյն ես ալ իմ կողմէս փնտրու-
տուքի մը սկսայ , որովհետեւ ամէնուս ալ պարտականութիւնն
է ձեռքերնուս եկած ծառայութիւնը մատուցանել մեր Վեհա-
փառ Սուլթանին :

— Բնականաբար , պատասխանեց փաշան :

— Վերջապէս բաւական դժուարութեամբ և մէկ քանի
քարեկամներու օժանդակութեամբ երեկ կրցայ իմանալ թէ
այդ Հօճան Պիւլպիւլ Տէրէի կողմը Փաթմա անուն պառաւ
կնոջ մը տունը կը նստի եղեր :

— Տանը մէջ ուրիշ մարդ չկայ :

— Չէ , մի միայն այդ պառաւը . տունն ալ Հօճայէն զտա-
ռչ ոք կը մանէ կ'ելլէ եղեր : Ես մանրամասնօրէն հարցուփոր-
ձեցի դրացիները , բայց դժբախտաբար չատ բան մը չըկցայ
քաղիլ անոնցմէ : Այդ պառաւ Փաթման որ հաղիւ կրկու ա-
միսէ ի վեր եկեր է այդ տունը , անծանօթ մըն է թաղին մէջ
և կ'երեւայ որ դրացիներուն հետ ալ շատ դիւրահաղորդ չէ
եղեր և խօսքի բռնուիլ չուզեր մէկու մը հետ : Դրացիներն
հասկցեր են միայն որ Հօճան այդ կնոջ եղբայրն է եղեր . . . :

— Շատ չնորհակալ եմ քու բերած տեղեկութիւններէդ
և վստահ եղիր որ յոգնութիւնդ առանց վարձատրութեան
չպիտի թողում , ըստ նախարարը դո՛ւռնակ դէմքով մը :

— Կարծեմ լաւ կ'ընէք որ անմիջապէս հրաման տաք
այդ պառաւը ձերբակալելու և տունը խուզարկելու , որովհե-
տեւ եթէ ուշ մնաք գուցէ խոյս տայ , մանաւանդ որ երէկ-
ուընէ ի վեր իր կասկածները գուցէ արթնցան :

— Հիմա պէտք եղած հրահանգները պիտի տամ և քենէ
ալ կը խնդրեմ որ իմ մարդոցս ընկերանասա տունը ցոյց տալու
համար :

— Գլխուս վրայ , փաշա էֆէնտի :

Որդարեւ ոստիկանութեան նախարարը անմիջապէս հրա-
մայեց Պիւլպիւլ Տէրէի ասն մէջ մանրակրկիտ խուզարկու-
թիւն կատարել ու պառաւ Փաթման ձերբակալել : Խահուէճի

Համախառն այդ դորձերուն յասակացուած անձերուն հետ վերադարձաւ Մկրտաւոր, հպարտ՝ իրեն ընծայուած կարեւորութեան համար:

Երբ Համախառն ստախանապետի մը, երկու ստախաններու և երկու լրտեսներու ընկերակցութեամբ երեւցաւ Պիւլպիւլը Տերէի տան առջեւ, ընդհանուր իրարանցում մը յառաջ եկաւ զրացի սուներուն մէջ կանապի զլուխներ լեցուեցան սլաւոսահաններու խաճեաններուն կանաւ և անվերջ ենթադրութիւններու ու մեկնութիւններու կծիկը քաղուեցաւ: Պատառ Փաթման իր զրացիներէն չէր սիրուեր իր սակաւախօսութեան և անհաղորդ բնուէրութեան համար և կարծես հիմա ամէնքը դո՞ւ էին զլխուն եկած այս փորձանքին համար:

Ոստիկանապետը ուժով մը դրան ջախջախը զարկաւ:

Ո՛չ ոք եկաւ դուռը բանալու:

Մէկ երկու վայրկեան սպասելէ ետքը, աւելի ուժգին հնչեցուց ջախջախը: Դարձեալ ստատախանն սուռղ չեղաւ:

— Արդեօք դո՞ւրս ելած է, ըսաւ ոստիկանապետը Համախառնին գառնալով:

Նոյն պահուն զրացի տան խաճեաններէն մին բացուեցաւ և ձերունի կնոջ զլուխ մը երեւցաւ:

— Պէ՛յ էֆէնտի, ըսաւ կինը, դուրս ելած ըլլալու չէ, որովհետեւ ես առտուրնէ ի վեր հոս նստած եմ, եթէ դուրս ելէր անսպասուածապէս պիտի տեսնէի... արդէն այդ կինը շատ դուրս ելելու սովորութիւն չունի:

— Վստահ ես որ երէկ գիշեր հոս էր, հարցուց Համախառն:

— Հարկա՛ւ, գիշերը նոյն իսկ գացի իրմէ լէմոն մը փոխ առնելու:

Ոստիկանապետը կրկին ջախջախը զարկաւ, զայն տեղէն հանելու աստիճան սաստկութեամբ մը:

— Մէջն է բայց դիտմամբ չի բանար, վճռեց ձերունի կինը:

— Արդեօք ետեւի կողմէն փախչելու ճամբայ կա՞յ, հարցուց լրտեսներէն մէկը :

— Պզտիկ պարտէզ մը կայ որ ետեւի տան պարտէզէն պատով մը բաժնուած է, բացատրեց զբացուհին, բայց կարելի չէ հոնկէ փախչիլ, մանաւանդ որ բոլոր կիները պատուհանները լեցուած են :

— Դուռը խորտակելէ դատ ուրիշ ճար չկայ, ըսաւ ուտիկանապետը :

— Եթէ կ'ուզէք դարբին մը բերեմ, առաջարկեց սրճարար Համոսի :

— Դուռն ա՞յնքա՞ն խախտաւ է որ մէկ հարուածով կարելի է բանալ, դարբինի պէտք չկայ, զխտել առաւ ոտախիւն մը :

— Օհ, Ահմէտ ազա, ուսովդ զօրաւոր հարուած մը սո՛ւր տեսնեմ, հբամայեց ոտախիւնապետն իր ստորագասեակին :

Այս վերջինը, որ յողթանդամ մարդ մըն էր, մօտեցաւ դրան և ամբողջ ուժը հաւաքելով՝ ոտքի հարուած մը տուաւ : Դուռը կռնակի վրայ բացուեցաւ :

Ամէնքը միասին ներս խուժեցին, փոքրիկ փակէ մը անցան և իրենց առջեւն ելած առաջին դուռը բացին :

Անակնկալ տեսարան մը զիրենք սեմին վրայ պահ մը կեցուց :

Սենհակին անկիւնը, ցած սեղանի մը քով, միմտեքի վերայ աղջիկ մը նստած էր : Հոգիւ 14 տարեկան, հրաշալի սեւ աչքերով գեղանի մանկուհի մ'էր, չազանակագոյն երկար մազերով ու ճապուկ իրանով : Իր դէմքը մտացի ու պայծառ, չնորհալի հրասլոյր մը կ'արտայայտէր :

Ոտախիւնապետը կարծես յանկարծ նուաճուած այդ մանկական հմայքէն, մեղմ ու զգուական ձայնով մը հարցուց .

— Աղջիկս, ո՛ւր է քաթմա հանրմը :

Մանկուհին որ այդ մարդիկը տեսնելով՝ վեհերոտ չար-

ժուժով մը ոտքի ելած էր և փութացած գլուխը ծածկելու ձերմակ քիւլով մը, չպատասխանեց և զարմացկոտ ակնարկ մը ուղղեց իր խօսակցին: Ոստիկանապետը կտակածելով թէ մանկուհին գուցէ վախէն և յուզումէն չէր կրցած պատասխանել, նոյն մեղմ շեշտով իր խօսքը շարունակեց.

— Աղջիկս, մի՛ վախնար բնաւ, մինք քեզի մեաս հասցընելու եկած չենք, ո՛չ ալ Ֆաթմա հանրմին. միայն կ'ուզենք իրմէ մէկ քանի տեղեկութիւններ առնել... Ըսէ՛ տեսնեմ ո՛ւր է Ֆաթմա հանրմը:

Գեղամի մանկուհին, միշտ իր ազուոր աչքերն ոստիկանապետին ուղղած՝ լուռ մնաց:

— Չխօսի՛ս, չպատասխանե՛ս, ըսաւ ոստիկանապետը ձայնը քիչ մը խտտացնելով.

Բայց կարծես աղջիկը բան մը չէր լսեր: Եւ ո՛չ իսկ շարժում մը բրաւ:

— Այս աղջիկը խուլ ըլլալու է, վճռեց սրճարար Համաթի, բայց ի՞նչ գործ ունի այստեղ, դրացիներն երբեք այսպիսի աղջկան մը խօսքը չըրին ինծի:

— Ինչ որ է, դուք գացէ՛ք տանը միւս մասերը խուլ գարկեցէ՛ք, դուքէ պառաւը տանը մէկ ուրիշ կողմը պահուրտած է. ես առ այժմ հոս կը մնամ սա աղջիկը խօսեցնել ապու համար, կտրելի է երբոր առանձին մնանք լեզուն կը բացուի:

Համաթին, երկու ոստիկաններն ու երկու լրտեսները հեռացան իրենց տրուած հրամանը գործադրելու համար: Ոստիկանապետը երբ առանձին մնաց, մեղմիւ մօտեցաւ մանկատի աղջկան և փաղաքշական ձայնով մը ըսաւ:

— Աղջիկս, ինչո՞ւ լուռ կը մնաս ու մեր հարցումներուն չես պատասխաներ. չե՞ս լսեր կոր ըսածներս:

Մանկուհին աջ ձեռքը բերնին տարաւ լեզուն ցոյց տալու ձեւով, յետոյ գլխովը ժխտական շարժում մը բրաւ.

— Հիմա հասկցուեցաւ, համը է եղեր խեղճը, ըսաւ

ինքնիրեն ուստիկանապետը, բայց ի՞նչ գործ ունի այս տանը մէջ, արդեօք Յաթմային կամ Հօճային ազգականներէն է և ի՞նչպէս կ'ըլլայ որ դրացիները տեղեկութիւն չունին այս ազգական գոյութենէն . . . :

Այս հարցումներուն պատասխանն անշուշտ պառաւը պիտի կրնայ տալ, բայց ո՞ւր էր այդ կիներ :

Ոստիկանապետը սիկառէթ մը վառեց և ինքն ալ սննեակէն դուրս ուղղուեցաւ իր մարդոց խուզարկութեանց արդիւնքն իմանալու համար :

Պառաւին բնակած տունն երկու յարկով . փոքրիկ փայտաշէն շէնք մըն էր, ամէն մէկ յարկի վրայ երկու սննեակներով, այնպէս որ խուզարկութիւնն երկար չտեւեց և քառորդի մը մէջ կարելի եղաւ տանն ամէն ծակուծուկն աչքէ անցնել : Եւ ո՞չ մէկ տեղ կարելի եղաւ գտնել Յաթման :

— Այդ պառաւը կ'երեւայ որ կծիկը դրեր է մեր գալէն առաջ, ըսաւ լրտեսներէն մին :

— Բայց դրացուհիները կը հաւաստեն թէ անոր դուրս ելլելը չեն տեսեր . . .

— Մենք ալ կը հաւաստենք թէ այս տանը մէջ չէ :

— Պառաւին անյայտացումը գուցէ մասամբ դարմանուէր եթէ մեր մարդիկն իրենց խուզարկութեան միջոցին յաջողէին ուրիշ կարեւոր բան մը ձեռք ձգել, խորհրդաւոր Հօճային հետք մը գտնելու նպատակով : Սակայն, ափսո՛ս, և ոչ իսկ գիրքի կամ թղթի կտոր մը կարելի եղաւ երեւան հանել : Ամենատարրական և անհրաժեշտ կարասիներէրէ զատ բան մը չկար բնակարանին մէջ : Ի զուր լրտեսներն ու ոստիկաններն իրենց ամէն ճիգը թափեցին տանը բոլոր անկիւններն որոնելով : Ոչինչ, ոչինչ :

Վերջապէս, յուսահատ, ոստիկանապետն յայտարարեց :

— Ա՛լ անօգուտ է աւելի երկար ատեն այստեղ մնալ ու ժամավաճառ ըլլալ . . . կ'երեւայ թէ շատ ուշ մնացած ենք . . .

Այս խօսքերն արտաւանսած ատեն պաշտօնեան մեղադրանքի ակնարկ մը ուղղեց սրճարար Համտիի, որ այս գործին մէջ ամէնէն աւելի ամօթապարտ մնացողն էր :

Խեղճը կատարեալ յաջողութեան մը վրայ յոյսը դրած և հիմա իր ամբողջ աշխատութիւնն ի դերեւ կ'ելլէր : Այլեւս չէր կրնար յոյս դնել այն վարձաարութեան վրայ, որուն ակնարկած էր նախարարը :

— Մեղք մեր յոգնութեանը, հիմա ի՞նչ պատասխան պիտի տանք փաշա էֆէնտիին, պատասխանեց ոստիկանապետը դառնութեամբ :

— Բայց այդ պառաւը շատ հեռուն ըլլալու չէ, և կարկի է որ զինքն Սկիւտարի մէջ ձեռք ձգենք, կմկմաց Համտի :

— Բնական է որ այդ մասին խուզարկութիւններ պիտի ընենք. առ այժմ մեր տեղեկագիրը պատրաստենք ու մեկնինք :

Այս ըսելով ոստիկանապետը ակտի մը վրայ տեղաւորուեցաւ և զրպանէն թերթ մը թուղթ հանելով սկսաւ իր բացասական խուզարկութեանց արդիւնքը մանրամասնօրէն տեղեկագրել :

Այս գործողութիւնը կէս ժամու չափ տեւեց, որմէ վերջ պաշտօնեան ետքի կլաւ և իր մարդերուն դառնալով, ըսաւ .

— Ձենէ երկու հոգի թող հոս մնայ մինչեւ որ մենք երթանք նախարարին հաղորդելու մեր տեղեկագիրը :

Յետոյ յանկարծ ձեռքը ձակտին տարաւ և գոչեց .

— Բայց պզտիկ աղջիկը մոռցանք, ի՞նչ պիտի ընենք զինքը :

— Դրացիներէն մէկուն յանձնելու է, խորհուրդ տուաւ Համտի :

— Ընդհակառակն միասին ոստիկանատուն տանելու է, ըսաւ քրտեսներէն մին, այդ աղջիկը ապահովաբար ֆաթմա-

յին կամ Հօճային ծանօթ է և գուցէ կրնանք իրմէ բան մը
իմանալ :

— Այո՛ , պէտք է զայն միասին տանինք վճռեց ոստի-
կանապետը :

Երբ գացին մանկուհին փնտռելու , տեսան որ անիկա
հանդարտիկ նստած էր Ֆինֆելդին վրայ , բոլորովին անտեղեակ
էր շուրջն անցած դարձածէն :

Ոստիկանապետը ձեռքի շարժումներով հասկցուց թէ զին-
քը միասին պիտի տանէին : Աղջիկը ս և է ընդդիմութիւն
կամ դժկամակութիւն ցոյց չտուաւ . իսկոյն ոտքի ելաւ , գը-
լուխը ծածկեց , բազմոցին վրայ դրուած փոքրիկ ծրար մը
թեւին տակ առաւ և եկաւ կեցաւ պաշտօնեային քով , կար-
ծես ըսել ուղիով .

— Պատրաստ եմ կրնանք մեկնիլ :

Փոքրիկ խումբը դէպի դուռը ուղղուեցաւ :

Դուրսը , փողոցին մէջ , դրացիները պատուհաններուն
առջեւ և դրան սեմերուն վրայ լեցուած էին :

Ոստիկանական այս խուզարկութիւնը ամենուն հետաքրք-
րութիւնը բորբոքեր էր : Կիները մանաւանդ անվերջ կը շա-
ղակրատէին ամէնէն արտառոց մեկնութիւնները տալով : Երբ
ոստիկանապետին հետ մանկատի ախջիկ մը տեսան՝ իրենց հե-
տաքրքրութիւնը կրկնապատկուեցաւ .

— Ո՞վ էր այդ պզտիկը , ուրկէ՞ց երեւան ելած էր , ի՞նչ
գործ ունէր այդ տան մէջ :

Բոլոր այս հարցումները հետաքրքիր դրացուհիներու միտ-
քին մէջ զիրար կը հրմշակէին :

Ոստիկանական պաշտօնեան ուղեց քիչ մը խօսեցնել այդ
կիները , յուսարով որ կրնայ տեղեկութիւն մը քաղել խորհրդ-
դատոր աղջկան մասին և մօտեցաւ քովի տան դրան որուն
առջեւ հաւաքուած էին մէկ քանի պառաւաններ :

— Հանրմներ , ըսաւ համր մանկուհին ցոյց տալով , այս

պղտիկ աղջիկը կը ճանչնա՞ք, ուրիշ ատեն տեսա՞՞ծ էիք Յաթմա հանրմին տանը մէջ :

— Մենք ալ հիմա այդ փաքրիկին վրայ կը խօսէինք, պատասխանեց պառաւանդերէն մին, շիտակը շատ զարմացանք երբոր պունէն դուրս ելաք, փոխանակ պառաւ Յաթմային այս մանկափ աղջկան հետ, զոր երեւք տեսած չէինք :

— Այս տունը դալը չնշմարեցի՞ք :

— Բնա՛ւ, և կրնանք հաւատալ որ մինչև երէկ իրիկուն այդպիսի աղջիկ մը չկար տանը մէջ, այս մասին ամենքս ալ վստահ ենք . . . : Բայց ինչո՞ւ իրմէ տեղեկութիւն չէք հարցնել :

— Ինչպէս կարելի է երբ թէ՛ համր և թէ խուլ է միանգամայն, պատասխանեց օտարկանապետը յուսահատ կերպով :

— Վա՛խ, վա՛խ, վա՛խ, բացագոմնչեցին պառաւանդերն արդահատանքով աղջկան ազուր դէմքը դիտելով :

Մանկուհին բարորդիւն անտարբեր կը շուրջը խօսուածներէն, անմեղօրէն կը ժպտէր ամենուն երեսին :

— Արդեօք դիշերն եկաւ ու դուք ուշադրութիւն չկըրցա՞ք ընել, հարցուց պաշտօնեան :

— Գիշեր ժամանակ ինչպէս այս աղջիկն առանձին կրոնայ եկած ըլլալ, մանաւանդ որ հեռու տեղէ մը եկած ըլլալու է. եթէ այս կողմերէն եկած ըլլար՝ անպատճառ զինքը պիտի ճանչնայինք, ասկէ զատ Յաթման աստեղացի չէր. հետեւաբար ո և է ծանօթ կամ ազգական շունէր Սկիւտարի մէջ :

Պառաւ մը, որ մինչև այն ատեն լուռ կեցած էր, ինքն ալ խօսքի իստունուեցաւ .

— Երէկ գիշեր, ուշ ատեն, երբ քունս տանելու վրայ էր, Յաթմայի տան դրան ջախջախին ձայնը լսեցի, նոյն խակաւ կը յիշեմ որ առաջին անգամ դուռը չբացուեցաւ և կըրկին զարկին :

— Վստահ ես յիշողութեանդ վրայ :

— Այո՛ , այո՛ , պնդեց պառուք , նոյնիակ անկողնէս կայ պատուհանին առջև եկայ նայելու համար թէ ո՞վ էր որ այդ ժամուն Յաթմայի դուռը կը զարնէր , բայց արդէն դուռը բացուած էր , որովհետեւ ոչ ոք տեսայ դրան առջև :

— Ասկէց կրնանք հետեւցնել թէ աղջիկն էր եկողը , եղբորակացուց ոտտիկանապետը :

Յետոյ տեսնելով որ ա՛յլ բան մը չունէր քաղելիք այդ կիներէն , ճամբան շարունակեց :

Ոտտիկաններու ընկերացող այս գեղանի մանկուհին , որուն դէմքը տարօրինակ հմայք մը ունէր , ընդհանուր հետաքրքրութիւն չարժամ էր թէ՛ Սկիւտարի և թէ՛ շողենաւին մէջ :

Երբ կամուրջ հասան , ոտտիկանապետը յարմար դատեց կառքով մինչև Զապթիէ տանելու մանկուհին , որպէսզի խուսափի տաղտկալի և հետաքրքիր նայուածքներէ :

Ոտտիկանութեան նախաբարն անհամբեր կ'սպասէր Սկիւտարի մէջ կտտարուելիք խուզարկութեանց արդիւնքին : Երբ իր պաշտօննայէն իմացաւ անոնց անյաշող կլքը , սարսափելի բարկութեան մէջ ինկաւ և սկսաւ սպառնալիքներ տեղալ ոտտիկանապետին ու անոր գործակցողներուն գլխին և հրամայեց որ խիոյն խահուէճի Համտին ձերբակալեն իրբեւ սուտ տեղեկութիւն հաղորդող մէկը :

— Այդ անպիտանն անշուշտ գիտէր Յաթմային փախած ըլլալն և մեր քիթին խնդալ ուզեց պարզապէս , գոչեց ձեռքը գրասեղանին զարնելով :

Խեղճ ոտտիկանապետը շուարած կը գիտէր իր մեծաւորին ցասումն առանց կարենալ խօսք մը գտնելու : Երբ Շէֆիք փաշա քիչ մը հանդարտեցաւ , այն ատեն միայն համարձակեցաւ ըսելու .

— Փաշա էֆէնտի , դուցէ մեր հոն գտած աղջիկը կրնայ օգտակար ծառայութիւն մը մատուցանել :

— Այո՛ , խուլ և համր արջիկ մը , գոչեց փաշան , մն՛դք

որ կոյր ու կազ ալ չէ եզեր միեւնոյն ասուն, որպէսդի կատար-
եալ ըլլար . . . :

Պաշտօնեան՝ գլխիկոր՝ չպատասխանեց :

Շէֆիք փաշա, որահին մէջ, քանի մը անգամ վեր վար
քալելէ ետքը, յանկարծ ըսաւ .

— Հոս բեր տեսնեմ սա աղջիկը :

Ոստիկանապետն անյայտ եղաւ և վայրկեան մը ետքը
երեսցաւ գեղանի մանկուհիին հետ :

Շէֆիք փաշա, որուն բարկութիւնը տակաւին չէր ան-
ցած, խոտու ու դատան ակնարկով մը վերէն վար չափչփեց
խնդճ աղջիկը որ դարմացկոտ աչքերով իրեն կը նայէր, կար-
ծես ջանալով դուշակել անոր ցատումին պատճառը :

Ի՞նչպէս, կը համարձակիս խուլ ու համր ձեւանալ, պո-
ռաց նախարարը մանկուհիին երեսին՝ սպառնալից իր բազու-
կը շարժելով, կը կարծես որ այդ ձեւերովդ կրնամ մեզ խա-
բել . . . ևս քու լեզուդ շատ դիւրաւ կրնամ բանալ տալ, շո՛ւտ
պատասխանէ տեսնեմ հարցումներուս . . . Ի՞նչ է քու անունդ :

Աղջիկը, բերանը կխտաբաց, պիշ պիշ կը նայէր նախա-
րարին, առանց յուզումի ամենախաբը նշան մը ցոյց տալու :

— Փաշա էֆէնտի, ըսաւ պաշտօնեան ցած ձայնով. ևս
ալ Ձեր վսեմութեան պէս նախ կարծեցի թէ գործին մէջ խա-
բէութիւն կար, բայց յետոյ համոզուեցայ որ իրաւցնէ ո՛չ կը
լսէ, ո՛չ կը խօսի :

Նախարարը չպատասխանեց, դէպի գրասեղանը ուղղուե-
ցաւ, դզրոցներէն մին բացաւ, մէջէն ուէլովէր մը հանեց և
անոր փողը աղջկան ուղղելով, նոյն սպառնազին ձայնովը
գոչեց .

— Եթէ չխօսիս, հիմա այս դէնքովս գլուխդ կը ջախ-
ջախեմ . . . :

Աղջիկը, ահաբեկ շարժումով մը, երկու ձեռքերը երեսին
տարաւ և ճիչ մը արձակեց .

— Խօսէ՛ կրկնեց փաշան, միշտ դէնքը անոր ուղղած :

Մանկուհին ետ ետ երթալով սկսաւ արտասուել :
Շէֆիք փաշա տեսաւ որ իր փորձն սնշաջող կլաւ և
ձեռքը վար առաւ՝ զնաց ըէփովէրը պահելու :

— Իրաւունք ունիս ըսաւ իր ստորատուեալին , այս աղ-
ջիկը իրաւցնէ համր է :

Աղջիկը կ'երեւայ որ հասկցաւ թէ իրեն եղած բոլորսպառ-
նալիքները փորձեր էին զինքը խօսեցնելու համար : Լացն խ-
կոյն դադրեցուց , ձեռքերը երեսէն վար առաւ և սկսաւ ժրջ-
տիլ իր անոյշ , յանկուցիչ ժպիտովը :

Ինչպէս ըսինք , այս տարօրինակ մանկուհին այնպիսի
տարօրինակ հմայք մը ունէր որուն կարելի չէր դիմադրել :
Նախարարը ինքն ալ իր կարգին ազդուեցաւ անկէ , ինչպէս
ազդուած էր սատիկանապետը : Զոջաց իր քիչ մը առաջուան
կոշտ վարմունքէն և ուղեց դարմանիկ զայն : Փափկութեամբ
մօտեցաւ աղջկան , ձեռքէն բռնեց , բերաւ աթոռի մը վրայ
նստեցուց և աշխատեցաւ զայն բոլորովին հանդարտեցնել :

Յետոյ , դառնալով սատիկանապետին , ըսաւ .

— Այս աղջիկ չինք կրնար բանտարկել կամ ոտտիկանա-
տան մէջ պահել , մանաւանդ որ իր վրայ ո և է ամբաստա-
նութիւն չկայ և զուցէ բոլորովին անմեղէ : Այսուհանդերձ
չենք ալ կրնար զինքը թողուլ որ երթայ , առանց որոշապէս
հասկնալու թէ ինչ պարագաններու տակ Ֆաթմայի տունը
կը գտնուէր . . . :

— Եթէ հրաման կ'ընէք , զինքը իմ տունս հիւրընկալիմ
մինչև որ իննդիրը լուսաբանուի , ըսաւ պաշտօնեան փութկո-
տութեամբ :

— Քու տունդ շատ յարմար չէ , պատասխանեց փաշան
թեթեւ քմծիծաղով մը , լաւագոյն է որ այժմ իմ տունս տո-
նիմ :

— Ինչպէս որ Ձեր վտեմութիւնը պատշաճ կը դատէ :

— Այո՛ , այո՛ , վճռեց փաշան ծայրատ ակնտրկ մը նե-
տելով գեղանի աղջկան վրայ , ամէնէն յարմարն այս է :

Արդարև, կէս ժամ ետքը, Շէֆիք փաշա, մանկուհիին հետ կառք նստած՝ ուղղուեցաւ իր բնակարանը, ուր զայն կկենրու խնամքին յանձնելէ ետքը, ինք գնաց Երլարզ իր օրական համարը տալու իր Վեհափառ Տիրոջը :

Բնականբար օրուան կարեւոր դէպքերէն մին այս խուլ — համր աղջկան պարագան էր, զոր նախարարը մանրամասնօրէն տեղեկագրեց Ապտիւլ Համիտի :

Սուլթանն հազիւ թէ այդ խորհրդաւոր աղջկան գոյութիւնը լսեց, իսկոյն հրամայեց որ զայն պալատ փոխադրեն :

Շէֆիք փաշա թէեւ շատ գոհ չմնաց Սուլթանական այս հրամանէն, բայց ստիպուեցաւ անմիջապէս իր բնակարանը երթալ մանկուհին բերելու համար :

Ոստիկանութեան նախարարը այդ գեղանի աղջիկը իր ձեռքին տակ պահելով՝ այնպիսի դիտաւորութիւններ ունէր որոնք ու է առնչութիւն չունէին իր ոստիկանական պաշտօնին հետ : Եւ ահա՛ իր տիրոջ կամքը կուգար վեր ի վայր չըջիլ ամէն բան :

Փաշային բնակարանին մէջ աղջիկը շուտով ընտելացեր էր զինքը չըջապատող կկենրուն հետ որոնք ձեռքի շարժումներով յաջողեր էին քիչ շատ յարաբերութեան մտնել իրեն հետ : Սակէ զատ, իր հնտաի լաթերուն տեղ, անմիջապէս նոր զգեստներ հագցուցած էին. ինչ որ ալ աւելի ցայտեցուցած էր իր մանկական շնորհն ու հրապոյրն և միանգամայն առիթ մը եղեր էր աւելի շուտով մտերմանալու այդ բնկուհիներուն հետ :

Այսպէս, երբոր փաշան, քանի մը ժամ ետքը, եկաւ զինքը փնտռելու, մանկուհին գովամակութիւն յայտնեց մեկնելու. այսուհանդերձ, ի վերջոյ, հլութեամբ ընկերացաւ անոր :

Երլարզի պալատը հասնելուն պէս, Ապտիւլ Համիտ ուղեց տեսնել խորհրդաւոր աղջիկը, բայց ո՛չ իր ներկայութեանը ընդունելով զայն՝ այլ վարագոյրի մը ետև ծածկուած,

ու խոստերուն մէջ պահուած թուղթի կտոր մը քաշեց դուրս հանեց :

Պատանին խսկոյն թուղթը բացաւ, երկրորդ լուցկի մը վառեց և անոր լոյսովը, արագ արագ հետեւեալը կարդաց :

«Յեկան խուզարկելու և Ֆաթման ձերբակալելու զիս հարցուփորձեցին . տրուած պատուէրին համեմատ վարուեցայ . դեռ հոս են, միւս սենեակները կը խուզարկեն կոր . հաւանորէն զիս միասին պիտի տանին . վստահ եղիք իմ վրաս, տրուած հրահանգները չպիտի սոռնամ :»

Պատանին ընթերցումը աւարտելէ ետքը, թուղթը լուցկիին մօտեցուց և զայն այրեց :

— Խեղճ Զիւլէհա, այս ժամուս բանսն է ուրեմն :

Եւ սղուն աչքերը լեցան : Սակայն խսկոյն ինքզինքը ժողվեց :

— Լալու ասեն չէ, ըսաւ մտովի, այլ գործելու . . . մեկնելէ առաջ միւս սենեակներն ալ մէյ մը աչքէ անցնում անենելու համար թէ այդ մարդիկն ինչպէս կատարած են իրենց խուզարկութիւնը :

Եւ ուզուեցաւ այն սենեակը որ բակին միւս կողմը, փողոցին վրայ կը գտնուէր : Հազիւ թէ դուռը բացած էր, անարեկ՝ ետ ետ ընկրկեցաւ : Երկու հոգիի խուկալու ձայնը ականջին զարկած էր . . . :

— Ի՜նչ, տանը մէջ մա՞րդ կայ եղեր, ըսաւ ինքնիրեն, ո՞վ կրնան ըլլալ . . . :

Պահ մը անշարժ մնաց եղած տեղը : Ականջ դրաւ և ուշադիր մտիկ ըրաւ : Սենեակին դուռը բաց ձգուած էր և խուկալու ձայները կը լսուէին յստակ կերպով :

— Պէտք է հասկնամ այդ մարդոց ո՞վ ըլլալ, վճռեց պատանին հաստատ կերպով և լուցկի մը վառելով մօտեցաւ սենեակին դրան և ներս նայեցաւ :

Բազմոցի մը վրայ, որ սենեակին մէկ ծայրէն միւսը կ'երկարեր, երկու հոգի, իրենց վերարկուներուն մէջ պըլ-

լուած կը քնանային : Աթուռի մը վրայ ոստիկանի սուր մը և գօտի մը դրուած էր :

Այս առարկաները բաւ եղան պատանին լուսաբանելու համար :

— Կ'երեւայ որ ոստիկաններէն երկուքը հոս մնացած են հսկողութիւն կատարելու համար , աղէկ որ օձքս ձեռք չտուի՝ բայց շատ կենալու չի դար հոս , գուցէ իրենցմէ մէկն արթըննայ . . . Կծիկը դնենք կամացուկ մը :

Պատանին յուշիկ յուշիկ հեռացաւ դրան քովէն : Մարդիկը կը շարունակէին խուկալ և խոր քունի մէջ թաղուած կը թուէին :

— Չէ՛ , արթննալու միտք չունին , ըսաւ ինքնին պապատանին , վախ չկայ :

Յանկարծ գազափար մը յղացաւ . չարածճի գազափար մը , որովհետեւ սկսաւ քթին տակէն խնդալ : Կամաց կամաց մօտեցաւ բաց մնացած դրան , սննեակէն ներս մտաւ , մութին մէջ յառաջացաւ մինչև այն աթոռն որուն վրայ դրուած էին ոստիկանին սուրն ու գօտին , դանոնք առաւ եւ սննեակէն դուրս կլեխով՝ դուռը խնամքով գոցեց :

Վայրկեան մը ետքը փողոցն էր արդէն և արագ քայլելով կը հեռանար պառաւ Ֆաթմայի բնակած փողոցէն :

Ստուռն՝ երբ ոստիկանն ու իր լրտես ընկերն աչքերնին բացին ու տեսան սուրին ու գօտին անյայտացումը , ափիւքերան մնացին :

Նախ ոստիկանը կարծեց թէ իր ընկերն անհամ կատակ մը կը ընէր իրեն , սակայն երբ տեսաւ որ կատակ չի կար դործին մէջ և թէ լրտեսն իրմէ աւելի իրար անցած էր այս անբացատրելի անյայտացումին պատճառաւ , սկսաւ չափազանց խուզիլ :

Տանն ամէն կողմը յուսահատ վիտուտութե մը ետքը , երկու ընկերները գլուխ գլխի տուին այս անակնկալ առեղծուածը լուծելու համար :

— Տարակոյս չկայ թէ, գիշերը, մեր քնացած միջոցին մէկը մտած է այս սուենը, վճռեց լրտեսը :

— Եւ համարձակած է մինչեւ մեր քովը մօտենալու, աւելցուց ոստիկանը :

— Ո՞վ կրնայ ըլլալ այդ եկողը :

— Եւ ինչպէս կրցած է դռնէն ներս մտնել :

— Ուրեմն պառաւ Ֆաթման ըլլալու է :

— Շատ ճիշդ խօսեցար . . .

— Եւ մենք՝ փոխանակ զայն բռնելու, սուրն ու գօտին ալ իրեն գողցուցինք . . .

— Փոխանակ երկուքս մէկ քնանալու, փոխն ի փոխ հսկելու էինք :

— Արդէն կանոնն ալ այդպէս է :

— Բայց ես քնացայ կարծելով որ դուն արթուն ես ու կը հսկես կոր, եթէ գիտնայի որ դուն ալ պիտի քնանայիր, արթուն կը մնայի :

— Ճիշտ ես ալ քու վրադ վստահելով էր որ քնացայ, եթէ ոչ աչքս չէի գոցեր :

— Հիմա ի՞նչ բացատրութիւն պիտի տանք մեր Հիւանի պէյին . . . :

Հիւանի պէյ այն ոստիկանապետն էր որուն հետ առջի օր եկած էին խուզարկութիւնը կատարելու :

Արդարեւ երկու մարդոց վիճակը բաւական տագնապալից էր : Սուրին ու գօտին անյայտացումը կարելի չէր ծածկել և եթէ եզկութիւնը պատմէին այնպէս, ինչպէս որ տեղի ունեցած էր, կրնային ծանր պատիժներու ենթարկուել իրենց անհողութեանը համար :

Գիտէին որ յեզախոխական գործերու մասին որքա՞ն խըստապահանջ էր նախարարն և որքա՞ն աններող ամենափոքր թերութեան մը համար :

Երկու ընկերները երկար մտածեցին այս անտանելի կացութեան դարման մը գտնելու համար :

վերջապէս լրտեսը ըսաւ .

— Ուրիշ ճար չի կայ, հարկ է խնդիրը ծածուկ պահել, անցած դարձածին վրայ խօսք մը չընել . . .

— Բայց սուրն ու գօտի՞ն :

— Ասոր գարմանը կարելի է գտնել . . . ևս Սկիւտաբլի ոստիկանատան մէջ բարեկամներ ունիմ, կընամ քեզի ուրիշ սուր մը և գօտի մը ճարել :

Ինչո՞՞ ոստիկանը երախտագիտական ակնարկ մը ուղղեց իր ընկերոջ և յուզուած ձայնով մը ըսաւ :

— Այլ աղա, եթէ այդ բարիքը ընես ինձի, գիացիր որ յաւիտեան չպիտի մտնամ և պիտի ջանամ անոր փոխարէն քեզի օր մը նմանօրինակ ծառայութիւն մը մատուցանել :

— Եւ հիմա կ'երթամ պէտք եղածը կը բերեմ, դուն հոս սպասէ, ըսաւ լրտեսը :

Հազիւ թէ այս վերջինը գաւրս ելած էր, երբ տանը գուռը դարկին :

Ոստիկանը իսկոյն վաղեց բանալու և տեսնելով որ եկողները ոստիկանութեան քօմիտէր մը և բոլիս մը էին, յարգանքով մէկ կողմ քաշուեցաւ որպէսզի ներս մտնեմ :

— Երէկ զիշեր կարծեմ քու սուրդ ու գօտիդ գողցուցեր ևս, ըսաւ քօմիտէրը մէկէն ի մէկ :

Ոստիկանը շիտիթած ու դողահար ձայնով մը մէկ քանի անհասկնալի բառեր թոթովեց :

— Մի յուզուիր, ըսաւ քօմիտէրը մեղմ ու հայրական շնչով մը, պատահածը մեծ բան մը չէ, և կընայ ամենուս դուինն ալ գալ . . .

— Պէյ էֆէնտի, ծառանիդ . . . : Կակաղեց ոստիկանը առանց կարենալ խօսքը աւարտելու :

— Բարեբախտաբար արդէն գողը բռնուած և ամէն բան խոստովանած է, շարունակեց քօմիտէրը, և քու սուրդ ու գօտիդ ալ հիմա ոստիկանատունը կը գըրանուին : Գողին պատ-

մութենէն կ'երեւայ որ դուք երկուքդ ալ ունէ յանցանք չու-
նիք եղածին մէջ... ո՞ւր է միւս ընկերդ :

Դուրս ելաւ, քիչ մը հաքը պիտի գայ :

— Ուրեմն դուն ալ անմիջապէս գնա՛ւ և սուրդ ու դօ-
տիդ ա՛ն ոստիկանատունէն : հոգ մի՛ ընեք, ես իմ տեղեկա-
գիրս այնպէս մը կը գրեմ որ քեզի բնաւ վնաս չի հասնիր :

Շատ շնորհակալ, շատ երախտապարտ եմ, քօմիսէր
պէյ, պատասխանեց խեղճ ոստիկանը յուսալից դէմքով մը իր
անծանօթ մեծաւորը բարեւելով ակնսածալից :

— Ոստիկանապետ Հիւանի պէյ իմ բարեկամս է, ես
գործը բերանացի անոր ալ կը հասկցնեմ և թոյլ չեմ տար որ
պատիժ կրես, շարունակեց միւսը. օ՛ն, շուտով գնա՛ւ և սուրդ
ու գօտիդ աննկով վերադարձիր... Հաւանական է որ Հիւանի
պէյն ալ քիչ հաքը կուգայ : Մենք հոս կը սպասենք :

Ոստիկանը ուրախութենէն այլայլած մեկնեցաւ :

Երբեք չէր կրնար երեւակայել թէ գլուխն եկած փոր-
ձանքը այսքան յաջող կերպով պիտի լուծուէր :

— Իցի՛ւ թէ, կը մտածեք ճամբան շուտ շուտ քայլելով,
Հիւանի պէյը չեկած սուրս առնէի ու վերադառնայի... :

Եւ այս մտածումով՝ գրեթէ վազկելով կ'երթար փողոցնե-
րէն : Սակայն ոստիկանատունը բաւական հեռու էր, և հազիւ
քառորդէ մը կըրցաւ հասնիլ : Բակին մէջ նշմարեց իր լրտես
ընկերը որ մէկու մը հետ զազանաբար կը խօսէր :

Իսկոյն անոր գովը փութաց, ուրախ գուարթ դէմքով մը :

— Ալի ազա իմացա՞ր, գոչեց, գողը բռնուերէ :

— Ի՞նչ գող, հարցուց միւսը զարմացկոտ դէմքով մը,
որովհետեւ բնաւ մտքէն չէր անցներ ոստիկանը հոս տեսնել :

— Սուրս և գօտիս գողցողը... :

— Խեղքե փախցուցի՞ր, ի՞նչ կ'ըսես, գոչեց միւսը :

— Այո՛, գողը բռնուած ու ամէն բան խոստովանած է,
պնդեց ոստիկանը, հիմա քօմիսէր մը և ոստիկան մը եկան

տուն և անոնք լուր սուին . . . Քօմիսէր պէյը դիւ հոս զրկեց , որպէսզի սուրս ու գօիս առնեմ :

— Լաւ ուրեմն , ներս մտնենք ու գործդ տեսնենք , շատ աղէկ եղաւ որ սուրդ գանուեր է որովհետեւ դժուար պիտի ըլլար ուրիշ մը գանելը :

Բայց ներսը դառն յուսախարութիւն մը կը ուզասէր իրենց : Ձերբակալուած գողի , սուրի կամ գօտիի մասին ոչ ոք լուր ունէր . . . Ի դ՛ուր ոստիկանը մի առ մի պատմեց քօմիսէրին այցելութիւնը և տուած հրահանգները և նկարագրեց տուն եկող երկու անձերը : Սյղպիսի քօմիսէր չէին ճանչնար Սկիւտարի ոստիկանատան մէջ .

— Ծո՛ւտ վազենք , Յաթմայի տունը դառնանք , ըսաւ ընկերոջը թեւէն քաշելով :

Պատմութիւնն այնքան տարօրինակ թուեցաւ Սկիւտարի ոստիկանապետին , որ ինքն ալ , ոստիկանի մը հետ , ընկերացաւ անոնց :

Վազն ի վազ հասան Պիւլպիւլ Տէրէի ասն առջեւ , դուռը դարկին , բայց բացող մը չըլլալով , ուստի հարուածով մը հըրեցին ու ներս մտան : Չորս կողմը խուզարկեցին , ոչ ոք կար տանը մէջ :

Ոստիկանապետն որ խոհանոց մասած էր , յանկարծ զարմացական ճիչ մը արձակեց :

Հորին քով Մալթայի քար մը տեղէն հանուած էր ու բաւական խոշոր ծակ մը կ'երեւար , որ յայտնի էր թէ յատկապէս փորուած էր , իբրև թաքստոց .

— Ի՞նչ է այս ծակը , դո՞ւք քարը մէկ կողմ առիք , հարցուց ոստիկանապետը լրտեսին ու իր ընկերոջ :

— Ո՛չ , էֆէնտի , պատասխանեցին երկուքը միաբերան :

Ծռեցան այդ թաքստոցը քննելու . բոլորովին դատարկ էր :

— Հիմա խնդիրը կը բացատրուի , ըսաւ ոստիկանապետը կ'երեւայ որ հոս եկող երկու անձերը գիտէին որ այստեղ պահ-

ուսած բան մը կար և իբրև ոստիկանութեան պաշտօնեայ ծրպանելով եկան զայն առնելու և քեզ ալ խաբելով տունէն դուրս դրկեցին... չխտակը շատ վարպետ ու յանդուզն մարդիկ են եղեր... :

Քիչ յետոյ դրացիները հաստատեցին ոստիկանութեան պաշտօնեային ենթադրութիւնը : Արդարև ոստիկանին հեռանալէն քիչ ետքը , կեղծ քօմիսէրն ու իր ընկերն ալ դուրս ելած էին տունէն , թեւերնուն տակ մէյմէկ փոքրիկ սնտուկներով : Երկու դրացուհիներ պատուհանէն տեսած էին այդ ամէնը :

Բոլոր այս եղելութիւնները տեսնելով ու լսելով , խնդճ լրտեսն ու ոստիկանը , ամօթահար ու չփոթած , չէին գիտեր ի՞նչ դիրք բռնեցին :

Ի լրումն դժբախտութեան՝ ոստիկանապետ Հիւսնի պէյն ալ քանի մը մարդոց ընկերակցութեամբ ներս մտաւ տունէն : Նախարար Շէֆիզ փաշա յատկապէս դրկած էր զինքը , որպէս զի տեղեկութիւն մը առնէ կատարուած խուզարկութեանց արդիւնքին մասին :

Հարկ եղաւ մի առ մի պատմել իրեն ամբողջ ճշմարտութիւնը : Հիւսնի պէյ կատաղի բարկութեան մը մասնուեցաւ երբ լսեց ոստիկանին ու լրտեսին անճարակութիւնները , թէև մենք գիտենք թէ խեղճերը շատ յանցաւոր չէին :

— Բայց փոխանակ հոս այսպէս անշարժ կենալու և եղածին վրայ մտածելու , պէտք է ջանանք գոնէ որ այդ մարդիկը ձեռք անցընենք և եղած չարիքը դարմանենք մասամբ գոչեց Հիւսնի պէյ :

— Հիմա պէտք եղած միջոցները ձեռք կառնեմ այդ կեղծ քօմիսէրը և իր ընկերը ձերբակալել տալու համար , պատասխանեց Սկիւտարի ոստիկանապետը իր պաշտօնակցին :

Քառորդ մը ետքը անմէնքը վերադարձած էին ոստիկանատուն , Փաթմայի դրան առջեւ իբրև պահապան թողլով ոստիկան մը :

Հիւանի պէյ պահ մը հոն մնալէ ետքը, վերադարձաւ Պոլիս իր տիրոջ հազարդեկու համար պատահածները :

Ոստիկանութեան նախարար Շէֆիք փաշա խորին յուզումով լսեց այդ ամէնը : Այլ եւս յայտնի կ'երեւար որ կեղծ Հօճային դէպքը կղզիացած առանձնակի բան մը չէր : Ամբողջ կազմակերպութիւն մը կար գործին մէջ, որ կը գործէր խիստ յանդուգն ու միանգամայն ճարպիկ կերպով : Ու նախարարը սոսկումով յիշեց հին օրերը, երբ գաղանի քօմիթէն իր դաւերը կը նիւթէր Պոլսոյ ամէն կոմն և նոյն իսկ Երլարզի պալատին մէջ : Արդեօք այդ մարդիկը կրկին իրենց գործունէութիւնը պիտի վերսկսին :

Գազափար մը անցաւ յանկարծ նախարարին մտքէն .

— Այս գործերուն մէջ գուցէ Սալիհա հանրմի մաար կայ, մտածեց :

Սալիհա հանրմ այն տարօրինակ յեղափոխականուն հին էր որ մէկ քանի տարի առաջ ահ ու սարսափ սիրտած էր Երլարզի պալատին մէջ, որ անգամ մը ձերբակալուելով՝ յաջողեալ էր Եմէն աքսորուած միջոցին, փախչել Սուէզի ջրանցքէն, յետոյ կրկին վերադառնալ Պոլիս, իբրև երոտպցի կին մը ծալտուել, Ապտիւլ Համիտի վստահութիւնը դրաւել և տնոր անձին դէմ մահափորձ մը կատարել և յետոյ փախչել արտասահման :

Այդ դէպքերէն ի վեր երեք տարի անցած էր ու այդ ժամանակամիջոցին Սալիհա և իր ընկերները կենդանութեան նշան մը չէն սուած, այնպէս որ Սուլթանն ու իր արքանհակները համոզուած էին որ այդ յանդուգն յեղափոխականները, այլեւս քաշուած էին ասպարէզէն և ինքզինքնին մուսցութեան մէջ թաղած :

Բոլոր այս անցեալը վեր յիշելով Շէֆիք փաշա հեազհետէ կը խոսովուէր :

— Հագգը պէյ և Սալիհա հանրմ երկու անբաժանելի ընկերներ եղած են միշտ և իրենք էին գաղանի քօմիթէին վա-

րիչ ոյժերը, կը խորհէր ոստիկանութեան նախարարը, քանի որ Հագգը պէյը հոս եկած էր յեղափոխական գործը վերսկըսելու համար, շատ հաւանական է թէ Սալիհա հանըմն ալ իրեն կ'ընկերանար... և ո՞վ գիտէ գուցէ Սկիւտարի Ֆաթման նոյնիսկ Սալիհա հանըմն է...: Եւ այդ մարդիկը զոր երէկ գիշեր կամ այս առտու պիտի կրնայինք ձեռք ձգել, եթէ քիչ մը վարպետութեամբ շարժէինք, անաւասիկ մեր ձեռքէն կը փախչին, չնորհիւ մեր ապիկարութեան, առանց հետք մը ձգելու իրենց հասել:

Այս տխուր և յուսահատական խորհրդածութիւնները ընելէ հաքը, նախարարը նստաւ իր գրասեղանին առջև և երկար տեղեկագիր մը պատրաստեց իր Վեհափառ Տիրոջ ներկայացնելու համար:

Այս գրութեան մէջ Սկիւտարի դէպքերը մանրամասնօրէն պատմելէ հաքը, փաշան իր կասկածներն ալ կը յայտնէր Սալիհա հանըմի և իր ընկերներուն Պոլիս դռնուեկնուն մասին:

Նախարարը իր տեղեկագիրն աւարտելէ ու զայն գրպանին մէջ տեղաւորելէ հաքը, զանդակը հնչեցուց և ոստիկանապետ Հիւանի պէյը կանչել սուաւ:

— Ձեր երկու օրուան գործունէութենէն շատ դժգոհ եմ, ըսաւ խիստ ձայնով մը, և վստահ եմ որ մեր Վեհափառ Սուլթանն ալ երբոր եղածներուն տեղեկանայ սարսափելի բարկութիւն պիտի զգայ...:

Ոստիկանապետը, գլուխը կախ, լուռ ու մունջ լսեց այս մեղադրանքները:

— Քու և քու մարդոցդ անճարակութեան չնորհիւ, շարունակեց փաշան, ո՛չ թէ միայն չկրցանք այդ պառաւ կիներ և իր համախոհները ձեռք անցընել, այլ տեղի տուինք որ անք մեր քթին խնդան անպատկառօրէն...:

— Ես ալ Ձեր Վսեմութեան չափ յուզուած եմ այս եղածներէն, կմկմաց ոստիկանապետը, և եթէ յարմար կը դա-

աէք ծանր պատիժ մը անօրինակնք յանցաւոր սասիկանին և Ալի աղային որ անոր կ'ընկերանար :

— Ինչ օղուա զանոնք պատժելը , դոչեց փաշան , միթէ աստղ եղած չնարիքը կը դարմանուի :

— Ներեցէ՛ք , Վսեմափառ փաշա , կարծեցի որ . . .

— Եթէ պատժել հարկ ըլլալ նախ պատիժը դուն պէտք է կրես :

Այս խօսքերը սարստիանար ըրին Հիւանի պէյը , որ ալ չէր համարձակեր գլուխը վեր առնել ու փաշային նայել :

— Այո՛ , ամենքդ ալ պէտք է չարաչար պատժել , շարունակեց փաշան իր խօսքերուն ազդեցութիւնը աւելի սասկացնելու և զխմացինը աւելի ահաբեկելու համար , և ապահով եմ որ երբոր մեր Վեհափառ Սուլթանը այս եղածները իմանայ իր առաջին դործը սլախ ըլլայ հրամայել որ ամենքդ ալ պաշտօնանկ ըլլաք ու աքսորուիք . . . :

Փաշան սրահին մէջ պահ մը ժուռ կկաւ խոժու դէմքով մը . յետոյ , իր պաշտօնեային դէմը կենալով՝ ըսաւ .

— Ձեր գլխուն սպառնացող վտանգէն ազատելու ճար մը միայն կայ :

— Փաշա էֆէնտի , պատրաստեմ ամէն բան փորձելու եղած չարիքը դարմանելու և ձեր ներողութեան արժանանալու համար , պատասխանեց Հիւանի պէյ՝ յուսոյ նշոյլ մը աչքերուն մէջ :

— Լաւ ուրեմն , մինչև երեք օր , պէտք է պանպատճառ պառաւ Փաթման գանէք ու հոս բերէք , միայն այս պայմանով կրնաք ազատիլ ամենքդ ալ և ներուժի արժանանալ , հասկցար . . . :

— Այս բոլոր իսկ բոլոր հողխովս պիտի աշխատիմ Ձեր Վսեմութիւնը դո՛ ձգելու համար . . . :

— Պէտք է խոտանաս որ Փաթմա պիտին ձերբակալուի մինչև երեք օր :

— Բայց , փաշա էֆէնտի , այդպիսի խոտուում մը ինչպէ՞ս

կրնամ տալ, կմկմաց խնդճ պաշտօնեան շուարած կերպարանքով մը :

— Ուրեմն ես ալ չեմ կրնար ձեզ պատիժէն աղասկ :

Հիւսնի պէյ այնպիսի դժնդակ կացութեան մը մտանուած էր որ ստիպուեցաւ տեղի տալ, գոնէ մէկ քանի օր շահկու համար : Ո՞վ գիտէ, գուցէ բախտը իրեն կ'օգնէր երեք օրուան միջոցին :

— Շատ լաւ, կը խոստանամ Յաթման գանել և ձեզի յանձնել որոշեալ պայմանաժամին մէջ, պատասխանեց վճռաբար, բայց կը խնդրեմ որ դուք ալ հրաման ընէք որպէսզի հարկ եղած օժանդակութիւնները արուին ինձի :

— Այդ մասին անհոգ եղիր, հիմա պէտք եղած հրահանգները կուտամ :

Փաշային բարկութիւնը իջած էր այլևս : Ինք գիտէր որ Հիւսնի պէյ իր գործին մէջ շատ ճարպիկ ու խելացի էր և կրնար յաջողիլ եթէ կամք ընէր և այժմ վստահ էր որ իր ստորադասեալը անկարելին պիտի փորձէր յաջողելու համար :

— Եթէ կարենաս Յաթման ձերբակալել, ո՛չ թէ միայն պատիժէ պիտի աղասիս, աւելցուց, նախարարը, այլ նաև բացառիկ վարձատրութիւններու ալ արժանի պիտի ըլլաս :

Հիւսնի պէյ իր երախտազխաութիւնը յայտնելով մեկնեցաւ փաշային քովէն՝ փրկափայտարար մտածելով ինքնիրեն .

— Մինչև երեք օր Աստուած ողորմած է :



Գ Լ Ո Ւ Խ Զ .

ՀԻՆ ԾԱՆՈԹ ՄԸ

Այն առաւօտն ուր մեր պատմած դէպքերը տեղի կ'ունենային, էտիրնէի կառախումբով Սիրքէճիի կայարանը կը հասնէր ուղեւոր մը, որուն ամբողջ գոյքն էր զիւրտասար պայուսակ մը զոր ձեռքը բռնած՝ իջաւ քարափին վրայ, վայրաշարժը կանգ առնելուն պէս :

Այս ուղեւորը, հազիւ քսանը ութը երեսուն տարեկան, միջահասակ, նուրբ ու վայելչակազմ երիտասարդ մըն էր, ածլուած պեխերով, աղւոր արտայայտիչ աչքերով, որոնց զուարթ ու կտրալի ակնարկը համակրանք ու վստահութիւն կը ներշնչէր : Գլուխը ուղեւորի Գէֆէ մը դրած էր և մինչև ասփերը համող բաց գոյն վերարկու մը կը կրէր :

Կայարանին քարափին վրայ բայի լրաններէ, ոստիկաններէ, բեռնակիրներէ ու մէկ քանի պանդոկներու գործակալներէ, ուրիշ մարդ չկար Ուղեւորներն ալ շատ ցանցառ էին, որովհետև այդ թուականներուն տեղափոխութիւններն այնքան դժուարութիւններու ենթարկուած էին որ ո՛չ ոք կ'ուզէր տեղէն շարժիլ :

Երիտասարդը հազիւ ոտքը քարափին վրայ դրած, ոստիկաններէ ու լրաններէ չըջապատուեցաւ :

— Ո՛ւրկէ կուգաս, միւսիւ, հարցուց ոստիկաններէն մին որ պետ մ'ըլլալ կը թուէր :

— Սելանիկէն, պատասխանեց երիտասարդը :

Սելանիկ... այդ բառն արդէն սկսած էր սոսկում աղբի Պոսոյ ոստիկանական ու լրանական չըջանակներու մէջ :

— Ո՞ր է թէզքէրէդ, ըսաւ ոստիկանը խոժոր ու միանգամայն կասկածոս կերպարանք մը ստանելով :

— Թէգբէրէ, չունիմ՝ այլ անցագիր, ես օտարական եմ, գերմանացի պատասխանեց ուղևորը :

Ոստիկանը նկատեց որ իրաւցնէ երխասարղը օտար չընչուն մը կը խօսէր թուրքերէնը : Այդ միջոցին ուղևորը իր անցագիրը հանած էր գրպանէն ու զայն կ'երկարէր իր խօսակցին .

— Չէ՛, պատասխանեց ոստիկանը, եկո՛ւր միտասին մինչև քարաքօլ և հոն քօմիսէր պէյը թող քննէ անցագիրդ :

— Շատ աղէկ, պատասխանեց օտարականը համակերպութեամբ :

— Զարմանալի բան, ըստ լրտեսներէն մէկը իր ընկերոջ, ընդհանրապէս օտարականները այսքան խօսք մտիկ ընող չեն ըլլար :

Քօմիսէրին քով, ուղևորը յոյց տուաւ իր անցագիրը : Քէլլերման կը կոչուէր և առևտրական ներկայացուցիչ էր :

— Թրքերէն բառական լաւ կը խօսիք, գլխակ տուաւ քօմիսէրը :

— Բնական է, քանի որ չինգ ասորիէ ի վեր թուրքիոյ մէջ կը ճամբորդեմ, պատասխանեց գերմանացին թեթեւ մը ժպտելով :

— Ո՞ր պանդոկը պիտի իջնէք, պէտք է որ նախապէս իմաց տաք մեզի :

— Դեռ չեմ որոշած :

— Ուրեմն ձեր որոշումը սուէք :

Մարդը քիչ մը մտածեց և ըսաւ :

— Եթէ յարմար սենեակ մը գտնամ Օթէլ Մէթրօքօլ կը մնամ, եթէ ո՛չ Օթէլ Սէն Փէթէրսպօրկ կ'երթամ, իմ ճանչցած օթէլներս անոնք են :

Իր ձեռքը գտնուած պայուսակին քննութիւնն ալ աւարտելէ ետքը, վերջապէս արտօնութիւն ստացաւ մեկնելու :

— Սկրանիկէն եկող ուղևոր մը լաւ որս մըն էր մեզի

համար, բայց մե՛ղք որ անցազիրը կանոնաւոր էր, հառաչեց լրտես մը անոր հեռանալը տեսնելով:

Այս խորհրդածութիւնը ընելէ ետքը, իր մարդ հետապնդելու լրտեսելու սովորութենէն մղուած և առանց որոշ նպատակի մը, սկսաւ հետեւիլ անծանօթին:

Ուղեւորը դէպի թրամվայի ճամբան կ'երթար, պաշարուած փոքրիկ սանուկներէ որոնք կ'ուզէին իր պայուսակը կրել, քանի մը փարա առնելու համար, սակայն ինք յամառօրէն կը մերժէր:

Յանկարծ՝ տասնըհինգ տարեկան պատանի մը մօտեցաւ օտարականին, քովի տաղակացուցիչ տղաքը մէկ կողմ ըրաւ և պայուսակը ինք ուզեց առնել:

Երիտասարդը առանց ընդդիմութեան յանձնեց զայն նորեկին:

Միւսները՝ յուսախար՝ հեռացան:

Երբ առանձին մնացին՝ օտարականը պատանիին դարձաւ և յած ձայնով ըսաւ.

— Ո՞ւր մնացիր, Հասան:

— Կարեւոր բան մը պատահեցաւ, անոր համար չկրցայ կառախուսքը հասած միջոցին կայարան գտնուիլ, բայց հոգ չէ, քանի որ զիրար գտանք ճիշդ տեսնին:

— Վախցայ որ մէջտեղ չես ելար...

— Միթէ կարելի՞ բան է, քանի որ մեր գտնուած նոր տեղը չնս գիտեր:

— Շուտով կառք մը նստինք ու հեռանանք:

Ուղեւորը նշան ըրաւ փողոցին գիմացի կողմը կեցող կառապանին որ խկոյն մօտեցաւ:

Երիտասարդն ու պատանին կառք մտան, կառապանին հասցէ մը տուին ու կառքը ճամբայ ելաւ:

Ինչպէս ըսինք, լրտեսներէն մին հեռուէն հետեւած էր Սելանիկէն ժամանող ուղեւորին և նոյնիսկ կառք մտած միջոցին բաւական մօտեցած էր անոր:

Երբ կառքը ճամբայ ելաւ, ինքնիրեն սա խորհրդածու-
թիւնը ըրաւ .

— Այս մարդը ինձի կասկածելի կ'երեւայ... Ինչո՞ւ հա-
մար միւս բեռնակիր սողոց մերժեց պայուսակը տալ և խօսքն
յանձնեց նորեկ պատանիին . յայտնի կ'երեւայ որ արդէն կը
ճանչնար զայն և կամ անոր կը սպասեր... Յետոյ այդ պա-
տանիին հետ քանի մը խօսքեր փոխանակեց ցած ճայնով,
ինչ որ նախապէս ծանօթ ըլլալուն մէկ ապացոյցն է : Ո՞վ է
այդ պատանին, յայտնի է որ թուրք մըն է, թէ՛ իր դիմա-
գիծը, թէ իր հագուստը և թէ գլուն ֆէսը ատիկա կը հաս-
տատեն : Արդ, ի՞նչպէս կրնայ յարաբերութիւն ունենալ գեր-
մանացի վաճառականի մը հետ որ Պոլիս չէ հաստատուած և
իբրև ուղեւոր եկած է հոս : Այդ պատանին բեռնակիր մը
կամ պարզ ծառայ մը չէր, քանի որ զայն իր քովը նստե-
ցուց... : Բայց հոգ չէ, օձիքը ձեռքս է, կառապանը ճանչ-
ցայ, մեր Օսման ազան է, անկէ կրնամ իմանալ թէ ճի՞շտ է
որ իր բաժ օթէլներէն մին պիտի մնայ... Մեր քօմիսէրը
թեթեւօրէն վարուեցաւ, բայց բարեբախտաբար ես հոս եմ... :

Լրանալ, այսպէս մտածելով, գնաց մօտակայ խահուէ մը
հանդարտօրէն կառապանին վերադարձին սպասելու :

Նոյն միջոցին կառքը Պահչէգաբուէն դէպի կամուրջ
կ'ուղղուէր :

Ուղեւորն ու պատանին, այժմ հետաքրքիր ու կասկածելի
նայուածքներէ հեռու, ազատօրէն կը խօսակցէին .

— Այո՛, կ'ըսէր Հասան, վերջին օրերս շատ մեծ դժ-
բախտութիւններ ու ճախողութիւններ պատահեցան... այն-
քան յաջողութեամբ գործելու վրայ էինք և ահա ետեւէ
ետեւ փորձանքներ հասան մեր գլխին :

— Պատմէ՛ տեսնեմ, ըսաւ երիտասարդը :

— Նախ, ինչպէս գիտէք, Հազգը պէյը ձերբակալեցին և
մինչև հիմա չկրցանք իմանալ թէ ո՞ւր բանտարկուած կը
մնայ :

— Ինչպէ՛ս բանտարկուած, գոչեց ուղեւորը, բայց ուրեմն չէ՛ք գիտեր թէ Հազգը պէյ այրած է Իզդէթ փաշայի սպարանքի հրդեհին մէջ :

— Այրած, ըսաւ պատանին աչքերը խոշոր խոշոր բացած, Հազգը պէյ այրած... մենք որ կը կարծէինք թէ դարձեալ Ապո-իւլ-Համիտի հրամանով ծածուկ տեղ մը բանտարկուած է... :

— Չէ՛, սիրելի տղաս, ըսաւ երիտասարդը, Հազգը պէյը վերջապէս իր փափաքին հասաւ և ազատութեան դատին համար զոհուեցաւ. հիմա իր յիշատակը կը մնայ մեզի ու այն ալ բաւ է մեզ սրտապնդելու և քաջաբերուելու համար... հիմա պատմէ տեանենք թէ ուրիշ ի՞նչ պատահեցաւ :

— Զիւլէհան ալ ձերբակալեցին Փաթմայի տանը մէջ և մինչև հիմա անոր մասին ալ տեղեկութիւն մը չկրցանք ստանալ, հակառակ որ ամէն ջանք թափեցի, ըսաւ պատանին խորին թախծութեամբ մը :

— Այդ մասին անհող եղիր. պատասխանեց ուղեւորը ժպտելով, Զիւլէհան շատ հանգիստ է... :

— Ինչպէ՛ս, իր վրա՞ն ալ լուր ունիք :

— Անշուշտ, կը տեսնես որ մենք թէև ձեռք հեռու կ'ապրինք, բայց ձեռք աւելի աղէկ տեղեակ ենք Պոլսոյ մէջ անցած դարձածներուն :

— Կ'աղաչեմ ըսէ՛ք չուտով, ուր կը գտնուի Զիւլէհան այս միջոցին... :

— Երբորդի պալատը :

— Ուրեմն յոյս չկայ զայն ազատելու :

— Ինչո՞ւ ազատենք զինքը քանի որ պալատի մը մէջ տեղաւորուած է, ուր ամէն խնամք և հանգստութիւն կը վայելէ :

— Չեմ ըմբռներ ձեր ըսածները :

— Քեզ կը վստահեցնեմ որ Զիւլէհան շատ հանգիստ է

Երևաբլի պալատին մէջ և զինքը ու է կերպով չեն ներկր,
միթէ այս բաւական չէ . . . հիմա շարունակէ՛ տեսնենք :

— Բայց ի՞նչ կ'ուզէք որ բսեմ, քանի որ դուք ամէն
բան ինէ աղէկ գիտէք կոր և մինչեւ հիմա ևս էի որ ձեռն
տեղեկութիւններ իմացայ :

— Հիմա կարգը եկաւ որ դուն ինձի իմ չգիտցածներ
բսեմ : Դրամը և թուղթերը ի՞նչ բրիք :

— Տունէն փախցուցինք և ապահով տեղ մը փոխադրե-
ցինք :

— Լա՛ւ, այդ մասին շատ մտատանջութեան մէջ էինք :
Մեր բնկերներէն ուրիշ ձերբակալուող եղա՛ւ :

— Ո՛չ ոք : Բայց խիստ խուզարկութիւններ կ'ըլլան կտր
ամէն կողմ :

— Ատիկա նշանակութիւնն չունի : Այլանիացին տեսած
ունք՞ք :

— Հագը պէյի ձերբակալումէն ի վեր երեւան չեկաւ և
արդէն չի կրնար մեզ տեսնել քանի որ նոր տեղերնիս չի
գիտեր և ևս չուզեցի երթալ զինքը փնտռել :

— Այս իրիկուն պէտք է որ զինքը տեսնեմ անպատճառ
Քեզի հասցէ մը պիտի բսեմ, հոն պիտի երթաս և զինքը
տանես բերես :

— Շատ աղէկ, մենք ալ արդէն կը փախաքէինք զինքը
տեսնել :

Սեւանիկէն եկող ճամբորդն ու պատանին այսպէս իրենց
խօսակցութիւնը շարունակեցին, մինչ կառքը, արագ դնաց-
քով մը կալաթայի թռամուլայի ճամբէն դէպի Բերա կ'ուղ-
ղուէր :

Երբ Բերա Բալէսի առջեւ հասան, կառքը դէպի աջ դար-
ձաւ և Սամալը Մէճիտ փողոցը մտաւ ուր կանգ առաւ տան
մը դրան առջեւ, որուն դրան վրայ «վարձու սենեակներ»
վերաառութիւնը փակցուած էր :

Պատանին փութաց դրան զանդակը հնչեցնելու, մինչ ճամբորդը կառապանին դրամը կը վճարէր:

Երբ ներս մտան և տան դուռը գոցուեցաւ, ճամբորդը դժգոհ դէմքով մը ըսաւ պատանիին.

— Հատան, մեծ անխոհեմութիւն մը գործեցինք, աննրբիլ անխոհեմութիւն մը:

— Ի՞նչ, ըսաւ միւսը շփոթած:

— Պէտք չէր որ կառքը մինչև դրան առջև բերէինք և մեր սունը հասկցունէինք կառապանին:

— Բայց արդէն վաղը ուրիշ տեղ պիտի փոխադրուինք, հոս առժամեայ կերպով եկած ենք, վերջին գիշերն է որ այստեղ պիտի անցնենք և դուք ալ արդէն գիշերը հոս չպիտի մնաք:

— Այո՛, բայց դարձեալ զգուշութիւնը պէտք չէր ձեռքէ թողուլ: Իցի՛ւ թէ մինչև վաղը առտու կառապանը մեզ չի մտանէր:

— Չափազանց զգուշաւոր էք... կառապանը ի՞նչպէս կ'ուզէք որ մեր վրայ ո և է կասկած մը ունենայ:

Երխոտասարդը չպատշախտանայ և երկուքը միտան ուղղուեցան վերի յարկը, փողոցին վրայ նայող պատշգոմաւոր ընդարձակ սենեակ մը, ուր պտուաւ կի՛ն մը և երխոտասարդ մը իրենց կը սպասէին:

Թողունք որ Սեւանիկէն եկող ճամբորդը իր բարեկամներուն հետ պահ մը առանձին աւտակցի և մենք հետեւինք ոստիկանութեան նախարար Շէֆիզ փաշայի որ իր պատուէրներտայէ հաքը Հիւանի պէյին, փութաց Երլարզի պալատը, Սկիւտարի մէջ կաաարուած խուզարկութեանց և հոն տեղի ունեցած տարօրինակ դէպքերուն մասին իր նոր տեղեկագիրը մատուցանելու համար Վեհափառ տիրոջը:

Հայիւ թէ Երլարզէն ներս մտած էր երբ զգաց որ արտասովոր յուզում մը կը տիրէր հոն: Ապախւլ Համիա այն աստիճան ամէն բան իր անձին վրայ կեղրոնացուցած էր որ ամ-

բողջ երլարզի պալատը իրմով կը զգար, կը մտածէր, կը գործէր: Իր տխրութիւնը, յուզումը, բարկութիւնը կամ զուարթութիւնը վայրկինապէս կը ցոլանար բոլոր պալատականներուն դէմքին վրայ:

Վարժ ու փորձառու աչք մը երլարզի դռնապանին դէմքը զննելով՝ կրնար հասկնալ թէ նոյն միջոցին Ապրիլ Հունիս ի՞նչ արամադրութեան մէջ կը գտնուէր:

Եւ որովհետեւ Շէֆիք փաշա այս մասին շատ վարժ ու փորձառու էր, պալատ մտնելուն պէս մտածեց.

— Նորէն Սուլթանը խոտլած ու բարկացած կ'երևայ, նորէն ծանրակշիռ լուրեր հասած ըլլալու են... գէշ բան, քանի որ ես ալ յաջող լուր մը չունիմ իրեն հաղորդելիք:

Նախարարն ուղղուեցաւ դէպի Սուլթանին գտնուած յարկարժրը: Մէկ քանի բարեկամ պալատականներ դիմաւորելու փութացին: Փաշան անոնց դէմքին վրան ալ յուզումի և անձկութեան տպաւորութիւնը նշմարեց:

— Փաշա էֆէնտի, ըսաւ պալատականներէն մին, վայրկեանէ վայրկեան ձեզի կ'սպասէինք և կարծեմ քիչ մը առաջ թիկնապահ մըն ալ զրկուեցաւ ձեզ վնասելու համար:

— Ի՞նչ կայ որ, հարցուց նախարարը դող ելած, ես այսօր նոյն իսկ սովորականէն կանաւխ եկայ:

— Վեհափառ Սուլթանը երկու անգամ հարցնել սուտ թէ եկած էիք:

— Ուրեմն գալուստս իմացնեմ:

— Արդէն մենք լուրը տուինք, երբ պատուհանէն տեսանք ձեր կառքը:

— Նոր եղելութիւն մը կայ:

— Իրաւ որ տակաւին որոշ բան մը չենք գիտեր, միայն թէ Սկանիկէն ծածկագիր հեռագիր մը հասած է որ կ'երևայ թէ ծանրակշիռ բաներ կը պարունակէ, Հեռագիրն հասնելէն ի վեր Վեհափառ Սուլթանը իզգէթ և Թահսին փաշաներուն հետ խորհրդակցութեան մէջ է և մէկ քանի տեղ սոխաղա-

կան հրահանգներ զրկուեցան թիկնօտաճներու միջոցաւ . . .
կ'երեւայ որ յեղատօխակ . . . ննկը կրկին գործի վրայ են :

Խոտակցութիւնը գուցէ աւելի պիտի երկարէր, երբ սե-
նեկապան մը դալով՝ հրախրեց Շեֆիք փաշան Վեհափառ
Սուլթանին քով :

Ապախիւ Համիտ իր նախարարը տեսածին ոչնչ պոռայ .

— Ի՞նչ լուր ունիս :

Շեֆիք փաշա դաշահար ձեռքով մը գրպանէն թուղթ մը
հանեց և իր սիրովը երկարեց կմկմալով .

Վեհափառ աէր, երէկուցնէ ի վեր տեղի ունեցածները
մանրամասնօրէն տեղեկագրած եմ հոս :

Ապախիւ Համիտ բարկութեամբ թուղթը առաւ մէկ կողմ
նեակեց .

— Ֆաթման ձերբակալուեցա՞ւ, հարցուց :

— Ո՛չ, Վեհափառ Տէր, տակաւին կարելի չեղաւ ձեր-
բակալել, բայց կը յուսանք որ մինչև երեք օր անպատճառ
ձեռք պիտի ձգենք զինքը :

— Գո՛ւրս կատուէ, գոչեց բռնաւորը :

Նախարարը փութաց հնազանդելու :

— Հոս եկուր, հրամայեց Ապախիւ Համիտ զայն կեցնելով :

Խեղճ մարդը շուտօրած դէմքով մը իր սիրով նայեցաւ
չան մը պէս որ իրեն հղած յանդիմանութեան իմաստը և
տրուած հրամանները չի կրնար հասկնալ :

— Ի՞նչ ապահովութիւն ունիս որ երեք օրէն անպատճառ
կարելի պիտի ըլլայ ձերբակալել Ֆաթման, հնաք մը դատած
ես, հարցուց բռնաւորը :

— Այո՛, . . . հեռք մը դատած ենք . . . կարելոր հեռք մը,
կմկմաց նախարարը :

— Ի՞նչ հեռք է տեսնենք :

— Հիմա հոս եկած միջոցիս Ռատիկանապետ Հիւսնի պէյը
ըսաւ որ խիստ կարելոր հեռք մը դատած է և զայն հեռապըն-
դելու կ'երթայ և կը յուսայ որ այս անգամ անպատճառ

Յաթման պիտի ձերբակալուի . . . : Որովհետև Ձեր վեհափառութեան մօտ դալու վրայ էի և ինքն ալ ստիպուած էր իսկոյն գործը հետապնդել, ժամանակ չունեցայ մանրամասն տեղեկութիւններ քաղելու, բայց Հիւանի պէյը հաւաստեց թէ իր զլխուն վրայ կ'երգնու որ այս անգամ պիտի յաջողի . . . :

Այս սուտը խօսած ասին Շէֆիք փաշայ՝ այնքան սղորմելի կերպարանք մը աւած էր որ Իզզէթ փաշայ արգահասուցաւ վրան և ուզեց օգնութեան հասնիլ իրեն .

— Հիւանի պէյը, կը ճանչնամ, ըսաւ, շատ կարող, ճարտարի ու լուրջ մարդ մէն է և քանի որ ինք այդքան ապահով է յաջողութեան մասին, մենք ալ կրնանք վստահ ըլլալ :

— Յաթմայով գործը շինմաբ, շարունակեց բանասորը, հիմա անկէ շատ աւելի կարեւոր ձերբակալութիւն մը կայ կատարուելիք :

Ոստիկանութեան նախարարը սուտնց համարձակելու իր տիրոջը նայիլ, հարցական ակնարկ մը ուզելց թահսին և Իզզէթ փաշաներուն :

Ապա իւր Համիտ իր սիրական քարտուղարին դառնալով ըսաւ .

— Իզզէթ, Սելանիկէն եկած հեռագիրը կարդա՛ :

Պալատական քարտուղարը սեղանին վրայ դրուած թուղթերու ծրարի մը մէջէն հաստ մը առնելով՝ բարձրաձայն կարդաց .

«Այս վայրկեանիս ամենատուրդ աղբիւրէ իմացայ որ յեղափոխական քօմիթէին կարեւոր անդամներէն մէկը, Սաաբդ պէյ, որ ծանօթ է արդէն տեղւոյդ ոստիկանութեան, Մանասթըրէն Սելանիկ գալով՝ հոս օր մը կենալէ ետքը, երկաթուղիի ճամբով Պոլիս մտնած է : Յիշեալը գերմանական անցագրով կը ճամբորդէ, իբրև առևտրական ներկայացուցիչ, Գէլլէրման անունին տակ : Սաաբդ պէյ պիտի աշխատի եղիւր կարգ մը յեղափոխական ծրագիրներու գործադրութեան՝ Պոլիս գտնուած իր ընկերներուն հետ :»

Երբ Իզզէթ փաշա ընթերցումը աւարտեց, ոտիկանութեան նախարարը սարսափահար երևոյթ մը առած էր: Սատրգ պէյ, այժմ, ծանօթ է ամենուն իրբեւ խիստ վասնդաւոր յեղափոխական մը: Այդ երիտասարդը որ Կալաթա-Սարայի լիւէին փայլուն շրջանաւարաներէն մին էր և Շաֆաֆ թերթին նախկին խմբագիրը, չորս հինգ տարիէ ի վեր յեղափոխական գործունէութեան մէջ նետուած, կատաղի սայքար մը կը մղէր Համիտի բռնակալութեան դէմ: Անգամ մը, երեք տարի առաջ, թէև ձերբակալուած և Եէմէն արքայութեան համար ճամբայ հանուած էր, բայց յաջողած էր Սուէզի ջրանցքէն փախչել Սալիհ հանըմի և ուրիշ երկու ընկերներու հետ: Իր Պոլիս վերադարձը նշան էր թէ յեղափոխութիւնը նոր թափով մը գործի պիտի սկսէր մայրաքաղաքին մէջ:

Ապտիւլ Համիտ որ իր նախարարին շիտթութիւնը տեսակ մը հաճոյքով կ'ըմբոշինէր, ըսաւ .

— Ի՞նչ պիտի ընես հիմա...

— Անմիջապէս հրաման պիտի խնդրեմ Ձեր Վեհափառութենէն պաշտօնաանդիս դասնալու և ամէն միջոց ձեռք առնելու որպէսզի Սատրգ սաքը Սիրքէճի կայարանը դնելուն պէս ձերբակալուի, պատասխանեց Շէֆիք փաշա հաստատովս շեշտով մը:

— Այս մարդը փախուցեր է, ըսաւ Ապտիւլ Համիտ խորին արհամարանքով մը:

Իզզէթ փաշա պարտք համարեց կրկին միջամտել.

— Գժքախտաբար հեռագիրը առինք ձեռք այն վայրկեանին ուր էտիրնէի կառախումբը Սիրքէճի կը հասնէր և երբ իսկոյն մարդ գրկեցինք Սիրքէճի ոտիկանատունը, Սատրգ կամ Քէլլէրման արդէն քառասուն վայրկեանէ ի վեր մեկնած էր հոնկէ իր անցազիրը ցոյց տալէ ետքը... ուստի կայարանին շուրջը ձեր ձեռք առնելիք միջոցները այլևս ո ո և է օգտակարութիւն չեն կրնար ունենալ:

— Շէֆիք, ըսաւ Ապտիւլ Համիտ, խօսքը իր ոտիկա-

նութեան նախարարին ուղղելով, ինչպէս լսեցիր՝ Սատրգ արդէն Պոլիս մտած է, հիմա քեզի կը մնայ Պոլսոյ մէջ դաշն փնտռել, գտնել ու ձերբակալել: Ստոր համար քսանըչորս ժամ կուտամ քեզի, եթէ մինչև վաղը այս ժամուս՝ չկրնաս Սատրգը ինձ յանձնել, քեզ վայկեհնապէս Հոռոգոս պիտի զըրկեմ. . . շո՛ւտ գնա՛ և գլխուդ ճարը անս:

Շէֆիրք փաշա դուրս ելաւ իր օրհորջ քովէն՝ դատասպարտուեալի մը պէս որ իր մահուան վճիռը կը լսէ:

Ինչ սպառնալիք որ ինք ըրած էր Հիւսնի պէյի՝ այժմ Ապտիւլ Համիտ նոյնը կ'ընէր իրեն: Եւ Համիտ աւելի անուղոք էր քան թէ ինք:

— Պէտք է բոլոր ճիգս թափեմ այդ Սատրքը ձեռք անցնելու համար, վճուեց նախարարը, եթէ ոչ՝ ալ անկարելի է պաշտօնիս մէջ մնալ:

Բայց ինչպէս պիտի յաջողէր այդ գործը գլուխ հանել: Այդ մարդիկը չափազանց ճարպիկ և յանդուգն ըլլալ կը թուէին. . .

Շէֆիրք փաշա, իր ճամբուն վրայ, բոլոր պահականոցները հրահանգներ տալէ ետքը, իրիկուան դէմ եկաւ Զապթիէն: Իր սենեակը մտած միջոցին նշմարեց Հիւսնի պէյը որ զուարթ ու յաղթական երեւոյթով մը կեցած էր և կարծես իրեն կ'ըսպատէր: Փաշան իր ըկճուած ու տխուր կացութեանը մէջ իր ստորադասալին այդ գոհունակ դէմքը դժկամակութեամբ ընդունեց:

— Ի՞նչ բան ունիս հոս, քեզի կարեւոր գործեր յանձնեցի կատարելիք, ինչո՞ւ անոնցմով չես զբաղիր, բաւ սըրտնեղութեամբ:

— Փաշա էֆէնտի, պատասխանեց միւսը ժպտազին, հիմա եկայ հոս և մինչև և այս վայրկեանս ինձի յանձնուած գործովը պարապեցայ. . .

— Ու ապահովարար բան մը չկրցար ընել:

— Ընդհակառակն, փաշա էֆէնտի, եթէ հրաման ընէք, ժամէ մը Յաթման պիտի կրնանք հոս բերել:

— Հէ՞, գոչեց նախարարը, Հիւանի պէյի այս խօսքերէն ալ ի բերան մնացած:

Յետոյ անանկով որ սենեակին դրան առջև կարելի չէր այսքան կենսական խնդրի մը վրայ տեսակցիլ, դուռը բացաւ ու ներս մտաւ. Հիւանին ալ կանչելով:

— Հիմա պատմէ՛ տեսնեմ, ըսաւ գրասեղանին առջև բազմելով:

— Փաշա էֆէնտի, անակնկալ դիպուածի մը օգնու թեամբ կրցայ դանել Յաթմայի թաքստոցը:

— Ո՛ւր է եղեր:

— Բերա, Թէփէ Պաշիի կողմերը, Ասմալը Մէճիա փողոցը:

— Ուրեմն ինչո՞ւ անմիջապէս չձերբակալեցիր, քանի որ տեղն ի տեղօք զխոնս կոր ամէն բան:

— Ձերբակալելու համար պէտք էր տունէն ներս մտնել:

— Թո՛ղ մտնէիր:

— Տունը օտարանպատակի մը կը պատկանի և ես չհամարձակեցայ ինքն իմ գլխիս օտարանպատակի մը առն մէջ ձերբակալութիւն կատարել...

— Ասանկ պարագաներուն՝ շատ բարակը նայելու չէ... գոնէ նախ գործը տե՛ս, ձերբակալութիւնդ կատարէ, թո՛ղ անանք երթան իրենց դեսպանին կամ հիւպատոսին բողոքեն յետոյ կը ջանանք անոնց ալ սիրտը շինել:

— Փաշա էֆէնտի, արպէն տունը ամենախիստ կերպով հսկողութեան տակ առնուած է, ուստի հոգ չէ եթէ ձերբակալութիւնը քանի մը ժամ ետքը կատարուի:

Նախարարը որ շահագրգռուած էր Հիւանի պատմութեանն, յանկարծ յիշեց որ Յաթմայէն աւելի կարևոր ձերբակալութիւն մը կար կատարուելիք և ըսաւ.

— Արդէն այդ Ֆաթմայն մեծ նշանակութիւնն չունի մեզի համար :

— Ինչպէ՛ս, գոչեց Հիւսնի պէյ, հասլա մէկ քանի օրէ ի վեր մեր բոլոր ուշադրութիւնը անոր նուիրած ենք . . .

— Այո՛, բայց այս առտու անկէ շա՛տ աւելի վասնդաւոր մէկը մտած է Պոլիս . . .

— Այս առտու, Էտիրնէէն եկող կառախումբով, ըստ Հիւսնի :

Փաշան նստած տեղէն վեր ցատկեց :

— Ինչպէ՛ս, գո՞ւնն ալ լուր ունիս :

— Այո՛, փաշա էֆէնտի. գիտեմ որ այս առտու, Սիլանիկէն Էտիրնէի ձամբով երիտասարդ մը եկած է Քէլլէրման անունով և իբրև առևտրական ներկայացուցիչ գերմանական անցագիրով մը . . .

— Այո՛, ճիշդ այդ մարդը ա՛նա . . . Ֆաթմայէն առաջ, պէտք է անիկա ձեռք ձգել :

— Երկուքը միասին պիտի կրնանք ձերբակալել, պատասխանեց Հիւսնի գոհունակ դէմքով մը :

— Ինչպէ՛ս երկուքը միասին, գոչեց փաշան որ չէր ուզեր իր ականջներուն հաւատալ :

— Անշուշտ. քանի որ երկուքն ալ միեւնոյն տեղը կը դանուին . . . Ամօպը Մէճիտի փողոցի տան մէջ :

Շէֆիք փաշա այլապէս չուրի ելաւ, յուզումէն չկրցաւ նախ խօսք մը արտասանել, յետոյ երբ քիչ մը հանդարտեցաւ բացադանչեց .

— Բայց, չուտ պատմէ՛ անենեմ բոլոր վիայածդ մանրամասնօրէն, առանց բան մը մոռնալու, սրտամէ՛, ծայրէն պատմէ՛ :

Այն տանն Հիւսնի պէյ նախարարին բացատրեց ամբողջ եղելութիւնը : Առտուն Էտիրնէէն եկող ձամբօրդը ատիկանաւունէն մեկնելէն ետքը, լրտեսի մը կողմէ հետապնդուելիք. լրտեսը անոր կողք նստին ու պատանիի մը ընկերակ-

ցութեամբ մեկնելը տեսեր էր, յետոյ կառապանին միջոցաւ, որ իրեն ծանօթ է եղեր, իմացեր էր թէ այդ երկու անձերը ո՛ր գացեր էին: Լրտեսը պարտք համարած էր Չապօթիէն գալ տեղեկութիւն տալու համար այդ կասկածելի անձի մասին, հոն Հիւսնի պէյի պատմած էր ամէն բան, երկուքը միասին գացած էին Ասամալը Մէճիտ ու գաղտուկ քննութիւն մը կատարելով իմացած էին թէ՛ այն առնը ուր Քէլլէրման և պատանին մտած էին իտալահպատակ անձի մը կողմէ վարձուած էր, որ իր կնոջ հետ հոն կը բնակէր և կահաւորուած անեակներ վարձու կուտար մասնաւորներու: Քանի մը օր առաջ ծերունի կին մը եկած էր պատանիի մը հետ և երկու անեակ վարձած: Այդ կինը երբեք դուրս չէր ելած. իսկ պատանին նոյնինքն այն էր որ Էտիրնէէն եկող ճամբորդը բերած էր կայարանէն: Կնոջ տարիքին ու դէմքին վրայ տրուած տեղեկութիւնները կը համապատասխանէին Փաթմայի, սակէ դատ ճիշտ Փաթմային Սկիւտարէն անհետացած օրն է որ այս կինը եկած էր հոն: Վերջապէս կասկած չկար որ իրենց փրնուած պառաւն էր այդ կինը:

Հիւսնի պէյն ու լրտեսը այդ տեղեկութիւնները քաղելէ ետքը պարտք համարած էին ոստիկանական ու լրտեսական խիստ հսկողութիւն մը հաստատելու տան բոլորտիքը և վերադարձած էին Չապօթիէ՝ նախարարին հրահանգները ստանալու:

— Խիստ պատուէր տուինք մեր մարդոց, ըսաւ Հիւսնի պէյ խօսքը վերջացնելով, որ եթէ առնէն դուրս ելող ըլլայ, խիղճն ձերբակալեն, իսկ առն եկողներուն թոյլ տան անարգել ներս մտնելով:

— Կեցցե՛ս, Հիւսնի պէյ, գոչեց փաշան խանդավառուած, շտա լաւ տնօրիններ ևս ամէն բան, չափազանց գո՛հ մնացի քենէ և կ'ուզեմ որ մոռնաս այս առտուան ըսածներս: Ենթոյնակալ եմ Ձեր Վսեմութենէն, ըսաւ ոստիկանա-

պետը խոնարհ բարեւ մը տալով:

— Հիմա կը մնայ յաջողութեամբ գործը վերջացնել և բոլոր այդ վտանգաւոր անձերը Արդարութեան ձեռքը յանձնել... քու ըսածիդ համեմատ, այժմ տանը մէջ պառաւր, պատանին և նոր եկող ճամբորդը կան...

— Ո՛հ, պատասխանեց Հիւսնի, մեր քաղած տեղեկութեան համեմատ պատանին դուրս ելած է և մեր հոն զբռնուած միջոցին սակաւին չէր վերադարձած, ասկէ զտո, առաուն, դեռ ճամբորդը չեկած, պատանին ընկերակցութեամբ, ուրիշ երիտասարդ մը եկեր է և հոն մնացեր է...

— Այդ երիտասարդը ո՞վ է եղեր, հարցուց նախարարը մտատանջ դէմքով մը, ա՛յն ալ իրենցմէ մէկն է...

— Հաւանականաբար...: Այսպէս ուրեմն, առ այժմ երեք հոգի ունինք տանը մէջ և գուցէ մինչեւ որ ձերբակալութեան ձեռնարկենք պատանին ալ վերադարձած կ'ըլլայ: Հիմա ի՞նչ է ձեր տալիք հրամանը, փաշա էֆէնտի, կ'ուզէ՞ք որ բռնի մտնենք տունէն ներս և մեր պաշտօնը կատարենք:


— Բնականաբար և անմիջապէս, անոանց վայրկեան մը կորսնցնելու. արդէն մութը կոխելու վրայ է և գիշերը չյառաջացած պէտք է ամէն բան լմնայ...: Նոյն իսկ ամառէն ու տանտիրուհին ալ ձերբակալեցէ՛ք: Պէտք է անոնք ալ հարցաքննութեան ենթարկել:

— Ձեր Վսեմութիւնը կ'ուզէ՞ որ այդ բանը ընենք...:

— Այո՛, այո՛, ամբողջ պատասխանատուութիւնը իմ վրաս կ'առնեմ...: Ինչ որ կ'ըսեմ պէտք է որ կէտ առ կէտ գործադրուի...: Կը լսե՞ս...: ամէնքն ալ պէտք է ձերբակալել, ով որ կայ տանը մէջ...

— Փաշա էֆէնտի, ձեր ըսածները պիտի կատարենք անմիջապէս:

Հիմա թողունք որ ոստիկանութեան նախարարը և Հիւսնի պէյ իրենց գործողութեանց ծրագիրը պատրաստեն ձերբակալութիւնները յաջողութեամբ գլուխ հանելու համար և մենք դառնանք մեր դաւադիրներուն քով:



Սեկանդիէն եկող խորհրդաւոր ճամբորդը ուրախութեան ցոյցներով ընդունուեցաւ պառաւ կնոջ և անոր քով զանուող երիտասարդին կողմէ: Զիրար ողջագուրելէ ետքը՝ իսկոյն նստան խորհրդակցութեան: Կ'երեւայ որ շատ կարեւոր բաներ ունէին իրարու հաղորդելիք, որովհետեւ այդ առաջին տեսակցութիւնը երկու ժամէն աւելի տեւեց: Ի վերջոյ ճամբորդը պատանի Հասանին դառնալով ըսաւ.

— Հիմա մէկ քանի կարեւոր յանձնարարութիւններ կան որոնք հարկ է որ անմիջապէս կատարես, մեծ զգուշութեամբ:

— Գիտէք որ զգուշութեան յորդորներու պէտք չունիմ, պատասխանեց պատանին անձնավստահ շեշտով մը... դուք միայն ըսէ՛ք ինձի թէ ի՞նչ պիտի ընեմ:

— Նախ՝ պիտի երթաս գտնելու մեր Ալպանիացի բարեկամը, որ այս վայրկեանիս հաւանօրէն Քամե Աբլանցիսի մէջ մնէ լուրի կը սպասէ. անոր պիտի հաղորդես այս տան հասցին և իրեն պիտի ըսես որ անմիջապէս գայ մեզ գտնէ:

— Շատ աղէկ. յետո՞յ:

— Յետոյ քեզի ծրար մը պիտի յանձնեմ որ էմիրկեան Սաի պէյի պիտի տանիս և իրեն տաս: Կը տեսնաս որ մինչեւ իրիկուն քեզի համար գործ կայ և հազիւ մութը կոխելէն ետքը պիտի կրնաս վերադառնալ հոս... օ՛ն, չուտով ճամբայ ելիր:

Հասան մեկնեցաւ երբ տակաւին տանը չուրջը հսկողութիւն չէր հաստատուած: Բայց հազիւ թէ պատանին Բերայի Մեծ փառոցը հասած էր երբ կասկածելի տունը պաշարուեցաւ լրտեսներով ու գաղտնի ոտակահաններով: Տան դիմացի կողմը կաթնալաճառի խանութ մը կար և քիչ վերն ալ յոյն գինետուն մը. այդ երկու խանութներն ալ գրեթէ լեցուն էին այն կարգ մը ժանտերես ու անպատկառ մարդերով որոնց յիշատակը տակաւին թարմ է Պոլսեցիներու մաքին մէջ և որոնք

արհեստներուն ամենէն ստորինն ու անպատիւը ի դորձ կը դնէին տեսակ մը անձնապանծ ամբարտաւանութեամբ :

Լրտեսները , բացի այդ երկու խանութներէն , տարածուած էին ամէն կողմ . փողոցներու բերանը , տուներու դրանց տակ , նպարավաճառի ու անխաղաղաճառի խանութները :

Յայտնի էր որ բացառիկ կարեւորութիւն մը տուած էր այս գործին և ծայրայեղ միջոցներ ձեռք առնուած էին :

Մութը կոխած էր արդէն , երբ կառքի մը թաւալման ձայնը լսուեցաւ փողոցին վարի կողմէն : Կառքը երբ մօտեցաւ կասկածելի տան՝ գնացքը դանդաղեցուց , գլուխը դուրս ելաւ դռնակէն և արագ ու խուզարկիչ ակնարկ մը պտտուցուց շուրջը , յետոյ կառապանին դուռ մը մատնանիչ ընկելով բացուեց :

— Հոս կեցիր :

Ճիշտ կասկածելի տունն էր ցոյց տուածը : Կառապանը տան զանգակը հնչեցնելէ ետքը՝ կառքին դուռը բացաւ և քաղքենիի հագուստով՝ բայց զինուորականի գնացք ունեցող գեղադէմ և հուժկու մարդ մը վար իջաւ և խկոյն տան դուռնէն ներս մտաւ , կառապանին երկու քառորդ մէջիտ նստելով :

Կառապանը դրամը ընդունեց խորին շնորհակալութեամբ :

Լրտեսներն արդէն պաշարած էին կառքը որ կը պատրաստուէր մեկնելու :

— Կ'երեւայ որ մարդէն ազուր նուէր մը առիր , ըսաւ իրենցմէ մէկը կառապանին , որովհետեւ շատ գոհ կ'երեւաս կոր :

— Ողջ ըլլայ , պատասխանեց կառապանը , առատօրէն վճարեց . . . փոխանակ հինգ զրուշի՝ տասը զրուշ տուաւ . աւանկ յաճախօրդ շատ չի գտնուիր :

— Ուրկէ՞ նստաւ կառք :

— Կալաթա Սարայէն . . .

Լրտեսները անշուշտ իրենց հարցափորձը տակաւին պիտի շարունակէին , բայց կառապանը ձիերը մտրակեց ու հեռացաւ :

Ինչպէս ըսինք՝ Շէֆիզ փաշա հրահանգ տուած էր սու-
նէն ներս մանուղները ազատ թողուլ և դուրս կլլել վարձողները
միայն ձերբակալել: Ասոր համար ո և է արգելք չյարուցին
նորեկին:

Հիւսնի պէյ, որ քիչ մը անդին կը հսկէր, տեսած էր
կտոքէն իջնող անձը, բայց այնքան արագ կերպով անհրեւոյթ
եղիր էր որ չէր կրցած դէմքը տեսնել որոշակի: Լրտեսներն
ալ չէին կրցած ճանչնալ զայն:

— Միայն թէ, ըսած էր իրենցմէ մին, յայտնի կ'երևայ
որ սովորական մէկը չէ, այլ կարեւոր անձնաւորութիւն մը:

— Եւ յետոյ կատկածոտ կամ վեհերհոտ ընթացք մըն ալ
չունէր, զխակ տուաւ ուրիշ մը... ևս չեմ կարծեր որ մեր
հետապնդած մարդոց հետ յարաբերութիւն ունենայ... գուցէ
ուրիշ մէկը տեսնելու եկաւ այստեղ:

— Քիչ մը վերջը ամէն բան կը հասկնանք, պատասխա-
նեց Հիւսնի պէյ:

— Ե՞րբ պիտի ձեռնարկենք ձերբակալման, հարցուց
դադանի ոստիկան մը:

Կէս ժամ մըն ալ կ'սպասենք, տեսնելու համար որ
ուրիշ եկողներ ալ պիտի ըլլան, ու յետոյ դործի սկսինք:

— Եթէ ներսը գտնուողները կասկածին թէ տունը պա-
շարուած է, գուցէ փախչելու ճար մը գտնեն:

— Այ՛շ անկարելի է, վճռեց Հիւսնի պէյ, տունը փողոցի
դռնէն գշտ ուրիշ ելք չունի. ասկէ դատ չըջանակները ամբողջ
հսկողութեան տակ առնուած է:

Որքան ալ վստահօրէն այս վճիռը տուաւ ոստիկանապետը
այսու հանդերձ իր ստորադասեալին կասկածները զինքն ալ
վրդովել սկսան:

Քառորդի մը չափ ևս սպասելէ ետքը, որոշեց ա՛լ գործի
սկսիլ և խեղոյն ուղղուեցաւ, իր մարդերով, դէպի կասկածելի
տունը և դուռը բազխեց.

Հասուն տարիքով գիրուկ խապուհի մը եկաւ դուռը
բանալու:

— Ո՞վ կ'ուզէ՞ք, հարցուց թուրքերէն լեզուով, բայց խիստ շեշտուած օտար հնչուումով մը :

— Սերանիկէն եկող ճամբորդը պիտի տեսնենք, պատասխանեց Հիւսնի պէյ դռնէն ներս մտնելով՝ ուր իրեն հետեւեցան չար հինգ հոգի :

Կինը այդ ներս խուժումը տեսնելուն պէս՝ հասկցաւ թէ ինդիրը ի՞նչ բանի շուրջ կը դառնար :

— Անթօնիօ՛, Անթօնիօ՛ պոռաց իր ամուսինը կանչելով :

Այս աղաղակին վրայ խոհանոցին դուռը բացուելով՝ յետուն տարեկանի մօտ յաղթանդամ մարդ մը երեւցաւ :

Ուրիշ երէք լրտեսներ ալ ներս սպրդած էին արդէն, այնպէս որ այժմ բակին մէջ ութ հոգի կային երկու տան տէրներուն դէմ :

Հիւսնի պէյ իր զօրութեան վրայ վստահ և տունը արդէն իսկ գրաւած՝ քանի մը քայլ ևս առաջ գնաց և ըսաւ Իստաբուլին :

— Դուք հանդարտ կեցէ՛ք, ձեզի դպչող չկայ, միայն թէ հարկ է որ տան ամէն կողմը խուզարկենք և մէկ քանի անձեր ձերբակալենք . . .

— Տունը խուզարկէ՛ք, անձեր ձերբակալէ՛ք, գոչեց Իստաբուլին կատրած ձայնով մը, իմ հիւպատոս միայն կրնայ հոս մտնել և խուզարկութիւն ընել . . .

— Բացարձակ հրաման ունինք այս տունը խուզարկելու և մեր յարմար տեսած անձերը ձերբակալելու, պատասխանեց ոստիկանապետը հաստատ շեշտով մը, և եթէ փորձէք դիմադրել մեզի, գիտցէ՛ք որ ձեզ ալ ձերբակալելով կալաթա-Սուրայ կը տանիմ . . ., այսպէս հրահանգ արուած է ինծի :

Փողոցին դուռը կիսաբաց թողուած ըլլալով մէկ քանի գաղանի ոստիկաններ ալ ներս մտած էին :

Հիւսնի պէյ դէպի վերի յարկն առաջնորդող սանդուխն ուղղուեցաւ : Իստաբուլին հասկցաւ անոր միտքն և ոստումով մը առաջ անցաւ ու սանդուխին առջեւը կենալով թեւերը բացաւ ու գոչեց .

— Կ'արգելեմ ձեզի վեր ելլել... պէտք է որ նախ իմ
հիւսիսառտարանիս լուր տաք և անոր միջոցաւ զաք խու-
ղարկութեան, հակառակ պարտազայն զխոցէ՛ք որ զէնքի
պիտի գիմնմ :

Նոյն միջոցին զիրուկ կինն ալ իր էրկանը օգնութեան
փութաց և եկաւ անոր քով կենալու, որպէսզի արգիլէ սափ-
կաններուն վեր ելլելը :

— Մէկ կողմ՝ քաշուեցէ՛ք, կը սրտար Հիւսնի պէյ բար-
կաճայթ կերպով :

— Իրաւունք չունիք այս տունէն ներս ստք կոխելու,
կ'ունար Անթօնիօ կաս կարմիր կտրած, մինչ կինը խտրերէն
լեզուով լուտանքներ կը տեղար :

— Բռնեցէ՛ք սըւնք ու կապեցէ՛ք, հրամայեց Հիւսնի
պէյ իր մարդոց :

Երեք չորս հոգի խուժեցին Անթօնիոյի վրայ և բաւական
սրայքարելէ հաքը զինքը նուաճեցին :

Գ Լ Ռ Ե Կ :

ԱՆԱԿՆԿԱԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Այս իրարանցումին մէջ յանկարծ ձայն մը լսուեցաւ
սանդուխին զլիսէն .

— Բռնեցէ՛ք խսկոյն այդ մարդն ու կինը և վարը սեն-
նակի մը մէջ բանաարեկցէ՛ք :

Հրամայէրական այս խօսքերը լսելով՝ Հիւսնի պէյ զար-

մացումով գլուխը վեր վերցուց: Բայց սանդուխը մութ էր
և չկրցաւ վերը կեցող անձը նշմարել:

— Ո՛վ է խօսողը, գոչեց սրանեղած շեշտով մը, միեւնոյն
ատեն քանի մը աստիճան սանդուխէն վեր կլկլով:

— Հրամանս կատարեցէ՛ք, պուսոց մութին մէջ խօսող
անձը և սանդուխէն վար իջնել սկսաւ .

Ոստիկանապետը և անձանոթը դէմ առ դէմ եկան: Այն
ատեն Հիւսնի պէյ կրցաւ մօտէն գիտել իրեն խօսող անձը և
զայն ճանչնալով՝ շփոթած երևոյթ մը առաւ .

— Կը ներէք, փաշա էֆէնտի, կովմաց, վարէն չկրցայ
ճանչնալ Ձեր Վսեմութիւնը:

— Վնաս չունի, պատասխանեց միւսը, միայն թէ հարկ
է անմիջապէս խիստ հսկողութեան ատենը այդ երկու Իտալա-
ցիները և թոյլ չտալ որ տունէն դուրս կլեն կամ մէկու մը
հետ յարաբերութիւն սենեան, մինչև որ հարցաքննութիւն . . . :

— Շատ աղէկ, փաշա էֆէնտի, միայն թէ ասկէ առաջ
ուրիշ խիստ կարեւոր գործ մը ունինք կատարելիք՝ որուն
համար եկած ենք, այն է մէկ քանի անձերու ձերբակալու-
մը . . . :

— Գիտեմ, Տաթման, Սեկանիլէն եկող Սաարգըր և իրենց
ընկերը Արօֆ . . . ևս այ ճիշդ անոնց համար եկած եմ Վեհա-
փառ Սուլթանին կողմէ Այդ երեքն այ մեր ձեռքին մէջն
են արդէն: Ձիրենք բանտարկած եմ . . . :

— Բանտարկած էք, գոչեց ոստիկանապետը ապշահար
դէմքով մը:

— Այո՛, վերի սենեակին մէջ բանտարկած՝ ու դուռը
վրանուն կզպելով՝ բանալին առած եմ, շարունակեց միւսը:

Նոյն միջոցին Անթօնիօ և իր կիներ բողոքի սկսած էին
աղաղակներ բարձրացնել:

— Լուեցուցէ՛ք սըւոնք, սենեակի մը մէջ բանտարկեցէ՛ք
գոչեց այն սրուն փաշա տխողոսը սուսած էր Հիւսնի պէյ,
ոտքը բարկութեամբ գետին զարնելով:

Հիւանի պէյ արազ արազ վար իջաւ սանդուխէն տրուած հրամանը կատարելու համար :

Իտալացի տանաէրը տեսնելով որ իր սպառնալիքներն ու ընդդիմութիւնը ու է օգուտ չպիտի ունենային և եթէ խընդիրը աւելի երկարէր կրնար զլիտուն փորձանք մը բերել, խոհեմութիւն համարեց տեղի տալ և կնոջը հետ քաշուեցաւ խոհանոցի քովի սենեակը որ իբրև ճաշարան կը ծառայէր :

Հիւանի պէյ երկու ոտտիկան կեցուց սենեակին դրան առջեւ և վերադարձաւ սանդուխին ոտքը :

Խիղճ մարդը ափ ի բերան եղած էր մէկէն ի մէկ այդ տան մէջ տեսնելով Երլտըզի պալատին ամէնէն ազդեցիկ անձերէն մէկը, թիկնապահ Սոնալուտ Մէհմէտ փաշան :

— Հաւանօրէն նոյնինքն էր քիչ մը առաջ կառքով եկողը, մտածեց ոտտիկանաւար :

— Այո՛, շատ պարզ է իրողութիւնը, մեկնեց ինքնիրեն մեր փաշան Զապթիէէն ուղղակի Երլտըզ գնաց եղածը Սուլթանին հազորդելու և ձերբակալման մասին ձեռք առած միջոցները անոր ըսելու : Կ'երեւայ որ մեր Վեհափառ Տէրը խոյն Մէհմէտ փաշան զրկած է հոս, որպէսզի ինքն ալ հսկէ կատարուելիք գործողութիւններուն վրայ . . . Չանանք պակաս բան մը չընել և արժանանալ իր գնահատումին :

Հիւանի պէյ այս խորհրդածութիւնները ընելով սանդուխէն վեր կաւ և հասաւ առաջին յարկը ուր Սուլթանին թիկնապահը իրեն կ'սպասէր :

— Հիմա, Ձեր Վսեմութեան հրամանին կ'սպասեմ, ըսաւ ոտտիկանապետը խոնարհ դիրք մը առնելով :

— Մեր Վեհափառ Տէրը զիս յատկապէս հոս զրկեց որպէս զի ամէն բան ծայրայեղ զգուշութեամբ մը կատարուի, ըսաւ պալատականը, պէտք չէ որ այս վտանգաւոր անձերն ըսաւ պալատականը, պէտք չէ որ այս վտանգաւոր անձերն ու է անխոհեմութեամբ մը ձեռքերնէս փախցնենք . . . զի տէք որ այդ մարդիկն շատ յանդուգն են և զուրսը ընկեր-

ներ ունին որոնք իրենց օգնութեան հասնելու համար ամէն բան աչքերնին կրնան առնել :

— Ձեր Վսեմութիւնը ինչ որ յարմար տեսնայ, ես պատրաստ եմ կատարելու :

— Իմ յարմար տեսածս կարեւորութիւն չունի, պատասխանեց փաշան խիստ կերպով մը, մենք ամենքս ալ պէտք է կատարենք ինչ որ մեր տէրը, Վեհափառ Սուլթանը յարմար կը տեսնայ :

— Ամենքս ալ Նորին Վեհափառութեան ծառայելու համար ծնած ենք, ըստ Հիւսնի պէյ :

— Այդ, մեր Վեհափառ Սուլթանը կ'ուզէ որ այս անձերը փոխադրուին այնպիսի տեղ մը որ ծածուկ մնալ, և այս փոխադրութիւնը ըլլայ այնպիսի պայմաններու մէջ որ ուշադրութիւն չգրաւէ, կը հասկնաս . . . :

— Այո՛, փաշա էֆէնտի, կը հասնամ, կ'մկմաց ոստիկանապետը, որ թէ և շատ լաւ չէր ըմբռնած պալատականին բացատրութիւնները :

— Եւ այս տեղափոխութիւնը պէտք է կատարուի անմիջապէս, առանց վայրկեան մը կորսնցնելու :

— Ո՛ր պիտի տանինք զիրենք :

— Այդ իմ գիտնալիք բանս է : Նախ՝ պէտք է որ այդ մարդոց վրան գլուխը խուզարկենք և ասոր համար լաւ կ'ըլլայ կարծեմ որ երկու ոստիկան ևս վեր կանչու :

— Գլխուս վրայ փաշա էֆէնտի :

Եւ Հիւսնի պէյ խիտն շար իջաւ ու բոպէ մը ետքը վերադարձաւ երկու մարդերով :

Պալատականը դրպանէն բանալի մը հանելով՝ բացաւ փողոցին վրայ նայող սենեակին դուռը և ոստիկանապետին դռնալով ըստ .

— Ներս մտէք :

Հիւսնի պէյ իր երկու ոստիկաններովը մտաւ սենեակ : Սուլթանին թիկնապահն ալ հետեւեցաւ իրենց :

Մենեակին մէջ, անկիւնի բազմոցին վրայ, տարիքոս կին մը և երիտասարդ մը նստած էին ընկճուած և յուսահատ և բեւոյթով մը :

Ուրիշ երիտասարդ մը, փառարանին քով կեցած սիկանէթ կը ծխէր : Սյա վերջինը Սեղանիկէն եկող ուղեւորն էր :

Աննաուուտ Մէնմէա վաշա այդ կրեք անձերը ցոյց տալով ոտախկանապետին՝ դաժան ձայնով մը ըսաւ .

— Ահաւասիկ մեր Վեհափառ Սուլթանին և պետութեան դէմ դաւաճանող անձերը :

— Մենք ո՛չ ոքի դէմ կը դաւաճանենք, մենք մեր հայրենիքին կ'ուզենք ծառայել, ըսաւ երիտասարդ ճամբորդը խրոխտ կերպով գլուխը վեր առնելով :

— Լուէ՛, գոչեց պալատական թիկնապահը, հայրենիքին ծառայելու միակ կերպ մը կայ, այն է՝ հաւատարիմ ըլլալ վեհափառ Սուլթանին :

Յետոյ Հիւանի պէյի դառնալով՝ շաիունակեց .

— Խուզարկեցէք սա մարդուն վրան գլուխը և ինչ որ գտնէք խնամքով պահեցէ՛ք :

Երիտասարդը, առանց ընդդիմութեան, թոյլ տուաւ որ փաշային հրամանը կատարուի :

Փոքրիկ ըէվոլվէր մը, թղթապանակ մը, որուն մէջ գերմանական անցագիր մը կար, քսակ մը ութը-տասը ոսկի պարունակող, նոյն օրուան քանիմը թերթեր և զմելի մը, անաւասիկ ինչ որ գտան իր վրայէն :

Յետոյ խուզարկուեցան նաև միւս երիտասարդն ու պառաւը, որոնց վրայէն նոյնպէս կարեւոր բան մը կարելի չեղաւ գտնել :

Սյոք գործողութիւնը հազիւ քառորդ ժամ մը տեւած էր որովհետև երեք դաւաղիրները ո և է ամենափոքր ընդդիմութիւն մը ցոյց չէին տուած : Կարծես ըմբռնած էին որ այդպիսի ընթացք մը ո՛չ թէ միայն օգտակարութիւն մը չպիտի ունենար՝ այլ նոյն իսկ իրենց կացութիւնը պիտի ծանրացնէր :

— Հիմա եթէ Ձեր Վսեմոցթիւնը կը թոյլատրէ, սենեակներու խուզարկութեան սխիւնք, ըսաւ Հիւսնի պէյ պալատականին դառնալով :

— Ատկէ առաջ հարկ է որ այս անձերը տեղափոխենք, խուզարկութիւնը կրնանք ետքէն ալ կատարել, ըսաւ փաշան վճռարար :

— Բայց, փաշա էֆէնտի, կարծեմ որ ըստ օրինի, սենեակներու խուզարկութիւնը իրենց ներկայութեանը կատարուի :

— Այդ օրէնքը յեղափոխականներու, պետութեան դէմ դաւաճանողներու համար չէ... այս մարդոցը մասին պէտք չունինք այդ տեսակ փափկանկատումներ ունենալու... ասկէ զատ, ամէն օրէնքներէ վեր ու բարձր բան մը կայ, այն է՝ մեր Վեհափառ Տիրոջ, Սուլթանին կամքը, և Վեհափառ Սուլթանին կամքը այն է որ այս անձերը անմիջապէս փոխադրուին իրենց համար որոշուած տեղը :

Այս բացարձակ հրամանին հանդէպ՝ ոստիկանապետը խոնարհեցաւ .

— Ձեր Վսեմութեան հրամաններուն կը սպասեմ, ըսաւ ակնածանքով :

— Ըսէ՛ քու մարդոցդ որ երկու կողք բերեն, հրամայեց պալատականը :

Յետոյ հարցուց .

— Հետերնիդ ձեռնակապներ բերած էք :

— Այո՛, փաշա էֆէնտի, պէտք եղածէն աւելի :

— Լաւ ուրեմն երեքին ալ ձեռքերը պէտք եղածին պէս կապեցէ՛ք :

Այս հրամանն ալ իսկոյն դորձադրուեցաւ :

Թիֆլիսապահը այն ատեն անկիւն մը տարաւ Հիւսնի պէյը և ձայնը ցածցնելով, անոր ականջին փափսաց .

— Վեհափառ Սուլթանը հրամայեց որ այս երեք անձերը դադանի կերպով իմ Շիշլի բնակարանս փոխադրուին, ուր

պիտի մնան մինչև վաղը և այն ատեն պիտի որոշուի իրենց մասին ըլլալիք վերջնական կարգադրութիւնը: Այս փոխադրութիւնը շատ ծածուկ կերպով պէտք է ըլլայ, որպէս զի ոչ ոք իմանայ, կը համբաւ... այսուհանդերձ ապահովութեան ամէն միջոցներ ալ ձեռք պիտի տանենք, որպէսզի վտանգաւոր անձերը չփորձեն մեր ձեռքէն խուսափիլ: Հիմա դուն և քեզի հետ երկու ոստիկաններ պիտի ընկերանաք ինձի մինչև Շիշլի և հոն հսկողութիւն պիտի կատարէք, միայն թէ այդ երկու անձերը լաւ ընտրէ՛, ճարպիկ, վստահելի և թէ մանաւանդ պէտք է խիստ գազանապահ ըլլան... արամադրութեանդ ներքեւ ունի՞ս այս պահանջուած յատկութիւնները ունեցող անձեր:

— Այո՛, փաշա էֆէնտի, արդէն լաւագոյն ոստիկանները բերած եմ հետս, ինչպէս նաև ամէնէն ճարպիկ լրտեսները:

— Լրտեսներու պէտք չունինք, անոնք իրենց գործը տեսան արդէն, ըսաւ փաշան չոր կերպով, ասկէ ետքը մեզի ծառայութիւն մը չեն կրնար մատուցանիլ: Միայն թէ իրենցմէ մէկ քանին թո՛ղ մնան հոս և տանը վրայ հսկողութիւն ընեն... դուցէ ուրիշ դաւադիրներ ալ տակաւին կուգան և օձիքնին ձեռք կուտան:

Հիւսնի պէյ այս հրահանգները լսելէ ետքը դուրս ելաւ սննտակէն հորկ եզած կարգադրութիւնները ընելու համար: Ոստիկանապետը թէև ի սկզբան շատ դո՛ն չէր եզած պալատական թիկնապահ մը գտնելով տանը մէջ որ կերպով մը իր ձեռքէն կը յատիչտակէր կարեւոր գործի մը մէջ առաջնակարգ դեր մը կատարելու առաւելութիւնը, բայց այժմ կ'սկսէր ուրահանսող որ այս ծանրակշիւ ձերբակալութեանց պատասխանատուութիւնը կը բաժնէր բարձրաստիճան պալատականի մը հետ: Առաջ երկիւղի մէջ էր թէ դուցէ սխալ քայլ մը առնէր կամ թերութիւն մը գործէր ու իր վրայ հրաւիրէր նախարարին բարկութիւնը, այժմ այլ ևս այդ վախը չունէր և այս պատճառաւ մեծ թեթեւացում մը կ'զգար:

Աւնաւուտ Մէհմէտ փաշայի հրամանին համեմատ երկու կառք կեցած էին ու դրան առջև կ'սպասէին :

Առաջին կառքին մէջ անգլաւորուեցան թիկնապահն և Սելանիկէն եկող ուղեւորը , ոտտիկան մըն ալ բազմեցաւ կառքանին քով ու կառքը ճամբոյ ելաւ : Իսկ երկրորդ կառքին մէջ մտան պառաւ Ֆաթման , միւս երիտասարդը և ուտտիկանապետ Հիւսնի պէյ և ուրիշ ոտտիկան մը :

Կէս ժամ հոքը կառքերը կը համռնէին Նշան թաշ մած խօնախի մը պարտէզին դրան առջև : Երբ ձերբակալեալները փաշային բնակարանը փախադրուեցան՝ այս վերջինը ըսաւ Հիւսնի պէյին .

— Այժմ կարծեմ ձեր հոս մնալը աւելորդ է և լաւ կ'ըլլայ որ վերադառնաս Ասմալը Մէհմետի տունը և սենեակներու խուզարկութիւնը կատարես :

— Ես կը փափաքէի խելոյն երթալ նախ նախարար փաշային հաղորդել ձերբակալման սրբազանները , սրովհետեւ այդպէս պատուիրեց ինձ :

— Շէֆիք փաշա այս միջոցիս Երլարդ կը գանուի ուր իմ վերադարձիս կ'սպասէ , պատասխանեց թիկնապահը , քառորդէ մը արդէն պիտի երթամ զինքը գանելու և ես մանրամասնօրէն կը պատմեմ ամէն բան . . . դուն նայէ՛ որ ուշի ուշով խուզարկութիւնը կատարես :

Ոտտիկանապետը թէմէննահ մը ըրաւ և պատրաստուեցաւ մեկնելու : Փաշան կեցուց զինքը :

Հիւսնի պէյ , ըսաւ անոր , չափազանց գո՛հ մնացի ձեզի հետ ծանօթանալուս , ձեր ցոյց տուած գործունէութիւնէն ալ խիստ գո՛հ եմ , չէի կարծեր որ մեր ոտտիկանութեան մէջ ձեզի չափ կարող ու ճարպիկ պաշտօնեաներ կան , ապահով եղիք որ պէտք եղած տեղը պիտի խօսիմ ձեր մասին :

Այս գովեստները , աղդեցիկ սալաատականի մը բերնէն ելած , ոտտիկանապետը ուրախութիւնէն շուարեցուցին :

— Փաշա էֆէնտի, թոթովեյ, երախտապարտ եմ ձեր խօսքերուն համար և չափազանց երջանիկ՝ որ կրցած եմ արժանանալ ձեր գոհունակութեան:

Պալատականը այս չոր գովասանքներով չգոհացաւ միայն, զրպանէն հինգ սակինոց պանքնօթ մը հանելով՝ զայն Հիւանի պէյի երկարեց:

— Ասիկա թող իմ կողմէս փոքրիկ նուէր մը ըլլայ, ըսաւ, սպասելով աւելի արժանաւոր վարձատրութիւններու:

Այս նոր շնորհը բոլորովին այլայլեցուց ոստիկանութեան պաշտօնեան որ չէր կրնար խօսք գտնել իր երախտագիտական զբայումները արտայայտելու համար:

— Մեզ ընկերացող երկու ոստիկաններուն պատուիրէ՛ որ հոս մնան. թող դռնապանին սենեակը սպասան... թէեւ չեմ կարծեր որ իրենց ծառայութեանը պէտք ունենաք. սակայն միշտ լաւ է զգուշութիւնը ձեռքէ չթողուլ:

— Գլխուս վրայ փաշա էֆէնտի, ձեր հրամանները անմիջապէս կը հաղորդեմ, պատասխանեց ոստիկանապետը ամենախորին ակնածական բարեւ մը տալով:

Ժամը գիշերուան եւրոպական ութնուկէսն էր երբ Հիւանի պէյ թիկնապահին ապարանքէն մեկնեցաւ ուրախութեան և երջանկութեան յսոխտակութեանց մէջ: Դուրսը սարսափելի օդ մը կար, ձիւնախառն անձրեւ մը կը տեղար կատաղօրէն և սաստիկ հիւսիսային հով կը փչէր:

Ոստիկանապետը արագ արագ քայլերով հասաւ թրամուէյի ճամբան և ժամ առաջ դործին գլուխը դառնալու համար կառք մը վարձեց: Պալատականին խօսքերը տակաւին իր ականջներուն մէջ կը թրթռային՝ հեշտագին երազանքներու մէջ մոլորեցնելով: Մնոր բառերը կը կրկնէր զանոնք միտքին մէջ դրոշմելու համար: «Ապահով եղէք որ պէտք եղած տեղը պիտի խօսիմ ձեր մասին» ըսած էր և այս խօսքերն էին մանաւանդ որ երանութեան դուռները կը բանային ոստիկանապետին: Երեւակայութեան առջեւ:

— Պէտք եղած տեղը, կը մտածէր, ուրիշ բան չի կըր-
նար ըլլալ, ալ նոյն խակ Վեհ. Սուլթանը... Ընչ բախտ կթէ
Մէհմէտ փաշայի պէս ազդեցիկ թիկնապահ մը իմ մասին
գովեսաններ ընէ Սուլթանին... օրերէ ի վեր Սուլթանը տազ-
նապնկերու մատնուած էր այս յեղափոխականներուն պատճա-
ռաւ. ասիկա յայտնի կ'երեւար մեր նախարարին ընթացքէն
որ ամէն գործ մէկ կողմ թողած՝ միմիայն Հաղզը պէյի ու
անոր ընկերներուն խնդրովը կը սպասէր: Ու հիմա իմ ճար-
պիկութեանս շնորհիւ, երեք ամենալտանգաւոր անձեր ձեռք
ձգեցինք: Սուլթանը հրողութիւնը պիտի իմանայ քիչ մը
վերջը Մէհմէտ փաշայի բերնէն ու այս առթիւ պիտի լսէ որ
այդ կարեւոր գործը կատարողը օտարականապէս Հիւսնի պէյն
է... Ո՛վ գիտէ, գուցէ անմիջապէս զիս տեսնել փափաքի և
մեծ պատիւ պիտի ըլլայ ինձի համար Սուլթանին ներկայու-
թեանը ընդունուիլ, գուցէ հեաք մէկ քանի խօսքեր փոխանա-
կել... պատուանշան, պաշտօնի բարձրացում, դրամական
նուէր, կարելի է այս ամենքը միասին պիտի ունենամ մէկ
երկու ժամէն...:

Այս երազներուն մէջ օրօրուած՝ օտարականապէսը հասաւ
Սամալը Մէհմէտի տունը որ միշտ հակողութեան տակ առնուած
էր. Իսկոյն մանրազննին խուզարկութեան մը ձեռնարկեց տան
ամէն կողմը, սակայն այդ փնտռութեան քը գրեթէ ապարդիւն
մնաց: Ամենէն կարեւոր բանն որ գտան ճամբորդին պայու-
սակն էր զոր կնքելով մէկ կողմ դրին: Խուզարկութեանց
այս նիւար արդիւնքը չազդեց Հիւսնի պէյի ուրախութեանը
վրայ:

— Կարեւորը մարդիկը ձեռք ձգելն էր, վճռեց ինքնի-
րեն, զանոնք խօսեցնելով՝ ամէն բան կրնանք իմանալ...:

Ոստիկան մը իրեն հարցուց թէ ի՞նչ պիտի ընէին տան-
աէրն ու ասանաիրուհին որոնք միշտ փակուած կը մնային
խոհանոցի կից սենեակին մէջ:

— Պէտք է զանոնք անմիջապէս Կալաթա Սարայ փո-

խաղրել, հրամայեց ոտտիկանապետը, յնոյ կը տեսնենք թէ իրենց համար ի՞նչ որոշոււ է կուտայ նախարար փաշան:

Հրամանը գործադրուեցաւ, հակուտակ եղևու Իստպաղի-
ներուն բնագլխու թեանը, որոնք մինչև կալաթա Սարայի
պահականոցը գացին բազրք և սպասեալիք տեղալով:

Հաղխ թէ անոնք հեռացած էին՝ ոտտիկանական պաշ-
տօնեայ մը հասաւ վազն ի վազ և լուր բերաւ Հիւանի պէյի
թէ ոտտիկանութեան նախարար Շէֆիք փաշա Պէշիքթաշի
պահականոցը իրեն կը սպասէր.

— Հիւան, անմիջապէս պէտք է որ երթաք զինքը տես-
նելու, ըսաւ պաշտօնեան:

— Անմիջապէս, պատտիւանեց ոտտիկանապետը, ուրախ
դէմքով մը, արդէն այստեղ գործս լմնցուցի.

Եւ խելոյն կառք մը ցատկելով՝ հրամայեց կառապանին
ձիերը վազցնելով դէպի Պէշիքթաշ երթալու:

Հիւանի պէյ նորէն անձնատուր եղած էր իր ոտիկոծ
երազներուն.

— Ըսածս եկաւ երաւ, կը խորհէր կառքին մէջ ընկող-
մանամ, կ'երեւայ որ թիկնապահ Մէհմէտ փաշա արդէն գա-
ցեր է Երլարզ ու ամէն բան տեղն ի տեղօք հաղորդեր է
Սուլթանին, իմ գովեստս ընկող, ասոր վրայ Սուլթանն ալ
փախաք յայնամ ըլլալու է զիս տեսնելու և մեր նախարա-
րին հրամայած որ անմիջապէս զիս փնտռել գանել տայ...
յայտնի է որ այս այսպէս է, եթէ ոչ ինչո՞ւ զիս այսքան
անապարտանքով Պէշիքթաշ պիտի կանչէր:

Այս մտածումներով ոգեւորուած՝ Հիւանի պէյ Պէշիք-
թաշի պահականոցը մտաւ, ճառագայթող դէմքով մը: Ու-
տտիկանութեան նախարար Շէֆիք փաշա անհամբեր իրեն կը
սպասէր.

— Մեր և ժամերէ ի վեր, դոչեց իր ստորադասեալը
տեսնելով, չես զխտեր որ լուրի կը սպասեմ, եղաւ լմնցա՞ւ
ձերբակալութիւնները...

Ոստիկանապետը բնաւ այսպիսի ընդունելութեան մը չէր սպասեր, այսու հանդերձ իր պաղտորիւնութիւնը չկորսնցուց և զուարթ դէմքով մը պատասխանեց .

— Փաշա էֆէնտի, ամէն բան լմնցաւ շատ յաջող կերպով . եթէ մինչև հիմա չեկայ կամ լուր չըրկեցի պատճառը այն էր որ կ'ենթադրէի թէ արդէն դուք պալատը ամէն բան իմացած էիք ,

— Ի՞նչպէս կ'ուզես որ պալատին մէջ, նստած տեղս, իմանամ Բերայի մէջ անցած դարձածը .

— Բայց թիկնապահ Մէհմէտ փաշան պիտի դար լուր տալու Ձեր Վսեմութեան, ինք ինձի ըսաւ որ հարկ չկար իմ գալուս, քանի որ ինք արդէն պալատ պիտի երթար ուր Ձեր Վսեմութիւնը կը գտնուէր . . . :

— Թիկնապահ Մէհմէտ փաշան ինչ բան ունի այս գործին մէջ, հարցուց նախարարը զարմացկոտ դէմքով մը :

Այս հարցումը շիտթութեան մասնեց խեղճ ոստիկանապետը :

— Բայց, փաշա էֆէնտի, ըսաւ, ամբողջ գործողութիւնները նորին Վսեմութեան հսկողութեան և հրամանովը կատարուեցան . . . ինքն էր որ Վեհափառ Սուլթանին կողմէ եկած էր Ասմալը Մէհմէտի փողոցը . . . կը կարծէի որ դուք տեղեակ էք այս ամէնուն :

Թիկնապահին ու Սուլթանին անունները լսելով Շէֆիք փաշա վարանում մը ունեցաւ : Արդեօք Սուլթանը իրմէ ծածուկ կարգադրութիւն մը ըրած էր . այդպիսի բան մը անհաւանական չէր Ապտիւլ Համիտի համար : Բայց այն ատեն ինչպէս կ'ըլլար որ ձերբակալմանց մասին իրմէ տեղեկութիւն կը սպասէր :

— Քանի՞ հոգի գտաք ասանք մէջ, հարցուց Չամալով յայանի չընկ իր մասհողութիւնները :

— Ֆաթման, Սեղանիկէն եկող ճամբորդը և ուրիշ երկուստարդ մը Արիֆ անուն :

— Ո՞ւր են այդ անձերը հիմա :

— Բայց թիկնապահ Մէհմէա փաշայի ապարանքը, Նշան

թաշ . . .

— Ի՞նչ գործ ունին հոն, գոչեց նախարարը հետզհետէ
նախարարը քննելով այդ տեղեկութիւններէն, որոնցմէ բան մը չէր
հասկնար :

— Վեհափառ Սուլթանը հրամայած էր որ ձերբակալուած
անձերը հոն փոխադրուին, կմկմաց խնդճ Հիւանի պէյ որ
ինքն ալ իր կարգին կը սկսէր խուսիլ :

— Վասա՛հ ես որ այդ երեք անձերը այս վայրկիանիս
Մէհմէա փաշայի ապարանքը կը գտնուին :

Անշուշտ վստահ եմ, պատասխանեց ոստիկանապետը,
Նորին վսեմութիւնը և ես զանոնք կառքերով հոն փոխադ-
րեցինք հազիւ երկու ժամ առաջ և երկու ոստիկան ալ, փա-
շային հրամանով, հոն թողուցի որպէս զի հակողութիւն կա-
տարեն :

Ոստիկանութեան նախարարը ջղայնօտ շարժումով մը
ոտքի ելաւ, քանի մը շրջան ըրաւ սենեակէն մէջ, յետոյ
եկաւ կիցաւ իր ստորադասեալին դէմը :

— Այդ մարդիկը ի՞նչ իրաւունքով ուրիշի մը կը յանձ-
նես, առանց նախապէս ինէ հրաման տանելու, պուաց :

— Բայց թիկնապահ փաշան ձեր քովէն կուգար մրմնջեց
Հիւանի պէյ :

— Ես Մէհմէա փաշա չտեսայ պալատը . . .

— Վեհափառ Սուլթանին հրամանները կը բերէր :

— Ես վեհափառ Սուլթանին այդ հրամաններէն տեղե-
կութիւն չունիմ . . .

— Բայց, փաշա էֆէնտի, ինչպէ՞ս կրնայի դիմադրել
կայսերական թիկնապահի մը հրամաններուն, երբ այդ հրա-
մանները վեհափառ Սուլթանին անունով կը տրուէին :

Շէֆիք փաշա չկրցաւ պատասխան մը գտնել այս խօս-
քերուն :

Ոստիկանապետը որ այնքան փայլուն յոյսերով եկած էր Պէշիքթաշ, այժմ տեսնելով իր մեծաւորին այս զրգուռած վիճակը, շուտեր մնացեր էր և չէր կարող բացատրութիւն մը տալ :

— Արդեօք, կը խորհէր, նախարարը դժգոհ մնացած է որ Մէհմէտ փաշա ձերբակալման գործին մէջ կարեւոր դեր մը կատարած էր և այդ գործին փառքը կերպով մը իւրացուցած : Բայց քանի որ ամէն բան Սուլթանին կամքովը կատարուած էր, ինչպէս կարելի էր առարկութիւն ընել :

— Ես հիմա սլալատ կը վերադառնամ ամէն բան մեր վեհափառ Սուլթանին իմաց տալու համար. դուն հոս սպասէ որպէս զի եթէ քեզի պէտք ունենամ, անմիջապէս կարենաս գալ, ըսաւ ի վերջոյ Շէֆիք փաշա և խսկոյն մեկնեցաւ պահականոցէն բուռն յուզումի մը մէջ թողլով ոստիկանապետը :

Հոն երկար ասան սպասեց, որպէսզի գան զինքը փրնուան նախարարին կողմէ, սակայն ո՛չ ոք երևցաւ :

Կէս գիշերը անցած էր և Հիւսնի պէյ, քօմիսէրին սնեակը, վառարանին քով կը մրափէր, երբ եկան զինքը արթնցնելու :

— Ոստիկանութեան նախարար Շէֆիք փաշան ձեզ կ'ուզէ, ըսաւ ոստիկանը որ զինքը փնտտելու եկած էր :

Հիւսնի պէյ խսկոյն տեղէն ցատկեց, աչքերը շփեց և հարցուց .

— Ո՞ւր է Նորին Վսեմութիւնը :

— Հոս, Պէշիքթաշի ոստիկանապետին քով, պատասխանեց միւսը :

Հիւսնի պէյ երբ մտաւ իր մեծաւորին դռնուած սրահը, սարսուռ մը ունեցաւ :

Շէֆիք փաշա, Պէշիքթաշի ոստիկանապետը, պահականոցի քօմիսէրներէն մին և երեք անձանօթ անձեր, որոնք պալատականներ ըլլալ կը թուէին, բազմած էին թիւինաթոսներու մէջ : Ամէնուն զէմքին վրայ դաժան խստութիւն մը

նկարուած էր և ամէնուն աչքերը թշնամական նայուածքով մը իր վրայ սեւեռեցան: Խեղճ մարդը, չփոթած, դողահար, գամուած մնաց իր տեղը, առանց աչքերը վեր առնել համարձակելու, թէև ինքզինքը յանցաւոր նկատելու ու է պատճառ մը չունէր:

— Հիւանի՛, ըսաւ Շէֆիք փաշա, այս վայրկեանէս պաշտօնանկ եղած ես և մինչև վաղը առտու այստեղ բանտարկուած պիտի մնաս...:

— Յանձանքս ի՞նչ է, փաշա Էֆէնտի, կմկմաց խեղճ մարդը դողահար ձայնով մը:

— Յանցանքդ այն է որ քու տխմարութեանդ շնորհիւ երեք ձերբակալուածները փախան մեր ձեռքէն:

— Բայց ես Մէհմէտ փաշայի հրամանը գործադրեցի կէս առ կէտ...:

— Այսինքն անոր հետ միացած՝ դուեցիր վեհափառ Սուլթանին դէմ, գոչեց Շէֆիք փաշա խոժոռ ձայնով մը:

Հիւանի պէյ իր մեծաւորին այս խօսքերէն բան մը չհասկրցաւ և սկսաւ ապուշ ապուշ իր դէմը նստողներուն երեսը նայել:

— Ի՞նչ առիք Մէհմէտ փաշայէն այս դաւաճանութիւնը գործելու համար, գոչեց երեք անձանօթներէն մին, ոտքի կլկլով:

— Դաւաճանութիւն, դաւաճանութիւն, կմկմաց ոստիկանութեան պաշտօնեան ա՛լ աւելի չփոթելով:

— Մէհմէտ փաշայէն դրամ չառի՞ր բնաւ, չարունակեց միւսը շեշտակի անոր աչքերուն մէջ նայելով:

— Կը տեսնէ՛ք, թշուառականը կը խոստովանի գոչեց միւսը, ուրեմն հինգ ոսկիի համար՞ ըրիր այդ դաւաճանութիւնը:

— Բայց այդ գումարը ինձի արժեցաւ ձերբակալման գործըյաջողութեամբ գլուխ հանած ըլլալու համար...:

— Լռէ՛, անամօթ, լռէ՛, որոտաց Շէֆիք փաշա որ

Թէեւ կը զգար իր ստորագասեալին անմեղութիւնը, սակայն չէր ուզեր միւսներուն քով զայն չքմեղացնելու երևոյթը ունենալ :

Պահ մը լռութիւն տիրեց սրահին մէջ : Ծնշող, հեղցուցիչ լռութիւն մը : Ի վերջոյ ոստիկանութեան նախարարը խօսք առաւ և իր ստորագասեալին դառնալով՝ ըսաւ .

— Թէեւ գործած ոճիրդ շատ մեծ է և արժանի չէ ու է ներողամտութեան, այսուհանդերձ վեհափառ Սուլթանը իր անհուն բարեսրտութեամբ, կեանքդ կը շնորհէ քեզի և կը քեզ աքսորելով միայն Պոլսէն . . . Աղօթէ մեր վեհափառ Սուլթանին թանկագին կենացը, որ այսպէս իր շնորհները կը շուայլէ նոյն խսկ քեզի պէս ապերախաներու . . . :

— Աստուած երկար կեանք պարգևէ մեր վեհափառ Սուլթանին, թօթովեց Հիւսնի պէյ, իր ընդունած անակնկալ հարուածէն բոլորովին կարկամած :

— Քօմիսէր էֆէնտի, շարունակեց ոստիկանութեան նախարարն իր քով նստող երիտասարդի մը դառնալով, տարէք այս մարդը և բանտարկեցէք մինչեւ որ իր մասին տրուած կայսերական հրամանը գործադրուի :

— Կ'աղաչեմ, կը պաղատիմ, փաշա էֆէնտի, գոնէ զիս անգամ մը երեսցուցէ՛ք թիկնապահ Մէհմէտ փաշայի հետ, գոչեց Հիւսնի պէյ իր ամբողջ քաջութիւնն հաւաքելով :

Այս արդար պահանջը հեղնական քրքիջով մը ընդունուեցաւ այն պարտականին կողմէ որ քիչ առաջ խօսած էր .

— Մէհմէտ փաշային հետ կրնաս երեստուիլ, երբ զայն ալ ձեռք անցնելով ինեալլահ քովդ կը զրկենք, ըսաւ :

Քօմիսէրը արդէն հէ՛զ ոստիկանապետին մօտեցեր, անոր թեւէն բռներ և զայն դուրս հանել կ'ուզէր :

— Բայց ես անմեղ եմ, ուրիշներուն դաւադրութեան գոհ կերթամ, ես յանցանք չունիմ աղաղակեց Հիւսնի պէյ լալահառաչ ձայնով մը :

Սակայն ոչ ոք ուզեց լսել իր յուսահատական բողոքները :

Քանի մը վայրկեան ետքը, Հիւանի պէյ, մութ խցիկի մը լոյսեակին վրայ ինկած, աղու մը պէս կուլար, ճակատագրաւ ինչ այս հարուածին տակ ջախջախուած:

Ի՞նչ եղած էր սակօյն որ այսպէս յանկարծ ոստիկանապետին սակի երազները կը փճանային ու երեւակայական փայլուն վարձատրութեանց տեղ՝ սոսկալի պատիժի մը արժանի կ'ըլար:

Մեր ընթերցողները գուցէ մասամբ գուշակեցին իրողութիւնը: Այն Ալպանիացին որուն հետ տեսակցելու զամ էր Անլանիկէն եկող յեղափոխական Սաարզ պէյը և զոր փնտռելու գացած էր պատանի Հասանը. նոյն ինքն պալատական Առնաուու Մէհմէտ փաշան էր:

Փաշան հազիւ թէ Ասմալը Մէհիտի տունը եկած և ընկերներուն հետ խօսակցութեան բռնուած, Հիւանի պէյ եկեր էր տան դուռը բաղխելու և բռնի ներս մտնելու:

Դաւադիրները տեսած էին և թէ փախչելու ու է հնարաւորութիւն չկար: Մէհմէտ փաշա զգաց որ իր ներկայութիւնը այդ տան մէջ, յեղափոխականներուն հետ գլուխ գլխի երեք կարելի չէր որ արդարանար Սուլթանին աչքին: Եւ այս յայտնութեան հետեւանքը դժուարին չէր գուշակել: Պալատական թիկնապահ մը որ յեղափոխականներու հետ կը դաւադրէ, մահուընէ նուազ ինչ պատիժ կրնար ստանալ:

Յանդուգն, պաղարիւն ու քաջասիրտ Առնաուու Մէհմէտ փաշա ուզեց գերագոյն փորձ մը ընել իր և իր ընկերներուն կեանքը փրկելու համար, այն էր իր անունին ու դիրքին ազդեցութեամբը իշխել ոստիկանապետին վրայ և զայն իրեն ծառայեցնել: Տեսանք որ հրաշալի կերպով յաջողեցաւ այս ծրագիրը:

Անգամ մը որ երեք դաւադիրները և թիկնապահը Նշան Թալիի ապարանքն հասան և ազատեցան լրտեսներու և աստիկաններու հսկողութենէն, Մէհմէտ փաշա դժուարութիւն

չկրեց իր բնակարանին ընդարձակ պարտէզին ետեւի կողմէն
փախցնելու պառաւ Յաթման և երկու երիտասարդները :

Յետոյ ինքն ալ մուտքի դռնէն դուրս ելաւ , դռնապանին
խցիկին մէջ սպասող երկու ոստիկաններուն պատուիրելով որ
լաւ հսկողութիւն ընեն և թոյլ չտան որ մէկը ներս մտնէ
մինչև իր վերադարձը :

Թիկնապահը մութին մէջ անյայտացաւ ինքնիրեն ըսելով .

— Այ ժամանակը հասաւ դիմակները վար աննելու և
ձակատաքաց կուռելու բռնաւորին դէմ . . . զիչերանց կը
փախչինք հիմա , բայց քիչ ատենէն արեւուն լոյսովը պիտի
վերադառնանք . . . :

Իր մեկնումէն քանի մը ժամ ետքն էր որ Շէֆիք փաշա ,
Հիւսնի պէյէն իր առած տեղեկութիւններուն վրայ , Երլըզլի
պալատը վստած ու ամէն բան հաղորդած էր Ապախլի Հա-
միտի որ սոսկալի կասկածներու մասնուած՝ հրամայած էր
խսկոյն իր թիկնապահին բնակարանը պաշարել և հոն գլու-
նուողները ամբողջ ձերբակալել : Իսկ Հիւսնի պէյի մասին
սորուած որոշումը զիտենք արդէն :

Սուլթանական հրամանը կէտ աւ կէտ և ամենայն խըս-
տութեամբ կատարուած էր : Բայց թռչունները փախած էին
արդէն :

Գ Լ Ս Ե Ը .

Հ Ա Ս Ա Ն Ի Գ Ի Ի Տ Ը

Պատանի Հասան Սեյանիկէն եկող ճամբորդը տուն առաջնորդելէ ետքը, անասնք որ ճամբորդին՝ կամ բուն անունովը Սաարգ պէյի հրահանգները գործադրելու համար մեկնած էր տունէն: Պատանին նախ դնաց Սըլանախա Քաֆէն ուր ուզուեց մինչեւ որ թիկնապահ Մէհմէա փաշան եկաւ, որուն հազարեց Սաարգ պէյի գալուտը և իր գտնուած տան հասցէն: Յետոյ ճամբայ ելաւ դէպի կամուրջ Էմիրէիան երթալու և իր երկրորդ յանձնարարութիւնը կատարելու: Երբ վերադարձաւ արդէն բաւական ուշ էր, որովհետեւ շողենաւ մը փախուցած էր, գրեթէ վաղելով Եիւքսէկ Քալարըմէն վեր եկաւ և հեւի հեւ հասաւ Աամալը Մէսճիա փողոցը: Թէ՛ փողոցին բերանը և թէ՛ փողոցին մէջ անստիւր ու կասկածելի դէմքերով մարդիկ, խուզարկիչ ակնակներով, ժուռ կուգային: Ուշիմ պատանին իսկոյն կուհեց թէ ո՞վ էին այդ մարդիկը:

— Այս ապուշները այնքան հոգարա են իրենց անարգ արհեստովը որ կարծես մասնաւոր Զանք մը ունին ինքզինքնին յայտնելու, մտածեց:

Յետոյ, բոլորովին անտարբեր ձեւ մը առնելով ճամբան շարունակեց: Քանի կը մօտենար Խաղապիին սանը, այդ կասկածելի դէմքերը աւելի կը բազմանային:

— Ի՞նչ գործ ունին այս մարդիկը այստեղ, ըսաւ արդեօք հո՞տ մը առած են . . . :

Երբ տան դրան մօտեցաւ, ամէն բան հասկցաւ: Քանի մը ոտախան և քանի մը լրակա դրան առջեւ կեցած էին:

— Վա՛յ, ըսաւ օճիքնիա ձեռք տուեր ենք . . . Ի՞նչ դըժբախատութիւն . . . արդեօք զի՞ս ալ պիտի բռնեն, բայց եթէ կասկած մը ունենային փողոցին ծայրէն կը ձերբակալէին:

Այս խորհրդածութիւնները ընելով՝ պատանին պահ կանգ առաւ և աչքերը տան վերի յարկը ուղղեց :

Այս խոհեմ ընթացքը իսկոյն լրտեսի մը ուշադրութիւնը գրաւեց, որ դէպի իրեն գալ սկսաւ : Հասան սեսաւ լրտեսը և ըմբռնեց որ աններելի սխալ ժը գործած էր կանգ առնելով ու կասկածելի տունը զննելով : Վտանգը իրմէ հեռացնելու համար յանդգնութեան դիմեց : Ուղղակի դնաց դրան քով ու հոն կեցող ոստիկաններուն ուղղելով խօսքը, հաստատ չկատով մը ըսաւ .

— Ի՞նչ պատահեցաւ արդեօք, գողութիւն կամ մարգասպանութիւն տեղի ունեցաւ ներսը . . . :

— Քեղի ի՞նչ, շան դաւակ, կորսուէ՛ սրկէ, գոչեց ոստիկանը :

— Մի՛ բարկանաք, փօլիս էֆէնտի, հարցում մըն էր ըրի պատասխանեց պատանին հեղնական ձեւով մը :

Նոյն միջոցին լրտեսը մօտեցած էր իրեն .

— Ի՞նչ կեցեր տանն ի վեր կը նայիս, ըսաւ խիստ ձեւով մը, եթէ տունը պիտի մանեա՞ դուռը զա՛րկ մտիր . . .

— Ես ո՛վ, այդպիսի տան մը դուռը զարնողը ո՛վ, ըսաւ պատանին խնդալով, միթէ՞ զի՞ս կը ծաղրէք :

Եթէ այս կողմերը չես բնակիր ի՞նչ գործ ունիս այս ժամուս այս փողոցին մէջ, հարցուց լրտեսը :

— Եթէ այս փողոցէն անցնիլը արգիլուած է ինչո՞ւ փողոցին բերանները չլթայով չէք փակեր, ըսաւ պատանին :

— Կորսուէ՛ շուտով, գոչեց ոստիկանը որ ձանձրացած կը թուէր այս խօսակցութենէն :

Յետոյ լրտեսին դառնալով՝ աւելցուց .

— Ի՞նչ կարեւորութիւն կուտաս այդպիսի լակոսներու : Լրտեսը արդէն համոզուած գոյացուցած էր թէ այդ պատանին յարաբերութիւն չունէր կասկածելի տան հետ, ուստի ինքն ալ ոստիկանին պէս «կորսուէ՛ շան լակոս» մը արձակեց :

— Մնաք բարով, ըսաւ Հասան հեղինական լրջութեամբ մը և ուղղուեցաւ դէպի Թէփէ Պաշի:

Իր խաղին յաջողութենէն և օձիքը անվտանգ ազատելէն զո՞նք պատանին զուարթօրէն իր ճամբան շարունակեց առանց գիտնալու թէ ո՞ւր կ'երթար: Բայց այդ զուարթութիւնը երկար չտեսեց. մէկէն յիշեց որ թէև ինք ազատ էր, բայց նոյն միջոցին իր ընկերները ստիկանութեան ճանկը ինկած էին:

— Ի՞նչ սարսափելի կացութիւն, թիկնապահ փաշան, Սառըզ պէյը, Արիֆ պէյը, Փաթման ամենքն ալ ձերբակալուած, խորհեցաւ, ի՞նչ պիտի ըլլայ հիմա մեր վիճակը, մահաւանդ անոնց վիճակց... ա՛լ կարելի չէ որ կարենան ազատիլ զազանին ճիրաններէն:

Խեղճ պատանին իր միտքը կը շարժարէր հնարք մը զըտնելու համար, որով կարող ըլլար ո և է կերպով օգնութեան հասնիլ իր ընկերներուն: Բայց ինչպէ՞ս, ի՞նչ կրնար ընել: Իրա՛ւ է որ տրիշ ընկերներ կը ճանչնար որոնք ազատ էին բայց անոնք միջոց մը չէին կրնար ունենալ օգնութեան հասնելու: Միակ ազդեցիկ անձը իրենց մէջ Մէհմէտ փաշան էր, և ա՛ն այն ալ իր օձիքը ձեռք սուած էր անդառնալի կերպով:

Այս տխուր խորհրդածութիւնները ընկալլ, պատանին հասաւ անգլիական դեսպանատան սուջև:

— Գոնէ կարենայի հասկնալ թէ զիրենք ո՞ւր փոխադրած են և որտէ՞ լուր մը տանէի մեր ընկերներուն, մտածեց:

Ուղեց վերադառնալ Ասմայը Մէճիտ փողոցը և հեռուէն լրտեսել: Բայց ստիկա շատ վտանգաւոր ձեռնարկ մըն էր, և թէ լրտեսն ու ոստիկանը կրկին զինքը նշմարէին այդ կողմերը ա՛լ ազատու՛մ չունէր:

— Երթամ Կալաթա-Սարայի շուրջը դեղերիմ, վճռեց, զույգէ զիրենք նախ հոն փոխադրեն առժամակայ կերպով:

Յղացած այս խորհուրդը շատ բանաւոր թուեցաւ իրեն և

խկոյն զաջն գործադրեց: Երկատ ատեն պահականոցին զի-
մացի մայթին վրայ վեր վար շրջեցաւ, աւանց արդիւնքի:

Յանկարծ վարի կողմէն կկող երկու կառքեր իր
ուշադրութիւնը գրաւեցին: Յայտնի էր որ երկրորդ կառքը կը
հետեւէր առաջինին, որուն կառապանին քով ստաիկան մը
նստած էր: Հասան լապտերի մը քով այնպիսի գէրք մը բռնեց
որ կարենայ մէջը գտնուողները նշմարել: Կառքերը թէև շատ
արագ գնացքով մը անցան իր առջևէն, սակայն պատանիին
սուր աչքերը կրցան առաջին կառքին մէջ ճանչնալ թիկնու-
պահ Մէհմէտ փաշան և երկրորդին մէջն ալ պատու ֆաթ-
ման:

— Ճիշդ գուշակեցի, Կալաթա-Սարայ կը բերեն զիրենք,
ըսաւ ինքնին:

Բայց շուտով հասկցաւ որ դուշակութիւնը ճիշդ չէր,
սրովհետև կառքերը աւանց կանգ առնելու իրենց ճամբան
շարունակեցին դէպի Թաքսիմ:

— Հիմակ հասկցայ, վճանց պատանին, ուղղակի Երբաղ
կը տանին...:

Այլևս իր գործը աւարտած համարեց:

— Հիմա երթամ հանդչիմ և վաղն աւտու տեսնենք թէ
ի՞նչ պէտք է ընել, ըսաւ,

Հասան երբ հետեւեալ աւտու կանուխ արթնցաւ ու փո-
ղոց ելաւ, չէր գիտեր իր ընկելքը: Գիշերն օ և է խորհուրդ
չէր ներշնչած իրեն: Եւ սակայն զուարթ արամադրութեան
մը ներքև կը գտնուէր: Երէկի անձրևոտ ու ցուրտ օդին՝
պայծառ երկինք մը յաջորդած էր. արևը կը շողշողար, ձը-
մեռնային արև մը թէև՝ որ սակայն կ'սկսէր տաքցնել: Յուն-
ուարի վերջերն էր և ցուրտն իր գործութիւնը կորսնցուցած:

Պատանին պահ մը իր ընկելքին վրայ մտածելէ ետքը,
որոշումը տուաւ.

— Նախ պէտք է որ երթամ Սաի պէյը տեսնեմ և իրեն
հաղարդեմ երէկու ընէ ի վեր պատահածները, ըսաւ ինքնին:

Սաի պէյ ծածուկ քօմիթէին կարեւոր անդամներէն մին իր թէև էտիրնէ հաստատուած՝ սակայն յաճախ Պոլիս կուգար՝ գաղանարար՝ յեղափոխական գործերու համար: Շաբաթէ մը ի վեր էր որ կրկին եկած էր և կը բնակէր Շիշլի կողմը Գերմանացիի մը տունը ուր սովորութիւն ունէր մնալու ամէն անգամ որ մայրաքաղաք կուգար:

— Միայն թէ, խորհեցաւ Հասան, դեռ շատ կանուխ է և Սաի պէյ քունի մէջ ըլլալու է:

Յետոյ, օդին գեղեցկութենէն հրապուրուած՝ ըսաւ.

— Վնաս չունի, կամաց կամաց, քալելով կ'երթամ:

Արդարև Սաի պէյ խոր քունի մէջ էր տակաւին երբ և կան արթնցնել և իմաց տալ թէ՛ պատանի մը կ'ուզէր անպատճառ զինքը տեսնել: Պէյը խելոյն հասկցաւ թէ ո՛վ էր զինքը այդ ժամուն անհանդիստ ընողը և գուշակելով որ ծանրակէիս դէպք մը պատահած է, անմիջապէս իր ննջասնեակը բերել տուաւ Հասանը:

Պատանին մանրամասնօրէն պատմեց իր ամբողջ գիտցածը: Երիտասարդ յեղափոխականը խորին յուզմունքի մը մատնուեցաւ երբ իր ընկերներուն գլխին եկած փորձանքը լսեց:

— Մէհմէտ փաշայի ձերբակալուիլը մեզի համար կործանում է պարզապէս, կրենեց մէկ քանի օնգամ, Ղզացօրէն ժուռ գալով սենեակին մէջ: Ինք եթէ ազատ մնար, եթէ այսպէս մեզի հետ կապակցութիւն ունենալը չյայտնուէր, բուցէ ձեռքի տակէ կրնար աշխատիլ միւսներուն փրկութեան...:

— Ինչ որ ալ ըլլայ, մենք պէտք է ջանանք մեր կարողութեան չափ աշխատելու մեր ընկերներուն համար, դիտել տուաւ պատանին:

— Բնական է որ պիտի աշխատինք և անմիջապէս, պատասխանեց Սաի պէյ, բայց նախ որոշ կերպով պէտք է գիտնանք թէ ո՛ւր տարուած են մեր ընկերները...

— Ինչպէս ըսի, ես կը կարծեմ թէ երբորք փոխադրուած են:

— Այո՛ , քու պատմածներէդ այնպէս կը հետեւի . . . նախ այդ կէտը պիտի ստուգենք :

— Ես ալ կը փափաքիմ ատոր , բայց միջոց մը չեմ կրնար երեւակայել :

— Միջոցը շատ պարզ է . հարկէ Ելլաբըզ երթալ և հոնկէ իմանալ . . .

— Ելլաբըզ երթալ , դոչեց Հասան զարմացական ակնարկ մը ուղղելով իր խօսակցին :

— Այո՛ , բարեկամս , պատասխանեց Սաի պէյ ամենայն հանդարտութեամբ , և այդ գործը դուն պիտի կատարես անմիջապէս . . .

Պատանին՝ ափիբերան՝ յեղափոխականին երեսը նայեցաւ չկրնալով ըմբռնել թէ անիկա լրջօրէն կը խօսէր այդ վայրկեանին :

— Հիմա միտքս քեզի կը բացատրեմ , շարունակեց երիտասարդը : Ելլաբըզի պալատին մէջ , թիկնապահ Մէհմէտ փաշայէն զատ . տակաւին մէկ քանի բարեկամներ ունինք , որոնց կրնաք դրմել և որոնք թէև Մէհմէտ փաշային ազդեցութիւնը չունին , սակայն նորէն կրնան մեզի օգտակար ըլլալ այս պարագային : Հիմա քեզի պիտի զրկեմ այդ անձերէն մէկուն քով որ կրնայ մեզի որոշ տեղեկութիւն մը տալ ձերբակալուածներուն մասին :

Պատանիին աչքերը ուրախութեամբ շողացին :

— Պատրաստ եմ անմիջապէս երթալու և ձեզի լուր բերելու . ըսէք միայն թէ որո՞ւն պիտի դիմեմ , պատասխանեց :

— Ելլաբըզի պալատը երբոր հասնիս , դրան քով սպասող պահապաններուն կ'ըսես որ Պլւրհանէտտին իշխանին ապարանքը երթալ կ'ուզես գործի մը համար անոր մատակարարին Սիւլէյման ազային հետ տեսնուելու համար . եթէ առանց աւարկութեան թոյլ տան քեզի ներս մտնելու , կը հարցունես թէ պարտեղին ո՞ր կողմն է իշխանին ապարանքը և շտակ

կ'երթաս ու Սիւլէյման աղան կ'գանես առանձին և անոր ա-
կանջին «Մարան Աթա» բառերը կը փախաս :

— Մարան Աթա, կրկնեց Հասան, ջանալով մտքին մէջ
զբօշմել այդ նորալուր բառերը :

— Այո՛, Մարան Աթա, բաւ Սա'ի պէյ, այդ բառերը
բաւ են իրեն հասկցնելու թէ մեր կողմէն կ'երթաս : Ինքն ալ
կրբ նոյն բառերը կրկնէ, այն ստեն քու այցելութեանդ նպա-
տակը կը բացատրես և իրմէ քաղելիք տեղեկութիւններդ իս-
կոյն ինձի կը բերես :

— Բայց եթէ գոնեն ներս մանելու թոյլ չի տան առար-
կելով որ իդս չեն ճանչնար . . .

— Այն ստենն գոնապաններէն Հիւսէին Չավուչը տեսնել
կ'ուզես և անոր կ'ըսես թէ Պիւրհանէասին իշխանին մատա-
կարար Սիւլէյման աղային քով պիտի երթաս «Էտերնէյի եղ-
բօրմէն լուր տանելու համար» այս բառերը լաւ միաքզ պահէ՛
երբ Հիւսէին Չավուչի այս խօսքը ըսես, վրստահ եղիր որ իս-
կոյն քեզ ներս պիտի առնէ և Սիւլէյման աղային քով պիտի
առաջնորդէ . . . կարծեմ թէ մինչև հիմա ոստիկանութեան
կամ լրտեսներու հետ գործ չես ունեցած ու քեզ չեն ճանչ-
նար և վրադ ո և է կասկած չունին :

— Չէ՛, պատասխանեց պատանին անապարծութեամբ,
տակաւին օձիքս ձեռք չեմ առած :

— Դաւ ուրեմն, չո՛ւտ գնա և կէտ առ կէտ գործադրէ՛
պատուէրներս : Ես հոս քեզի կ'սպասեմ :

Հասան ճամբայ ելաւ չափազանց ուրախ որ այսպիսի կա-
րևոր պաշտօն մը կը յանձնուէր իրեն : Բայց երբ Ելլաղլի
պալատի պարաէզին մուտքին առջև հասաւ, յուզումէն սիր-
առ սկսաւ արովիկ :

— Արդեօք ինքզինքս պիտի մասնեմ, խորհեցաւ :

Այդ չփոթութիւնն ու յուզումը կրնար աղետաբեր ըլլալ
իրեն և մի և նոյն ատեն իրեն վստահուած խիստ փափուկ
գործը վիժեցնել : Պատանին զգաց այդ բանը և գերագոյն
ճիգ մը ընելով՝ ջանաց ծածկել իր ներքին խռովքը : Անտար-

բեր կերպարանք մը առնելով՝ մէկ քանի քայլ յառաջացաւ
դէպ ի մուտքը :

— Ո՛ր կ'երթաս, գոչեց մուտքին առջև շարուած ութը
տասը պահակներէն մին :

— Նորին Բարձրութիւն Պիւրհանէտտին էֆէնտիի մատա-
կարար Սիւլէյման ազան տեսնելու, պատասխանեց Հասան
համարձակ ձայնով մը :

Որո՞ւ կողմէ կուգաս, հարցուց պահապանը :

Այս հարցումը որուն չէր պատրաստուած, ըտպէ մը չիտ-
թեցուց պատանին, բայց արթնածուծութիւնը ունեցաւ իսկոյն
պատասխանելու .

— Եղբօրը կողմէն . . . :

Յետոյ, ժամանակ չձգելու համար որպէս զի նորանոր
հարցումներ ընեն, շարունակեց .

— Կ'ուզեմ Հիւսէյն Չալուշը տեսնել նախ և առաջ, հո՞ս
է արդեօք . . . :

— Հիւսէյն Չալուշ, գոչեց պահապանը ետին դառնալով
և խօսքը ուղղելով անձի մը, որուն դէմքը չէր երեւար,
տղայ մը եկեր՝ քեզ կ'ուզէ տեսնել .

Հիւսէյն Չալուշ երեւեցաւ իսկոյն և անծանօթ պատա-
նիին նայելէ ետքը, ըսաւ .

— Ո՞վ ես, ի՞նչ կ'ուզես :

— Նորին Բարձրութիւն Պիւրհանէտտին էֆէնտիի մա-
տակարար Սիւլէյման ազան կ'ուզեմ տեսնել էֆիրնէցի եղբօր-
մեն լուր տանելու համար, ըսաւ Հասան այս վերջին խօսքե-
րուն վրայ մասնաւորապէս շեշտելով :

Հիւսէյն Չալուշի վրայ կարծես մոզական ազդեցութիւն
մը ըրին այս խօսքերը, դէմքը որ առաջ կասկածոտ ու դա-
ժան էր, իսկոյն մեղմացաւ, անուշցաւ .

— Այո՛, հիմա ձանցայ քեզի, ըսաւ, աղէկ, աղէկ, եկուր
քեզ իրեն քով տանիմ, որովհետեւ առանձին չես կրնար իշ-
խանին ապարանքը գտնել :

— Շնորհակալ եմ, պատասխանեց պատանին գոհունակ գէտքով մը և յաղթականօրէն ներս մտաւ Երլարդի պարտէզէն :

Երբ Հիւսէյին Չավուչի հետ բաւական հեռացան կողմնակի ծառուղիէ մը, պահապանը հարցուց :

— Որո՞ւ կողմէ կուգաս արդեօք :

— Այդ բանը Սիւլէյման աղային պիտի ըսեմ և եթէ կ'ուզէք, կրնաք անկէ խմանալ, պատասխանեց պատանին կորովի շեշտով մը :

— Կը տեսնամ որ, հակառակ տարիքիդ, շատ լուրջ և խելացի աղայ մըն ես եղեր, ըսաւ Հիւսէյին Չավուչ ժպտելով :

— Եթէ այսպէս չըլլայի՝ այս տեսակ փափուկ պաշտօններ չէին յանձներ ինձի, պատասխանեց Հասան ինքնավստահ կերպարանքով մը :

Իշխանին ապարանքը բաւական հեռու էր, բայց ճամբան երկար չթուեցաւ Հասանին, որուն աչքերը շացած մնացին չորս կողմը պարզուած շքեղութեան առջև :

Վերջապէս Հասան վանդակապատ պարտէզի մը դիմաց, որուն մէջ փոքրիկ բայց պերճաչուք պալատ մը կը բարձրանար :

— Ահաւասիկ հասանք, ըսաւ պահապանը իր պատանի բնկերին հետ պարտէզին բաց դռնն ներս մտնելով ու շէնքին ձախ կողմը ուղղուելով, հիմա տեսնենք թէ Սիւլէյման աղան հո՞ս է :

Հիւսէյին Չավուչ պահ մը պատանին առանձին թողլով՝ փոքրիկ դռնէ մը ներս մտաւ և տասը վայրկեան ետքը վերադառնալով՝ յայտարարեց .

— Սիւլէյման աղան ներսն է բայց ճիշտ այս միջոցիս իշխանը զինքը կանչեց և ստիպուեցաւ անոր քով երթալ, ինձի պատուիրեց որ հոս պարտէզին մէջ սպասեմ, մինչև որ գայ քեզ գտնէ . . . Այս տեղուանքը պտտէ՝ բայց շատ մի

հեռանար, որպէս զի գալուն պէս զինքը տեսնես... մնաս բարով աղաս:

Հասան առանձին մնալով՝ յառաջացաւ փոքրիկ շէնք մը որ պարտիզպանի մը տնակին երեսոյթը ունէր և որուն քով սիրուն վանդակապատ հաւնոց մը կար: Հազիւ թէ շէնքին մօտեցած էր, երբ այժեամ մը վազելով իր քովէն անցաւ և անոր ետեւէն թեթեւ ոտնաձայն մը լսեց, սր հեռզնեռէ կը մօտենար: Պատանին գլուխը դէպի ոտնաձայնը եկող կողմը դարձուց և մէկէն ուրախութեան, զարմանքի ճիչ մը արձակեց, որուն նոյնքան ուրախ ճիչ մը պատասխանեց.

— Զիւլէհա՛ . . .

— Հասան . . . :

Մանկասի աղջիկն ու պատանին պահ մը անշարժ ափ ի բերան մնացին, չկրնալով իրենց աչքերուն հաւատալ:

Փոքրիկ Զիւլէհա իր ճոխ արդուզարդով այնքան գեղեցկացած էր որ պատանին հիացումով յափշտակուեցաւ և չկրցաւ խօսք մը գանկ ըսելու: Աղջիկը իր բարեկամին այս շփոթութիւնը տեսնելով սկսաւ խնդալ, յետոյ, մէկէն, լուրջ կերպարանք մը առած. ըսաւ.

— Ի՞նչ բան ունիս այստեղ, ի՞նչպէս կրցար մինչև հոս գալ զիս տեսնելու համար:

— Բայց . . . քեզ տեսնելու համար չեկայ, թոթովեց պատանին, ուրիշ գործի համար եկած եմ.

— Ի՞նչ գործ . . . :

— Իշխանին մատակարարը պիտի տեսնեմ, Սիւլէյման աղան, բայց թողունք ատիկա, դուն ի՞նչ կ'ընես այստեղ . . . և կը կարծէի որ Նըլթըղի պալատը տարած են քեզ:

— Այո, մինչև երէկ գիշեր հոն էի, բայց գիշերը Սաֆնազ հանրմը զիս հոս բերաւ, պատասխանեց աղջիկը:

— Սաֆնազ հանրմը ո՞վ է, հարցուց պատանին:

— Պիւրհանէատին իշխանին գալճաներէն մէկը, բացատրեց մանկատի աղջիկը:

— Ի՞նչ կ'ընես այսչափ օրէ ի վեր պալատին մէջ :

— Սարսափելի կերպով կըտանջուիմ, պատասխանեց աղ-
ջիկը ախուր դէմքով մը. իրա՛ւ է որ ինծի նեղութիւն մը
մը տուող չկայ, ընդհակառակն ամենքն ալ զիս կը շոյին ու
կ'սիրեն, այսու հանդերձ վիճակս անտանելի է... : Երեւակայէ՛
որ հոս գալէս ի վեր խօսք մը չեմ ըրած և ստիպուած եմ
մինչև ևս քը իբրև խուլ—համր ձեւանալ, որպէս զի զիս չըս-
տիպեն խօսելու :

— Այո՛, գիտեմ որ այդ խորհուրդը տուած է քեզ
Ֆաթման :

— Ու միշտ վախի մէջ եմ որ սխալմամբ բերնէս խօսք
մը կը փախցնեմ և խարհրայութիւնս երեւան կ'ելլէ... Գիտե՛ս
Սուլթանը ամէն ջանք ըրաւ զիս խօսեցնելու համար, նոյն
խկ իր բժիշկները եկան երկարօրէն զիս քննելու և լեզուս
բանալու համար ճար մը գտնելու... : Կախարդներու անգամ
գիժու՛մ ըրին :

— Խեղճ Զիւլէհա, ըսաւ պատանին որուն աչքերը լեց-
ուեցան իր բարեկամուհիին այո պատմածներէն :

— Բայց ատոնք բան մը չեն, շարունակեց աղջիկը մե-
լամաղձօրէն, հիմա աւելի անմիջական ու աւելի մեծ փոր-
ձանք մը կարծեմ կ'սպառնայ ինծի... :

— Փորձանք մը կ'սպառնայ քեզի, գոչեց Հասան այ-
լայլած, ի՞նչ փորձանք, խօսէ՛ շուտ :

— Ճշմարիտ որոշ բան մը չեմ գիտեր, միայն թէ երէկ
գիշեր, երբ տակաւին Եըլաբղի հարէմը կ'գանուի «Խեղճ աղ-
ջիկ» կ'ըսէին կիները կարեկից անկարկներ նետելով վրաս
«արդեօք քու գլո՞ւխդ ալ պիտի ուտեն»... Պէտք է գիտնաս
որ զիս խուլ համրի տեղ դրած ըլլալով ամէն բան քովս
կը խօսին՝ կարծելով թէ բան մը չեմ իմանար... :

Իր փեքրիկ բարեկամուհիին այս խօսքերը բուռն յուզու-
մի մը մատնեցին պատանին որուն գոյնը նետեց և շրթունքը
դողդղալ սկսաւ :

— Բայց ի՞նչ կ'ուզեն քենէ այդ մարդիկը, ըսաւ մանկատի աղջկան ձեռքը բռնելով :

— Ձեմ գիտեր, միէջև հիմա սրամաղբութիւննին շատ լաւ էր ինծի հանդէպ, նոյն իսկ մոռցայ քեզ ըսելու որ անգամ մը Սուլթանին ներկայացայ որ զիս երկարօրէն նկատելէ և իմ մասիս հարցումներ ընելէ ետքը, պատուիրեց զիս պէտք եղածին պէս խնամել և ազատ թողուլ պալատին մէջ կամ պարտէզը շրջելու : Բայց երէկ գիշերուընէ ի վեր ամէն բան փոխուեցաւ . մեծ դէպք մը պատահեցաւ որուն ի՛նչ ըլլալը չեմ գիտեր և որ անսովոր իրարանցում մը յառաջ բերաւ . . .

Կը հասկնամ, պատածխանեց պատանին, մեր ընկերներուն ձերբակալութեան դէպքը ըլլալու է, որովհետև երէկ գիշեր թէ՛ Փաթման և թէ՛ մեր երէք ընկերներն որոնց մին էր թիկնապահ Մէհմէտ փաշա ձերբակալուեցան և կարծեմ Երլարդ բերուեցան . . .

Այս լուրը շանթահարեց մանկատի աղջիկը որ ահաբեկ ճիչ մը արձակեց .

— Այո՛, շարունակեց Հասան և ճիշդ ասոր համար է որ հոս եկած եմ իշխանին մատակարարէն որոշ լուր մը առնելու համար իրենց մասին, որովհետև կ'երևայ որ այդ մատակարարն ալ մենէ է :

— Ափսո՛ս, հիմա ի՛նչ պիտի ըլլայ իմ վիճակս, հառաչեց Զիւլէհա, արդեօք Փաթմա արդէն ամէն բան խօստովանեցա՞ւ և անո՞ր համար է որ այդ կիները իմ վրաս կը խղճային . . . :

— Այդ ենթադրութիւնդ հաւանական չէ, Փաթմա դիւրաւ խոստովանող կին չէ . . . բայց չըսիր թէ ի՛նչ պատճառաւ Երլարդէն հոս փոխադրուեցար . կ'աղաչեմ շուտ խօսէ՛ որովհետև չենք կրնար երկար ատեն մնալ հոս, մէկ վայրկեանէն միւսը մատակարարը կրնար դալ զիս փնտուելու և լաւ չէ որ մեզ այսպէս խօսակցութեան մէջ գտնէ . . .

— Ահաւասիկ երկու բառով պատմեմ . . . Այն կիներուն

մէջ որոնք իմ մասիս այդ չարագուշակ խօսքերը կ'ընէին կայր նաև Պիւրհանէտտին իշխանին գալֆաներէն մին՝ Սանֆազ հանրմ որ մասնաւոր գուրգուրանք մը ցոյց կուտայ իմ մասիս և որ շատ ազնիւ կ'ին մ'ն է: Անիկա քովս գայով ձեռքէս բռնեց և ըսաւ. «Ես այս աղջիկը մեր էֆէնտիին ապարանքը պիտի տանիմ այս գիշեր և եթէ զինքը անպատճառ ուզեն՝ թող գան հոնկէ առնեն, ես կրնամ այն տանն մեր էֆէնտիին դիմել և անոր շնորհիւ թող չտալ որ աղջիկը առնեն ու անոր վնաս մը հասցնեն:» Այս առաջաբերութեան թէև պալատական գալֆաները ընդդիմացան, ըսելով թէ իրենք պատասխանատու էին իմ մասիս, սակայն Սաֆնազ հանրմ բացարձակապէս յայտարարեց թէ ինք պիտի տանէր զիս Սուլթանին հանդէպ ամբողջ պատասխանատուութիւնը ստանձնելով: Պէտք է գիտնաս թէ Սանֆազ հանրմ շատ մեծ ազդեցութիւն կը վայելէ պալատին մէջ և դեռ քանի մը որ առաջ երկրորդ կարգի Շէֆաքաթ պատուանչանը ստացաւ Պիւրհանէտտին իշխանին մէկ ուրիշ գալֆային՝ Քանարիէ հանրմին հետ, այնպէս որ պալատական տիկիները ստիպուեցան տեղի տալ ու այսպէս կէս գիշերը անցած էր երբոր հոս եկանք: Սանֆազ հանրմ անշուշտ ինծի ամէն բան պիտի պատմէր եթէ գիտնար որ իր ըսածները կ'լսէի. . . ահա՛ ներկայ վիճակս, ժամերս ահ ու դողի մէջ կ'անցնեմ ինծի սպառնացող փորձանքին պատճառաւ, որուն ինչ ըլլալն ալ որոշապէս չեմ գիտեր:

— Խեղճ Զիւլէհա, խեղճ Զիւլէհա, ինչպէս կարելի պիտի ըլլայ քեզ այս տեղէն ազատել, մրմնջեց պատանին խօրին յուզումի մը մասնուած:

— Ուրքի ձայն մը կ'լսեմ, գոչեց աղջիկը, տնակին քովէն յանկարծ հեռանալով:

Պատանին ետին դարձաւ և քանի մը քայլ յառաջացաւ: Արդարև, ժարդ մը կար պարտէզին մէջ որ չորս կողմը կը

զիտեր մէկը վնասելու պէս. երբ նշմարեց Հասանը իսկոյն զէպ ի անոր եկաւ :

— Տղան, դ՞ուրս ես զիս տեսնել ուզողը, հարցուց :

— Դուք Պիւրահանատին իշխանին մատակարար Սիւլէյման աղան էք, ըսաւ պատանին :

— Այո, և Հիւսէյին Չավուշն իմաց տուաւ որ էտէրնէէն լուրեր կը բերես եղեր :

— Մաւան Աքա, ըսաւ Հասան իբրև պատասխան :

— Մաւան Աքա, կրկնեց միւսը :

Յետոյ աւելցուց

— Լաւ ուրեմն. եկուր հետս միասին իմ սննեակս և հոն կրնանք աղատօրէն խօսակցել :

Եւ երկուքը միասին մտան շքեղ ապարանքէն ներս և մասն գեանայարկի սննեակ մը ճոխ կերպով կահաւորուած :

Հոն պատանին սի առ մի մատակարարին հաղորդեց ինչ որ Սա'ի պէյ իրեն ըսած էր և ինչ որ մենք արդէն գիտենք : Երբ պատմութիւնը աւարտեց՝ Սիւլէյման աղա թեթեւ մը ժպտեցաւ :

— Կը տեսնամ որ բանէ մը տեղեկութիւն չունիք, ըսաւ :

— Ի՞նչպէս, գոչեց Հասան զարմացումով :

— Չերբակալուած անձ չկայ, ամենքն ալ փախած են, պատասխանեց մատակարարը. իրա՛ւ է որ երէկ գիշերօրնէ ի վեր ծայրայեղ խուզարկութիւններ կը կատարուին փախըտականները ձեռք անձնելու համար, սակայն չեմ լուսար որ արդիւնք մը ունենան . . .

— Դուք գիտէ՞ք թէ ո՛ւր ծածկուած են :

Ոչ տակաւին, բայց կ'ենթադրեմ որ քիչ ատենէն պիտի կրնամ իմանալ :

Մատակարարը մանրամասնօրէն պատմեց թիկնապահ Առնավուտ Մէհմէտ փաշայի կատարած զերը :

— Փաշան միւսներուն հետ չէ փախած, աւելցուց, այլ ինք առանձին ապարանքին դռնին դուրս ելած և անյայտ եղած է . . . իրմէ լուր ունիմ :

— փա՛ռք Աստուծոյ, գոչեց պատանին խանդախա-
սւած :

— Այո՛, այժմ բոլորովին ապահովութեան մէջ է օտար
չողկնաւի մը մէջ և այսօր իսկ կը մեկնի դէպի Սեւանիկ՝
բուն յեղափոխութեան գործը սկսելու համար :

Տեսակցութիւնը աւարտած էր այլևս : Երկու խօսակից-
ները իրարու հաղորդելիք բան մը չունէին :

— Հիմա կրնաս երթալ և առած տեղեկութիւններդ հա-
ղորդել Սա՛ր պէյին :

Պատանին որ խիստ ուրախ արամաղրութեան մը մէջ էր
իր առած լուրերուն պատճառաւ յանկարծ ակրեցաւ և աչ-
քերը արցունքով լեցուեցան : Յիշած էր իր փոքրիկ բարեկա-
մունքին և անոր սպառնացող վտանգը և չէր կրնար մեկնիլ
մատակարարին քովէն, առանց անոր մասին ալ խօսելու :

— Ներեցէ՛ք որ ձենէ ուրիշ բան մըն ալ խնդրեմ, ըսաւ :

— Խօսէ՛, աղա՛ս, պատասխանեց Սիւլէյման աղա բար-
եացակամութեամբ :

— Գլխէ՛ք որ, Սիլիւտար, Ֆաքմայի առնէն խուլ—համր
աղջիկ մը գանուած է որ ձերբակալուած և յետոյ Երլազդ
բերուած է . . .

— Այո՛, այսինքն՝ իր մասին անորոշապէս բաներ մը
լսեցի. այս առտու այլ իմացայ որ հոս մեր ապարանքը փո-
խադրուած է :

— Ուրեմն չէ՞ք գիտեր թէ այդ աղջիկը մեր ընկերներէն
է :

— Չէ՛, ըսաւ մատակարարը, մինչև այսօր ո՛չ ոք իրեն
մասին տեղեկութիւն մը տուած է ինծի . . . բայց ի՞նչ օգուտ
կրնայ ունենալ խուլ—համր մը մեր մէջ :

Պատանին այս հարցումին չպատասխանեց, այլ ըսաւ .

— Կ'երևայ որ ձեր իշխանին գալֆաներէն մէկը, Սաֆ-
նազ հանրմ աղջիկը իր պաշտպանութեան տակն առած է և
ինքն է որ երէկ գիշեր զայն հոս փոխադրեր է :

— Սաֆնազ հանրմ, գոչեց Սիւլէյման աղա . ուրեմն կ'երեւայ որ անիկա տեղեակ է ո՛վ ըլլալուն . . .

Ընդհակառակն ես կը կարծեմ որ եթէ զիտնար այդ պաշտպանութիւնը չպիտի համարձակեր ընելու , ըսաւ պատանին :

Մատակարարը ժպտեցաւ :

— Կը տեսնեմ որ չես զիտեր եղեր Սաֆնազ հանրմին ո՛վ ըլլալը , ըսաւ :

— Ի՛նչ , միթէ ա՞ն ալ մենէ է :

— Բնականաբար . . .

Պատանինն աչքերն ուրախութենէ շողացին :

— Ուրեմն , գոչեց , Զիւլէհայի վիճակն այնքա՛ն յուսահատական չէ որքան ինք ու ես կը կարծէինք ,

Յետոյ աղաչաւոր ձեւով մը աւելցուց :

— Կը խնդրեմ , Սիւլէյման աղա , զիս Սաֆնազ գալֆային քով առաջնորդեցէ՛ք , կ'ուզեմ ամեն բան հասկցնել իրեն որովհետեւ ձեր ենթադրութիւնը ճիշտ չէ . գալֆան իր պաշտպանութիւնը չնորձած է Զիւլէհայի առանց անոր ո՛վ ըլլալը զիտնալու , ուստի երբ ամէն բան իմանայ , անշուշտ ա՛լ աւելի զօրաւոր կերպով զայն պիտի ուզէ հովանաւորել և , ո՛վ գիտէ , գուցէ յաջողի խեղճ աղջիկը ազատելու ներկայ կացութենէն :

Մատակարարը վայրկեան մը խորհելէ ետքը , ըսաւ .

— Է՛տ , հետս եկուր :

Եւ իր պատանի բարեկամը առաջնորդեց ապարանքին վերնայարկը , կանանոցի բաժինը , անոր ըսելով . «Երբ Սաֆնազ հանրմին քով տանին քեզ , ձեռքը համբուրէ՛ և կամայ մը կրկնէ այն բառերը զորս ինձի ըսիր . ատիկա բաւ է որ պէսզի իսկոյն իր վստահութիւնը գրաւես :»

Վերնայարկը , սանդուխին գլուխը , մատակարարը հանդիպեցաւ խափշեկուհիի մը որուն Հասանը ցոյց տալով ըսաւ .

— Զէյնա՛ւ, այս տղան իսկոյն Սաֆնազ գալֆային քո-
վը տար :

— Շատ աղէկ, պատասխանեց խափշիկունին, յետոյ պա-
տանիին դառնալով՝ աւելցուց :

— Հետս եկո՛ւր :

Հասանի սիրտը յուզումէն կը արտփէր իրեն բոլորովին օ-
տար այդ միջավայրին մէջ և շփոթութիւնը այնքան մեծ էր
որ ուշադրութիւն չէր կրնար դարձնել շուրջը պարզուած ճո-
խութեանց վրայ :

Երկու մեծ և զարդարուն սրահներէ անցնելէ ետքը,
կանգ առին դրան մը առջև :

— Գուն հոս սպասէ՛ որպէս զի գալֆա հանրմին իմաց
տամ, ըսաւ սև աղջիկը դուռը բանալով ու սենեակէն ներս
մտնելով :

Սպասումը երկար չտևեց : Վայրկեան մը ետքը աղջիկը
երևցաւ և իմաց սուռա թէ Սանֆազ հանրմը իրեն կ'սպա-
սէր :

Պատանին սրտատրոխ ներս մտաւ սենեակէն, բայց իս-
կոյն հանդարտութիւնը գաւա տեսնելով որ գալֆան առանձին
էր : Իր աչքերը դէպի անոր ուղղեց և իսկոյն վստահութիւն
մը ծնաւ իր սրտին մէջ այդ կնոջ հանդէպ : Հազիւ քառասուն
տարեկան, համակրելի ու ազնուական դէմքով կին մըն էր
Սանֆազ հանրմը որ պատկառելի երևոյթով մը բազմած էր
պատուհանին քով դրուած թաւչապատ թիկնաթոռի մը մէջ :

Հասան յարգանքով մօտեցաւ և կնոջ ձեռք համբուրեց :
Միևնոյն ատեն կամաց մը մրմնջելով :

— Մարան Աթա . . . :

Սանֆազ հանրմ թեթև սարսուռ մը ունեցաւ : Բնազդօ-
րէն աչքերը կասկածոտ ակնարկով մը ժուռ ածեց չորս կողմը
և ինքն ալ ըսաւ .

— Մարան Աթա . . . :

Այս խորհրդաւոր խօսքերէն ետքը, կնոջ և պատանիին միջև մէկէն մտերմութիւնը հաստատուեցաւ .

— Տղաս, աթու մը առ և կիւր քովս նստէ՛ ու համարձակօրէն խօսէ՛ տեսնեմ, ըսաւ իշխանին դալֆան :

Հասան կնոջն ըսածը կատարեց :

Ձեր Աղնուութիւնն անհանդիստ ըրի, ըսաւ, մասնաւորաբար ձեզ յանձնարարելու համար այն փոքրիկ աղջիկն որուն արդէն ձեր պաշտպանութիւնը շնորհած էք և երէկ գլշեր Երլտրդէն այս ապարանքը փոխադրած էք . . . :

— Խօսքդ սա գեղանի խուլ — համր աղջկան համար է որ հո՛ն, պարտէզին մէջ, այժեամբն հրա կը խաղայ այս պահուս, հարցոց Սաֆնազ հանրմ ձեռքը դէպ ի պատուհանն երկարելով :

Հասան ոտքի ելաւ, գլուխը դէպի ցոյց արուած կողմը ուզղեց և յուզուած ձայնով մը պատասխանեց .

— Այո՛, ձիշտ իրեն վրայօք կը խօսիմ, Ձիւլէհան . . .

— Վա՛յ, Ձիւլէհա, կը կոչուի, ըսաւ կինը աշխոյժով, վերջապէս գոնէ անունը կրցանք հասկնալ, բայց ո՞վ է որ այս աղջիկը . . . գիտեմ թէ Սկիւտար Փաթմայի տան մէջ խուզարկութիւն կատարուած ատեն գտնուած է, բայց աւելի տեղեկութիւն չունիմ :

— Մեր ամէնէն եռանդուն և գործունեայ ընկերներէն մէկն է, պատասխանեց պատանին, և հակառակ իր տարիքին շատ ծառայութիւններ մատուցած է :

— Իր այս խուլ — համր վիճակի՞ն մէջ :

— Հանրմ էֆէնտի, Ձիւլէհա թէ՛ կ'լսէ թէ կը խօսի . դիտմամբ խուլ — համր ձեւացած է որպէս զի խուսափի հարցաքննութիւններէ, պատասխանեց Հաժան հաստատուն շեշտով մը :

Այս անակնկալ յայանութիւնը ափ ի բերան թողուղ իշխանին դալֆան՝ որ գոչեց .

— Ի՞նչ կ'ըսես, կը խօսի ու կը լսէ՛, բայց ուրեմն հրա-

չափիք մըն է այդ ազջիկը որ կրցած է այսքան կատարեալ կերպով կեղծել ու մեզ ամենքս ալ խարել օրերէ ի վեր... ճշմարիտը հաւատարմ չի գար ըսածիդ :

Պատանին ժպտեցաւ :

— Քիչ մը առաջ, պարտէզին մէջ, կէս ժամու չափ տեսակցեցայ, ըսաւ, և իրմէ իմացայ օրերէ ի վեր հոս վարած կեանքը, ձենէ տեսած պաշտպանութիւնը և իրեն սպառնացող վտանգը, երէկուքնէ ի վեր, որուն ի՛նչ ըլլալը որոշապէս չի գիտեր խեղճ ազջիկը :

— Այո՛, կերեայ որ Սուլթանը իր ձերբակալել ուզած մարդոց փախուստէն ու մանաւանդ թիկնասպան Մէհմէտ փաշայի յեղաբոխականներուն հետ ունեցած մեղսակցութենէն կատարած՝ պահ մը ուզած է այդ խեղճ ազջիկը խտուրթեանց ենթարկել անկէ կարենալ բան մը հասկնալու համար... որովհետեւ իր ներկայութիւնը, Ֆաթիմայի տան մէջ, զինքը կատարածելի կ'ընէ, թէև ևս այնպէս համոզուած էի որ բոլոր վին անմեղ ու անտեղեակ ազջիկ մըն էր որ պատահմամբ այդ տան մէջ գտնուած էր խուզարկութեանց պահուն :

— Հիմա որ գիտէք թէ մեր գործօն ընկերներէն մէկն է, անչուշտ ամէն միջոց պիտի գործածէք վտանգը իրմէ հեռացնելու և, եթէ կարելի է, զինքը բոլորովին ազատելու համար... :

— Այդ վերջին ըսածդ բոլորովին անկարելի է :

— Բայց անհրաժեշտ է, պնդեց Հասան կորովի ու հաստատ շեշտով :

— Առանց իմ դիրքս վտանգելու այդպիսի փորձ մը չեմ կրնար ընել... եթէ զինքը փախցնեմ պէտք է որ ևս ալ իրեն հետ անյայտ ըլլամ և կարծեմ իմ ներկայութիւնս չափազանց հարկաւոր է այս պալատին մէջ :

— Չեղի չըսի տակաւին թէ ո՛վ է այս ազջիկը, եթէ իմանաք գուցէ տարբեր կերպով խորհիք :

— Շո՛ւտ խօսեցէ՛ք ուրիմն... :

— Այդ խուլ—համբ ձեացող գեղանի աղջիկը որ իր կեանքը վտանգած է մեզի օգտակար ըլլալու համար, ըսաւ պատանին բառերը մի առ մի շեշտելով մեր մեծ նահատակին՝ Հազգը պէյի աղջիկն է . . . :

Այս նոր յայնուրթիւնը բաւոն յուզում մը պատճառեց Սաֆնազ Հանրմի :

— Հազգը պէյին, մեր աննման ընկերոջ աղջիկը, մրմնջեց ինքնիրեն . կ'զգայի որ ներքին համակրանք մը, թաքուն զօրութիւն մը զիս դէպի իրեն կը մղէր . . . այո՛, իրաւունք ունիս, հիմա կը յիշեմ, ճիշդ իր խեղճ մօրը կը նմանի, այո՛, այո՛ . . . ճիշտ անոր պատկերն է :

Գալֆան օտքի ելաւ և պատուհանէն պարտէզը դիտեց : Զիւլէհա միշտ հոն էր, զուարթ արևուն տակ, այժեամին հետ խաղալով :

— Հիմա պէտք է որ զինքը կանչեմ և խօսեցնել տամ, ըսաւ պատանին . դուն իրեն ամէն բան կը բացատրես ու այլ ևս պէտք չղգար իմ քովս ալ խուլ—համբ ձեանալու :

Եւ իսկոյն պատուհանը բանալով նշան ըրաւ աղջկան որ արդէն գլուխը վեր բարձրացուցած էր, պատուհանին բացուելուն ձայնը առնելով : Զիւլէհա վազելով ապարանքը մտաւ :

Քիչ մը հտքը սննեակին դուռը բացուեցաւ և գեղանի աղջիկը երեցաւ : Երբ Հասանը տեսաւ Սաֆնազ ըանրմին քով մտերմօրէն նստած՝ զարմացական դէմք մը առաւ, բայց իսկոյն ինքզինք զսպեց և առոնց պատանին ուշադրութիւն դարձնելու, հանդարտիկ մօտեցաւ տիկնոջ :

— Քեզի հրաշագործ բժիշկ մը գտայ որ ականջդ ու լեզուդ իսկոյն պիտի բանայ, ըսաւ գալֆան ժպտելով ու մանկատի աղջկան ձեռքերէն բռնելով : Զիւլէհա իր հանդարտ ակնարկը յառեց խօսակցին վրայ, առանց հասկացողութեան ամենափոքր նշան մը ցոյց տալու :

— Ի՛նչ չարածձի աղջիկ է այս, ըսաւ գալֆան, մանկու-

հին դէպ ի իրեն քաշելով ու գուրգուրանքով այտերը համ-
բարբառելով :

Հասան միջամտելու վայրկեանը եկած համարեց և իր
փոքրիկ բարեկամուհիին ըսաւ :

— Զիւլէհա՛, ուրախ եղիր որովհետեւ Աստուած քեզ կը
պաշտպանէ, Սաֆնազ հանրմը մենէ է եղեր և պէտք չունիս
ինքզիքդ կեղծելու երբ անոր հետ առանձին ըլլաս... իրեն
ամէն բան պատմեցի :

Աղջիկը դարձեալ լուռ մնաց, բայց իր աչքերը տարօրի-
նակ փայլ մը առին : Պատանին տեսնելով որ տակաւին անոր
կասկածները չեն փարատած, ձեռքէն բռնեց մէկ կողմ տարաւ
ու ականջին բաներ մը փափսաց : Այս անգամ ա՛լ մանկուհիին
եզուն բացուեցաւ .

— Ի՛նչ երջանկութիւնէ գոչեց, հիմա դո՞նէ պիտի կրնամ
այստեղ մէկու մը հետ խօսիլ :

— Մինչև որ Սաֆնազ հանրմը քեզ բոլորովին ազատէ
այս ոսկեղօծ բանտէն, պատասխանեց պատանին :

Հասան թէև չէր ուզեր բաժնուիլ իր բարեկամուհիին
քովէն՝ սակայն զգաց որ չափազանց երկար մնացած էր այս
ապարանքին մէջ, թէ այլևս ընելիք մը չունէր հոն և թէ
պարտականութիւնը զինքը ուրիշ տեղ կը կանչէր :

— Մեկնելէ առաջ, ըսաւ գալֆային ձեռքը համբուրե-
լով, դարձեալ Զիւլէհայի պաշտպանութիւնը կը հայցեմ ձենէ :

— Այլևս հարկ չկայ այդ խօսքերուն պատասխանեց
գալֆան, Հազգը պէյի աղջիկը յանձնարարուելու պէտք չունի
ինծի :

Պատանին մանկատի աղջկան ձեռքը սեղմելէ և վերջին
անգամ անոր ժպտելէ ետքը դուրս ելաւ սննեակէն :

— Կարծեմ թէ, խորհեցաւ Երլաբզի շրջափակէն դուրս
ելլելով, Սա՛ի պէյ գոհ պիտի մնայ ինէ, ո՛չ միայն կէտ առ
կէտ իր յանձնարարութիւնները կատարեցի, այլ միևնոյն ա-
տեն շատ մը աղէկ լուրեր կը տանիմ իրեն... հիմա կը մնայ

գտնել մեր փախստաւական ընկերներուն թաքստոցը :

Թողունք որ պատանիի Հասան կրթայ Շիշիի, ուր անհամբեր երկն կ'պատէ երիտասարդ յեղափոխականը և մենք պահ մը փոխադրուինք ուրիշ տեղ :

Պ. Լ. Ա Ի Ե Ռ.

ԳԵՊԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՕՐՐԱՆԸ

Սիւլէյման աղա չէր սխալած պատանիին տուած իր տեղեկութեանց մէջ : Առնտիուա Մէհմէտ փաշա օտար չոգենաւ մը ապաստանած էր ու իր ապարանքը ձգելուն հետեւեալ իրիկունը կը հեռանար Պոլսէն : Թրկնապահն որքան քաջասիրտ ու յանդուգն՝ նոյնքան ալ խոհեմ ու կանխատեսող էր : Այն օրն ուր յեղափոխական գործին վարեցաւ և մտաւ ծածուկ քօմիթէին մէջ, ինքնիրեն սա խուհրդածութիւնն ըրաւ .

— Անշուշտ օր մը, իմ կամ ուրիշներու անխոհեմութեամբը, յեղափոխական ըլլալս պիտի յայանուի : Եթէ նախապէս միջոցներ ձեռք չառնեմ վտանգի պահուն անձս կարենալ փրկելու, վերջին վայրկեանին թափուած ճիգերն օգուտ մը չեն կրնար ունենալ :

Եւ այսպէս խորհելով՝ ջանացած էր օտար դեսպանատան մը հետ բարեկամական յարաբերութիւններ հաստատել, խիստ զգուշաւոր կերպով : Իրեն համար դժուար չէր եղած այդ բանը : Մէհմէտ փաշա Երլարզի պալատին մէջ անպիտի դիրք մը և ազդեցութիւն մը ունէր որ ամենքը իր բարեկամութեան կը ցանկային, նոյն իսկ օտար շրջանակներու մէջ : Բացի իր

այս արտաքին հանդամանքէն՝ թիկնապահը իր ուղղամիտ, անկեղծ և խրոխտ նկարագրովը շուտով սիրելի կը դառնար իրեն հետ շրջում ունեցող ազնուասիրտ անձերուն հետ։ Մէն-մէտ փաշա Բանկալթիի զինուորական վարժարանէն վկայուած գերմանիոյ մօջ կատարելաֆորժած էր իր զինուորական ուսմունքը և Բարիզի մէջ ալ զինուորական կցորդի պաշտօն վարած էր մէկ քանի ստորի, այնպէս որ զարգացեալ ու միանգամայն աշխարհիկ մարդու բոլոր առաւելութիւնները կը կրէր իր վրայ։

Իր այս այլազան յատկութիւններուն շնորհիւ ահա՛, Մէն-մէտ փաշա մտերիմ ու սիրելի բարեկամը եղած էր մեծ Պիւտտիկան մը դեսպանատան խորհրդականին։

Այս մտերմութիւնը այն աստիճան յառաջ դացած էր որ թիկնապահը չէր վարանած իր ամբողջ գազանիքներուն հաղորդակից ընել խորհրդականը և զանազան սուրբներու մէջ անոր օժանդակութեան գիմկ, իր ընկերներուն օգնութեան հասնելու համար։

Երբ մեր գիացած իրողութեանց հետեւանքով՝ Մէնմէտ փաշա ստիպուեցաւ գիշերանց թողուլ հեռանալ իր Շիլլիի ապարանքէն՝ բնակունաբար ուղղակի գնաց իր օտարազգի բարեկամը գտնելու, որուն պարզեց իր կացութիւնը։

— Վայրկեան մը կարելի չէ որ այս քաղաքը մնաք, վճռեց խորհրդականը։

— Ես ալ այդպէս կը կարծեմ, պատասխանեց թիկնապահը։

— Եւ ո՛չ ալ Թուրքիոյ ու եւ է մէկ կողմը։

— Այդ մասին համակարծիք չեմ ձեզի, սիրելիս։

— Ի՛նչպէս, արդեօք կը խորհի՞ք Թուրքիոյ մէկ քաղաքը ապաստանիլ։

— Ո՛չ թէ ապաստանիլ՝ այլ երթալ։

— Ի՛նչ յիմարական գաղափար, գոչեց խորհրդականը գրեթէ սրամտած, ո՞ւր տեղ կրնաք խուսափիլ Համիտի ձեռքէն եթէ Թուրքիոյ մէջ մնալ յամառիք։

— Նախ՝ դիտաւորութիւն չունիմ Համիտի ձեռքէն խուսափելու, երկրորդ կը կարծեմ որ ալ ժամանակը հասած է ճակատ ճակատի կռիւ մղելու բռնաւորութեան դէմ, հերիք ա՛լ որչափ մաւթին մէջ գործեցինք ու վատարար ճղակտոր եղանք . . . :

— Բայց ի՞նչ կրնաս ընել դուն առանձին կամ քանի մը ընկերով, Համիտի զօրութեան դէմ:

— Մենք օրինակը կուտանք, պայքարը կ'սկսինք և այն ատեն կը տեսնենք թէ ո՛վ կուզայ մեր ետեւէն:

— Եւ եթէ ո՛չ ոք տեղէն չարժի ու ձեզ առանձին թուզուն:

— Այն ատեն մենք ալ գո՛հ սրտով կը մեռնինք, վատերու երկրի մը մէջ սպրած չլլալու համար: Բայց պատճառ չունինք այսքան յուսահատ ըլլալու, եթէ այս թշուառ երկրին մէջ ամէնէն վերէն մինչև վարը, նախարարներէն սկսեալ մինչև յեալին պաշտօնեան, դատաւորէն մինչև դռնապանը փտութեան և ապականութեան մէջ ինկած են, փա՛ռք Աստուծոյ, կը մնայ տակաւին բան մը զոր Համիտի ապականիչ հոգին չէ կրցած աղարտել, այդ բանը օսմանեան բանակն է . . .

Մէհմէտ փաշա՝ խանդավառուած՝ տակաւին իր խօսքը պիտի շարունակէր, երբ դեսպանական խորհրդականը զինքը կեցուց . . .

— Սիրելիս, ըսաւ, կը տեսնեմ որ շատ մեծ է քու հաւատքդ այն գործին մասին որուն նուիրուած ես աւ չեմ ուզեր այդ գեղեցիկ եռանդդ նուազեցնել տարակոյսներ ցանկելով մաքիղ մէջ: Գործէ՛ ինչպէս որ յարմար կը տեսնաս, միայն թէ ժամ առաջ հեռացիր գոնէ այս քաղաքէն:

— Անոր համար ահա՛ արդէն հոս եկած եմ:

Խորհրդականը ժամացոյցը նայեցաւ .

— Տակաւին ատենը ուշ չէ, ըսաւ ինքնիրեն խօսելու պէս, միայն թէ հարկէ իսկոյն մեկնիլ:

— Ո՛ւր կ'ուզէք որ երթանք այս ատեն հարցուց թիկ-
նապահը մտատանջ դէմքով մը :

— Ահաւասիկ իմ ծրագիրս, պատասխանեց միւսը, այս
իրիկուն մեր պահականաւին հրամանատարը դեպքանատունը
ճաշեց և տակաւին հոս է ու գիշերն ալ սրամաղիւր էր հոս
մնալու : Հիմա պիտի երթամ խնդրեմ իրմէ որ հրամարի իր
խորհուրդէն և իսկոյն պահականաւ դառնայ ձեզի հետ : Հոն
բոլորովին ապահովութեան մէջ կրնաք ըլլալ մինչև վաղն
առաւօտ :

— Իսկ անկէ ետքը :

— Անկէ ետքը պահականաւին մակոյկովը և անշուշտ
ծպտուած՝ վաղն իսկ մննող օտար շոգենաւ մը կը փոխա-
դրուիք . կարծեմ ասիէ աւելի լաւագոյն կարգադրութիւն մը
կարելի չէ ընել . . . դրամ ունի՞ք քովերնիդ :

— Պէտք եղածէն աւելի :

— Ուրեմն երթամ հրամանատարը տեսնեմ :

Խորհրդականին ծրագիրը կէտ աւ կէտ գործադրուեցաւ :
Թիկնապահը պահականաւին հրամանատարին ընկերակցու-
թեամբ մեկնեցաւ դեպքանատունէն և գնաց շոգենաւ, ուր
անցուց գիշերը :

Պահականաւը կեցած էր Թօփհանէի բացը միւս պահակ-
ներուն քով : Հետեւեալ առտու, Մէհմէտ փաշա պեխերը ա-
ծիրած, գլուխը նաւային սպայի գլխանոց մը դրած և մէկ
քանի սպաներու ընկերակցութեամբ փոխադրուեցաւ Մէսս-
ժըսիի Սիսոն շոգենաւը, որ քանի մը փամէն պիտի մեկնէր
գէտի Տարտանէլ, Սելանիկ, Սիրա, ևւն . . :

Ծայրայեղ հսկողութեան մը ենթարկուած էր ամբողջ
Ղարաթիոյ քաղաքը . ոտտիկաններ ու լրտեսներ պաշարած էին
բոլոր շոգենաւները թէ՛ ցամաքին և թէ՛ ծովուն կողմէ . այ-
սու հանդերձ երբ դեպքանաւի պահականաւին մակոյկը մօ-
տեցաւ Սիսոնի ծովուն կողմը գտնուող սանդուխին՝ լրտեսնե-
րու նաւակներէն ո՛չ մէկը համարձակեցաւ մօտենալ :

Անգամ մը որ չողենաւին մէջ ոտք դրին, սպաննորը Մէջ մէտ փաշայի հետ ուղղուեցան նաւապետին խցիկը և անոր պաշտպանութեան յանձնեցին թիկնապահը:

Նաւապետը յայտնեց որ կէս զիշերէն ի վեր բոլոր չողենաւները խիստ հսկողութեան մը ենթարկուած էին և թէ նոյն րոպէին իսկ Սիսոնի մէջ լրտեսներ կը վխտային:

— Թէև շատ լուծաբար կը թուիք, և բոլորովին ևւրոպացի նաւային սպայի մը երևոյթը ունիք, ըսաւ Սիսոնի հրամատարը խօսքը Մէհմէտ փաշայի ուղղելով, այսու հանդերձ անկարելի չէ որ ճանչցուիք լրտեսի մը կողմէ և այն ատեն մեր կացութիւնը շատ կը դժուարանայ, որովհետև կը վախնամ որ ամէն միջոցի պիտի դիմեն ձեզ ասկէ դուրս հանելու համար, նոյն իսկ թերևս բռնութեամբ. ասոր համար կը խնդրեմ որ մինչև չողենաւին ճամբայ ելլելը այս խուցին մէջ փակուած մնաք:

— Ամենայն հաճութեամբ, պատասխանեց թիկնապահը իր շնորհակալութիւնները յայտնելով:

Նաւապետը միւս սպաներու հետ դուրս ելաւ և խուցին դուռը կը պելտը՝ բանալին գրպանը դրաւ:

Այս զգուշութիւնները աւելորդ չէին, որովհետև Ապտիւլ Համիտ այնքան կատղած էր իր հաւատարիմ կարծած թիկնապահին ընթացքէն որ հրամայած էր զայն ողջ կամ մեռած ձեռք ձգել անպատճառ: Այս հրամանը գործադրելու համար ամբողջ ոստիկանութիւնը և լրտեսներու բանակը գործի սկսած էր զիշերանց: Նոյն իսկ ամէն կողմ բարձրատարիճան պալատականներ զրկուած էին խուզարկութեանց հսկելու համար: Ապտիւլ Համիտ այնքանը բաւական չհամարելով՝ Իզդէթ փաշայի պաշտօն յանձնած էր բոլոր դեսպաններուն այցելելու և անոնցմէ արտօնութիւն ստանալու, որպէս զի իրենց հպատակութեան ներքև զանուոյ չողենաւները խուզարկութեան ենթարկուին Տարտանէլէն կամ Վոսիսթէն դուրս ելած ատենին:

Այսպէս Սիսոն ճամբայ ելլելէ կէս ժամ առաջ Մէսոսժրոի Մարիթիմի ընդհանուր գործակատարը շողենաւ դալով՝ յանուն ֆրանսական դեսպանին՝ նաւապետին հաղորդեց որ եթէ Տարտանէի առջև թրքական իշխանութիւնները դան ու շողենաւը խուզարկել ուղեն արդելք չյարուցանէ :

— Իսկ եթէ շողենաւին մէջ գանուող մէկը ձերբակալել փորձեն, հարցուց Սիսոնի հրամանատարը :

— Ասոր բացարձակապէս կ'ընդդիմանաք ու թոյլ չէք տար ընաւ, պատասխանեց գործակատարը :

Այս հակասական կարգադրութեամբ դեսպանները միջոցը գտած էին թէ՛ Ապարիւ Համիաի խնդիրքը չմերժելու և թէ՛ միանգամայն դրօշակին արժանապատուութիւնը յարգելու :

Իրիկուան ժամը չորսին շողենաւը բացուեցաւ քարափէն և ուղղուեցաւ դէպի Մարմարա : Մէհմէտ փաշա մեծ շունջ մը առաւ իր խցիկին մէջ և անհամբեր սպասելով որ նաւապետը դայ զինքը իր արգելանոցէն հանելու : Այս վերջինը հազիւ ժամը ճին եկաւ իր քով և հաղորդելով գործակատարին խօսքերը, աւելցուց .

— Կարծեմ լաւ կ'ըլլայ որ դուք շարունակէք ծածկուած մնալ մինչև որ Տարտանէլէն դուրս ելլենք :

— Ո՛չ, նոյն իսկ այստեղ բաւական ապահով տեղ չէ . . . քանի որ ստիպուած ենք թոյլատրել խուզարկութիւնը՝ գուցէ այս խուցին ալ բանալ ուղեն և ձեզ հոս գանեն : Իրաւ է որ հրաման ունիմ ձեզ չյանձնելու, այսու հանդերձ կը վախնամ որ ձեր զլխուն փորձանք մը բերեն . . . այդ մարդիկը կարող են օրինակի համար մահափորձ մը կատարել ձեզի դէմ :

— Ուրեմն ի՞նչ կը խորհիք ընել :

— Ձեզ հոս պիտի պահեմ մինչև կէս զիշեր, յետոյ երբ ճամբորդներն իրենց խուցերը քաշուին՝ ձեզ պիտի փոխադրեմ շողենաւին ներքնայարկը, մեքնաներուն մէջ, և պիտի խընդրեմ ձեռքէ որ քանի մը ժամուան համար հնոցպանի պաշտօնը կատարէք :

— Հնոցդանի պաշտօն, դոչեց թիկնապահը զարմա ցեամբ նաւապետին երեսը նայելով :

— Այո՛, պատասխանեց միւսը ամենայն լրջութեամբ, խորհեցայ որ ծպտու մի յաւազոյն ձեւը այդ է, թէ՛ հնոցդանի տարազը և թէ անուխին սեւութիւնը ձեզ բոլորովին անձանաչելի պիտի դարձնեն, այս մասին վստահ եմ... և յետոյ ապահով եղէք որ այդ անհաճոյ զիրքին մէջ հազիւ քանի մը ժամ պիտի մնաք...

Մէհմէտ փաշա հաւանութիւն յայանեց նաւապետին այս կարգադրութեան և անոր շնորհիւ Տարասնէլի մէջ կատարուած խուզարկութիւնը ո և է արդիւնք չտուաւ ու կէսօրին, երբ ճաշի ժամը հնչեց, թիկնապահը, առաջին անգամ ըլլալով, եկաւ բազմեցաւ առաջին կարգի ուղեւորներու սեղանը :

Չմոռուան այդ եղանակին շատ ճամբորդներ չկային : Բացի նաւապետէն ու թիկնապահէն, սեղանին վրայ, Ֆրանսացի այր ու կին մը կային որոնք Մարտիլիա կ'երթային. յետոյ, երկու հրայ վաճառականներ ու թուրք պաշտօնեայ մը որոնք Սեկանիկ կը վերադառնային, յոյն սրտու կին մը իր զաւկին հետ և ուրիշ ճամբորդ մը որ Էմին էֆէնտի անունով արձանադրուած էր Եւրոպա կ'երթար. անա՛ առաջին կարգի ամբողջ ուղեւորները :

Երբ թիկնապահը երեւցաւ ճաշարահին մէջ, ամիլում ու գլուխը քեփի մը դրած, ընդհանուր հետաքրքրութիւն չարժեց : Ծամբորդները զինքը առաջին անգամ կը տանելին ու թէև ենթադրեցին որ Չանաք Գալէէն շողենաւ մտած էր այսու հանդերձ իրենցմէ ո՛չ մէկը տեսած էր շողենաւէն ներս մտնելը : Էմին էֆէնտի մասնաւոր ուշադրութեամբ մը սկսաւ գննել այս խորհրդաւոր ուղեւորը, որ այդեւս յանկարծ կարծես երկինքէն կ'իջնար :

Թիկնապահը նշմարեց իրեն հանդէպ յոյց տրուած հետաքրքրութիւնը և նեղուիլ սկսաւ անկէ, մանաւանդ Էմին էֆի խուզարկիչ նայուածքէն : Ծաշի միջոցին հազիւ քանի մը

խօսք վոխանակեց նաւապետին հետ և յետոյ խոսոյն վերնա-
յարկը ելաւ, հակառակ օդին ցրաութեան :

Էմին էֆէնտի, ինքն ալ սեղանէն ելաւ սիկառէթ մը
վառելով ու ինքնիրեն խորհրդածելով .

— Այս մարդը ինձի կասկածելի կը թուի : Շոգենաւը
երբ Չանաք Գալէ հասաւ, վերնայարկը կեցած ուշադրու-
թեամբ դիտեցի բոլոր ներս մանուկները, որոնք ընդհանրապէս
ոտարկաններ և սրաշօնեաններ էին, խուզարկութեան համար
եկած, երբևք այսպիսի մէկու մը ներս մանկը ջնջմարեցի . . . :

Էմին էֆէնտի գնաց հարցուփորձել սպասաւորը :

— Չեմ գիտեր, պատասխանեց այս վերջինը, կ'երևայ
որ այդ պարոնը այս առտու չոգենաւ մտաւ Տարտանէէն :

— Ո՞րն է իր խցիկը :

— Չեմ գիտեր . . . :

Էմին էֆէնտի դիւրաւ յուսահատող մը չէր թուեր. ուղ-
ղակի նաւապետին գիմեց .

— Կը ներէ՛ք պարոն նաւապետ, ըսաւ, սեղանին վրայ
ձեր քով նստող նորեկ ճամբորդը ո՞վ է արդեօք :

Նաւապետը շեշտակի նայիցաւ մարդուն երեսը ապա խըս-
տութեամբ պատասխանեց .

— Չեմ ճանչնար զինքը . . . միթէ բոլոր ճամբորդները
կարելի՞ է ճանչնալ :

— Իրաւունք ունիք, կը ներէք ըրած հարցումիս, պա-
տասխանեց թուրքը և հեռացաւ :

— Մե՛ղք որ անձնապէս չեմ ճանչնար թիկնապահ Մէհ-
մէտ փաշան, խորհեցաւ ինքնին, եթէ ոչ շատ դիւրաւ, այժմ
պիտի կրնայի այդ անձանօթ ճամբորդին մասին վճիռ մը
տալ . . . և սակայն ինձի տրուած ծանօթութիւնները իր հա-
սակին, գիւմազիծերուն և աչքերուն, ինչպէս նաև մազերու
գոյնին վրայ, կատարեալապէս կը համապատասխանեն այս
մարդուն . . .

Էմին էֆէնտի այս խորհրդածութիւնները ընելով՝ ուղ-

վուեցաւ վերնայարկը կամուրջին վրայ ուր, ինչպէս ըսինք,
ճաշէն յետոյ դացած էր թիկնապահը:

Այս վերջինը նստարանի մը վրայ բազմած ծովը կը դի-
տէր, երբ էմին էֆէնտի իր քով մօտենալով՝ սիրալիբ ձեւով
մը ըսաւ .

— Եթէ չեմ սխալիր՝ դուք ալ Օսմանցի էք ինծի պէս և
գուցէ Սելանիկ կ'երթաք . . .

— Այո՛, պատասխանեց միւսը չոր կերպով:

— Չանաք Գալէէն չողենաւ մտաք կարծեմ, չարունա-
կեց էմին էֆէնտի առանց այլայլելու իրեն արուած չոր պա-
տասխանէն, որովհետև չողենաւը Պոլսէն մեկնած ժամանակ
ձեզ չնշմարեցինք և միայն այս ցերեկ առաջին անգամ սեղա-
նին վրայ ձեզ տեսնելու բախտը ունեցանք:

— Այո՛, Չանաք Գալէէն չողենաւ մտայ, պատասխա-
նեց թիկնապահը:

— Սելանիկ երթալու համար, պնդեց միւսը:

— Իւսկիւս պիտի երթամ, պատասխանեց Մէհմէտ
փաշա:

Յետոյ նկատելով որ չափէն աւելի խօսած էր, տաքի ե-
լաւ ու հեռացաւ, առանց բարեւելու իր խօսակիցը:

— Հարիւրին իննսուն դրաւ կը դնեմ որ մեր փնտռած
մարդն է այս, ըսաւ ինքնին էմին էֆէնտի:

Հարկ կա՞յ ըսել որ այս թնօրք ճամբորդը ուրիշ մէկը
չէր, այլ պարզապէս լրտես մը որ Պոլսէն մտած էր թիկնա-
պահը գտնելու յոյսով:

Առնալուտ Մէհմէտ փաշա այդ բանը կուտնեց, մանա-
ւանդ երբ նաւապետը իրեն սրտամեց էմին էֆէնտիի հարցա-
փորձերը:

Իրա՛ւ է որ Տարտանէլէն անցած էին, Սիսոն տակաւին
թրքական ջուրերուն մէջ կը գտնուէր և կ'ուզզուէր դէպի
Սելանիկ, ուր ամբողջ օր մը պիտի մնար: Այս պարագան
սկսաւ մատանջութիւն պատճառել թիկնապահին:

— Այս լրտեսը կրնայ շողենաւը Սեղանիկ համակուռն պէս իշխանութեանց իմաց սաղ իմ ներկայութիւնս և դուցէ զիս բռնի շողենաւէն դուրս հանեն, մտածեց :

Ինք զիտէր որ Աստիւլ Համիա և իր արբանակները այդ տեսակ բռնութիւններու և արտօրինութիւններու տուջև կանգ չէին առներ և չէյին վախնար զիւանագիտական կնճռոտութիւններ ստեղծելէ որոնք յետոյ կը կարգադրուէին մեծամեծ գոհողութիւններով :

— Սուլթանը յօժարակամ պատրաստ է ամէն հատուցում և գոհացում սաղու Ֆրանսական կառավարութեան՝ զիս անգամ մը ձեռք ձգելէ ետքը, խորհեցաւ :

Մինչ փախտականը այս մտածումներով պաշարուած էր, Էմին էֆէնտի կը շարունակէր իր շուրջը թափառիլ և զինքը իրանսկ այն տատիճան ակնյայտնի անպատկառութեամբ մը որ Մէհմէտ փաշայի համբերութիւնը կ'սպասէր :

Նաւապետը ինքն ալ մտահոգութեան մասնուած էր :

— Իցիւ թէ մինչև Սեղանիկէն մեկնելնիս ծածկուած մնայիք, ըսաւ փաշային :

Իրիկուան ճաշէն ետքը, երբ թիկնապահը կրկին վերնաշարկը ելած էր ու շողենաւին յեանակողմը կեցած իր սիկառէթը կը ծխէր, սեսաւ որ մութին մէջ Էմին էֆէնտի դարձեալ զինքը կը լրտեսէր :

Օգը ցուրտ էր, ծովը բաւական արևիտ, այնպէս որ միւս ճամբորդներէն ոչ ոք համարձակած էր վերնաշարկը, բայց օդին կլկելու :

Մէհմէտ փաշա պահ մը խորհելէ ետքը, վճռական որոշում մը տուաւ :

— Կացութիւնը այսպէս չկրնար շարունակուիլ, բաւ ինքնիրեն, պէտք է որոշապէս հասկնամ թէ ս'վ է այս Էմին էֆէնտին և թէ ի՞նչ կ'ուզէ ինէ :

Եւ ուղղակի դնաց լրտեսին քով :

— Էֆէնտի ըսաւ անոր, կը տեսնեմ որ առաուրնէ ի վեր

իմ ետեւէս կը շրջիք և միշտ զիս կը լրտեսէք, ի՞նչ է այդ հետապնդումին պատճառը :

Միւսը այս խօսքերէն առանց այլաջելու, ամենայն պազարիւնով պատասխանեց .

— Շիտակը ըսե՛մ, ձեզ մէկու մը կը համայնեմ, մեծ անձնաւորութեան մը և այս պատճառաւ է որ հետաքրքրութեամբ կը դիտեմ :

— Եւ ո՞վ է այդ մեծ անձնաւորութիւնը որուն նմանկուբախտն ունիմ, պատասխանեց փաշան, հեզնական շեշտով մը :

— Կայսերական թիկնապահ Մէհմէտ փաշան, պատասխանեց էմին էֆէնտի ամենայն հանդարտութեամբ :

— Ուրեմն չէք սխալած, այո՛, Մէհմէտ փաշան եմ, ըսաւ թիկնապահը նոյնքան հանդարտութեամբ : Գուք ալ, եթէ չեմ սխալիր, լրտես մըն էք ու զիս հետաանդելու պաշտօն ունիք :

— Փաշա էֆէնտի, շատ դէշ կը զատէք զիս, պատասխանեց միւսը քիչ մը շփոթելով, ինչո՞ւ կ'ուզէք որ կայսերական թիկնապահ մը լրտեսեմ, թիկնապահ մը մանաւանդ՝ ըբ մեր Վեհափառ Սուլթանին կատարեալ վստահութիւնը կը վայելէ և անոր ամենէն հաւատարիմ պաշտօնեաներէն մէկն է :

Լրտեսը այնքան անկեղծութեամբ արտասանեց այս խօսքերը որ թիկնապահը բոսկէ մը խռովեցաւ :

— Արդեօք սխալած եմ իր մասին, խորհեցաւ :

Յետոյ, շարունակեց .

— Չէ՞ք դիտեր թէ ձեր հաւատարիմ կոչած պաշտօնեան իբրև թշնամի կը վնասուի այսօր . . . միթէ Պոլիս չտեսա՞ք որ չողենաւը սափկաններով ու լրտեսներով պաշարուած էր միթէ այս աւտու, երբ Չանաք Գալէ հասանք, չգիտեցիք ո՞ր եկան նորաճոր խուզարկութիւններ կատարելու :

— Այդ ամէնը սեսայ բայց չհետաքրքրուեցայ պատճառը հասկնալու :

— Չափազանց անտարբեր էք եղիր, չողենաւին մէջ ձենէ զատ մէկը չկայ որ այս իրողութիւնը զխանայ :

— Բայց եթէ այդ աստիճան ձեզ կը հարածեն՝ ինչպէս մը համարձակիք Սեղանիկ ու անիկ Իւսկիւտ կ'ըլտալ, ինչպէս որ այս ցերեկ ըսիք :

— Այդ իմ գիտնապահք բանս է . . .

Թիկնապահը, այս խօսքին վրայ, կոնակը դարձուց և հեռացաւ, ափ ի բերան թողլով էմին էֆէնտին :

— Այդ մտրդը կատարեալ յիմար է, մասձեց լրտեսը, բայց ինչ որ ալ բլայ խնդիրը այն է որ իր հեռքը դասնք, հիմա կը մնայ զինքը այս շողենաւէն դուրս հանել . . . հակասակ իր ըսածին ևս չեմ հաւատար որ պիտի համարձակի Սեղանիկ տաք կոխելու . . . Կէս գիշերէն ետքը պիտի հասնինք Սեղանիկ, բայց ճամբորդները արշալոյսին միայն պիտի կրնան դուրս ելլել շողենաւէն, հետեւաբար ժամանակ ունինք մեր պատրաստութիւնները տեսնելու . . . հիմա պէտք է որ վայրկեան մը զինքը աչքէ հեռացնեմ :

Լրտեսը իջաւ վարի սրահը և տեսաւ որ թիկնապահը հեռապիտին հետ սեղանի շը առջև նստած թուղթ կը խաղար :

Գնաց անոնց քով նստաւ .

Վասյ պէղիկ կը խաղաք, ըսաւ, հին խաղ մըն է այդ որ այժմ երեսէ ինկած է, աշուհանդերձ ևս չառ կ'ախորժիմ, մանուսանդ խաղը դիտելը, կը նէրէք որ քովերնիդ նստիմ :

Նաւապետը ծուռ ծուռ նայեցաւ լըրտեսին երեսը և կ'ըստէր որ թիկնապահը դայն վաճառէր, բայց ընդհակառակն, վաչան իջիտ սիրալիր և ժպտուն դէմքով մը ըսաւ .

— Էմին էֆէնտին, հրամանեցք նստի՛ք քանի որ այդքան հաճոյք կ'ըզաք այս խաղէն, և եթէ կ'ուզէք դուք նշանակելք իմ թիւերս :

— Ամենայն հաճութեամբ, պատասխանեց լրտեսը աթուղի մը վրայ տեղաւորուելով :

Խաղը կէս ժամու չափ տեսնց : Թիկնապահը յաղթուեցաւ

և կը սրտորաստուէին նոր խաղ մը սխտու, կըր պաշտօնակայ
մը գալով՝ նուապետը կանչեց :

— Եթէ կ'ուզէք խնդիր հետ շարունակեցէ՛ք ձեր խաղը,
ըսաւ էմին էֆէնտի :

— Շատ լաւ, պատասխանեց թիկնապահը ժպտուն դէմ-
քով մը :

Փաշան կրկին կորսնցուց :

— Այս գիշեր բախտ չտնիմ, ըսաւ, և ա՛լ չեմ ուզեր
խաղը շարունակել :

— Ինչպէս որ Ձերդ վսեմութիւնը կը կամի այնպէս
կ'ընենք, պատասխանեց էմին էֆէնտի :

Թիկնապահը ջանալով հանդերձ սիրալիր վարմունք մը
ունենալ լրտեսին հանդէպ, ջղադրգիւռ վիճակ մը կ'ստանար
հեռոյհեռէ : Յայտնի էր որ ծանրակշիւ մտածում մը կը վեր-
դառնար իր միտքը :

— Ժամը քանիին Սելանիկ պիտի հասնինք, հարցուց
էմին էֆէնտիի :

— Կարծեմ հազրու երեք ժամէն, շողենաւը բաւական
յապաղում կրեց Չանաք Գալէի առջև :

— Այո՛, իմ պատճառաւ... Ուեմն արշարոյսին մօտերը
պիտի հասնինք :

Միշտ արամադի՞ր էք Սելանիկ ցամաք կրկու :

Տուած որոշումս փոխելու կրքէք սովորութիւն չունիմ
պատասխանեց թիկնապահը կորովի չեղատով մը յետոյ դանդալը
հնչեցնելով ծառային շիջ մը քօնեաք սպասարեց :

— Օգը ցուրտ է և քանի մը դաւաթ կրնանք խմել,
ըսաւ :

— Ամենայն հաճոյքով, պատասխանեց էմին էֆէնտի,
թէ մեր ստամոքսը կը սաքայնենք այդ կերպով և թէ աւելի
գիւրաւ կը քնանանք :

— Ես քնանալու դիտաւորութիւն չունիմ և անքուն
պիտի մնամ մինչև Սելանիկ հասնելնիս :

Քօնեաքի շէշո՞ եկաւ և երկու խօսակիցները սկսան եմել և թիկնապահին Չլադրդուութիւնը աւելցած էր և հետզհետէ գաւաթները կը պարպէր, անընդհատ սիկառէթ ծխելով: Խօսակցութիւնը սպառած էր և էմին բֆէնտիւն աչքերը կը դոցուէին, թէև կը ջանար արթուն մնալ: Փաշան իր ընկերոջ այս վիճակը տեսնելով՝ ոտքի կաւ և ըստ.

— Կը տեսնեմ որ ձեր քունը եկեր է, դայէ՞ք հանգստացէ՛ք, իսկ ես վերնայարկը պիտի կլեմ քիչ մը օդ առնելու. թիկնապահը կամրջակիւն վրայ կլիելով՝ սա խորհրդածութիւնն ըրտւ լրտեսին վրայ մտածելով.

— Եթէ երթայ քնանայ, լա՛ւ, իսկ եթէ դարձեալ շուրջս պտտի՝ այն տտեն մեղքը իր ճիար...

էմին էֆ. ալ, իր կարգին, վարի սրահին մէջ կը մտածէր.

— Այս մարդը ինչո՞ւ չուզեր քնանալ քանի որ ստակաւին երեք չորս ժամ ունինք Սեղանիկ հասնելու և ատենն ալ շատ ուշ է, ապահովաբար ծրագիր մը ունի և դայն դործադրելու համար է որ անքուն կը մնայ: Այդ ծրագիրը ուրիշ բան չկրնար ըլլալ եթէ ոչ փախուստի ծրագիր մը... Կաւտակտին հետ շատ մտեմ է և գուցէ միտսին կարգադրութիւն մը ըրած են... պէտք չէ որ իր օձիքը թողում... իմ մասին կարծեմ կատկած չունի այժմ և շատ սիրալիր կերպով կը վարուի հետս... երթամ երեսո՞ պաղ շուրով լուամ որպէս զի քունս փախչի, ու ես ալ վերնայարկը կլեմ:

էմին էֆէնտի սրտած էր ամէն զոնողութեան յանձնառու ըլլալ ձեռքէն չփախցնելու համար թիկնապահը: Ապտիւլ Համիտի կարգադրութեամբն էր որ մեկնած էր Պոլսէն, կատկածոտ Սուլթանը հրամայած էր որ Պոլսէն ճամբայ կլուր բոլոր շողենաներուն մէջ մէյմէկ ճարպիկ լրտեսներ գտնուին՝ յուսալով որ այս կերպով պիտի կրնայ Մէհմէտ փաշայի հեաքը գտնել, էմին էֆէնտի վիճակուած էր Սիսոնը, և անա՛ դիպուածն այնպէս անօրինած էր որ թիկնապահը ճիշդ այդ շողե-

Նաւին մէջ գանուէր: Ասիկա լրտեսին համար մեծ բախտ մ'էր որուն համար սրտանց շնորհակալ կ'ըլլար նախախնամութեան:

— Երբ Սուլթանը իմանայ որ իմ շնորհիւս կարելի եղած է ձերբակալել այս անհաւասարիմ թիկնապետը, ա՛յ իմ ապագաս ապահովուած է, կը խորհէր:

Երբ երեսը լուսէ կաքը վերնայարկը կ'աւ, տեսաւ որ փաշան խոշոր քայլերով վեր վար կը շափչփէր: Իսկոյն իրեն մօտեցաւ.

— Վա՛յ, էմին էֆէնտի, չէ՞ք քնացեր, ըստ փաշան չարաշուք ու տարօրինակ ժպիտով մը:

— Ո՛չ, փաշա էֆէնտի, պատասխանեց միւսը, մտածեցի որ չէր արժեր մէկ քանի ժամուան համար հանուել ու անկողին մտնել և թէ աւելի խելացութիւն էր ձեզի պէս անքուն մնալ մինչև Սեկանիկ հասնելու... յետոյ շուզեցի ձեզ առանձին թողուլ, քանի որ այնքան ազնուութեամբ վարուեցաք ինձի հետ...

— Շատ շնորհակալ եմ, իրա՛ւ է որ ձեր ներկայութիւնը շատ հաճելի է ինձի և կը յուսամ որ Սեկանիկի մէջ ալ առիթ կ'ունենանք ականուելու, թէև կարծեմ հազիւ օր մը պիտի մնամ հոն և իսկոյն Իւսկիւպ պիտի մեկնիմ:

— Եթէ կը հաճիք միտսին ցամաք կ'ելլենք ու ձեզ լաւագոյն օթել մը կ'առաջնորդեմ, որովհետև ես շատ լաւ կը ձանձնամ քաղաքը:

— Կ'ընդունիմ ձեր առաջարկը, այո՛, միտսին դուրս կ'ելլենք շոգնաւէն, միայն թէ հարկ է զգուշութիւններ ձեռք առնել օձիք* ձեռք չտալու համար...:

Խօսակցութիւնը այսպէս շարունակուեցաւ բաւօրինաւ տաւն. կծու հով մը կար և շոգնաւը բաւօրինաւ կը տատանէր: Երկու խօսակիցները շարունակ կը քայլէին՝ ձեռքերնին իրենց վերարկուի զրպաններուն մէջ դրած:

Յանկարծ Մէհմէտ վաշա կանգ առաւ շողենսուին յետնա-
կողմը և սկսաւ ուշադրութեամբ ծովը դիտել, գլուխը ծռած :

— Փաշա էֆէնտի, ի՞նչ կայ որ այդքան ուշադրութեամբ
ծովը կը դիտէք, հարցոյց էմին էֆէնտի :

— Խոշոր, այլանդակ ձուկ մը տեսայ, որ կարծես մեր
շողենսուը կը հալածէր, պտտատախանեց վաշան :

— Գուցէ դիտին մըն է . . .

— Չէ՛, շատ աւելի մեծ ձուկ մը . . . ահա՛, ահա՛, դը-
ռուխը կ'երեւայ, ճիշդ պտտատակին քովերը, կարծեմ շանա-
ձուկ մըն է . . . :

Էմին էֆէնտի ինքն ալ ծռեցաւ և ուշադրութեամբ սկսաւ
դիտել :

— Իրաւ որ բան մըն ալ չեմ տեսներ կոր, կարծեմ ձեր
վսեմութիւնը սխալած է, ըսաւ :

— Չէ, ապահով եմ որ չեմ սխալած, պնդեց թիկնա-
պահը, հիմա աներեւոյթ եղաւ, բայց սպասեցէք, կրկին և-
րեւան պիտի ելլէ :

Եւ դարձեալ գլուխը ծռաց ուշադիր պտտատակին նայե-
ցաւ, յետոյ մէկէն դռնեց .

— Ահա՛, ահա՛ գլուխը դուրս հանեց, եկէ՛ք եկէ՛ք, շուտ
նայեցէք :

Լրտեսը կրկին ծռեցաւ դէպի ջուրը :

Այն ատեն սոսկալի բան մը անցաւ :

Թիկնապահը վայրագ ակնարկ մը նետեց շուրջը . յետոյ
ակնթարթի մը մէջ ծռեցաւ, էմին էֆէնտիի սաքերը բռնեց և
վեր վերցնելով, ուժգին թափով մը զայն դէպ ի դուրս նե-
տեց : Գործողութիւնը այնքան արագ ու անակնկալ կերպով
մը կատարուած էր որ լրտեսը հազիւ ճիշ մը արձակած ինք-
զինքը ծովուն մէջ գտաւ :

Թիկնապահը լսեց մարմինին ճողփիւնը և չարաչուք ժը-
պիտով մը մրմնջեց ակռաներուն մէջէն .

— Եթէ քիչ մը առաջ սխալած էի ծովուն մէջ շանա-

ձուկ մը հնթարդրելով՝ այժմ կրնամ ապահով ըլլալ որ հաս
մը կայ հոն . . .

Գրչկրուտն այդ ժամուն շոգենաւին յեանակողմը և վեր-
հայարկին վրայ ոչ ոք կար և անգի ունեցած տուամը միակ
ականատնն վկայ մը ունեցաւ, այսինքն՝ բուն իսկ զայն կա-
սարսոր :

Շողենաւը կը յառաջանար միշտ և փաշան՝ ակնարկը
սեւեռուն՝ ի դուր ծովուն ալիքներուն մէջ իր գոհին հետքը
կ'որոնէր :

— Մինչև որ այս մարդիկը ո և է միջոցաւ մէջտեղէն
չվերցնենք, բան մըն ալ չենք կրնար ընել, ըսաւ ինքնիրեն .
այն օրն ուր լրտեսները սարսափին մենէ՛ բռնաւորին զօրու-
թիւնն ալ կը ջախջախուի . . .

Թիկնապահը իջաւ վարի սրահը ուր սեղանին վրայ դըր-
ուած էին քօնեաքի շիշն ու գաւաթները :

Փաշան մէկ քանի գաւաթ ևս խմեց . յետոյ բազմոցին
վրայ երկնցաւ, քիչ մը քննանալու համար : Բայց արդէն չու-
զենաւին մէջ շարժումն ու աղմուկը կ'սկսէր : Նաւազները
կ'երթային կուգային, պարաններ կը փոխադրէին, սախտա-
կամածը կը լուային, ժամանումի պատրաստութիւնները կը
տեսնէին : Թիկնապահը անսաւ որ այլևս կարելի չէր քնանալ
և ոտքի ելլելով սկսաւ ժուռ գալ սրահին մէջ :

Իր արարքը որ այնքա՛ն բնական և արդար երեւցած էր
և զոր կատարած էր աւանց ամենափոքր խղճահարութեան
մը, այժմ կ'սկսէր նեղել զինքը :

— Վատութեամբ վարուեցայ, կը մտածէր, զինքը չա-
բաչար խաբեցի, կեղծեցի և իր միամտութենէն օգտուեցայ .
աղնիւ մարդու գործ չէր ըրածս . . . :

Փաշային տազնապը կը սասականար քանի կը վերլուծէր
արարքը :

— Ստորին ոճրագործ մըն եմ, վճռեց, բազմոցին վրայ
իյնալով :

Յանկարծ սաքի կլաւ և դուրս ուղղուեցաւ .

Բոլոր նաւաղնիւրը սաքի վրայ էին : Հեռուն Սելանիկի լոյսերը կ'երեւային արդէն . փաշան եկրորդ նաւապետը նշմարելով դէպի անոր գնաց .

— Պարոն նաւապետը կրնամ տեսնել , հարցուց յուզուած դէմքով մը :

— Նաւապետը այժմ գրադած է և կարելի չէ իր քովը երթալ , սրտասխանեց միւսը , ինչպէս կը տեսնէք նաւահանգիստին կը մօտենանք . . .

— Բայց խիստ կարեւոր յայտնութիւն մը ունիմ ընելիք , շարունակեց թիկնապահը դողահար ձայնով մը , անպատճառ պէտք է որ զինքը տեսնեմ . . . քիչ մը առաջ . . .

Յանկարծ լուեց ու խօսքը չշարունակեց : Երկրորդ նաւապետը զարմացմամբ իր խօսակցին հրեսը նայեցաւ .

— Ի՞նչ յայտնութիւն , չէ՞ք կրնար ձեր ըսելիքը ինձի հաղորդել :

Փաշան՝ առանց պատասխանելու՝ ձգեց հեռացաւ :

— Եւ ո՛չ իսկ ոճիրս խոստովանելու քաջութիւնը ունիմ , մտածեց ինքնին ու վերադարձաւ սրահ :

Կէս ժամ ետքը շողենաւը Սելանիկի նաւահանգիստը կը մտնար : Առաջին կտրդի ուղղեւորները որոնք ցամաք պիտի ելլէին , հազուած և եկած հաւաքուած էին սրահ . բայց տակաւին հարկ էր սպասել լուսնայուն :

Թիկնապահը մտածումներու մէջ խորասուզուած , կարծես չէր տեսներ իր շուրջը գտնուողները ու անխօս և անխարկը մտորուն գամուած կը մնար նստարանին վրայ :

Սխոն արդէն կանգ առած էր քարափին մօտ ու դուրսի ազմուկները կը լսուէին :

Յանկարծ նաւապետը ներս մտաւ սրահէն և ուղղակի թիկնապահին քով գնաց :

— Քիչ առաջ զիս տեսնել ուզած էք , կարեւոր յայտնութիւն մը ընելու համար , հարցուց :

Փաշան զլուխը վեր առաւ, բոպէ մը նաւապետին նայեցաւ ակնապիշ և

— Այ՛ս' . . . կմկմաց :

— Ուրեմն խօսեցէ՛ք, գործս լմնցուցի և այժմ կրնամ ազատօրէն ձեզ մտիկ ընել :

— Կը փափաքէի որ առանձին անանուէինք, բողորովին առանձին, թոթովեց թիկնապահը :

Նաւապետը իր խօսակցին նայեցաւ զարմացած, չկնարով ըմբռնել սնոր չտիազանց այլայլած վիճակը :

— Լա՛ւ, եթէ կ'ուզէք իմ խուցս երթանք, ըսաւ, հոն հանդարտօրէն կրնանք տեսակցել :

Թիկնապահը ոտք ելաւ և հետեւեցաւ նաւապետին : Երբ խուցը հասան՝ Մէհմէտ փաշան մէկէն ըսաւ .

— Պարոն նաւապետ, քիչ մը առաջ ոճիր մը գործեցի . . .

— Ի՛նչ կ'ըսէք, գոչեց նաւապետը, կարծելով որ զիմացինը յանկարծ խելքը կորսնցուցած էր :

— Այ՛ս', շարունակեց փաշան աւելի հանդարդ ձայնով մը, չողենաւին վերնայարկէն ծովը նետեցի Էմին էֆէնտին . . .

— Կարծեմ թէ կը զառանցէք, ըսաւ նաւապետը թեկաւ հաւատ դէմքով մը :

— Շատ գիւրաւ կրնաք ստուգել ըսածս, փնտուել տուէք Էմին էֆէնտին և պիտի տեսնէք որ չողենաւին մէջ չէ :

— Մնչուչա այդ քննութիւնը պիտի կատարեմ, բայց նախ՝ պատմեցէք ականեմ թէ ի՛նչ պարագաներու մէջ այդ ոճիրը գործեցիք, ըստ նաւապետը, որ այժմ սկոած էր հաւատալ իրողութեան :

Փաշան մանրամասնօրէն պատմեց ամէն բան . յետոյ բացատրեց այն պատճառներն որոնք զինքը մզած էին այդ արարքը գործելու : Ըսաւ թէ ինք միտքը դրած էր անպատճառ Սեկանիկ կլկ և հոնկէ Իւսկիւպ կրթալ, մէկ քանի ընկերներու հետ խորհրդակցելէ ետքը, թէ հասկցած էր որ Էմին էֆէնտին լրտես մըն էր որ պաշտօն ունէր զինքը հետապն

գեղու, թէ անոր ներկայութիւնը շոգենաւին մէջ, ի դերեւ պիտի հանէր իր բոլոր ծրագիրներն և թէ զայն մէջտեղէն վերցնելով ուրիշ ճար չէր գտած :

Նաւապետը ուշադիր մտիկ ըրաւ այս ամէնքը և կրք խօսքը աւարտեց, ըսաւ .

— Ի՞նչ պիտի ընենք հիմա . . . :

— Ձեզի կը մնայ որոշում մը տալ, պատասխանեց թիկ . նապահը, որ այլևս իր պաշարիւնութիւն գտած էր բոլորովին, ես ամէն բան խոստովանեցայ ձեզ . . . :

— Գիտէ՞ք որ ամենադժնդակ կացութեան մը կը մտանէք զիս, ըսաւ նաւապետը, շոգենաւին մէջ ուղեւոր մը անյայտացած է, ևզկութիւնը բնականաբար քիչ մը կտքը երեւան պիտի կլլայ և այդ ուղեւորը ո՞ճիրի մը զո՞հ գացած է և զիտեմ թէ ո՞վ է ո՞ճրագործը, այս պարագային՝ լուի անկարելի է . . . եթէ ձեր խոստովանութիւնը լսած չըլլայի, գուցէ արկածի մը զո՞հ պիտի նկատէինք էմին էֆէնալին, բայց այժմ այդ բանը անկարելի է . . . :

Նաւապետը լռեց, խորին յուզումի մը մտնուած :

— Պարզապէս ձեր խղճին համեմատ ձեր պարտականութիւնը կտարեցէ՞ք, պատասխանեց թիկնապահը :

— Այո՛, իմ պարտականութիւնս, միմուայ նաւապետը : Կրկին լութիւն տրեց խցիկին մէջ : Երկուքն ալ, գըլուխնին ծռած, չէին համարձակեր իրարու երես նայելու : Ի վերջոյ նաւապետը ոտքի կլաւ և ըսաւ .

— Առ այժմ իմ բանտարկեալս պիտի ըլլաք, հոս այս խցիկին մէջ . յետոյ կը մտածեմ թէ ի՞նչ կերպ պիտի վարուիմ ձեզի հետ : Խոստացէ՞ք ձեր պատուոյն վրայ որ փախչելու փորձ չպիտի ընէք :

— Պատուոյս վրայ կերդնում որ չպիտի փախչիմ, պատասխանեց թիկնապահը հանդիսաւոր կերպով :

Նաւապետը դուրս ելաւ խցիկէն, դուռը կղպելով :

Արշալոյսը ծագած էր արդէն և քարափին վրայ խռնուած

բաղմութիւնը խուժած էր Սիսունի մէջ : Նաւապետը ուղղակի գիմեց էմին Էֆէնտիի յատկացուած խուցը և դուռը բացաւ : Ո՛չ ոք կար ներսը , անկողինը չէր աւրուած և լրտեսին երկու պայուսակները կը տեսնուէին գետնին վրայ :

— Այո՛ , մրմնջեց նաւապետը . թիկնապահը ճշմարիտը խոստովանեցաւ , բայց ի՞նչ պէտք ունէր այդ խոստովանութիւնը ընելու . . . :

Նաւապետը խցիկին դուռը փակելով հեռացաւ , հոգեկան խորին յուզումի մը մասնուած :

— Այս թիկնապահը մասնաւորապէս իմ պաշտպանութեանն յանձնուած է , կը մտածէր , ասկէ զատ աղնուասիրտ ու հայրենասէր անձնաւորութիւն մըն է և ինձ պատմեց թէ ի՞նչ պարագաներու տակ ստիպուած է զո՛նկ իր գիրքը և թողուլ հեռանալ Պոլիսէն , շարունակելու համար սկսուած պայքարը բռնաւորութեան դէմ . . . հիմայ ինչպէ՞ս կրնամ այսպիսի մէկը իմ ձեռքովս օսմանեան իշխանութեան յանձնել իբրև հասարակ ոճրագործ մը . . . :

Խեղճ մարդը չէր կրնար որոշում մը տալ և տենդոտ քայլերով կը յրջէր շոգենաւին մէջ : Հիմա Սելանիկ ելլող ճամբորդները արգէն մեկնած էին և Սիսուն հետզհետէ կը դատարկանար : Նաւագները ամբարները կը բանային բեռները պարպելու համար : Շոգենաւը ամբողջ օրը հոն պիտի մնար և հետեւեալ առտու միայն պիտի մեկնէր :

Նաւապետը պահ մը գնաց իր բանտարկեալին քով որ ամենայն հանգարտութեամբ նստած էր , աթոռի մը վրայ :

— Ի՞նչ որոշեցիք իմ մասիս , հարցուց :

— Դեռ ոչինչ , պատասխանեց նաւապետը , ժամանակ ունինք մտածելու . . . :

Յետոյ յանկարծ հարցուց .

— Որո՞նք են ձեր ընկերները Սելանիկի մէջ :

— Օ՛ր , շատ բաղմաթիւ են և եթէ հարկ ըլլայ ամենքը չեմ կրնար յիշել :

— Ինձ ըսէ՛ք միտոյն ամէնէն մտերիմները, ամէնէն վրասահելիները, անոնք որոնք պիտի երթայիք տեսնել Իւսկիւպ մեկնելէ առաջ :

— Իրա՛ւ որ, ես դիտաւորութիւն ունէի ուղղակի հարիւրապետ Քեազլիմ պէյը երթալ գտնելու, որպէսզի ինձի միջոց մը ցոյց տայ ծածկարար մինչև Իւսկիւպ հասնելու :

— Հարիւրապետ Քեազլիմ պէյ, կրկնեց նաւապետը, ո՛ւր պիտի կրնայիք գտնել զինքը :

— Բայց մեր կեդրոնավայրը . . .

— Ուրեմն ինձի յայտնեցէք այդ կեդրոնավայրին ո՛ւր գտնուիրը և ես անձամբ պիտի երթամ զինքը փնտռելու :

— Ի՞նչ ընելու համար, հարցուց թիկնապահը զարմանալով :

— Հոս ձեր քովը բերելու համար և, եթէ կարելի է, պիտի խնդրէի որ ուրիշ անձ մըն ալ ցոյց տաք որ ընկերանայ հարիւրապետին :

— Անկեղծօրէն կը խստտովանրմ որ չեմ հասկնար ձեր դիտաւորութիւնը, ըսաւ փաշան նաւապետին երեսը նայելով :

— Ուրեմն երկու բառով բացատրեմ : Ի՞մ նպատակս է ձեր երկու ընկերները հրաւիրել, եղելութիւնը անոնց բացատրել և խնդիրը անոնց դատաստանին ենթարկել, որովհետև ինքզինքս անկարող կ'զգամ ձեզ իմ ձեռքովս թրքական իշխանութեան յանձնելու :

— Ըրէք ինչ որ յարմար կը տեսնոք, սլառատխանց փաշան, ես ինքզինքս ձեզ յանձնեցի, դուք էք իմ ճակատագրիս տէրը :

— Հաճեցէ՛ք ուրեմն ձեր հարիւրապետին եկտող մը գրել զինքը շողենաւ հրաւիրելու համար և ինձ յանձնել :

Թիկնապահն իսկոյն նաւապետին խնդիրքը կատարեց, յետոյ մանրամասնօրէն բացատրեց թէ ո՛ւր հարկ էր երթալ Քեազլիմ պէյը գտնելու համար :

— Ուրեմն կրկին ձեզ այստեղ կը բանտարկեմ մինչև իմ

վերադարձս, ըսաւ նաւապետը խցիկէն դուրս ելլելով ու դուռը կղպելով:

Դուրս ելած միջոցին հանդիպեցաւ Սիսո՛րի սեղանապետին որ շիտթաց դէմքով մը զինքը դիմաւորեց:

— Հրամատար, ըսաւ, ծանրակշիռ իրողութիւն մը կայ...

— Ի՞նչ իրողութիւն, հարցուց նաւապետին անտարբեր ձեւով մը, թէև իսկոյն կռահեց խնդիրը:

— Ութը թիւ խցիկին ուղեւորը մէջտեղ չկալ, մինչդեռ իր պայուսակներն հոն կեցած են...

— Ո՞վ է որ ութը թիւ խցիկին ուղեւորը, հարցուց նաւապետը միամիտ դէմքով մը:

— Էմին էֆէնտի անուն թուրք մը որ Սելանիկի համար տոմսակ առած էր... հիմա խցիկը բանալով տեսանք որ իր բեռներն հոն էին, բայց ինքը մէջտեղ չի կար, ասկէ զատ անկողինն ալ աւրուած չէր ինչ որ ցոյց կուտայ թէ գիշերը չէր պառկած խցիկին մէջ... սպասաւորները կ'ըսեն թէ չեն յիշեր որ կէս գիշերէն ետքը զինքը տեսած ըլլան...

— Զարմանալի՛ բան, ըսաւ նաւապետն ամենայն հանդարտութեամբ:

Միեւնոյն ատեն միւս ուղեւորն ալ, այն որ փախտական մըն էր կարծեմ և որ ձեր պաշտպանութեան յանձնըւած էր, չերեւար շոգենաւին մէջ:

— Յետո՛ր մասին անհոգ եղիք, պատասխանեց նաւապետը իմ խցիկս կը գտնուի և առ այժմ հոն պիտի մնայ ապահովութեան համար, իսկ գալով Էմին էֆէնտի՛ր՝ դուցէ՛ շոգենաւը քարափին մօտենալուն պէս դուքս ելած է բեռներն հոս թողլով ու յետոյ պիտի վերադառնայ զանոնք առնելու... ըստ իս իրար անցնելու պէտք չկայ, սպասեցէ՛ք առ այժմ. ի՞նչ կ'ուզէք որ այդ մարդն ըլլայ շոգենաւին մէջ:

— Կը վախնամ որ արկած մը պատահած է իրեն գիշեր ժամանակ...

— Եթէ ու ե զժբախտութիւն մը պատահած է իրեն, մենք չենք պատասխանատուն, ըսաւ նաւապետը չոր կերպով ամեն պարագայի մէջ նորէն կը կրկնեմ հարկ է սպասել, հաւանական է որ ըսածիս պէս դուրս ելած է առանց մէկէ մը նշմարուելու:

Սեղանապետը տեսնելով որ իր մեծաւորը կարեւորութիւն չտար եղածին՝ քիչ մը ամօթահար մեկնեցաւ քովէն:

Նաւապետը դուրս ելաւ և ժամ մը ետքը վերադարձաւ երկու անձերու ընկերակցութեամբ: Ասոնց մին, ինչպէս ընթերցողները անշուշտ գուշակեցին, հարիւրապետ Քեազիմ պէյն էր, իսկ միւսը՝ Սեյանիկի քովթէին ամենէն ետանդուն անդամներէն մէկը որուն առ այժմ Ք. էֆէնտի անունը պիտի տանք:

Երեքը մէկ ուղղուեցան այն խցիկը ուր թիկնապահը արգելափակ կը մնար: Մէհմետ փաշա իր ընկերները տեսնելով՝ յուզուած՝ անոնց փարեցաւ ու գորովալից զանոնք համբուրեց: Այն ատեն նաւապետը թիկնապահին դառնալով՝ ըսաւ.

— Սիրելի բարեկամ, ահաւասիկ ընկերներդ դոսայ ու բերի, իրենց բնաւ բան մը չեն պատմած... փախաբեցոյ որ դուք անձամբ ըսէք ամբողջ իրողութիւնը, ձեզ առանցին կը թողում...:

Փաշան սկսաւ իր պատմութիւնը երբոր առանձին մնաց իր երկու ընկերներուն հետ: Պատմեց Պոլսոյ մէջ պատահածներ, իր դեպքանատուն ապաստանիլը, Սիսոն փոխադրուելը, փախուստը Էմին էֆէնտիի հետ հանդիպումը և վերջապէս գիշերուան եղեռնը, իր խղճահարութիւնն ու վերջապէս նաւապետին ըրած խոստովանութիւնը: Երբ խօսքը աւարտեց, Քեազիմ պէյ ոտքի ելաւ, եկաւ փաշային գլուխը ձեռքերուն մէջ առաւ և ճակատը համբուրեց:

— Սերելիս, ըսաւ, փառաւոր գործ մը կատարած ես, որուն համար պէտք է հպարտ ու երջանիկ ըլլաս, ո՛չ թէ ոճիր մը չէ եղածը, այլ արդար պատուհաս մը, դուն՝ անգի-

տակցարար՝ սրուած վճիռ մը գործադրած էս, որովհետեւ այդ էմին սֆէնտի կոչուած ցած արարածը արդէն մահուան դատապարտուած է մեր կողմէն և կթէ ոսքը համարձակէր Սելանիկ դնելու՝ պիտի դանդաղ այն պատիժը զոր քու ձեռքէդ ստացած է :

— Ի՜նչպէս, զինքը առաջուց կը ճանչնայի՞ք . . .

— Բնականաբար : Տակաւին քանի մը ամիս առաջ Սելանիկ էր և յաջողած էր ինքզինքը ազատական կեդծելով մեր ընկերներէն մէկ քանիին հետ մտերմանալ և ապա գանձաբ մատնել իր պատճառաւ հինգ սպայ ունինք այժմ Եմէն աքսորուած : Վերջերս իմացանք որ կրկին հոս պիտի գայ կղեր և մեր Պոլսոյ ընկերները զբաժ էին որ այս անգամ զինքը մէջտեղէն վերցնենք, ինչ որ անմիջապէս վճռեցինք . . .

— Կը տեսնա՞ս թէ մեր քօմիթէին վճիռը գործադրած էս պարզապէս, աւելցուց Ք. էֆէնտի, դուն գործին մէջ պատասխանատուութեան բաժին մը չունիս ու միայն մեր չնորհակալութեան և երախտադիտութեան արժանի էս :

Այս բացատրութիւնները զբեթէ հանդարտեցուցին թիկթիկնապահը որ սկսաւ զուարթօրէն տեսնուիլ իր ընկերներուն հետ և անոնցմէ տեղեկութիւններ հարցնել :

— Քօմիթէն որոշած է ա՛լ բացայայտ կերպով գործել, յայտարարեց հարիւրապետը, բա՛ւ է ա՛լ որչափ ալ ծածուկ մնացինք ու թոյլ տուինք որ Սպարիւլ Համիտ մեզ կամաց կամաց բնաջինջ ընէ : Հիմա մեր առաջին գործը պիտի ըլլայ նախ լրտեսներէն ազատել բանակը . . . արդէն մէկ քանիներ իրենց արժանի պատիժը ստացան, սակայն դեռ շատ մաքրագութեամբ ունինք կատարելիք :

— Իսկ Սայիհա հանրմ ո՞ւր է այս միջոցիս, հարցուց թիկնապահը :

— Հոս Սելանիկ կը գտնուի, բայց վաղն իսկ պիտի մեկնի դէպի Իստիւլ, ուր իր ներկայութիւնը անհրաժեշտ է :

— Բայց ի՞նչպէս կարող է ըլլայ կոր այսպէս տեղափոխու-
թիւններ կատարելու, աւանց իր անձը վաճառելու:

— Սալիհա հանրմ' այնքան սքանչելի կերպով ծպտուած է որ ո՛չ միայն վախ չունի ոստիկանական հետապնդումներէ՝ այլ նոյն իսկ տեղական իշխանութեան և ոստիկանութեան օժանդակութիւնը կը վայելէ, պատասխանեց Քեազիմ պէյ խնդարով:

— Ըշմարիտը արտակարգ կարողութիւններու տէր կին մըն է Սալիհա հանրմ', ըսաւ փաշան, այսուհանդերձ շատ տարօրինակ կը դանեմ ձեր ըսածը:

— Շուտով պիտի համոզուիք որ չափազանցութիւն չկայ ըսածիս մէջ և մենք քեզ անվտանգ շողենաւէն դուրս հանելու համար յոյսերնիս անոր վրայ դրած ենք...

Նոյն միջոցին խցիկին դուռը զարնուեցաւ և Սիսոնի հրամանատարը երևցաւ:

— Կաւ ուրեմն լսեցի՞ք ամէն բան և ի՞նչ որոշում տուիք յանցաւորին մասին, ըսաւ խօսքը հարիւրապետին և իր ընկերոջ ուղղելով:

— Պիտի խնդրենք որ ոճրագործը մեզի յանձնուի՝ որպէսզի իրեն արժանի պատիժը տանք, պատասխանեց Քեազիմ պէյ:

— Այդ կարգադրութիւնը դործիս կուգայ, գոչեց նաւապետը, ևս Պիղատոսին պէս ձեռքերս կը լուամ և սլ չեմ գրազիր այս խնդրով, միայն թէ ի՞նչպէս մեր բարեկամը դուրս պիտի հանէք շողենաւէն:

— Այդ մասին դուք բնաւ մտասանջ մի ըլլաք, մենք միջոցներ ունինք:

— Ուրեմն շուտով գործադրեցէք ձեր միջոցները, որովհետեւ եթէ տակաւին երկար տառն շողենաւին մէջ պահենք փաշան կրնայ կասկածնկրու տեղի ապ:

— Ժամ մը ևս չհորհեցի՞ք մեզի, ըսաւ Ք. էֆէնտի, և ամէն բան կը կարգադրենք:

Նաւապետը հաւանեցաւ, կրկին յանձնարարելով որ արագորէն գործեն :

— Ահաւասիկ քեզ չողենաւէն անլաւանգ կերպով դուրս հանելու համար իմ խորհած միջոցս, ըսաւ հարիւրապետը թիկնապահին : Այժմ անմիջապէս իմաց պիտի տանք Սալիհա հանրմին քու ներկայութիւնդ և պիտի խնդրենք որ ինք զայս ու քեզ ասնէ չողենաւէն ու հեարց ցամաք հանէ :

— Ինչպէ՞ս կարելի է այդ բանը, գոչեց փաշան :

— Խնդիրը շատ պարզ է . Սահիհա հանրմ հոս, կառավարութեան հանդէպ, ճանչուած է իբրև Ամերիկացի միսիոնարուհի մը, Միսըս Պլաքթիօն անուն, իր անցագիրը ևն . ամեն ինչ կանոնաւոր է, նոյնիակ յանձնարարուած է մեր Լոնտոնի զեռպանին կողմէ . . . : Արդ, դուն ալ ամօրուած դէմքովդ կը նմանիս Անդլիացի կամ Ամերիկացիի մը, այնպէս որ Սալիհա հանրմ կրնայ քեզ իբրև իր հայրենակիցներէն մին ներկայացնել քարափի պաշտօնեաններուն և առանց կասկածի տեղի տալու քաղաք մայնել, անկէ ետքը ամէն բան կը դիւրանայ :

Լաւ ուրեմն շուտով գրկեց՝ք մեր ընկերուհին, պատասխանեց փաշան, սրովհետև պէտք չէ որ չարաչար գործածենք նաւապետին ասպնջականութիւնը :

Հարիւրապետն ու Ք. Էֆէնտի իսկոյն մեկնեցան :

Հազիւ կէս ժամ անցած էր երբ նաւապետի խուցին դուռը դարնու եցաւ .

— Մտէ՛ք, ըսաւ թիկնապահը :

Դուռը բացուեցաւ և կին մը երեցաւ :

Քառասունընթիւնգ տարեկանի մօտ նիհար, երկայնահասակ ու տժգոյն կին մըն էր, աւերեալ ու տառապած դէմքով մը : Թէև զեղեցկութեան հետք մը չէր մնացած իր վրայ՝ սակայն գիմագիծերը ցոյց կուտային որ երկատասարգութեանը հրապուրիչ եղած էր : Անցեալէն միայն իր աչքերը մնացած էին կենդանի և գեղեցիկ ու մանաւանդ ծայրայեղօրէն ուշիւմ ու սպա-

ւորիչ: Հակառակ իր քայքայուած արտաքինին՝ այս կինը այնպիսի թաքուն հմայք մը ունէր իր մէջը որ առաջին տեսքին իսկ խորին համակրութիւն և սրտհառանք կ'ազդէրն իսկ երբ խօսիլ սկսէր այդ համակրութիւնն ու սրտհառանքը կ'ազդէր, անգիմադրելի հրապոյրի մը կը փոխուէր և կարծես իր հոգեկան գեղեցկութիւն կը ցոլանար գէմքին վրայ:

Այս կինը Սալիհա հանրմն էր, այն որուն ամուսինը և երկու զաւակները զոհ գացած էին Ապա—իւլ—Համիտի վայրագութեան և որ, իր վշտին սաստկութեանը մէջ, ուխտած էր իր սիրելիներուն վրէժխնդիրը ըլլալ, թօթափելով իր վրայէն կնոջական տկարութիւնը և նստուելով յեղափոխութեան գիրկը:

Այդ օրէն Սալիհա հանրմի կեանքը անճստութեան, չարչարանքի ու յանդուգն արկածային դրութեան կեանք մը եղած էր: Անգամ մը թէև ինկած էր Ապա—իւլ—Համիտի ճիրաններուն մէջ և մասնուած անյուր տանջանքներու, նոյն իսկ Ելլարզի պալատին մէջ, ու յետոյ Եէմէն աքսորուելու և հո՛ն մեռցուելու համար ճամբայ կ'ած, սակայն յաջողած էր Սուէզը ջրանցքին մէջ, իր բնկերներով միասին, փախչիլ և վերսկսիլ յեղափոխականի կեանքը: Երէք տարիէ ի վեր արտասահման մնալէ ետքը, եկած էր Սելանիկ իր փրօփականը առաջ տանելու համար բո՛ւն իսկ բանակին մէջ, որուն վրայ կեդրոնացած էր ամբողջ կրիտասարդ Թուրքիոյ յոյսը: Երէք ամիսէ ի վեր կը գտնուէր Սելանիկ, ուրկէ պիտի մեկնէր Իւսկիւպ, իր գործը շարունակելու համար:

— Սալիհա հանր՛մ, մրմնջեց թիկնապահը զայն տեսնելուն պէս, Սալիհա հանր՛մ...

Ուրչ բառ մը չգտաւ արտասանելու և խորին յուզումով կնոջ երկու ձեռքը բռնեց, չրթունքին մօտեցուց և երկար համբոյր մը դրոշմեց անոնց վրայ:

— Լուէ՛, Միսա Պլաքթօն է անունս, ըսաւ Սալիհա, այդպէս անուանէ զիս... սրաազեղութեանց ատեն չէ, նախ՝

դուրս ելլենք շոգենաւէն : Հանդարտէ՛ և պաղարխնուախնդ մի՛ կորսնցներ . . .

Եւ դուրս ելաւ խցիկէն , մինչ թիկնապահը կը փութար իրեն հետեւելու :

Վարը , քարափին վրայ , շոգենաւի սանդուխին ոտքը , երեք ոստիկաններ կեցած էին : Երբոր տեսան սեւազգեստ կինը , յարգանքով բարեւեցին : Սալիհա հանրմ համարձակ առնոց մօտեցաւ և թիկնապահը ցոյց տալով որ իր քով կեցած էր օտարահնչիւն թուրքերէնով մը ըսաւ :

— Էֆէնտին իմ ծանօթ մէկ հայրենակիցս է , Մըսթըր Փէթէրս , իմացայ որ շոգենաւին մէջ կը գտնուի և եկայ զինքը տեսնելու , շոգենաւին մեկնելուն բաւական ժամանամ ըլլալով , ուզեցի քաղաքը պատցնել :

— Շատ լաւ տիկին , աստասխանեց ոստիկաններէն մին որ պետ մը ըլլալ կը թուէր , յարգանքով բարեւելով :

— Անցադիրը չենք կրնար տեսնել , հարցուց ուրիշ ոստիկան մը :

— Ի՞նչ հարկ անցազիրը տեսնելու , քանի որ տիկնոջ բարեկամն է ու քանի մը ժամ մնալէ ետքը շոգենաւ պիտի վերադարնայ , ըսաւ խստութեամբ միւսը , տիկին Պլաքթոնի ընկերակցութիւնը անցագրի տեղ կը բռնէ . . . կ'աղաչեմ , տիկին , ազատօմէն գացէ՛ք պտտոցուցէ՛ք ձեր հայրենակիցը :

Սալիհա հանրմ և թիկնապահը հեռացան : Քիչ մը անդին հանդիպեցան ոստիկանապետի մը որ ուշադիր կը դիտեր զիրենք , մանաւանդ թիկնապահը :

— Ինչո՞ւ այս մարդը աչքերը իմ վրաս յառած կը դիտէ , ըսաւ կամաց մը Մէհմէտ փաշա իր ընկերուհիին :

— Հոգ մի՛ ընիր , պատասխանրց տիկինը , կ'երևայ որ օտար դէմք մը ըլլալուդ համար է . . . այդ ոստիկանապետը իմ բարեկամս է :

Եւ ուղղակի դիմեց դէպի անոր , իր հետ տանելով նաև թիկնապահը :

Ոստիկանապետը տիկնոջ իրեն մօտենալը տեսնելով՝ ինքն ալ քանի մը քայլ առաջ եկաւ .

— Բարեկամս հայրենակից մընէ որ այս առաւօտ ֆրանսական շոգենաւով հասաւ . . . կ'ուզեմ զինքը պատցնել , քանի որ տակաւին շոգենաւը մինչև իրիկուն հոս պիտի մնայ :

— Շատ լաւ կ'ընէք , պատասխանեց ոստիկանապետը յարգանքով բարեկելով երկու անձերը , միայն թէ դժբախտաբար մեր քաղաքը , Եւրոպացիի մը համար , տեսնուելիք արժանի բան մը չունի :

— Մեղի համար միշտ նոր ուհետաքրքրական բաներ կրնանք գտնել տեսնելու , պատասխանեց Սալինա հանրմ , յետոյ հարցուց :

— Ի՞նչպէս է ձեր փոքրիկ աղջիկը իմ առեւծ դեղերուս վրայ :

— Բոլորովին աղէկցաւ , շատ շնորհակալ ու երախտապարտ ենք ձեր աղնուութեան , կինս յատկապէս ձեր ձեռքերը կը համբուրէ , պատասխանեց ոստիկանապետը :

Սալինա հանրմ գլխու շարժումով մը բարեկելով իր խօսակիցը , ճամբան շարունակեց թիկնապահին հետ :

— Ա՛յ հիմա ազատեցանք , ըսաւ Սալինա հանրմ , կառք մը նստինք և շիտակ իմ բնակած պանդոկա երթանք ուր ազատօրէն կրնանք խօսակցիլ :

Թիկնապահն հիացած դէմքով մը ըսաւ երբ որ կառք մտնելով ճամբայ ելան :

— Կը տեսնամ որ ամբողջ ոստիկանութիւնը զրպանդ դրած ես , քեզ չձանչցողը պիտի կարծէ որ զաղտնի ոստիկանութեան մէջ պաշտօն ունիս :

— Սիրելիս , պատասխանեց Սալինա հանրմ , Թուրքիոյ մէջ առ այժմ , շնորհիւ մեր աննման Վեհափառ կայսեր , մեծագոյն իշխանութիւնն ու լրտեսութիւնն է և առանց անոնց օժանդակութեան և թոյլատուութեան կարելի չէ նոյնիսկ չնչել .

ատոր համար, հոս հասնելէս ի վեր, իմ միակ ջանքս եղած է անոնց համակրանքն ու վստահութիւնը շահիլ: Ամերիկացի միօրինարուհի մը հանդամանքս զիւրաւ յաջողցուց այդ բանը, մանաւանդ որ դրամն ալ անհաշիւ կը վստանամ: Զիս մեծահարուստ բարերարուհի մը կը համարին այս մարդիկը որ կեանքս նուիրած եմ միայն աղքատներն ու հիւանդները խնամելու: Իրա՛ւ ալ, առ երեւոյթս, այդ է միայն ըրածս երէք ամիսէ ի վեր. ոստիկանատուն, դօրանոց, մզկիթ, հիւանդանոց ամէն անգ բաց են իմ առջեւ և ամենքը ուրախութեամբ, յարգանքով ու գրկաբաց կ'ընդունին զիս...

— Բայց թրքերէն խօսիլդ կասկած չա՞րթնցներ, քանի որ անկարելի է երէք ամսուան մէջ այդքան թրքերէն խօսիլ, իրա՛ւ է որ քիչ մը հնչումդ կը կեղծես, բայց ատիկա բաւական չէ, մանաւանդ թէ նշմարեցի որ խնամեալ լեզու մը կը գործածես:

— Բայց ո՞վ ըսաւ թէ միայն երէք ամսէ ի վեր թուրքիա կը գանուիմ... անոնց այնպէս հասկցուցած եմ որ, իբրև միօրինարուհի, վեց եօթը տարի անցուցած եմ Սարբերդի ու Մարդուանի մէջ և թէ յատուկ դաս առած եմ թուրքերէնի... և ճիշտ իմ այս յատկութիւնս է որ զիբրենք շխտուցած է: Այս խեղճերը առաջին անգամն է որ օտարուհի մը կը տեսնեն այն քա՛ն լաւ թրքերէն խօսող ու մանաւանդ զրկ կարգալ գիտցող...

Արդարև Սալիհա հանրմ, երէք ամսուան միջոցին, մեծ ժողովրդականութիւն մը շահած էր Սեկանիկի մէջ, մանաւանդ զինուորական և ոստիկանական շջանակներու մէջ, ուր իր անունը ակնածանքով կ'արտասանէին: Միտս Պլաքթոն այնքա՛ն պատկառելի դառնած էր իշխանութեանց աչքին որ ազատ համարձակ մուտք ունէր պաշտօնատունները:

Անճնուէր յեղափոխուհին իր ստացած այս բացարիկ գիրքէն օգուտ կը քաղէր իր փրօփականտը յառաջ տանելու համար:

ինք իրր Սմբերիկունի, կրնար ամենէն յանդուզն զազա-
փ սրները յայանել. առանց իր վրայ կասկած յարուցանելու,
և որովհետև խօսելու և իր միտքը պայծառօրէն ու միանշա-
մայն հրապուրիչ կերպով արտայայտելու մեծ կարողութիւն
մը ունէր, իր խօսքերը միշտ խորունկ տպաւորութիւն կը
գործէին:

Երբ պանդուկ հասան, Սալիհա հանրմ իր ընկերը առաջ-
նորդեց իր յարկաբաժինը որ ննջատեսնեակէ մը և ընդունելու-
թեան սրահէ մը կը բազկանար: Հարիւրապետը և Ք. էֆէն-
տի արդէն հոն իրենց կ'սպասէին:

— Կը յուսամ որ առանց կասկած արթնցնելու յաջողե-
ցաք շոգենաւէն դուրս ելլել, բաւ Քեազիմ պէյ:

Ինչպէս կարելի է որ Տիկին Պլաքթմնի մէկ բարեկա-
մը կասկած հրաւիրէ իր վրայ պատասխանեց Սալիհա հանրմ
խնդայով:

Չորս բարեկամները բոլորուեցան փոքրիկ սեզանի մը
չուրջը և սկսան խօսակցիլ: Շատ բաներ ունէին իրարու հազար-
գելիք: Նախ՝ Մէհմէտ փաշա պատմեց ինչ որ կ'անցնէր կը
դառնար վերջերս Երբտըզի պալատին մէջ: Ապա—Իւլ-Համիտ
ատեն մը ապահովութեան մէջ ապրելէ ու այնպէս համոզուելէ
ետքը թէ թուրք և հայ յեղափոխութիւնը կրցած էր բոլորո-
վին ջախջախել մայրաքաղաքին մէջ, այժմ յանկարծ՝ սարսա-
փելի տագնապներու մասնուած էր կրկին: Հագգը պէյի ձեր-
բակարումը և անոր յաջորդող դէպքերն իր հանդիսաւր վրդո-
ված էին: Միւս կողմէ, Սեւանիկէն ու Մանասպրէն ստացած
անզեւագիրները իր լրտեսներուն կողմէ, որոնց մէջ, ափսոս,
բարձրաստիճան զինուորականներ ալ գտնուէին մէկ քանի
հաս, մեծ մտատանջութիւն կը պատճառէին բռնաւորին,
մանաւանդ թէ կը վախնար որ Բուսնիլի բանակներուն մէջ
սկսած շարժումը Պոլսոյ զինուորականներուն ալ կը փոխան-
ցուի: Ասոր համար, Ապա—Իւլ-Համիտ որոշած էր ամիջական
կերպով արմատապէս հարաւորձել Բուսնիլի բանակը:

— Այդ մաքրագործումը կը հասկնանք թէ ի՞նչ կերպով պիտի կատարուի, շարունակեց թիկնապահը, արդէն Երևոյի մէջ, հասած տեղեկագիրներուն համեմատ, կը պատրաստուին այն սպաներու ցուցակները որոնք կատարածելի կը նկատուին և որոնց մասին անողոք պատիժներ որոշուած են: Մինչև հիմա Ապա—իւլ—Համիտ, մուլթին մէջ, լուիկ մնջիկ, կ'ոչնչացնէր աղատական ձգտումներ սենեցող երիտասարդ սպաները, բայց այժմ որոշած է խմբովին ու հրապարակաւ զանոնք պատժել որպէսզի ամենքը իմանան և սարսափին: Գիտցած եղէք որ հարիւրաւոր սպաներ գուցէ մահուան դատապարտուին...

— Բայց հանրային կարծիքը թոյլ պիտի տա՞յ որ այսպիսի ահուկելի եղևոն մը գործուի, գոչեց հարիւրապետը:

— Ո՞ր հանրային կարծիքը, Թուրքիո՞յ կամ Կ. Պոլսո՞յ հանրային կարծիքը, պատասխանեց թիկնապահը խնդալով, միթէ այդպիսի բան գոյութիւն ունի՞, միթէ մտածելու, դատելու և վճռելու կարողութիւն մնացած է մեր ժողովրդին քով...

— Ենթադրենք որ մեր հանրային կարծիքը լուէ, սակայն եւրոպական քաղաքակիրթ պետութիւնները միթէ կրնան ներել այսպիսի արարք մը, ըսաւ հարիւրապետը:

— Ո՞չ թէ միայն պիտի ներէն, այլ ձեռքի տակէ պիտի քաջալերէն ու շնորհաւորեն Ապա—իւլ—Համիտը, շարունակեց փաշան դառնութեամբ, միթէ ազատական ու զտրդացեալ սպաներու բնաջնջումը թուրք բանակին մահը չպիտի՝ ըլլայ, այսինքն այն միակ զօրութեան՝ որ տակաւին պատկատանք կ'ազդէ եւրոպական տէրութիւններուն և կ'սանձէ անոնց աշխարհակալութեան ցանկութիւնները: Ասկէ դատ Ապա—իւլ—Համիտ ու իր արբանեակները դժոխային խաբեքայութիւն մը պատրաստած են իրենց գործելիք անլուր ոճիրը արդարայնալու համար:

— Ի՞նչ խաբեքայութիւն, հարցուց Ք. Էֆէնտի որ այս յայտնութիւններէն սաստիկ յուզուած էր:

— Պարզապէս կասկածելի սպանները պիտի ամբաստանուին իբրև պուլկար կտուաւարութեան ծախուած դաւաճաններ և մատնիչներ... հաւատացէ՛ք ինձի, ամէն բան կարգադրուած է: Սպաները մէկիկ մէկիկ ձերբակալուելով՝ Պոլիս պիտի տարուին յետոյ ամենքը միասին, պատերազմական արտասովոր ատենանի մը առջև դռնփակ ու կտրուկ դատաստանով մը պիտի դատուին և մահուան վճիռ ստանալէ ետքը հրացանի պիտի բռնուին: Այս ամէն գործողութիւնները կատարուելէ ետքը, պաշտօնական յայտարարութեամբ մը պիտի ծանուցուի ժողովուրդին թէ այսինչ ու այնինչ սպանները, հայրենիքի դէմ դաւաճանած ըլլալով՝ պատերազմական արտասովոր ատենանի մը առջև դատուած ու մահուան դատապարտուած և հրացանի բռնուած են: Յետոյ թերթերը պիտի սկրսին փառք տալ Աստուծոյ և վեհափառ Սուլթանին որ դաւաճանութիւնը ժամանակին երևան ելած է և, չհորհիւ Ապտ—իւլ—Համիտի, հայրենիքը փրկուած է սարսափելի վտանգէ մը: Ասիկա իմ մտքէս հնարած առասպել մը չէ որ կը պատմեմ՝ այլ բացարձակ իրականութիւն է:

Թիկնապահը լռեց: Միւսներն ալ խորին յուզումի մը մասնուած՝ նոյնպէս լուռ կը մնային: Ի վերջոյ Սալիհա հանրմ խօսք առաւ.

— Ես, ըսաւ, բացարձակապէս կը հաւատամ մեր ընկերով ամբողջ ըսածներուն: Ապտ—իւլ—Համիտի պէս անխիղճ բռնաւոր մը կրնայ այդ տեսակ դժոխային ծրագիրներ յղանալ և զանոնք գործադրել և ասոր համար իր ձեռքին տակ մարդչի պակսիր: Հայրենիքին ու միւսնոյն ատեն մեր անձերուն փրկութեանը համար պէտք է անմիջապէս զինու զօրութեամբ ղիմադրութիւնը կազմակերպենք և եթէ ընկճուինք՝ զոնէ քաջարար ինկած կ'ըլլանք...

— Այո՛, գոչեց թիկնապահը, այսօրուքնէ իսկ պէտք է գործել և ես ճիշտ ասոր համար, Պոլսէն խոյս տալէս ետքը, ուղեցի ձեր քովը դալ, ամէն վտանգ աչք առնելով:

Ք. էֆէնտի այն ատեն բացատրեց Սելանիկի մէջ տիրող կացութիւնը: Յեղափոխական շարժումը, քանի մը ամսուան միջոցին, իրաւ է որ մեծապէս տարածուած էր սպաներուն մէջ, բայց հասարակ զինուորը տակաւին անմասն մնացած էր անկէ, ինչպէս նաև ստորադաս սպաները, այսինքն՝ տանապետներն ու չափուհները: Իրենց տրամադրութիւնները յայտնի չէին. վճուական վայրկեանին գուցէ մտնէին յեղափոխական դրօշին տակ. բայց կրնար ըլլալ որ անոր հակառակ դառնային, մանաւանդ որ վերջին ատեններս, յորմէհետէ Ապտ—իւլ — Համիտի կասկածոտ ակնարկը Սելանիկի վրայ յառած էր, շատ մը գաղտնի գործակախներ եկած էին Պոլսէն, որոնք զանազան խոստումներով կը ջանային զինուորներու հաւատարմութիւնը հաստատ պահել Փատիշահին հանդէպ:

— Եթէ կարենայինք մեր փրօխականտը շարունակել բանակին մէջ, ըսաւ Ք. էֆէնտի, այն ազատութեամբ որով կ'ընէինք ասկէ մէկ քանի ամիս առաջ, այժմ գուցէ կրնայինք վստահ ըլլալ մեր զինուորներուն վրայ. բայց վերջերս խոստութիւնները ու սեղմումները այնքան աւելցան որ ստիպուեցանք կանգ առնել մեր ճամբուն մէջ, գործը բոլորովին չը վտանգելու համար:

— Բայց զիտցէ՛ք որ վաղը կրնաք զո՞նք ելլթալ ձեր անգործութեանը և այն ատեն մինչև հիմա ձեր ձեռք բերած արդիւնքն ալ կ'ոչնչանայ, պատասխանեց թիկնապահը:

— Ես կը կարծեմ որ, ըսաւ Սալիհա հանըմ, զինուորական ապստամբութիւնը պէտք է փորձել նախ ներքին դաւաններու մէջ, ուր տակաւին Համիտի ուշադրութիւնը չէ կեղբոնացած: Անգամ մը որ մէկ քանի գունդեր զէնքերնին դարձնեն ընդհանրութեան դէմ, վստահ եմ որ օրինակը տարափոխիկ պիտի ըլլայ ու պիտի տեսնէք որ մեր բոլոր զինուորները պիտի փութան միանալ իրենց ապստամբ ընկերներուն, հակառակ Համիտի լրտեսներուն և գաղտնի գործակախներուն շուսյած խոստումներուն: Ես վաղը պիտի երթամ

Իւսկիպ, ինչպէս որ արդէն որոշուած է: Հոն համեմուտ՝ մեր առաջին գործը կ'ըլլայ այդ ապստամբական շարժումը պատրաստել և յառաջ բերել...

— Եւ ես պիտի ընկերանամ ձեզի, գոչեց թիկնապահը խանդավառուած, արդէն իմ ծրագիրս ալ այդ էր Պոլսէն մեկնած միջոցիս:

Մոտակցութիւնը այսպէս երկար ատեն շարունակուեցաւ չորս ընկերներուն միջև: Վերջապէս սպասաւորը գալով իմացոց թէ ճաշի սեղանը պատրաստ էր:

Կերակուրէն յետոյ կրկին իրենց սրահը քաշուեցան խորհրդակցութիւնը կատարելու համար: Ուրիշ երկու սպաներ, Օսման և Ալի պէյերը, եկած էին իրենց միանալու: Այս երկու նորեկներն ալ, հարկ չկայ ըսելու, քօմիթէի գործօն անգամներէն էին: Ք. էֆէնտի մէկ քանի խօսքով պատմեց թիկնապահին հաղորդած տեղեկութիւնները և ամէնքն ալ այն եզրակացութեան հասան որ վայրկեան մը պէտք չէր այլևս կորսնցնել և թէ ջանալու էր իսկոյն ներքին գաւառներէն ապստամբութեան նշանը ստալու:

Թիկնապահ Մէհմէտ փաշա խոստացաւ իր բոլոր ազգեցութիւնը գործածել, Սալիհա հանըմի հետ, շարժումը յառաջ բերելու համար:

Միայն թէ խնդիր մը կը մնար: Ինչպէ՞ս Մէհմէտ փաշա անփոսանգ կերպով պիտի կարենար ընկերանալ Սալիհա հանըմի: Իւսկիւպի մէջ Սալիհա հանըմ այնքան ծանօթ չէր որքան Սեկանիկ ու չէր կարող իր ազգեցութեամբը զայն փրկել ոստիկանական հետապնդումներէ: Եւ եթէ Մէհմէտ փաշա ճանչցուէր ու ձերբակալուէր, իրեն հետ Սալիհա հանըմն ալ պիտի վաճառուէր:

— Պէտք է զատ զատ ճամբորդէք, վճուեց Ք. էֆէնտի:

Միւս բոլոր ընկերներն ալ համամիտ գտնուեցան իրեն:

— Թո՛ղ այնպէս ըլլայ, ըսաւ թիկնապահը, ուրեմն Իւսկիւպի մէջ կը միանանք իրարու:

— Եւ եւ կ'առաջարկեմ որ Մէհմէտ փաշա այսօր իսկ մեկնի Սելանիկէն, աւելցուց Ք. էֆէնտի:

— Միայն թէ միջոց մը պէտք է դանկի անվտանգ ճամբորդել տալու համար, դիտել տուաւ հարիւրապետը:

— Միջոցը շատ պարզ ու գիւրբն է, Առնավուտ գիւղացիի տարազ մը կը գանձենք կը հագցնենք... այդ կերպով ու շաղրութիւն չի գրաւէր բնաւ:

— Գաղտնիքը շատ լաւ է եւ եւ կ'առաջարկեմ որ անմիջապէս գործադրենք, ըսաւ Սալիհա հանրմ, նախզդացում մը ինձ կ'ըսէ որ փաշան վտանգի տակ է Սելանիկի մէջ...

— Հիմա միասին մեր կեղբոնատեղին կ'երթանք, հոն լաթերը կը փոխէ ու ճամբայ կ'ելլէ, եւ կրնամ իրեն թէղքերէ մը հայթայթել իսկոյն, ըսաւ Քեաղիմ պէյ:

Ամենքը միասին մեկնեցան պանդոկէն առանձին թողլով Սալիհա հանրմը:

Գ Լ Ո Ի Կ Ժ.

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ն Դ Ա Կ Ը

Սալիհա հանրմ մինչև իրիկուն պանդոկը մնաց, սպասելով թիկնապահին նկատմամբ ապահովիչ լուրի մը:

Ուշ ատեն հարիւրապետը եկաւ զինքը գտաւ:

— Ամէն բան յաջողութեամբ գլուխ հանեցինք, ըսաւ ներս մտնելով:

— Մեկնեցա՞ւ, գոչեց Սալիհա հանրմ ուրախութեամբ:

— Այո՛, այժմ ճամբան է, շարունակեց զինուորականը:

ապահովութեան համար Սեղանիկէն կառախումն չհասկցաւ, այլ մինչև առաջին կայարանը դեղջկական կառքով մը գնաց. այս զգուշութիւնը ձեռք առինք որովհետև բաւական իրարանցում սկսած է տիրել սասիկանութեան մէջ, էմին էֆէն-ափի անհետացման առթիւ:

— Ի՞նչպէս, այդ իրողութիւնը երեւան կը՞ծ է:

— Բնականաբար: Նաւապետը չէր կրնար ծածկել իր շոգենաւուն ուղեւորներէն մէկին անհետացումը: Իրողութիւնը իր հիւպատոսարանին ձեռամբ տեղեկագրած է. կառավարութեան և առաջարկած է որ քննութեան մը ձեռնարկուի, ստուգելու համար թէ էմին պէյ ռճիրի՞ մը թէ արկածի մը զո՞հ գացած է:

— Ո՞րքան բաւ ըրեր ենք զինքը անմիջապէս հեռացնելով, գոչեց տիկիներ:

Հարիւրապետը այս տեղեկութիւնները հաղորդելէ ետքը մեկնեցաւ ըսելով.

— Այս գիշեր ձեզի կ'սպասենք սլարոն Լէվիի տունը ձեր մէկնումէն առաջ պէտք է որ մէկ քանի կարեւոր խնդիրներու մասին խորորդակցինք:

Ընթրիքէն ետքը, Սալիհա հանըմ պանդոկէն դուրս ելաւ ժամադրատալայրը երթալու համար: Կառք մը կ'սպասէր իրեն: Պանդոկին սպասաւորը կառքին դռնակը բացաւ: Նոյն միջոցին երկու անձանօթներ կանգ առին կառքին քով և իրենցմէ մէկը ուշադիր ակնարկը ուղղեց Սալիհա հանըմի որ աչխոյժ սատումով մը կառք մտաւ: Սպասաւորը դռնակը դոցեց և կառքը ձամբայ ելաւ:

— Ահաւասիկ այս է ամերիկուհի տիկին Պլաքթօնո, ըսաւ մարդերէն մին:

— Այո՛, ճանչցայ, նոյնինքն է, գլուխս զբաւի կը դընեմ, պատասխանեց միւսը որ ուշադիր նայած էր կնոջ:

— Ի՞նչ կ'ըսես, չըլլայ որ սխալիս... գիտնօ թէ յետոյ ի՞նչ մեծ պատասխանատուութիւն կը բերենք մեր վրայ:

— Կ'երզնում որ նոյնինքն Սալիհա հանրմն է քու տիկին Պլաքթօնդ, ըսաւ անձանօթը, աչքերը կը մասննն կոր զինքը, այն աչքերը զորս առաջին անգամ Չամլըճայի թաքստոցին մէջ զինքը ձերբակալած ատեննիս տեսայ և որոնք գրոջմուսած են մաքիս մէջ... Հէ', անկարելի է որ սխալիմ...

Երկու անձանօթները հեռացան պաղօկին քովէն ու անհրեւոյթ եղան քովի փողոցին մէջ, առանց մէկուն ուշադրութիւնը գրաւելու:

Հարիւրապետ Քեազիմ պէյի տուած տեղեկութիւնները Սալիհա հանրմին անկատար էին: Խնդիրը շատ աւելի ծանրակշիռ էր քան ինչ որ ինք կ'ենթադրէր ու միմիայն Սիսոնի նաւապետին յայտարարութեան մէջ չէր ամփոփուէր:

Դեպքանատան պահականաւին սպաները որոնք հիւերնկայած էին թիկնապահը և զայն Սիսոն փոխադրած, թէև ուրոշած էին խիստ դազանի պահել իրողութիւնը, սակայն չտէնաւին մէջ գանուող երկրորդական անձ մը որ ամէն բան կը ուսահած էր՝ զայն ծածկաբար յայտնած էր բարեկամի մը, որ փութացած էր նոյնքան ծածկաբար և խորհրդաւոր կերպով իրողութիւնը հազորդելու ուրիշ բարեկամի մը: Թիկնապահին անակնկալ փախուստը այնքան կը զբաղեցնէր թէ՛ պալատականները և թէ՛ դեպքանական շրջանակները որ լուրը, ականձէ ականջ փսփսալով՝ վերջապէս հասած էր Երլարդ: Բայց Սիսոն արդէն երկու օրէ ի վեր մեկնած էր Պոլսէն: Այսուհանդերձ խիոյն ծածկազիր հեռագիր մը ուղղուեցաւ Երլարարդէն Սելանիկի վալիին իրողութիւնը ծանուցանելու համար: Հեռագիրը կը յայտնէր թէ թիկնապահ Մէհմէտ վաչա Սուլթանին դէմ գաւաճանելէ ետքը, խոյս տուած էր Պոլսէն և ապաստանած Սիսոնի մէջ, թէ նոյն շոգենաւը կը գանուէր էմին էֆէնափ, որ պաշտօն ունէր հետապնդելու փախստականներ: Հեռագիրը հրահանգ կուտար ձերբակալելու Մէհմէտ վաչան եթէ ցամաք ելած է, իսկ եթէ շոգենաւին մէջ կը գրանուի, միջոց մը գանել զինքը ցամաք հանելու, նոյնիսկ բռնութեան զիմելով:

Վալին երբ այս հեռագիրը ստացաւ, արդէն Սիսոն չորս ժամէ ի վեր քարափը կը գտնուէր: Իսկոյն ոստիկաններ և լրտեսներ զրկուեցան Երլարդէն եկած հրամանը գործադրելու համար, սակայն շատ ուշ էր արդէն: Միւստոյն ատեն Էմին էֆէնտի անյայտացման լուրը հասաւ Վալին՝ հիւսպատոսին կողմէ: Սիսոն շողենաւէն ցամաք կլած ամբողջ ուղեւորները քննութեան ենթարկուեցան:

Ամենքն ալ քաղաքին մէջ ծանօթ անձեր էին ու իրենց կանոնաւոր թուղթերը ունէին: Միայն մէկ ուղեւոր մը ցամաք կլած էր առանց անցագիր կամ թէղքէրէ ցոյց տալու, բայց այն ալ Ամերիկացի մըն էր որ, քաղաքը պտտելէ ետքը կրկին Սիսոն պիտի վերադառնար ու ճամբան շարունակէր.

— Ինչո՞ւ անցագիր չպահանջեցիք այդ մարդէն, գոչեց Վալին, շողենաւին քով հսկողութիւն կատարող երկու ոստիկաններու:

— Բայց, կմկմաց մին, ինչպէ՞ս կրնայինք կասկած մը ունենալ իր մասին, երբ տիկին Պլաքթօն որ անոր կ'ընկերանար, յայտարարեց թէ բարեկամ հայրենակից մըն է Փէթէրս անունով . . .

Կուսակալը լսելով տիկին Պլաքթօնի անունը, չկրցաւ յանցաւոր նկատել ոստիկանները: Ինքն ալ կը ճանչնար և մեծապէս կը յարգէր այդ Ամերիկացի միսիօնարուհին որ յատկապէս յանձնարարուած էր իրեն Լոնտոնի օսմանեան դեսպանատունէն: Այսու հանդերձ խստիւ պատուիրեց որ շողենաւին քով հսկողութիւն կատարեն և երբոր տիկին Պլաքթօնի բարեկամը վերադառնայ Սիսոն, իր անցագիրը պահանջեն:

Կուսակալը փութաց իր քննութեանց արդիւնքը մանրամասնօրէն տեղեկագրել Երլարդ, յայտնելով նաև Էմին էֆէնտի անյայտացումը: Ապաիւ Համիտի բարկութիւնը չափ չունէր: Նոր հեռագիր մը հասաւ կուսակալին, որով հրաման կը տրուէր խիստ քննութիւն մը բանալու ցամաք ելող Ամերիկացիին մասին:

Միևնոյն ատեն, երկրոյեան կառախումբով Պորէն Սեւանիկ կը համէր պալատական լրտես մը, Շէրիֆ պէյ: Այս լրտեսը որ խկոյն կուսակալին քով եկաւ իր յանձնարարականը ներկայացնելու, տեղեկութիւն չունէր վերջին անցքերէն և ինք մասնաւորաբար զրկուած էր սպանելու վրայ լրտեսութիւն կատարելու համար: Կուսակալը հարկ համարեց առւերնէ ի վեր տեղի ունեցած զէպքերը պատմել և Երբորզէն եկած հեռագիրը ցոյց տալ ու իր աջակցութիւնը խնդրել: Շէրիֆ պէյ խոստացաւ ձեռքէն եկածը ընելու ու մեկնեցաւ կուսակալին քովէն, ինքնիրէն ըսելով.

— Կարծեմ ճիշտ ժամանակին հասայ, միայն թէ վայրկեան մը պէտք չէ կորսնցնել:

Իրիկունը կացութիւնը աւելի կնճռոտեցաւ: Էմին էֆէնտիի անհետացման մասին բացուած քննութիւնը ո և է արդիւնք չառւաւ: Միւս կողմէ՝ Սմերիկացին չէր վերադարձած Սիսոն...: Իր մտոին բացուած քննութիւնը հաստատեր էր թէ տիկին Պրաքթոնի հետ պանդոկ երթալ ճաշելէն ետքը, մեկներ էր հոնկէ ու ա՛յ չէր երևցեր ո՛չ մէկ տեղ:

Նոր լրտեսը կուսակալին քովէն մեկնելուն պէս գնաց գտաւ իր մէկ բարեկամը, որ վեց ամիսէ ի վեր Սիւանիկ կը գտնուէր, նոյնպէս լրտեսութեան պաշտօնով: Երկու բարեկամները համբուրուեցան: Շէրիֆ պէյի բարեկամը որ Բիւշտի ազա կը կոչուէր, յիսուն տարեկանի մօտ, ալեխառն պիտներով մարդ մըն էր, Մալիէի նախկին պաշտօնեայ, որ դրամական: զեղծումներ գործելով՝ վաճառուած էր պաշտօնէն և յետայ լրտեսութեան մէջ իր դիրքը չինած: Սիւանիկի մէջ, ուր շատ խոհեմութեամբ կը գործէր, տակաւին ո՛չ ոք կը կատկածէր իր վրայ:

— Ի՞նչ է կարծիքդ Սիսոնի ու զեւորին մասին, հարցուց Շէրիֆ իր բարեկամին, երբոր քարափին վրայ գտնուող գարեջրատան մը անկիւնը տեղաւորուեցան:

— Իմ գաղափարս այն է թէ սխալ հեռքի մը կտուէն

ինկած ենք և թէ թիկնապահ Մէհմէտ փաշան շոգենաւին մէջ
չէր :

Շէրիֆ քթին ասկէն խնդաց և ըստ .

— Կը տեսնեմ որ, հակառակ համբաւիդ, շատ միամիտ
ես. հոս հասնելէս ի վեր իմ լսածներէս զիտակով՝ կասարեալ
համոզում գոյացուցի թէ այդ Ամերիկացի ուղևորը որ առանց
իր անցազիրը ջոյց տալու ցամաք կ'ած է, նոյնինքն թիկնա-
պահն է . . . : Դուն տեսա՞ր զինքը :

— Այո՛, երբոր շոգենաւէն դուրս կ'աւ Տիկին Պլաքթանի
հետ, ես ալ քայտիին վրայ էի և լաւ մը կրցայ տեսնել . . .
դժբախտաբար Մէհմէտ փաշան չէի ճանչնար, սիպէսզի կա-
րենայի մտքովս բազդատութիւն մը ընել :

— Նկարագրէ՛ տեսնեմ մանրամասնօրէն այդ մարդը :

Բիւշտի իր բարեկամը դոճացուց մի առ մի պատասխա-
նելով անոր հարցումներուն :

— Բայց նոյնինքն թիկնապահն է այդ նկարագրած մար-
դըդ, գոչեց Շէրիֆ պէյ, ա՛յ բնաւ կասկած չունիմ, միայն
թէ պիտերը ամիլեր ու ակնոց զրեր է . . .

— Բայց եթէ թիկնապահն է, ի՞նչ յարաբերութիւն կըր-
նայ ունենալ Ամերիկուհի Տիկին Պլաքթանի հետ . . .

— Ահա՛ այդ խնդիրը պէտք է լուսարանել . . . յայտնի
կը տեսնուի որ այդ աիկինը յատկապէս շոգենաւ գացած է
Մէհմէտ փաշան դուրս հանելու համար : Կա՛մ այն է որ նա-
խապէս գիտէր անոր շոգենաւին մէջ գտնուելը, կամ այն է որ
Մէհմէտ փաշա շոգենաւէն լուր զրկած է այդ կնոջ . ամէն
պարագայի մէջ սա յայտնի է որ այդ կնոջ և թիկնապահին
միջև մտերիմ յարաբերութիւն մը կայ . . . պէտք է քննել թէ
ո՛վ է այդ անծանօթ կինը և թէ ի՛նչ գործ ունի հոս . . . :

— Շա՛տ բարեկիրտ, շատ ազնիւ կին մըն է, ասոր վըս-
տան կզիք և հիտնայի ալ թուրքերէն կը խօսի, նոյնիսկ ըսին
որ կը կարգայ կը գրէ կզեր՝ ասանօք Անասուլու գտնուեր է
տարիներով ու հոն սովրերէ . . .

— Ատոնք բոլորը չինձու առասպելներ կրնան ըլլալ...
քանի՞ տարեկան կայ այդ աիկին Պլաքթոնը .

— Քառասունընէնգ տարեկան կ'երեւայ :

— Ինչպէ՞ս է իր արտաքին կերպարանքը :

— Երեայնահասակ, նիհար, աժդոյն կին մըն է... Թէև
գեղեցիկ չէ, բայց վրան այնպիսի ազնուութիւն մը կայ որ
յարգանք կը ներշնչէ...

Շէրիֆի աչքերը չողացին և դողահար ձայնով մը հարցուց.

— Մազերը ի՞նչ գոյն են, սե՛ւ... .

— Այո՛, չափազանց սև, խափշիկ կնոջ մը մազերուն
պէս... .

— Իսկ աչքերը գեղեցիկ, տարօրինակ կերպով արտայայ-
տիչ... .

— Ճիշտ, ուրեմն կը ճանչնաս զինքը, այնպիսի աչքեր
մը ունի որ անգամ մը տեսողը ա՛լ չի կրնար մոռնալ... .

— Ուրեմն ինքն է, կասկած չկայ, հիմա ամէն բան լու-
սաբանուեցաւ... . միայն թէ հարկ է որ անգամ մը զինքը մո-
տէն տեսնեմ, որպէս զի բոլորովին ապահով ըլլամ :

— Բայց ո՞վ, որո՞ւ կ'ակնարկէք, ըսաւ Բիւշտի իր բա-
րեկամին յանկարծական յուզումէն շուարած :

— Սալիհան, այն յեղափոխական կինը զոր երէք տարի
առաջ Շէրլօք Հոլմսի շնորհիւ, իր ընկերներովը ձերբակալե-
ցինք Չամլըճայի բարձունքը... . այդ պատմութիւնը իմացա-
ցած ես անշուշտ :

— Այո՛, կը յիշեմ այդպիսի դէպք մը, պատասխանեց
միւսը, կը կարծես որ նոյն կի՞նն է աիկին Պլաքթոնը :

Շէրիֆ չպատասխանեց, սպասաւորը կանչեց և հաշիւը
մաքրելով՝ ոտքի ելաւ .

— Շո՛ւտ հետս եկո՛ւր, ըսաւ իր ընկերոջը, վայրկեան մը
պէտք չէ կորսնցընել... . զիս առաջնորդէ այն պանդոկը ուր
աիկին Պլաքթոն կը գանուի :

Մութը կոխած էր արդէն երբ երկու բարեկամները դա-

րեջրատունէն դուրս ելան և տասը վայրկեան հաքը հասան պանդոկին առջև :

Րիւշախ որ ծանօթ էր պանդոկի դռնապանին , մօտեցաւ անոր և հարցուց .

— Տիկին Պլաքթօնը հո՞ւ է ,

— Հոս է , բայց հիմա դուրս պիտի ելլէ , ահաւասիկ կառքը կ'սպասէ կոր , պատասխանեց դռնապանը :

Ո՞ւր պիտի երթայ արդեօք . . .

— Ձեմ գիտեր հաւանօրէն մնաս բարովի այցելութեան պիտի պտտի :

— Ինչպէ՞ս , կը մեկնի՞ կոր Սեւանիկէն . . .

— Այո՛ վաղը կը մեկնի կոր դէպի Իւսիլուպ . . . ահաւասիկ աիկինը կուգայ կոր , ըսաւ դռնապանը յարգական ձև մը տունելով :

Երկու լրտեսները մօտեցան կառքի դռնակին դոր սպասաւոր մը բռնած էր : Սալինա հանրմ անդաւորուեցաւ կառքին մէջ ու մեկնեցաւ : Արդէն պատմեցինք թէ լրտեսը կրցած էր կատարելապէս ճանչնալ զայն :

Շէրիֆ և Րիւշախ ուղղակի դիմեցին կառավարական խօնակար :

— Գործերնիս յաջող է , ըսաւ Շէրիֆ իր ընկերոջ , միայն թէ հարկ է խիստ խոհեմութեամբ շարժիլ ու որսերը մեր ձեռքէն չփախցնել . . .

— Ի՞նչ է դիտաւորութիւնդ , հարցուց միւսը :

— Նախ՝ երթալ ամեն բան կուսակալին պատմել և Սալինա հանրմի ձեռքակալելու հրամանը առնել : Գուն չըլլայ որ մէկու մը խօսք բանաս մեր ըրած յայանութեան մասին . . .

Երկու լրտեսները հասան պաշտօնատուն : Կուսակալը կը պատրաստուէր դուրս ելլելու , կրք Շէրիֆ պէյ զայն դիմաւորեց և խնդրեց որ տեսակցութիւն մը չնորհէ իրեն ամենակարեւոր խնդրի մը մասին :

Երբ կուսակախն ու լրտեսը սուանձին մնացին, այս վեր-
ջինը ըսաւ, մտերմական շեշտով մը :

— Փաշա էֆէնտի, աչքերնիդ լոյս :

— Ի՞նչ կայ որ, հարցուց կուսակալը դարմացած :

— Մէկի անդ երկու թանկադին որսեր ձեռք պիտի ան-
ցնենք նախ թիկնապահը և յետոյ անկէ զա՛տ աւելի վտան-
գաւոր անձ մը, տիկին Պլաքթօնը . . .

— Տիկին Պլաքթօնը, գոչեց կուսակալը Ամերիկացի մի-
սիօնարուհին . . .

— Այո, Ամերիկացի տիկին Պլաքթօնը կամ բուն անու-
նով Սալինա հանրմը . . .

Այս յայտնութիւնը շանթահար քրաւ կուսակալը :

— Այդ կինը որ մեր Լոնտոնի դեսպանին կողմէ մասնա-
ւորապէս յանձնարարուած էր, որ այնքա՛ն անգամներ իմ ներ-
կայութեան ընդունեցի, սրուն փոխադարձ այցելութեան դա-
ցի և որ այստեղի հիւպատոսական շրջանակներու մէջ այնքան
յարգանք կը վայելէ, միթէ կարելի՞ է որ այդ վտանգաւոր
թրքուհին ըլլայ . . .

— Այդ մասին ընա՛ւ կտակած չկայ, պատասխանեց լըր-
տեսը հաստատ կերպով, ես պատրաստ եմ իմ գլուխս զբաւի
դնկու . . . :

— Ուրեմն ի՞նչ պէտք է ընկ հիմա . . . :

— Անմիջապէս զինքը ձերբակալել տալ :

— Բայց անկարելի է, գոչեց կուսակալը, արդ կինն օրի-
նաւոր թուղթեր ունի իր ամերիկեան հպատակութիւնը հաս-
տատու :

— Կեղծ են այդ թուղթերը, Տիկին Պլաքթօն Սալինա
հանրմն է, չի կրնար ամերիկեան հպատակ ըլլալ :

— Բայց պէտք է հաստատել այդ կեղծիքը :

— Նախ կը ձերբակալենք և յետոյ շատ դիւրին է հաս-
տատելը թէ այդ միսիօնարուհին պարզապէս թուրք յեղափո-
ական կին մ'է :

— Հիւպատոտանները զինքը պիտի պաշտպանեն, որովհետեւ կը կրկնեմ, իր թուղթերը շատ օրինաւոր են . . . :

— Բայց անկարելի է թողուլ որ այդ վտանգաւոր կինը մեր ձեռքէն խուսափի :

— Ես իմ պատասխանն ատուութեամբս այդպիսի ձերբակալութիւն մը չեմ կրնար հրամայել, ըստե կուսակալը վճարար, Սելանիկ այս միջոցիս շատ փափուկ զիւրքի մէջ կը գտնուի, գուցէ Պոլլիս կամ ուրիշ անդ կարելի ըլլար ըսածդ ընել, բայց հոս շատ դժուար է :

— Եթէ պատասխանատուութեան տակ մտնել չէք ուզեր, իսկոյն հեռագրեցէ՛ք Երլարդ և հրահանգ ուղեցէ՛ք :

— Այդ բանը կարելի է, պատասխանեց կուսակալը :

— Բարեբախտաբար Սալիհն հանրմ տակաւին հոս է, բայց վաղը Իւսկիւլ պիտի մեկնի, գոնէ այնպէս ըսած է պանդոկին տիրոջ, բայց շատ աւելի հաւանական է որ Մէհմէտ փաշայի դէպքէն ետքը, ինքն ալ չոգննաւ փախչի :

— Այդ մասին ամէն միջոց ձեռք կ'առնենք անմիջապէս և թոյլ չենք տար, իսկ եթէ Իւսկիւլ երթալ կ'ուզէ և մեզի տակաւին ո և է հրահանգ եկած չըլլայ Պոլլիսէն, այն ատեն զաղտնարար իրեն կը հետեւինք ու հետքը չենք կորսնցնիր :

Կուսակալը Շէրիֆ պէյի հետ որոշեց ըսոր ձեռք առնելիք միջոյնները և հարկ եղած հրահանգները տուաւ, յետոյ Երլարդ հեռագրեց եղելութիւնը և անմիջական հրահանգ խընդրեց : Այս գործողութիւնները կատարելէ ետքը մեկնեցաւ, պատուիրելով որ Պոլլիսէն հեռագիր զաղտն պէս՝ զայն իրեն բերեն անդլիական հիւպատոտարանը ուր հոյն զիշերը երևկայթի մը հրաւիրուած էր :

Կէս զիշերէն ետքը, ժամը երեքին, սպասուած հեռագիրը հասաւ Երլարդէն, երբ կուսակալը արդէն վերադառնալով խորունի մէջ ընկղմած էր :

«Ձերբակալեցէ՛ք տիկին Պլաքթոնը, կ'ըսէր հեռագիրը, առանց ազմուկ յարուցանելու և հիւպատոտներու միջամտու-

Թիւնը յառաջ բերու. եթէ կարելի է, փոխանակ պաշտօնաւ պէս ու ակնյայտնի կերպով ձերբակալելու՝ առեւանգեցէք ու է միջոցաւ: Ասոր համար դրամական ամէն զոհողութիւն կրնաք ընել:»

Այս հեռագիրը շիթոթեանց մասնեց կուսակալը, որ իսկոյն Շէրիֆ պէյը իր քով կանչել տուաւ, տալու համար հեռագրական հրահանգը:

Լրտեսը պահ մը մտածելէ ետքը ըսաւ:

— Կարծեմ վեհափառ Սուլթանին կամքը պիտի կրնանք կատարել իր ուզած ձեւովը... Սալիհա հանրմ կէս գիշերին մօտ վերադարձաւ պանդոկ, ինչ որ ցոյց կուտայ թէ տակաւին բանէ մը չի կասկածիր: Հիմա կը մնայ սպասել մինչև վաղն առտու. եթէ Սալիհա հանրմ պանդոկէն ելլելով դէպի քարափն ուղղուի և փորձէ չոգենաւ մը մտնել՝ այն ատեն իսկոյն զինքը կը ձերբակալենք, կարելի եղածին չափ անաղմուկ կերպով, իսկ եթէ, իր ըսածին համեմատ, Իւսկիւպի կառախուսմբը նստելու համար, կայարան երթայ, կը գոհանանք իրեն հետեւելով ու հոն՝ Իւսկիւպ ոտք դրած միջոցին, զինքը կայարանին մէջ կը ձերբակալենք, երբ իր գալուստը տակաւին չէ իմացուած քաղաքին մէջ: Իւսկիւպ՝ Սելանիկի չափ՝ միջազգային քաղաք մը չէ, աչքէ հեռու է, հետեւաբար դէպքը անուշադիր կ'անցնի:

— Այո՛, այդ խորհուրդդ, շատ լաւ է, պատասխանեց կուսակալը ուրախութեամբ, Իւսկիւպի մէջ ըրէ՛ք ինչ որ կ'ուղէք, իմ իրաւասութեան սահմաններէս դուրս է:

— Պանդոկին շուրջը արդէն խիստ հսկողութիւն մը կազմակերպած եմ, չարունակեց լրտեսը, ուրեմն մէկ քանի ժամէն կը վերադառնամ հոն և կը սպասեմ Սալիհա հանրմի դուրս ելլելուն: Միայն թէ՛ այժմէն պէտք է հրաման ընէք որպէսզի քօմիսէր մը և ոստիկան մը իմ արամադրոթեանս ներքեւ դրուին, մինչև Իւսկիւպ ձերբակալումը կատարելու համար:

— Անմիջապէս, պատասխանեց կուսակալը զանգակը հնչեցնելով և պէտք եղած հրամանը տալով :

Առտուան ժամը Յին Շէրիֆ պէյ արդէն պանդոկին դրան առջևն էր : Մէկ ժամու չափ հո՛ն վեր վար պտտեցաւ տնեղային անհամբերութեամբ մը : Վերջապէս պանդոկին դուռը բացուեցաւ և սպասաւոր մը երեւցաւ երկու խոշոր պայուսակներով : Սպասաւորը զանոնք գետին դնելով՝ նշան ըրաւ կառապանի մը որ իսկոյն իր կառքը մտնեցուց :

— Տիկին մը կայ զոր կայարան պիտի տանիս, ըսաւ սպասաւորը պայուսակները տեղաւորելով կառապանին քով :

— Շատ լաւ, եթէ Իւսկիւպի կառախումբին պիտի հասնի պէտք է որ աճա լարէ . . .

Հաղիւ թէ խօսքը տւարտած էր Սալիհա հանրմ երեւցաւ դրան սեմին վրայ, պանդոկի դռնապանին ու սպասաւորին մէյմէկ նուէր տուաւ և մտաւ կառքը որ անմիջապէս ճամբայ կաւ :

Լրտեսը արդէն ինքն, ալ այդ միջոցին կառք մը կեցուցած էր որուն մէջ մտաւ՝ գոչելով :

— Շո՛ւտ կայարան տար, Իւսկիւպի կառախումբին պիտի հասնիմ :

Կայարանին մէջ կառախումբը արդէն պատրաստ կեցած էր ու վայրաշարժը կը ֆշար. մեկնելու պատրաստ :

Սալիհա հանրմ Իւսկիւպի համար առաջին կարգի տոմսակ մը առաւ և վակօնի մը կանանց յատուկ բաժինը մտաւ : Լրտեսը և իր ընկերները, նոյնպէս առաջին կարգի տոմսակով մը, գացին տեղաւորուեցան նոյն վակօնին մէկ ուրիշ բաժինը :

— Ա՛լ որսը ձեռքերնիս է, ըսաւ Շէրիֆ յաղթականօրէն, երբ վայրաշարժը սուլելով ճամբայ ելաւ .

Սալիհա հանրմ իր շուրջը կատարուած հսկողութիւններէն անտեղեակ թաղուած էր խոր մտածումներու մէջ և գործուհեւութեան նորանոր ծրագիրներ կը շինէր մտովի, վակօնին

դռնակէն դիտելով իր շւրջը պարզուած գեղեցիկ համայնապատկերը :

Կառախումբը Վարտարի վրայ ձգուած երկար կամուրջէ մը անցնելէ ետքը , կանգ առաւ կայարան մը : Սալիհա հանրմ գլուխը դռնակէն դուրս հանեց շուրջը դիտելու համար և յանկարծ նշմարեց Ալպանիացի գեղջկականի տարազով մարդ մը որ զինքը կը դիտէր և որ միևնոյն ատեն կը ժպտէր : Գիւղացին ձեռքի շարժումով մտերմական բարեւ մը տալէ ետքը , գնաց երրորդ կարգի վակօնի մը մէջ տեղաւորուեցաւ .

Սալիհա հանրմ որ չէր ճանչցած զայն , մէկէն յիշեց .

— Վա՛յ , ըսաւ ինքնին , Մէհմէտ փաշան է . . . բայց որքան լաւ կերպով ծպտուած է . եթէ նախասպէս չգիտնայի թէ Առնավուտ գիւղացիի հագուստ պիտի հագնէր , երբէք չպիտի կրնայի զինքը ճանչնալ :

Արդարեւ թիկնապահը անճանաչելի դարձած էր իր նոր հագուստներով , մանաւանդ որ դեղնագոյն կեղծ ընջանցք մըն ալ դրած էր , պարակելու համար իր անձիւում գէտքը որ ընաւ չէր յարմարեր առնալուտ գիւղացիի մը :

Կառախումբը կրկին ճամբայ ելաւ սուրալով նկարչագեղ դաշտերու , թիֆնիի անտառներու և կիրճերու մէջէն ու ատեն ատեն անցնելով Վարտարի վրայէն որ կարծես օձապըտոյտ կը սողոսկեր երկաթուղիի գծին տակ , հետզհետէ նեղնալով :

Քէօփրիւլիւէն անցնելէ ետքը . կառախումբը մտաւ կիրճի մը մէջ , ուրկէ դուրս ելլելէն ետքը Իւսկիւսպի հրաշալի դաշտը պարզուեցաւ իր անսահման վեալեառամենրով , ձիւնին սպիտակութեանը տակ ծածկուած :

Կէսօրէն ետքը , ժամը երկուքին , կառախումբը կանգ առաւ Իւսկիւսպի կայարանը :

Շէրիֆ պէյ , քօմիսէրն ու ոստիկանը խոյոյն վար ցատքեցին իրենց վակօնէն և եկան կեցան այն բաժինին առջև որուն մէջ կը դանուէր Սալիհա հանրմ : Այս վերջինը , գլու-

խը դռնակէն դուրս հանելով՝ նշան ըրաւ բեռնակէրի մը որ
գայ ու իր երկու պայուսակները առնէ:

Ո՛ւր պիտի երթաք տիկին, հարցաւց բեռնակիրը որ երի-
տասարդ Պուլկար մըն էր:

— Իրա՛ւ որ չեմ գիտեր, ո՞րն է այս տեղի լաւագոյն
պանդոկը, ըսաւ Սալինա հանրմ:

— Ս.մէնէն լաւը՝ ուր Եւրոպացիները կ'երթան՝ Նիքոլիին
պանդոկն է, պատասխանեց Պուլկարը:

— Ուրեմն հոն կ'երթամ: Այս պայուսակները կառք մը
փոխադրէ և եկո՛ւր այս ծածկոցն ալ առնելու, ըսաւ Սալինա
հանրմ ցոյց տալով ոտքերն ու ծունկերը պատասպարելու յատ-
կացուցած Ֆանէլայի մեծկակ ծածկոյթ մը:

Կառքի պէտք չկայ, ըսաւ Պուլկարը, Նիքոլիին պանդոկը
հոս, կայարանին մօտն է:

Բեռնակիրը ծածկոյթն ալ ուսին վրայ առնելով, վար ի-
ջաւ վակօնէն ու հեռացաւ, ըսելով.

— Կայարանին դուռը ձեզի կ'սպասեմ, հոն ուր քեզե-
րենքը կը նային:

Սալինա հանրմը, Պուլկարը հեռանալէն ետքը, ձեռքի
չազոյրը բացաւ, փոքրիկ հայելի մը առաւ մէջէն ու արա-
գօրէն, ձեռքովը, մագերը յարդարեց. յետոյ կրկին դռնակէն
նայեցաւ ինքնիրեն ըսելով.

— Զարմանալի՛ բան ո՛ւր է Նուրի պէյը որ զի գիմա-
ւորելու պիտի դար...:

Համեղ ճամբորդները, ընդհանրապէս գիւղացիներ կամ
փոքրիկ աւուտուորի մարդիկ, ամենքն ալ գրեթէ երրորդ
կարգի ուղեւորներ, հետզհետէ կը մեկնէին և կայարանը, կա-
մաց կամաց, կը դատարկանար: Սալինա հանրմ, աչքը չորս
կողմ պտտցնելով, տեսաւ ծպտուած թիկնապահը որ հեռուն
կեցած էր անշուշտ իրեն վար իջնելուն ուղասելով:

Հինգ վայրկեանի չափ դռնակին առջև կենալէ ետք,

Սալիհա հանրմ տեսնելով որ իր սպասած անձը չերևար, որու շեց կառքէն իջնել:

Հաղիւ թէ ոտքը զեախն դրած էր ու դէպի կայարանին ելքը ելնելու կը պատրաստուէր, Շէրիֆ պէյ մօտեցաւ իրեն և չոր ձայնով մը ըսաւ.

— Սալիհա հանրմ, ձեզ ձերբակալելու հրաման ունինք, առանց ազմուկ հանելու հետեցէք մեզի, ո և է ընդհմու թիւն աւելորդ է:

Թեթեւ սարսուռ մը անցաւ կնոջ բովանդակ մարմինէն և դժգոհութիւն մը պատեց դէմքը, բայց այն կորովի անձնիշխանութեամբ որ իրեն յատուկ էր, իսկոյն ինքզինքը ժողովեց և ամենայն հանդարտութեամբ պատասխանեց.

— Ձեմ հասկնար թէ ի՞նչ բնակ կ'ուզէք, Սալիհա հանրմ չկայ այստեղ, այլ ամերիկեան հպատակ Միսրա Պլաքթոն...

— Ամէն բան յայտնուած է, Սալիհա հանրմ, շարունակեց լրտեսը, ուրանալը օգուտ չունի, հետեցէ՛ք մեզի, առանց մեզ ստիպելու որ բռնութեան դիմենք:

Սալիհա հանրմ, տենդոտ ձեռքով մը շագոյրը բացաւ և թուզթ մը հանելով ըսաւ խիստ շեշտով մը.

— Ահաւասիկ ամերիկեան անցագիրս, թողէ՛ք որ անցնիմ, եթէ ոչ ծանր պատասխանատուութեան կ'ենթարկուիք... ուղղակի մեր հիւպատոսին պիտի բողոքեմ:

— Մեզի հրաման եղած է ձեզ ձերբակալելու և մենք այդ հրամանը պիտի գործադրենք, դուք, յետոյ, եթէ կրնաք, ապացուցէք թէ Սալիհա հանրմը չէք և թէ Ամերիկացի էք...

Թիկնապահը, որ հեռուէն տեսած էր տիկնոջ խօսակցութեան բռնուիլը անձանօթի մը հետ, որուն երկու ոտիկաններ կը բնկերանային, կամաց կամաց մօտեցած էր, բայց տակաւին կարող չէր եղած փոխանակուած խօսքերը լսելու: Քանի մը քայլ եւս մօտեցաւ, սակայն քօմիսէրը զայն նշմարելով, խիստ ձայնով մը գոչեց.

— Ճամբադ գնա՛ ու հեռացիր այս տեղէն...

Սալիհա հանրմ գլուխը դարձուց, տեսնելու համար թէ որո՞ւ կ'ուզողէին այդ խօսքերը ու նշմարեց ծպտեալ թիկնապահը. այն ստենն ձայնը բարձրացնելով պոռաց, այնպէս որ խօսքերը լսուին.

— Ես Սալիհա հանրմը չեմ, իրաւունք չունիք զիս ձերբակալելու ես Սալիհա հանրմը չեմ...

— Կը տեսնեմ որ կարելի չէ անուշութեամբ քեզի հետ դորձ տեսնել, դոչեց իր կարգին լրտեսն ալ, ուժով մը կնոջ թեւէն բռնելով, օ՛ն, քալէ տեսնենք...

Նոյն բուպէին պայթում մը լսուեցաւ և Շէրիֆ պէյ, դլխէն գնդակահար, գետին տապալեցաւ. յետոյ, իրարու ետեւ, երկու պայթումն ևս լսուեցաւ քօմիսէրն ու ոստիկանը նոյնպէս գետին ինկան... Սալիհա հանրմ՝ շուարած աղաղակ մը արձակեց...

— Եկո՛ւր, ըսաւ իրեն թիկնապահը, անոր ձեռքէն բռնելով ու քաշելով դէպի երկաթուղիի ձամբուն վրայ:

Հրազէնին ձայնը լսելով՝ կայարանին պաշտօնեաներն և մէկ քանի յապաղած ձամբորդներ սկսան վազել, մէկ մասը գետին իյնողներուն քով՝ իսկ միւս մասը տիկնոջ ու թիկնապահին ետեւէն:

Մէհմէտ փաշա իր պրաունինկն իրենց վրայ եկողներուն ուզելով դոչեց.

-- Մօտեցողը պիտի զարնեմ...

Ամենքն ալ սարսափահար՝ կանք առին: Նոյն միջոցին երիտասարդ մը հասաւ հեւ ի հեւ, ինքն ալ իսկոյն ղէվօլդէրը հանեց և պոռաց.

— Հեռացէ՛ք այս տեղէն...

Եւ զէնքը օղին մէջ պարպեց անգամ մը:

Սալիհա հանրմ նորեկը տեսնելով՝ ուրախութեան ճիչ մը արձակեց ու աղաղակեց.

— Նուրի՛, նուրի՛...

Երիտասարդը ցատկեց երկաթուղիի գծին վրայ ու եկաւ

միացաւ Սալիհաի ու իր ընկերոջ և երեքը միասին սկսան վազել դէպ ի պուլիտրական գերեզմաննոցը որ կայարանին դէմը կը գանուի :

Ո՛չ ոք համարձակեցաւ զանոնք հետապնդել :

Հրազդէնի այս պայթիւնները բազմութիւնը հաւաքած էին կայարանին մէջ, գետին փռուած երեք անձերուն շուրջը :

Քիչ ետքը մէկ քանի ոստիկաններ ալ հասան և բազմութիւնը ճեղքելով մօտեցան գետին տարածուած երեք անձերուն, որոնց ոչ ոք համարձակած էր տակաւին ձեռք դպցնել :

Ոստիկան մը ծռեցաւ ու լրտեսին ուսերէն բռնելով վեր վերցուց .

— Մեռած է, ըսաւ, ճակտէն զարնուէր է :

Յետոյ, միւսներն ալ քննելէ ետքը յայտարարեց .

— Ս.մենքն ալ մեռեր են, զարնողը կ'երևայ որ ճարասար նշանաուու մըն է եղեր, մէյ մէկ հարուածով վայրկենապէս սպաններ է... ու ամենքն ալ իրենց գլխէն զարնուեր են...

— Ես տեսայ զարնողը, ըսաւ ներկաներէն մին, Սոնա-վուա գիւղացի մըն էր :

— Բայց ի՞նչ պատահեցաւ, հարցուց ոստիկաններէն մէկը :

Ներկաներէն ո՛չ ոք կրցաւ որոշ պատասխան մը տալ : Եղելութիւնը այնքան արագ ու անակնկալ կերպով կատարուած էր որ կայարանը գտնուողներէն ո՛չ մին կրցած էր բան մը հատկնալ :

Հեռզնեռէ հասան հարցաքննիչ գատաւորը, ոստիկանապետը և ուրիշ պաշտօնական անձեր և նախնական քննութիւն մը կատարելէ ետքը, վերջապէս մտածեցին ոճրագործը հալածել :

— Սոնալուա գիւղացին իր ոճիրը գործելէ ետքը, յայտարարեց այն անձը որ քիչ մը առաջ խօսք առած էր և որ ամէնէն տեղեակը կը թուէր, կիսով մը հետ փախաւ դէպի պուլիտրական գերեզմաննոցն և անյայտ եղաւ :

— Ուրիշ անձ մըն ալ միւսին հետ էր, ըսաւ մէկը :

— Այո՛ , այո՛ , ուրիշ երկառաւարդ մըն ալ իրենց ընկերացաւ , բէվորվէրը ձեռքը , սպաննարով հասեւնուն վազողներուն :

Պուլկար գերհամաննոցէն անդին անառուտ լեռներ կը բարձրանային . փախտատականները արդէն մինչև հիմա ժամանակ ունեցած էին մինչև հոն երթարու , այնպէս որ խուզարկութիւնը բաւական դժուարին պիտի ըլլար , այսուհանդերձ քօմիսէր մը , մէկ քանի ոստիկաններով , իսկոյն մեկնեցաւ դէպի այն կողմը ուր դիմած էին երեք անձերը :

— Քանի որ հետերնին կին մը կայ , յայտարարեց ոստիկանապետը , այդ մարդիկը շուտով չեն կրնար յառաջանալ և անյայտ ըլլալ . . . վստահ եմ որ շատ չանցած զիրենք ձեռք պիտի կրնանք ձգել :

Այս դէպքը իսկոյն տարածուեցաւ ամբողջ քաղաքին մէջ և մեծ յուզում յառաջ բերաւ : Միայն թէ ո՛չ ոք կարող կ'ըլլար եղելութիւնը որոշապէս ըմբռնել : Սպաննուած անձերը անձանօթ էին Իւսկիւպի մէջ , թէև երկուքը իրենց հազուստներէն կը ճանչցուէին թէ մին քօմիսէր և միւսն ալ ոստիկան էր , անձանօթ էր նաև սպաննութիւնը գործող Աննալուա գիւղացին , ինչպէս նաև օտարական կինը որ քրիստոնեայ ըլլալ կը թուէր : Չէին կրնար բնաւ բացաարել թէ ի՞նչ անչութիւն կրնար ըլլալ Ալպանիացի գեղջուկի մը և առաջին կարգով ճամբորդող Եւրոպացի կնոջ մը միջև :

Ու ամէն մարդ իր ուզած մեկնութիւնը կուտար այդ տարօրինակ դէպքին :

Փախտատականները գտնելու համար գացող խումբը ձեռնունայն վերադարձաւ , չորս հինգ ժամ լնոներուն մէջ թափառելէ ետքը :

Իրիկուան դէմ սակայն Սեւանիկի հետ փոխանակուած հեռագիրներ խնդիրը լուսաբանեցին : Սպաննուածներուն և փախրտատականներուն ինքնութիւնը երեւան կաւ , նոյնպէս հասկըցուեցաւ թէ կնոջ միացող երրորդ անձը Նուրի պէյն էր ,

երիտասարդ սպայ մը որ վերջերս Սեւանիկէն եկած էր սղոտական գաղափարներովը :

Իրիկունը կայարանին մօտերը գտնուող երգեցիկ որձաբաններուն մէջ, ուր ընդհանրապէս գինուորականները կը յաճախէին, խօսակցութեան ընդհանուր նիւթն այդ երբեակ սպաննութիւններն էին : Սալիհա հանրմի անունն ամէնուն չրթունքին վրայ էր : Երիտասարդ սպաները խանդավառուած բարձրաձայն գովեստը կ'ընէին թիկնապահ Մէհմէտ փաշայի, որ չէր վարանած լրտեսն ու ոստիկաններն սպաննել՝ յեղափոխուհին աղատելու համար :

— Ահա՛ գեղեցիկ օրինակ մը որուն ամենքս ալ պէտք է հետեւինք ասիէ ետքը, ըսաւ ենթասպայ մը, երբոր մեր սնձը կամ մեր ընկերները ձերբակալուելու վտանդին մէջ գտնուին :

— Յեղափոխական առաջին գնդակն է որ արձակուեցաւ բռնակալութեան դէմ, գոչեց ուրիշ մը, ա՛լ կուլը սկսած է բանակին ու բռնաւորին միջև :

— Ի՞նչ պիտի ընենք կիթէ մեզի հրամանն ըլլայ երթալ փախստականները հալածելու և ձերբակալելու մեր զօրքերուն օժանդակութեամբ, հարցուց հարիւրապետ մը իր քովի ընկերներուն :

— Պիտի մերժենք հնազանդիլ այդպիսի հրամանի մը, և մենք ալ, մեր զէնքերով, լեւը պիտի քաշուինք :

— Հապա հաւատարմութեան մեր երդո՞ւմը . . .

— Մենք երդում ըրած ենք հաւատարիմ գտնուիլ մեր հարկներին հանդէպ և ի հարկին մեր կեանքը զոհել անոր պաշտպանութեանը համար, բայց երդում չենք ըրած մեր եղբայրները բռնաւորին մատնելու . . .

Գրդութիւնն ու յուզումը, այսպէս հետզհետէ կը սաստկանար գինուորականներուն մէջ որոնք արձակ համարձակ Ապտիւլ Համիտի դէմ կը զուային, նոյն խակ իրենց հազարապետներուն դիմաց :

Կէս գիշերին մօտ կառավարատան պաշտօնեայ մը երև-

ցաւ Օրիմպիա գեղեցիկ սրճարանը ուր զինուորականներու խումբն բազմութիւն մը հաւաքուած էր : Պաշտօնեան ներկաներուն վրայ աչք մը պտտցնելէ ետքը մօտեցաւ խումբի մը և խօսքը հոն նստող հազարապետի մը ուղղելով՝ ըսաւ .

— Օտման պէյ, զօրանոց գացի ձեզ վնասելու ու անկէ զիս հոս զրկեցին . . .

— Ի՞նչ կայ որ , հարցուց հազարապետը :

— Կուսակալ փաշան անպատճառ ձեզ տեսնել կ'ուզէ , հիմա անմիջապէս :

Հազարապետը ոտքի ելաւ , իր ընկերները բարեւեց և պաշտօնեային հետ մեկնեցաւ :

Արդարեւ կուսակալը տենդային անհամբերութեամբ մը կը սպասէր զինուորականին :

— Եկաք վերջապէս , ըսաւ զայն զիմաւորելով , ժամ մըն է որ ձեզի կը սպասեմ . . .

— Պտոյտի ելած էի քիչ մը , փաշա էֆէնտի , ի՞նչ է արդեօք զիս գիշեր ժամանակ վնասելնուդ պատճառը :

— Երբւրզէն հեռագիր մը ստացայ , խիստ սախողական զոր հարկ է անմիջապէս գործադրել . . . մեր վեհափառ Սուլթանին բացարձակ հրամանն է . . .

— Ի՞նչ կը հրամայէ այդ հեռագիրը , հարցուց Օտման պէյ պաղարկունով :

— Այսօրուն պատահած դէպքին մասին է . . . գիտէք արդէն որ երեք անձերն սպաննող գեղացիի զգեստով ծպարուած անձը նոյնինքն Սուլթանին թիկնապահներէն Սաւալուս Մէհմէտ փաշան է , իսկ իրեն ընկերացող կլինն ալ որ երկու ամիսէ ի վեր Սելանիկ կը գանուի եղեր իբրև ամերիկացի միսիօնարուհի մը , վաճառուոր յեղափոխական Սալիհա հանըմն է , այդ երկու անձերուն գացած միացած է նաև Նուրի պէյը . . . արդ , ցերեկուրնէ ի վեր Երլաքըլի հետ անընդհատ հեռագրական հազորդակցութեան մէջ ենք այս դէպքերուն առթիւ և ժամ մը առաջ նոր հեռագիր մը ստացայ որով Իզզէթ փա-

չա յանուն Վեհափառ Սուլթանին, կը հրամայէ որ խիոյն Բւսկիււզ գտնուած երկու զօրագունդերը զէնքի տակ կանչուին և ճամբայ հանուին այդ երեք վասնդուոր չարագործները ողջ կամ մեռած ձերբակալելու համար... այս վայրկեանիս նոր հեռագիր մը ստացայ որով կը հարցնեն թէ տըրուած հրամանը գործադրուած է...

— Եւ ի՞նչ պատասխանեցիք այդ նոր հեռագրին, հարցուց հազարապետը հանդարտութեամբ:

— Տակաւին բան մը չպատասխանեցի, բայց հիմա որ ձեզ տեսայ և հրամանը հաղորդեցի, խիոյն պիտի հեռագրեմ որ Սուլթանին կամքը գործադրուած է...

— Ո՛հ, ըսաւ Օսման պէյ, այդ ձեռով մի՛ հեռագրէք:

— Հապա ի՞նչ կ'ուզէք որ հեռագրեմ...

— Ըսէ՛ք որ Սուլթանին հրամանը կարելի չէ գործադրել պատասխանեց Նուրի պէյ բառերը հատիկ հատիկ արտասանելով:

Կուսակալը այս խօսքերը լսելով՝ սարսափահար՝ հազարապետին երեսը նայեցաւ:

— Ի՞նչ ըսիք, գոչեց, կարելի չէ՞ Սուլթանին հրամանը գործադրել... Օսման պէյ, չեմ հասկնար թէ ի՞նչ ըսել կուզէք:

— Նորէն կը կրկնեմ որպէս զի կարենաք հասկնալ, պատասխանեց զինուորականը, այո, Սուլթանին տուած այդ հրամանը կարելի չէ գործադրել, որովհետեւ իմ սպաներէս ո՛չ մէկը պիտի հաւանի այդ փախտականները հալածելու պաշտօնը յանձն առնել:

— Եւ կ'ուզէք որ այդ ըսածնիդ հեռագրե՞մ Վեհափառ Սուլթանին, գոչեց կուսակալը խուլած:

— Անշուշտ, քանի որ ճշմարտութիւնն է այս քեզ եթէ մը առաջ ինձ հետ ըլլայիք ու լսէիք մեր սպաներուն յայտարարութիւնները հիմա իմ ըսածներս այդքան չպիտի զարմացէին ձեզի:



— Աստուած իմ, Աստուած իմ, այս ի՛նչ օրերու հասանք, հառաչեց կուսակալը... ինչպէ՛ս կարելի է ըմբոստանալ մեր Վեհափառ Սուլթանին մէկ հրամանին դէմ:

— Ահաւասիկ կացութիւնը ձեզի պարզեցի, փաշա էֆէնտի, պատասխանեց Օսման պէյ, եթէ իմ խօսքերուս չէք հաւատար կամ զանոնք չափազանցութիւններ ու անձնական կարծիքներ կը համարէք, կրնաք մեր զինուորականները ձեր մօտ հրաւիրել և անձամբ անոնց հազորդել Սուլթանական հրամանը:

— Բնականաբար այդպէս պիտի ընեմ... հիմա անմիջապէս զիրենք հոս կանչել պիտի տամ և կը խնդրեմ ձենէ որ դուք ալ հոս մնաք և ինծի հետ ջանաք զիրենք համոզելու որ հրաժարին այդ տեսակ ըմբոստական ընթացքներէ սրոնք կրնան շատ ծանր հետեանքներ ունենալ:

Կէս ժամ ետքը կուսակալին սրահը հաւաքուած էին տասնի չափ բարձրաստիճան սպաներ, որոնց հազորդուեցաւ Ապտ-իւլ-Հաֆիտի հեռազրական հրամանը:

Ամենքն ալ բացարցակապէս մերժեցին այդ տեսակ հրաման մը գործադրել:

Կուսակալը՝ ճարահատ՝ ձամբու դրաւ զանոնք, բուռն յուզումի մը մասնուած:

Գ Լ Ո Ի Խ Ժ Ա .

Հ Ա Մ Ի Տ Ի Կ Ա Տ Ա Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Առնավուտքէօյի բարձունքին վրայ, ընթարձակ պարտէզի մը մէջ կը բարձրանար փայտաշէն մեծկակ տուն մը, խոշոր ծառերու ետե կորսուած: Այդ բնակարանը կը պատկանէր Մալիէի պաշտօնեանէրէն ձէմալ պէյի, որ զարգացած ու ազատամիտ անձ մըն էր և խիստ մօտեն կը հետեւէր երիտասարդ թուրքերու յեղափոխական շարժումին, որուն ջերմ համակիր էր: Հակառակ տիրող ծայրայեղ խստութիւններուն և լրտեսական հետապնդումներու, ձէմալ պէյ կրցած էր խուսափիլ Ապտ—իւլ Համիտի մարդոց աչքէն և երբէք կասկածանքի չէր ենթարկուած. թէև իր տունը ծածուկ ժամադրավայր մը դարձած էր քօմիթէի անդամներուն, որոնք, շատ անգամ, հոն կը հաւաքուէին խորհրդակցելու համար:

Իւսկիւպի մէջ պատահած դէպքին ճիշտ հետեւեալ օրը, այսինքն Երեքշաբթի 29 Յունուար, ձէմալ պէյի բնակարանին մէջ հաւտքուած էին Սաի պէյ, Շաքազի նախկին խմբագիր Սատրք պէյ և Արիֆ պէյ: Այս երկու վերջինները, ինչպէս անշուշտ մեր ընթերցողները կը յիշեն, թիկնապահ Մէհմէտ փաշայի շորհիւ կրցած էին խուսափիլ Ապտ—իւլ—Համիտի ճիրաններէն ու յաջողած էին ծածուկ պահուիլ, հակառակ ոստիկանական ամենախիստ խուզարկութիւններու:

Երեք ընկերները սենեակ մը քաշուած, զոր իրենց տրամադրութեան ներքև դրած էր տանուտէրը ձէմալ պէյ, կացութեան վրայ կը խորհրդակցէին: Սաի պէյ ամենածանր լուրեր առած էր Երլարզէն: Սալիհա հանըմի և Մէհմէտ փաշայի ներկայութիւնը Սելանիկի մէջ երևան ելած էր և Ապտ—իւլ—Համիտ հրամայած էր որ անմիջապէս ձերբակալուին ու

Պոլիս բերուին : Ջերբակալութիւնը , ըստ Սա'ի պէյի կարծի-
քին , արդէն տեղի ունեցած ըլլալու էր :

Այս տեղեկութիւնները խորին յուզումի ու մտատանջու-
թեան մատնեցին երկու երիտասարդները , որոնք մեծամեծ
յայտեր դրած էին Սալիհա հանրմի գործունէութեան վրայ :

— Մեր յետին սպաւէնը , Բումելիի բանակը , եթէ սա-
կաւին անշարժ մնայ , քիչ ատենէն ամենքս ալ կորսուած
ենք ու մեզի հետ յեղափոխական շարժումն ալ ի սպառ վեր-
ջացած , ըսաւ Սաաքք պէյ յուսանաւ դէմքով մը :

— Բայց ինչպէ՞ս կարելի է բանակն ոտք հանել յանկարծ
երբ ասկաւին հասարակ զինուորներուն մէջ յեղափոխական
բրօքականոր չոր պիտի սկսի , պատասխանեց Արիֆ պէյ :

— Այո՛ , հաստատեց միւսը , դժբախտաբար շատ ոչ ար-
թնցանք . . . :

— Եւ Ապտ իւլ — Համիտ որ ընդհակառակն բնաւ չի
քննար , այժմ իր ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացուցած
է Բումելիի զօրաբանակներուն վրայ և կը պատրաստուի սեր-
տախելի հարուածով մը ջախելու յեղափոխական ոզին որ սկ-
սած է տարածուիլ այդ զօրաբանակներուն մէջ :

Երեք ընկերներն իրենց այս մտատանջութեանց մէջ խո-
րատուզուած էին՝ երբ դուռը դարնուեցաւ :

— Մտէ՛ք , ըսաւ Սա'ի պէյ ապահով ըլլալով որ եկողն
իրենցմէ մէկն էր :

Դուռը բացուեցաւ և պատանի Հասան երեւցաւ յուզուած
ու շփոթած կերպարանքով մը :

— Ի՞նչ կայ , ի՞նչ ունիս , գոչեց Սա'ի պէյ պատանիին
խտոված գէմքը տեսնելով :

— Գէշ լուրեր , պատասխանեց Հասան . շատ գէշ լու-
րեր . . .

— Բայց խօսէ՛ տեսնեմ , շ՛ւտ և մանաւանդ հանդար-
տութեամբ :

— Ջեր պատուէրին համեմատ՝ դացի տեղեկութիւնն առ-

նելու մատակարար Միւլէյման աղայէն, չարունակեց պատանին իր յուզումը կրցածին չափ զսպելով... այս առտուընէ ի վեր Սալթանը սարսափելի կատաղութեան մը մասնուած է եղեր...

— Եթէ Ապտ—իւլ—Համիտ կատաղութեան մասնուած է, ըսաւ Սատրք, ուրեմն լուրերը գէշ չեն կրնար ըլլալ, ընդհակառակն երբ ինք ուրախ ու գոհ է այն ատեն վախնայու է թէ գէշ բան մը պատահած է մեզի համար:

— Բայց իր կատաղութեան առաջին զոհը մեր խնդձ Զիւլէնան եղած է, չարունակեց պատանին, որուն աչքերը լեցան իր բարեկամուհիին յիշատակութենէն:

— Ինչպէ՞ս, պատմէ՛ տեսնենք, բայց կարգաւ, որպէս զի լաւ մը կարենանք ըմբռնել անցած դարձածը:

Պատանին որ ստքի վրայ կեցած էր, աթոռ մը առաւ և վրան տեղաւորուելով, սկսաւ իր պատմութիւնը.

— Միւլէյման աղա, ըսաւ, զիս տեսնելուն պէս ուրախութեան աղաղակ մը արձակեց և ձեռքէս բռնելով սարսու իր սենեակը, գուռը լաւ մը կղպեց և ըսաւ. «Սղէկ որ եկար որովհետեւ շատ ծանրակշիռ բաներ ունիմ քեզի հաղորդելիք. Սալթանը ամենախիստ պատուէրներ առած է որպէս զի թէ Պոլիս և թէ գաւառները, մանաւանդ Բումելիի մէջ գանուղ բոլոր կասկածելի անձերը ձերբակալուին և ամենախիստ հարցաքննութեան ենթարկուին...»

— Ատիկա պարզապէս Սալիհա հանրուի և Մէհմէտ վաշայի ձերբակալուելնուն արդիւնքն է, վճռեց Սա'ի պէյ:

— Ամենը այդ չէ, չարունակեց պատանին, Ապտիւլ Համիտ այս առտու կանուխ բերել կուտայ Զիւլէնան որ մինչև հիմա Պիւրհանէտտին իշխանին սպարանքը, Սաֆնազ գալֆային խնամքին յանձնուած էր ու կը հրամայէ որ զայն չարանքներու ենթարկեն որպէս զի խօսի...

— Ուրեմն հասկցա՞ծ է որ աղջկան համբուրթիւնը կեղծ է...:

— Ո՛վ գիտէ, ինչպիսիք այն է որ այս վայրկեանին խնձոր
աղջիկը գուցէ անուր ասնջանքներու կնիթարկուած է...
միևնոյն ատեն Սիւլէյման աղա ըսաւ թէ Ստֆնազ գալֆան
ալ Երլորդ կանչուած է և թէ անոր վրայ ալ կասկածներ կը
ծանրանան... :

— Ստիկա քիչ մը ծանրակշիռ է, դիտել տուաւ Սա՛ի
պէյ, Ստֆնազ հանրմը մեզի համար շատ զօրաւոր օժանդակ
մըն է և իր վտանգուիլը կրնայ մեծամեծ փնտններ պատճա-
ռել :

Սակէ դատ, շարունակեց պատանին, եթէ Զիւլէհա չկըր-
տովալ իրեն տրուած չարչարանքներուն և խօսիլ սկսի, կրնայ
նանք ամենքս ալ վտանգուիլ... գիտէք որ Զիւլէհա գրեթէ
մեր բոլոր հաւաքման տեղերը գիտէ, նոյնիսկ բնակարանն ալ :

— Ես վստահ եմ որ այդ աղջիկը դիւրաւ չպիտի խօսի,
պատասխանեց Սաի պէյ վճռաբար :

— Ես ալ մեծ վստահութիւն ունիմ Զիւլէհայի վրայ,
պատասխանեց պատանին բայց վերջապէս փափուկ արարած
մըն է... իցի՛ւ թէ ես ըլլայի իր տեղը... :

— Յուզուելու ժամանակ չէ, ըսաւ Սաի պէյ խստու-
թեամբ, թէև ինքն ալ յուզուած էր լսելով մանկատի աղջ-
կան դժնդակ վիճակը :

— Ուրիշ ի՞նչ տեղեկութիւն տուաւ Սիւլէյման աղան,
հարցուց Սաորդ պէյ :

— Կ'երեւայ որ խիստ հրահանգներ դրկուած են Սեկանիկ
որպէսզի խիոյն ձերբակալուին կասկածելի նկատուած զինուո-
րականները, ըսաւ Հասան :

— Ահաւասիկ իրապէս ծանրակշիռ լուր մը, մրմնջեց
նախկին խմբագիրը :

— Իրիկունը, եթէ միջոց գտնէ, Սիւլէյման աղան ան-
ձամբ պիտի գայ ձեզ տեսնելու, շարունակեց պատանին, և
նոր տեղեկութիւններ հաղորդելու :

Պատանին բերած լուրերը շատ ճիշտ էին : Ապտիւլ Հա-

միտ որ տենդային յուզումով մը երկու օրէ ք վեր, մէկ ժա-
մէն միւսը, կը սպառէր Սալիհա հանրմի և Մէհմէտ փաշայի
ձերբակալման յուրը առնելու, սոսկալի կատաղութեան մը
մասնուած էր ստանալով Իւսկիւսպի կուսակալին հետեւեալ
հեռագիրը :

«Սալիհան և Մէհմէտ փաշան հետապնդելու և զանոնք
ողջ կամ մեռած ձեռք անցնելու համար զինուորական ոյժը
գործածել կարելի չէ : Հակառակ Նորին Վեհափառութեան բա-
ցորոշ հրամանին՝ զոր անմիջապէս հազորդեցի զինուորական
իշխանութեան, սպաները մերժեցին այդպիսի հետապնդում մը
կատարել, առարկելով թէ զինուորական պատիւի անարժան
արարք մըն էր այդ : Ի զուր փորձեցի անուշութեամբ կամ
սպառնալիքով զիրենք համոզել : Սնկարելի եզաւ : Սպաներու
տրամադրութիւնը շատ վրդովիչ է և կրնան ծայրայեղու-
թիւններ յառաջ գալ եթէ նորանոր ճնշումներ ի գործ դրուին
իրենց վրայ : Նորին Վեհափառութեան իմաստութեան կը թո-
ղում արժանը անօրինել : Գալով ինձ՝ կայսերական հրամանին
հանդէպ ցոյց արուած այս ըմբոստացման վրայ՝ պարտք կը
զգամ հրաժարելու» :

Բռնաւորը թէև գիտէր թէ, յեղափոխական թաքուն
գործունէութեանց շնորհիւ, ժամանակէ մը ի վեր Բումելիի
բանակին մէջ ազատասէր ոգի մը կը ախրէր և թէ սպաներէն
չատեր ծածուկ յարաբերութիւններ ունէր յեղափոխական քո-
միթէին հետ, սակայն կը կարծէր թէ այդ շարժումը տակա-
ւին խիստ սանձանափակ էր և երբեք գործնականօրէն և ակն-
յայտնի կերպով երեւան ելլելու վիճակին մէջ չէր : Իւսկիւսպի
միջադէպը այժմ ցոյց կուտար թէ կը սխալէր : Ասիկա սար-
սափելի հարուած մը եղաւ իրեն համար : Երեսուն տարիէ ի
վեր առաջին անգամն էր որ իր տուած մէկ հրամանը անգոր-
ծադրելի կը մնար . . . :

Իզգէթ փաշա որ հեռագիրը անձամբ բերած ու կարդա-
ցած էր Սուլթանին՝ անոր դէմքին վրայ կը տեսնար այն սոս-

կախի յուզումը որ այդ ընթերցումը յառաջ բերած էր բռնա-
ւորին ներսիդին :

— Ի՞նչ կ'ըսես այս եղածին, Իզզէթ, գոչեց Ապտիւ-
Համիտ իր սիրական քարտուղարին, կարելի՞ էր այսպիսի բան
մը մտքէ անցնել :

— Ապահովաբար ո՛չ, պատասխանեց պալատականը, բայց
եթէ կը ներէք դիտել պիտի տամ Ձեր Բարձր Վեհափառու-
թեան որ պատահածը գուցէ այնքա՛ն ծանրակշիւ չէ՝ որքան
կ'երեւայ . . .

— Ի՛նչպէս, պուռաց բռնաւորը, հրաման մը կ'ընեմ իմ
բանակիս և բանակս կը մերժէ զայն գործադրել ու դուն կ'ը-
սես թէ ծանրակշիւ չէ՞ ստիկա . . . :

— Վեհափառ Տէր, արդա՞ր է արդեօք բանակը նոյնաց-
նել մէկ քանի յիմար ու անհնազանդ սպաներու հետ :

— Եթէ միայն մէկ քանի սպաներ ըլլային ըմբաստացող-
ները, զանոնք կարգի բերել կամ պատժելը շատ դիւրին կ'ըլ-
լար, բայց այս հեռագրէն կ'երեւայ որ խնդիրը քու ենթա-
դրածիդ պէս չէ, քանի որ նոյն իսկ կուսակալը իր հրաժա-
րականը տալու կը ստիպուի :

— Բայց ենթադրենք որ Իւսկիւպի բոլոր զինուորները
միեւնոյն սրսամադրութեան մէջ գտնուին, դարձեալ կարծեմ
կացութիւնը ծանր չէ . . . : Իւսկիւպի մէջ հազիւ երկու զօրա-
գունդ ունինք այս միջոցիս, որոնք մօտաւորապէս 1600 հոգի
կը ներկայացնեն. եթէ ատոնց ամենքն ալ ապստամբին Ձեր
Բարձր Վեհափառութեան դէմ, կրնանք շատ դիւրաւ զանոնք
պատժել . . .

— Իրենց դէմ քանի մը զօրագո՞ւնդ զրկելով . . .

— Բնականաբար . . . միթէ ամեն տեղ ուր զինուորը կ'ըմ-
բոստանայ նոյն միջոցին չե՞ն դիմեր :

— Եւ եթէ զանոնք զսպելու համար զրկուելիք զօրա-
գունդերը մերժեն քայելու . . .

— Վեհափառ Տէր միթէ կարելի՞ է կասկածիլ մեր բանակին հաւատարմութեան վրայ :

— Այդ հաւատարմութեան մէկ նմոյշը ահաւասիկ, գոչեց Ս. պօրիւ Համիտ դառնութեամբ : Իւսկիւպէն եկած հեռագիրը ցոյց տալով :

Պալատականը չպատասխանեց և սպասեց որ իր Վեհափառ տիրոջ բարկութիւնը անցնի : Բայց Ս. պօրիւ Համիտ հետզհետէ աւելի կը բորբոքէր , քանի՛ միտքը կը բերէր այդ չարաչուք հեռագրին խօսքերը :

Անշուշտ իր միակ ու մեծագոյն փափաքն էր չարաչար պատժել իր հրամանին ըմբոստացող սպաները , բայց կը վարանէր : Սոսկալի կասկած մը իր միտքը , կը պաշարէր .

— Եթէ այդպիսի հրաման մը տար ու այն ալ անգործադրելի մնար . . .

Սոսկումով կը մտածէր այդպիսի հաւանակութեան մը վերայ . նոյն կարգի արարք մը իր բացարձակ տիրապետութեան վերջաւորութիւնը պիտի նշանակէր . . .

«Ձէ՛ , խորհեցաւ ինքնին , այդպիսի փորձութեան մը չենթարկուինք , լաւագոյն է խոհեմութեամբ , վարպետութեամբ գործ տեսնել , կացութիւնը յանկարծական կերպով չվտանգել , նախ բանակը մաքրագործել ու յետոյ խիստ միջոցներու դիւրիմել . . . » Եւ իր հաւատարիմ քարտուգարին հետ խորհրդակցելով հետեւեալ հեռագրին ուղղեց Իւսկիւպի կուսակալին :

«Նորին Վեհափառութիւնը բացարձակապէս կը մերժէ ձեր հրաժարականը . և կ'ուզէ որ ձեր պաշտօնին մէջ մնաք : Ծագած միջադէպը թիւրիմացութեան մը արդիւնքն է : Վեհափառ Սուլթանն երբեք հրաման չէ ըրած որ փախստականները հալածելու կամ ձերբակալելու համար զինուորական ոյժ գործածուի : Նորին Վեհափառութեան փափաքը այն է միայն որ բանակը աչալուրջ կերպով հսկէ երկրին անդորրութեան և հանդարտութեան և չչեղի իր անխախտ հաւատարմութենէն և միշտ պատրաստ գտնուի սրբազան հայրենիքի պաշտպա-

հոսթիանը համար : Նորին Վեհափառութեան այս փախաքը յայտնեցէք ո՛ր որ անկէ և ծանուցէք որ Վեհափառ Սուլթանը իր բարեները կը հազարդէ Իւսկիւսլի իր հաւատարիմ զօրազուհեբուն : Գալով փախտակամներուն՝ ջանացէ՛ք օրինաւոր ճամբով զանոնք հետապնդել աւ ձեռք ձգել անպատճառ :»

Կարելի է ըսել որ այս հեռագիրը Ապտիւլ Համիտի առաջին իրաւախոհութիւնն էր յեզափոխութեան հետ :

Ընկրկումը կ'սկսէր :

Բայց մինչ մէկ կողմէ տեղի կուտար Ապտիւլ Համիտ, միւս կողմէ իր կատաղութիւնը կը թափէր շուրջը զանուղներուն գլուխը :

Օրերէ ի վեր կատարուած ոտտիկանական խուզարկութիւնները ու և է արդիւնք չէին տուած : Սասըք և Արիֆ պէյերը, ինչպէս նաև Փաթմա հանրմ երեւան չէին հանուած հակառակ ոտտիկանութեան նախարար Շէֆիք փաշայի ջանքերուն : Սելանիկի և Իւսկիւսլի գէպքերը այժմ աւելի կը չեւտէին այդ անյաջողութիւնները : Բռնաւորը կ'զգար որ իր բանակը գլխէ հանողը մութին մէջ գործող այդ թաքուն զօրութիւնն էր .

— Եթէ այդ զօրութիւնը, այդ անիծեալ քօմիթէն ջախջախեմ այն առնն բանակն ալ կը փրկուի, կը խորհէր :

Բայց ինչպէ՞ս կարելի էր ձեռք անցընել այդ խորհրդաւոր արարածները, որոնք յանկարծ անյայտ կ'ըլլան՝ ճիշտ այն միջոցին ուր կը կարծուէր թէ ձերբակալուած են :

Ապտիւլ Համիտ, Իւսկիւսլի հեռագիրը զրկել տալէ ետքը, կրք իր անգօր կատաղութեան մէջ, այս բաներուն վրայ կը խորհէր. մէկէն միտքը ինկաւ մանկատի աղջիկը՝ Զիւլէհան՝ զոր զրեթէ մոռցած էր :

— Այդ աղջիկը բացարձակապէս յայտնի է որ քօմիթէին մարդոց հետն է, մտածեց, պէտք է անպատճառ միջոց մը գտնել զինքը խօսեցնելու . . . նշաններով կամ ու և է կերպով

... խուլ համբերը շատ ազէկ կրնան իրենց միտքը բացատրել, ինչպէս կը ըլլայ որ այս ազձիկը չի կրնար կոր բան մը հասկցնել, մանաւանդ որ դէմքէն խելացի կ'երևայ, արդեօք խա՞ղ մըն է որ կ'ընէ մեզի այսպէս խուլ համբ ձեռնալով... միանգամ ընդմիջտ պէտք է որ այս կէտ լուսաբանենք:

Եւ խեղոյն հրամայեց որ ազձիկը կանանոցէն բերեն:

Ներքինի մը որ Սուլթանին հրամանը գործադրելու գացած էր՝ վերադարձաւ ու յայտարարեց .

— Ազձիկը կանանոցին մէջ չէ:

— Ինչպէ՛ս, գոչեց Սուլթանը, ա՞յն ալ փակցուցած են...

— Ո՛չ, Վեհափառ տէր, պատասխանեց ներքինին, միայն թէ այդ ազձիկը փոխադրուած է Պիւրհանէտտին էֆէնտիի ապարանքը, Սաֆնազ գալֆայի քով:

— Բայց որ՞նչ հրամանով և ե՞րբ եղած է այդ տեղափոխութիւնը...

— Վեհափառ տէր, կանանոցէն ինձ ըսին որ երկու շաբաթ է ի վեր ազձիկը իշխանին ապարանքը փոխադրուած է:

Կասկածոտ բանաւորը չգոհացաւ այս բացատրութիւններէն, իրեն դէմ նորանոր դաւադրութիւններ նշմարեց այս եղածին մէջ և ուզեց մանրամասն քննութիւն մը բանալ: Վերջապէս ճշմարտութիւնը յայանուեցաւ: Սաֆնազ գալֆան էր որ ազձիկը տարած էր իշխանին ապարանքը, հակառակ կայսերական հարէմին մէջ գտնուող միւս գալֆաներուն դիտողութեան: Ապախլ Համբա հրամայեց որ մանկուհին խեղոյն Երլարզ բերուի և հարէմին մէջ բանտարկուի, ամէն յարաբերութիւնէ զրկուած: Սուլթանական հրամանը անմիջապէս գործադրուեցաւ և մանկատի ազձիկը փոքրիկ խուցի մը մէջ փակեցին: Ապախլ Համբա յետոյ կանչել առաւ Սաֆնազ գալֆան:

— Ինչո՞ւ համար այդ ազձիկը հարէմէն սւրիշ տեղ փոխադրած ես, առանց իմ հրամանիս, գոչեց գալֆային երեսին:

Սաֆնազ դալֆա՝ սարսափահար՝ զլուխը գետին խոնարհած չէր գիտեր ի՞նչ պատասխանելիքը :

— Խօսէ՛ , գոռաց բռնաւորը , խոստովանէ՛ զայն փախցնելու համար , այնպէս չէ՞ . . .

— Վեհափառ տէր , թոթովեց խեղճ կինը , ի՞նչպէս կարելի է այդպիսի կասկած մը ունենալ իմ մասին . . . :

— Ուեմն ինչո՞ւ առիբ տարիբ աղջիկը :

— Իրեն այնքա՛ն համակրեցայ որ ուզեցի քովս ունենալ , մանաւանդ կը կարծէի որ ս ե է անպատեհութիւն մը չի կարատր մէջ . . . եթէ գիտնայի որ Ձեր Վեհափառութիւնը դժգոհ պիտի մնար այս ըրածէս , անշուշտ այդպիսի բան մը չպիտի ընէի , բայց . . .

— Միթէ չէի՞ր գիտեր որ այդ աղջիկը իմ անձիս դէմ դաւաճանողներու խուճբին կը պատկանի :

— Ո՛չ , Վեհափառ տէր , չէի գիտեր , պատասխանեց զալֆան դողահար ձայնով մը , լսած էի որ խուզարկութեան մը պահօնն , Սկիւտար , տան մը մէջ գտնուած էր , բայց ինքն ալ դաւազիր մը ըլլալուն մասին տեղեկութիւնն չունէի եւ մինչև հիմա չեմ հաւատար որ այդ աղջիկը յանցաւոր ըլլայ . . .

— Ի՞նչ կը համարձակի՞ք տակաւին զայն պաշտպանել իմ ներկայութեանս , պոռաց բռնաւորը , կը ջանաս զիս սուտ հանել . . .

— Աստուած չընէ որ այդպիսի բան մը մտքէս անցնեմ . . . միայն թէ այդ աղջկան հետ երկու շաբաթէ ի վեր ապրելով սա համոզումը դոյադուցի թէ բոլորովին անմեղ է :

— Ուրեմն կրցա՞ր հետը խօսակցելու միջոց մը գտնել , հարցուց Ապտիւլ Համիտ նուազ բարկաճայթ շեշտով մը :

— Այսինքն նշանացի կերպով կարող եղայ լիտը քիչ մը ընտելանալ , թոթովեց Սաֆնազ հանրմ որ զգաց թէ անխոհեմ խօսք մը փախցուցած էր բերնէն :

— Ինչպէ՞ս իր անմեղութիւնը հասկըցար , խօսէ՛ տեսնեմ , պնդեց բռնաւորը :

— Կ'ենթադրեմ որ անմեղ է որսչ բան մը չեմ գիտեր, մբմնջեց Սաֆնազ հեազհեաէ շփոթեալով :

Ապտ—Իւլ—Համբա կնոջ շփոթութիւնը տեսնելով՝ աւելի հաստատուեցաւ իր կասկածներուն մէջ :

— Այս կինը չափազանց կը խոտլի կոր այս աղջկան համար, մատեց. ուրեմն գազանիք մը կայ գործին մէջ :

Յետոյ յանկարծ գոչեց :

— Հիմա հասկցայ որ դուն ալ ինծի դէմ դաւաճանողներուն հետ ես. դուն ալ, հոս, այս պարտախն մէջ մեքենայութիւններ կը լարես դուն՝ որ հաւատարիմ կը կարծէի և որուն դեռ վերջերս պատուանշան ալ չնորհեցի . . .

— Վեհափառ տէր, Ձեր կասկածները անհիմն են, Աստուած վկայ է որ երբեք իմ հաւատարմութենէս չեմ շեղած գոչեց Սանֆազ հանրմ լարագին ձայնով մը :

— Չարաչար պիտի պատժուիք երկուքդ ալ գոչեց բբունաւորը, հիմա պիտի հրամայեմ որ ամենատոկալի տանջանքներու ենթարկեն այդ աղջիկը մինչև որ լեզուն բացուի . . .

— Մի՛ ընեք այդ բանը, Վեհափառ տէր, կ'երգնում որ անմեղ է Զիւլէհան, գոչեց Սաֆնազ հանրմ ծունկի վրայ իյնալով, խնայեցէ՛քս յս խեղճ աղջկան . . .

Ապտ—Իւլ—Համբա յանկարծ սարսրաց :

— Ոտքի ն'լ, հրամայեց գալֆային :

Սանֆազ հանրմ կանգնեցաւ :

— Ի՞նչ ըսիր, կրկնէ՛ տեսնեմ, տրուաց բռնաւորը :

— Ըսի որ խնայեցէ՛ք այդ խեղճ աղջկան որ անմեղ է . . .

— Ո՛չ այդպէս չըսիր, անուն մը տուիր, Զիւլէհան անմեղ է ըսիր, ո՞վ է այդ Զիւլէհան . . .

— Աղջիկը, թոթովեց Սաֆնազ գալֆա այլայլած :

— Ինչպէ՞ս գիտես իր անունը, տրուաց Ապաիւլ Համբա շեշտակի նայելով կնոջ աչքերուն մէջ :

Սաֆնազ գալֆա՝ անաբեկ՝ ետ ետ գնաց, առանց կա-

բինալ խօսք մը արտասանելու : Իր գործած ահուկի սխալ-մտնքը զգաց ու տեսաւ որ անկ կացութեան մը մասնուած էր : Շփոթութիւնը այն աստիճան մեծ էր , որ խեղճ կինը արտասուել սկսաւ :

— Ինչպէ՞ս գիտես իր անունը . ո՞ւրիչ իմացար , կրկնեց Ապտիւլ Համիտ , իր ձայնն ա՛լ աւելի բարձրացնելով , խօսէ՛ , պատասխան սուր անմիջապէս . . .

Սաֆնազ հանրմ աչքերը վերցուց , բռնաւորին նայեցաւ ու անոր գէմքին արտայայտութենէն ա՛լ աւելի սարսափեցաւ : Եւ սակայն պէտք էր պատասխանել . . .

Յանկարծ ամբողջ ուժն հաւաքեց , ջանաց հանդարտիլ և նուազած ձայնով մը մրմնջեց .

Այդ անունն ևս տուի իրեն . . .

Բայց բացարձակութեամբ թէև համոզիչ , սակայն չատ ոչ մնացած էր և Ապտիւլ Համիտ բնաւ չգոհացաւ անով .

— Սուտ կը խօսիս , գոչեց :

— Ես տուի այդ անունը իրեն , կրկնեց կինը յուսահատօրէն փարելով իր այս գիւտին :

Ապտիւլ Համիտ ձեռքը իր լայն վերարկուին գրգռանը խօթեց , բէվօրվէր մը հանեց հոնկէ ու զայն ուղղելով գալֆային վրայ՝ պոռաց .

— Ճշմարտութիւնը խօսէ՛ , եթէ ո՛չ հիմա քեզի կը սատկեցնեմ . . .

Կինը տեսաւ հրազենի պողպատին չողիւնը և բովանդակ մարմնովը սարսուաց , ազդողակ մը արծակից ու քայլ մը ևս գնաց , երկու ձեռքերը զարհուրանքով վեր բարձրացուցած :

— Խօսէ՛ , գոռաց բռնաւորը իր գէնքը ճօճելով :

— Ինք ըսաւ , թոթովեց խեղճ կինը ճարահատ :

— Ո՞վ ինք , հարցուց Ապտիւլ Համիտ :

— Աղջիկը , ինք յայտնեց իր անունը . . .

— Բայց ինչպէ՞ս քանի որ խուլ համբ է ու խօսելու կարողութիւն չունի . . .

— Ո՛հ, Վեհափառ Տէր, կը խօսի ու կը լսէ, միայն թէ այդպէս կեղծած է որպէս զի զինքը խոստովանցնելու չստիպեն, ահա՛ ճշմարտութիւնը. հիմա ըրէ՛ք ինչ որ կ'ուզէք ինձի, բայց խնայեցէ՛ք այդ ազջկան:

— Ո՛վ է որ այս ազջիկը:

— Հազգը պէյի ազջիկն է, պատասխանեց Սաֆնազ հանրմ որ ա՛յլ որոշած էր ամէն բան խոստովանիլ:

Ապաիւլ Համիա ռէվոլվերը դրպանը դրաւ: Հիմա բարկութիւնը անցած էր և անոր յաջորդած էր ներքին ուրախութիւն: մը: Վերջապէս իր ձեռքին տակ ունէր մէկը որմէ պիտի կրնար տեղեկութիւններ քաղել:

— Գիտնալով հանգերձ որ այդ ազջիկը դիտմամբ խուհամր կը ձեւանայ, ինչպէ՞ս մինչև այսօր լռեցիր, ըսաւ գալֆային, ուրեմն դուն ալ անոր հետ մեղսակից ես...

— Վեհափառ տէր, չհամարձակեցայ իրողութիւնը յայտնել, վախնալով որ ազջկան գլուխը փորձանք մը կուգայ, այդ ազջիկը իր գեղեցկութեամբն ու խելացութեամբը այնքան հմայած է ինձի որ չեմ կրնար իմ ձեռքովս իրեն դժբախտութիւն բերել... այո՛, կը խոստովանիմ որ յանցաւոր գանուած եմ Ձեր Վեհափառութեան հանդէպ, բայց ուրիշ կերպ չէի կրնար վարուիլ... հիմա պատրաստ եմ իմ յանցանքիս արժանաւոր պատիժը կրել, սակայն կրկին կը պաղատիմ Ձեր Վեհափառութեան որ մեղմօրէն վարուիք խեղճ ազջկան հետ...

— Այդ իմ գիտնալիք բանս է, պատասխանեց բռնաւորը չոր կերպով:

Յետոյ հրամայեց որ Սաֆնազ գալֆան արգելափակին մինչև ցնոր անօրինութիւն: Այս հրամանը տալէ ետքը, Ապաիւլ Համիա ուղղակի գնաց իր կանանցը և ըսաւ որ ցոյց տան իրեն այն խօսքը ուր գեոռասի ազջիկը բանտարկուած էր:

Երկու գալֆաներ բռնաւորը առաջնորդեցին դէպի Ձիւլէ

հայի գանուած խուցը : Դրան առջև երկու ներքինիներ պահակ կը սպասէին :

Փայֆաներէն մին , որուն քով կը գտնուէր դրան բանալին , մտայաւ և դուռը բանալով մէկ կողմ քաշուեցաւ , տեղ տալու համար իր Վեհափառ տիրոջ :

Բռնաւորը առաջ անցաւ տենդոտ շարժումով մը և խուցէն ներս մտաւ :
Յանկարծ բարկութեամբ խառն զարմացական ճիչ մը արձակեց :

Սենեակը գատարկ էր . . .

Երկու գալֆաները և պահնորդ կեցող ներքինիները որոնք դրան առջև կեցած էին՝ առանց սենեակէն ներս մտնել համարձակելու , իրենց Վեհափառ տիրոջ ազազակը լսելով՝ քիչ մը յառաջացան :

— Ուր է աղջիկը , մէկը չկայ այստեղ պոռայ Ապտիւլ Համիտ բարկութենէն դողահար ձայնով մը :

Ո՛չ ոք սիրտ ըրաւ պատասխանելու :

— Փախցուցիք , դաւաճաններ , փախցուցի՛ք , գոչեց բռնաւորը կատղած , ամենքդ ինծի դէմ միաբանած էք , բայց ես ձեզ ամենքդ ալ պիտի ջախջախեմ . . .

Յետոյ , նշմարելով որ պատուհանը բաց էր , դէպի հոն վազեց : Հանգուցաւոր բարակ պարան մը կ'երկարէր պատուհանէն մինչև վար :

— Ահա՛ այս տեղէն վախեր է , շո՛ւտ վնասել տուէք զինքը պարտէզին ամէն կողմը , պոռայ բռնաւորը իր շուրջը գտնուողներուն , որոնք խելոյն հեռացան իր հրամանը կատարելու փութով ու երջանիկ ըլլալով որ առիթ մը կ'ընծայուէր իրենց փախչել երթալու սուլթանական բարկութենէն :

Ապտիւլ Համիտ երբ առանձին մնաց՝ վհատ ու ընկճուած ինկաւ թիկնաթուի մը վրայ :

— Չէ՛ , չէ՛ , մրմնջեց , ա՛յ հնար չէ տոկալ այս ամէնուն . . . նոյն իսկ պալատիս մէջ , ամէն կողմ , դաւաճանութիւն , մատնութիւն . . .

ՎԵՐՉ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

İstanbul Belediyesi

İnkilâb Müzesi ve Kütüphanesi

Sayı:

Oda

Dolab

Raf

İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM0463/1-3

255.07.02.01.06.00/

